



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



**PERSONALITY
IN
HISTORY**

*Proceedings of
Conference*

YEREVAN

PUBLISHING HOUSE
2015

**ԱՆՀԱՏԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ**

*Գիտաժողովի նյութերի
ժողովածու*

ԵՐԵՎԱՆ

2015

ՀՏԴ 93/99:06
ԳՄԴ 63.3

Հրատարակվում է
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
խորհրդի որոշմամբ

Ա 570

Հրատարակվում է Համաշխարհային
պատմության հայկական ասոցիացիայի
ֆինանսական օժանդակությամբ

Խմբագիր՝

պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ա. Ստեփանյան

Խմբագրական խորհուրդ՝

պ.գ.թ., դոցենտ Լ. Ռ. Մինասյան

պ.գ.թ., դոցենտ Դ. Ֆ. Թինոյան

պ.գ.թ., դոցենտ Ա. Ս. Գասպարյան

Զ. Կ. Կճանյան

Ա 570 Անհատը պատմության հոլովոյթում: Գիտաժողովի նյութերի ժողովածու.-Եր.: «Տիր» հրատ., 2015, 268 էջ:

Անհատի դերակատարության հիմնահարցը հասարակական գիտությունների կարևոր սևեռումներից մեկն է: Համաշխարհային պատմության հայկական ասոցիացիայի և ԵՊՀ պատմության ֆակուլտետի Համաշխարհային պատմության ամբիոնի կազմակերպած «Անհատը պատմության հոլովոյթում» գիտաժողովը փորձ էր անդրադառնալ վերոնշյալ գիտախնդրին՝ առաջնորդվելով միջկրթանքային չափորոշիչներով:

Բոլոր հոդվածները գրախոսվել են:

ՀՏԴ 93/99:06

ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-9109-9-4

© Համաշխարհային պատմության հայկական ասոցիացիա,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի Համաշխարհային
պատմության ամբիոն, 2015

© «Տիր» հրատարակչություն, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք..... 8

Հին աշխարհի և միջին դարերի պատմություն

Լիլիթ Մինասյան

Ռիժեղ անհատականության դերակատարությունը համակենցական կյանքի ճգնաժամի հաղթահարման գործում (Ք. ա. I դ. Հռոմի պատմության փորձից)..... 10

Մարիամ Բաբայան

Պրինցեպսի անձի նշանակությունը պրինցիպատի համակարգում..... 25

Նինա Հայրապետյան

Գալլիենուսը դոմինատի նախակարապետ..... 37

Նելլի Մինասյան

Քոչվորական քաղաքակրթության տարածական կազմակերպման հիմնախնդիրները Չինգիզ խանի ընկալումներում..... 45

Արամ Պողոսյան

Չինգիզ խանը և նրա դերը մոնղոլական պետության ձևավորման գործում 56

Սարգիս Բալդարյան

Բադր ալ-Ջամալին՝ Ֆաթիմյան պետության վեզիր 65

Նարինե Չոհրաբյան

Ռուբեն Առաջինը՝ Կիլիկիայի հայկական թագավորության հիմնադիր 74

Գագիկ Հարությունյան, Լիանա Աղաբեկյան

Ֆրիդրիխ Առաջինը քաղաքակրթությունների բախման խաչմերուկում 82

Նոր դարերի պատմություն

Դավիթ Թինոյան

Հովհաննես Անթեպցին և 17-րդ դարասկզբին Կիլիկիո հոգևոր նվիրապետության պառակտման հարցը..... 96

Տիգրան Եփրեմյան

Հուզո Գրոտիուսը միջազգային հարաբերությունների պատմության հոլովույթում (Կոնստրուկտիվիզմ) 110

Աննա Խաչյան

Հուզո Գրոտիուսի իրավաքաղաքական ուսմունքը 129

Նժդեհ Հովսեփյան

ԱՄՆ հիմնադիր հայեր
(Ժառանգություն, հեղափոխություն, պետականություն) 139

Արեգ Քոչինյան

Նապոլեոն Բոնապարտ և Օգոստոս Օկտավիանոս 156

Արա Գասպարյան

Բոնապարտի վերափոխումները..... 166

Ջուլիետա Կճանյան

Բրիտանական կայսրության կերպափոխման գլադսթոնյան հարացույցը..... 176

Նորագույն պատմություն

Կարեն Փահլևանյան

Մոռացված, բայց փոխհատուցված տարիներ 191

Սամսոն Հովհաննիսյան

Է. Վենիզելոսի վերափոխիչ գործունեությունը Հունաստանում
(Պետական գործչի և առաջնորդի կերպարը) 198

Գոռ Մադոյան

Բ. Մուսսոլինիի «Նոր Հռոմի» տեսլականը
(Առասպել և իրականություն) 217

Վալենտինա Գլոյան

Ու. Չերչիլի «Սառը պատերազմի» գաղափարախոսությունը

(«Հետսառըպատերազմյան» արդյունքները և արդի շրջանի քաղաքական արձագանքները) 226

Լիլիթ Մկրտչյան
Կոնրադ Ադենաուեր գործչի մասին 234

Ուսուցիչը և պատմությունը

Վարդիթեր Թելունց

Պատմության դասի արդյունավետության բարձրացումը
գծագրական դասակարգիչների կիրառմամբ..... 240

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Իր արժեհամակարգով և հետազոտական մեթոդներով պատմությունն էականորեն տարբերվում է ճշգրիտ գիտություններից: Ինչ-ինչ չափույթներով այն հիշեցնում է արվեստը: Պատճառն իր ուսումնասիրության առարկան է՝ անցյալը, ներկան և տեսանելի ապագան, որի ծիրում հոլովույթներն ընթանում են ըստ մարդկանց գաղափարների, հղացքների և ընկերային կամքի: Այս առումով առավել ազդեցիկ են ականավոր անհատականություններն ու նրանց շուրջ համախմբված ընտրախավերը: Նրանք կազմում են այն ներուճակ փոքրամասնությունը, որն ուղղորդում է համակեցությունը՝ դրան հաղորդելով զարգացման միտում ու նպատակ: Հետազոտողների համոզմամբ նման ներգործությամբ համակեցական տարտամը ձեռք է բերում հատկանիշներ, որոնց շնորհիվ դառնում է ունակ՝ պատշաճ պատասխաններ մշակելու արտաքին ու ներքին մարտահրավերներին: Այդու այն կերպափոխվում է քաղաքակրթական միավորի:

Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ պատմության ուսումնասիրությունն ունի (առնվազն) երկխոսային բնույթ: Արդի համակեցական արժեհամակարգը կրող հետազոտողը երկխոսում է անցյալի, ներկայի և տեսանելի ապագայի արժեհամակարգերը կրող խոշոր անհատականությունների հետ՝ նպատակավր բացահայտելու պատմության խորքային սեմանտիկ և սեմիոտիկ հարթությունները: Միայն այդ պարագային է, որ այն ձեռք է բերում միասնության աներկբա հատկանիշներ՝ ուղենշելով մարդկության կայացման կարևորագույն հանգրվաններն ու արդյունքները: Միայն այդ պարագային է, որ պատմական ժամանակն ու տարածությունը սկսում են ձեռք բերել արժեքանության միասնական գծեր:

Նման ըմբռնումը միավորել է երիտասարդ հետազոտողների մեր խմբին՝ նավարկելու պատմության տարբեր դարաշրջաններով՝ հնադարից մինչև արդիականություն: Հարկավ, նրանց երկխոսությունն անցյալի հետ համաչափ և միարժեք չէ. տարբեր է յուրաքանչյուրի հետազոտական փորձառությունն ու ճաշակը: Սակայն աներկբա է մի հանգամանք. նրանք ձգտում են նորովի տեսնել հին հիմնախնդիրները: Եվ փույթ չէ, որ դա երբեմն կրում է

ձևական բնույթ: Կարևորն այն է, որ ասպարեզ է գալիս հետազոտողների նոր սերունդ, որին վիճակված է նոր երկխոսություն սկսելու անցյալի ականավոր անհատականությունների հետ: Կարծում եմ՝ սա է ներկայացվող ժողովածուի առանցքային գաղափարն ու հանձնառությունը: Եվ չնայած իր բովանդակային հետախայացությանը, այն խորքային առումով միտված է առ ապագան:

Պրոֆ. Ալբերտ Սյրեփանյան
19 նոյեմբերի 2014 թ., Երևան

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՄԻՆԱՅԱՆ

**ՈՒԺԵՂ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ
ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
(Ք. ա. I դ. Հռոմի պատմության փորձից)**

Մուտք

Համաձայն «քաղաքակրթություն» հղացքի արդի ըմբռնման՝ դրա հիմնական խնդիրը համակեցական կյանքի հավասարակշիռ վիճակի ապահովումն է (հոմեոստասիս): Այս պարագայում քաղաքակրթությունն ի զորու է համարժեք պատասխաններ մշակել արտաքին և ներքին մարտահրավերներին¹: Պատասխանները կարող են լինել համակեցության այս կամ այն բաղադրիչի գերակայությամբ՝ իշխանական կառույց, մշակույթ, կրոն, տնտեսություն: Հատկապես կարևորվում է քաղաքակրթական տվյալ միավորի ինքնավերափոխման, ինքնանորացման կամային ճիգը, որը կազմակերպում է իր «այլացման» գործընթացը՝ համաձայն հասարակաշինական տեսությունների և ծրագրերի²: Դրանք իրագործվում են խոշոր անհատականությունների և նրանց օջակցող ընտրա-

¹ А. Дж. Тойнби, *Постигжение истории*, Москва: Айрис-Пресс, 2002, с. 98; K. D. Springs, M. Litt, *Civilization, Transformation and Collapse*, *Journal of World Anthropology*, 3 (2007), pp. 99-102.

² Ա. Ստեփանյան, *Պարմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Արաշխյան դարաշրջան*, Երևան: Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, 2012, էջ 14; S. Huntington, *The Clash of Civilizations and Remaking of World Order*, New York: Symon & Schustener, 1997, pp. 138-143.

խավի ջանքերով: Անցնելով ճգնաժամ-պայքար-վերակառուցում շրջափուլերը, քաղաքակրթությունը կերպափոխվում է: Ձևավորվում է քաղաքակրթական նոր տիպաբանության, որն ապահովում է համակեցության հետագա գոյությունը:

Վերոնշյալ դիտանկյունից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հին Հռոմի կարևորագույն «անցումային» դարաշրջաններից մեկը՝ Ք. ա. II - I դարերը: Սա հանրապետական կարգի ճգնաժամի դարաշրջանն է, որն առանձնանում է մի կողմից Հռոմեական Հանրապետության վերաներմամբ ու անկմամբ, մյուս կողմից՝ ականավոր պետական այրերի և նրանց սատարող հասարակական-քաղաքական ուժերի կողմից ճգնաժամի հաղթահարման, «հանրապետության բժշկման» հաճախ տրամագծորեն հակամետ հարացույցների մշակմամբ ու փորձարկմամբ: Արդի պատմագետի հայացքի ներքո համախմբվելով՝ այդ խոշոր անհատականությունները ձևավորում և դիմավորում են Ք. ա. II - I դդ. Հին Հռոմի տարիմաստ, բայց և միասնական պատմությունը՝ Պ. Կ. Սկիպիոն, Մ. Պ. Կատոն, Գրակքուս եղբայրներ, Գ. Մարիուս, Լ. Կ. Սուլլա, Գն. Պոմպեոս, Մ. Կրասուս, Պ. Կլոդիուս, Հ. Կեսար, Օ. Օկտավիանուս և այլք: Նրանց վիճակված էր, անցնելով քաղաքացիական պատերազմների հարյուրամյա շրջափուլ, գտնել Հռոմի ապագայի նոր տեսլականը: Ք. ա. 27 թ. այն կերպավորվեց համակեցական կյանքի նոր հարացույցի՝ հանրապետական միապետության կամ պրինցիպատի տեսքով, որն ապահովեց Հռոմի՝ իբրև համաշխարհային տերության կենսունակությունը շուրջ երեք հարյուրամյակ:

Արդի հետազոտողները միաձայն են. իր խորքային բովանդակությամբ պրինցիպատը «լուսավորյալ միապետության» առաջին իրական փորձն է համաշխարհային պատմության մեջ: Տարբեր երանգներով ու հանդերձանքով այն հանդիպում է տարբեր դարաշրջաններում՝ ապահովելով հասարակությունների անցումը նոր իրավիճակների, իրավիճակներ, որոնք հարիր են հանրույթի դեմ ծառայած քաղաքակրթական մարտահրավերներին: Այս հուլովույ-

թը, իբրև կանոն, ուղղորդում են ականավոր պատմական այրերը՝ իրենց հասարակաշինական ծրագրերով ու տեսություններով:

1. Հանրապետության «բժշկման» նոր հարացույցը

Մեր խնդիրն է՝ բացահայտել «հանրապետական միապետություն» հղացքի տեսական և գործնական մշակման ընթացքը՝ ի մասնավորի կենտրոնանալով Ք. ա. I դ. հռոմեական ականավոր պետական գործիչ Գնեուս Պոմպեուսի և ժամանակի քաղաքական կյանքի ակտիվ դերակատար, հռետոր, իմաստասեր Մարկոս Տուլիուս Կիկերոնի ստեղծագործական համագործակցության վրա:

Գնեուս Պոմպեուսի ռազմաքաղաքական առաջընթացը իշխանության, փառքի, հեղինակության ձեռքբերման աննախադեպ օրինակ է Հռոմեական Հանրապետության պատմության մեջ³: Քաղաքական ասպարեզ մուտք գործելով Ք. ա. 83-82 թթ. Քաղաքացիական պատերազմի ժամանակ որպես Լ. Կ. Սուլլայի կողմնակից՝ Ք. ա. 80-70-ական թթ. նա լիազորվեց մի շարք ռազմական արտակարգ իրավասություններով, ապա, շրջանցելով պաշտոնավարման սահմանված հերթագայությունը (*cursus honorum*), արժանացավ պետական բարձրագույն պաշտոնի՝ կոնսուլության (Ք. ա. 70 թ.): Սրան հաջորդեցին ևս երկու արտակարգ նշանակումներ՝ գլխավոր հրամանատարություն Միջերկրածովյան ծովահենների դեմ պատերազմում (Ք. ա. 67 թ., *lex Gabinia*), ապա մեծ իշխանություն (*imperium maius*) Արևելքում (Ք. ա. 66 թ., *lex Manilia*): Պոմպեուսի Արևելյան արշավանքների արդյունքում (Ք. ա. 66-63 թթ.) Հռոմի գերակայության ներքո հայտնվեց վիթխարի տա-

³ Գն. Պոմպեուսի կյանքն ու գործունեությունը ներկայացված է մի շարք հետազոտություններում, տե՛ս **M. Gelzer**, *Pompeius*, Munchen: Verlag F. Bruckmann, 1959; **R. Seager**, *Pompey: A Political Biography*, Oxford: Blackwell, 1979; **J. Leach**, *Pompey the Great*, London: Croom Helm, 1978; **P. Greenhalgh**, *Pompey: The Roman Alexander*, London: Weidenfeld and Nicolson 1980; Նույնի, *Pompey: The Republican Prince*, London: Weidenfeld and Nicolson, 1981; **P. Southern**, *Pompey the Great*, Great Britain: Tempus Publishing Ltd, 2002.

րածք՝ Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոս, Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով: Տարասեռ կարգավիճակների համադրմամբ, ձևավորվեց կառավարման համընդգրկուն համակարգ (Pax Romana), որը ոչ էական փոփոխություններով գոյատևեց հարյուրամյակներ:

Այսպիսով, Ք. ա. 60-ական թթ. վերջին Պոմպեուսը գտնվում էր փառքի և հզորության գագաթնակետին: Անվիճելի է, որ թեև ռազմաքաղաքական այս վերելքը ձեռք էր բերվել «սահմանադրական» ճանապարհով, բայց բանակի ներգործուն դերակատարությամբ: Ժամանակակիցները համոզված էին, որ Արևելքից վերադառնալով՝ Պոմպեուսը կրկնելու է Լ. Կ. Սուլլայի նախադեպը՝ բանակի միջոցով հաստատելով իր բացարձակ իշխանությունը Հռոմում: Սկզբնաղբյուրները փաստում են. «Թեպետ զենքի միջոցով կարող էր գրավել Իտալիան և ամբողջ Հռոմեական տերությունը, և մեծամասնությունը պատրաստվում էր հոժարակամ հանձնվել նրան, թեպետ, եթե որևէ մեկը դիմադրեր, ապա պարտության կմատնվեր, բայց նա չընտրեց այդ ուղին» [Dio Cass., XXXVII, 20; հմմտ. Plut., Pomp., XLIII, 1-2; App., Mithr., 116; Vel. Pat., II, XL, 2]: Վերջին տասնամյակների պատմությունը և սեփական կենսափորձը Պոմպեուսին հուշում էին, որ սուլլայական ուղին փակուղային է, Հռոմում հույժ զորեղ են հանրապետական ավանդույթները⁴: Ուստի, Ք. ա. 62 թ. ժամանելով Իտալիա՝ նա ցրեց բանակը և Հռոմ մտավ իբրև շարքային քաղաքացի, պատրաստ հաշվետվությամբ ներկայանալու Սենատին և Աշխարհաժողովին՝ ակնկալելով իր գործունեության պատշաճ գնահատական⁵: Ք. ա. 60-50-ական

⁴ **Ed. Mayer**, *Caesars Monarchie und das Prinzipat des Pompeius*, *Innere Geschichte Roms von 66 bis 44 v. Chr.*, Stuttgart/Berlin; **J. Leach**, *Op. cit.*, p. 113; **P. Southern**, *Op. cit.*, p. 79.

⁵ Պոմպեուսի այս քայլը երբեմն արժանանում է ուսումնասիրողների տարակուսանքին, բացատրվում է նրա անհետևողականությամբ, անվճռականությամբ, թուլակամությամբ կամ Պոմպեուսին հատուկ՝ «սեփական նախածեռնությամբ օրենքը չխախտելու» վարքագծով: Տե՛ս **T. Моммзен**, *История Рима*, т. III, Москва: Госполитиздат, 1941, с. 83, 88, 165; **С. Утченко**, *Юлий Цезарь*, Москва: Мысль, 1976, с. 84-85; **M. Gelzer**, *Op. cit.*, s. 259-263.

թթ. նշանավորեցին Գն. Պոմպեուսի կյանքի և գործունեության նոր շրջափուլ: Նա կատարեց նոր ընտրություն, որը բացառում էր ինչպես ավանդական բարենորոգչությունը, այնպես էլ իշխանության բռնազավթումը՝ Հռոմեական Հանրապետության «բժշկման» հնարավորությունը կապելով ուժեղ անհատականության հեղինակության շուրջ հռոմեական տրոհված հանրային վերամիավորման, մենիշխանության և հանրապետական կարգի խաղաղ, հավասարակշիռ համադրման հետ: Սա միանգամայն նոր հարացույց էր, որի շուրջ Մ. Ս. Կիկերոնի նախաձեռնությամբ ձևավորվեց «Կիկերոն-Պոմպեուս» համագործակցությունն ու բարեկամությունը⁶:

Հատկանշական է Ք. ա. 62 թ. Պոմպեուսին հասցեագրված Կիկերոնի նամակը. «[Համոզված եմ], երբ վերադառնաս, կընդունես, որ իմ գործերը կատարվել են ըստ բանականության և վեհանձնության: Այդժամ դու, որ ավելի մեծ ես, քան Աֆրիկացին, հեշտությամբ կընդունես ինձ, ով փոքր չէ, քան Լեյիուսը, ի սերտ հարաբերություն՝ ինչպես հանրային, այնպես էլ անձնական գործերի առումով» [Cic., Ep. ad Pomp., V, 7, 3]⁷: Ակնհայտ է հղումն առ Պ. Կ. Սկիպիոն Աֆրիկացու իմաստասիրական խմբակը, որտեղ Ք. ա. 140 - 130-ական թթ. ակտիվ քննարկվում էին Հռոմի ապագայի հիմնախնդիրները⁸: Այն ձևավորվել էր երկու ականավոր անհատականությունների շուրջ: Ս. Աֆրիկացին ներկայացնում էր գործողութենական իմաստությունը (*gravitas*), իսկ Գ. Լեյիուսը՝ բանականը (*prudencia*): Խմբակն ընկալվում էր իբրև բարեկամական հարաբերությունների (*amicitia*) իդեալական միջավայր՝ ընդունակ մտահոգևոր, բարոյական և գործողութենական ներգոր-

⁶ Պոմպեուսի և Կիկերոնի հարաբերությունների մասին տե՛ս E. Ward, *The Early Relationships between Cicero and Pompey until 80 B.C.*, *Phoenix*, 24 (1970), p. 119-129; Նույնի, *Cicero and Pompey in 75 and 70 B. C.*, *Latomus*, 29 (1970), pp. 58-71.

⁷ H. Van Den Blom, *Cicero's Role Models. The Political Strategy of a Newcomer*, New York: Oxford University Press, 2010, p. 185.

⁸ A. E. Astin, *Scipio Aemilianus*, Oxford: Clarendon Press, p. 294-299; Նույնի, *Scipionic Circle*, *Oxford Classical Dictionary*, pp. 963-964.

ծությամբ բարեփոխելու շրջակա համակեցական միջավայրը: Խմբակի գործունեության արդյունքն էին Պանեցիուսի իմաստասիրական և Պոլիբիուսի պատմասիրական հայեցակարգերը:

«Իմաստասիրական խմբակ-հանրույթ» համադրությունը Կիկերոնի ներշնչմամբ դարձավ նաև Գնեուս Պոմպեուսի Հռոմի նոր հարացույցի մշակման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Նրա Ալբանական առանձնատանը (Պոմպեուսի երիտասարդ կնոջ, Հ. Կեսարի դուստր Հուլիայի աջակցությամբ) Ք. ա. 50-ական թթ. կազմակերպվեց հռոմեական մտավորականության խմբակ, որի մասնակիցներն էին հանրագիտակ Մ. Ս. Վարոնը, ճարտասան Ս. Լիբոն, պատմագիր Թ. Միտիլենացին, իմաստասեր Վ. Պիլուտուսը, գեղագետ-անդրիագործ Պաստիլենը, ճարտարապետներ Մ. Կոպոնիուսը, Տ. Անտիֆիլուսը: Կան տվյալ, որ խմբակի էին հարում նաև ժամանակի խոշորագույն բանաստեղծներ Կատուլլուսը և Լուկրետուսը⁹: Խմբակի կենտրոնական դեմքը Մ. Ս. Կիկերոնն էր՝ «նոր Լեյիուսը»: Ք. ա. 54-51 թթ. նա ստեղծեց իր «Հանրապետության մասին» (*De re publica*) տրամախոսությունը, որտեղ ամփոփված է Կիկերոնի տեսությունը հասարակական համակեցության, դրա լավագույն ձևի և լավագույն պետական գործչի վերաբերյալ: Դրա մանրամասն քննություն դուրս է սույն հոդվածի շրջանակից, ուստի մենք կսահմանափակվենք հակիրճ ամփոփմամբ:

2. Հարացույցի տեսական հիմնավորումը

«Հանրապետության մասին» տրամախոսության ծիրում Կիկերոնը հանգում է այն գաղափարին, որ ճգնաժամի հաղթահարումը, բարքերի, հասարակական համաձայնության և պետության կայունության վերականգնումը, հնարավոր է ականավոր պետական գործչի առաջնորդությամբ. «յուրաքանչյուր պետություն կարիք ունի մեծ, անգամ աստվածային մեկի, որպեսզի կանխատեսի սպասվող սպառնալիքները՝ կյանքը չափավոր ընթացքով կազմա-

⁹ B. Rawson, *The Politics of Friendship: Pompey and Cicero*, Oxford, 1978, pp. 74-77; W. Anderson, *Pompey, His Friends and the Literature of the First Century B. C.*, Berkeley: University of California Press, 1963, pp. 1-88.

կերպելու և ընդ իր իշխանությամբ պահելու համար» (Cic., Rep., I, 27, 53): Նման գործչին Կիկերոնը անվանում է կառավարիչ (*rector et gubernator civitatis*), պետության առաջին քաղաքացի (*princeps civitatis*), նաև հասարակության խնամակալ և չափաբերող (*tutor et moderator rei publicae*), բժիշկ (*medicus*), ուսուցիչ (*magister*): Նա պետք է կարողանա խնամել, կրթել և առաջնորդել հասարակությանը: Կիկերոնը կիրառում է նաև *pater* (հայր) եզրը՝ ընթերցողի մտապատկերում թարմացնելով հոռմեական ավանդական ըմբռնումը ընտանիքի և պետության համակերպության մասին: Արդ, ինչպիսի որակներով և հատկանիշներով պետք է օժտված լինի նման գործիչը: Կիկերոնը նրան վերագրում է հոռմեական առաքինությունների ավանդական շարքը, որոնք համասեռ են և ենթադրում են միմյանց գոյությունը՝ *virtus* (ոգովական և քաղաքացիական արիություն), *gravitas* (լրջախոհություն), *dignitas* (արժանապատվություն), *iustitia* (արդարադատություն), *pietas* (բարեպաշտություն), *temperatio* (ինքնատիրապետում)¹⁰: Միայն այս պարագայում նա ի զորու է հաղթահարելու իր էության ստորակա (նյութական և եսակենտրոն) դրսևորումները, առաջնորդվելու բանականությամբ և իմաստնությամբ: Կիկերոնը համոզված է, որ նման այրեր միշտ էլ եղել են Հռոմի պատմության մեջ (*moribus antiquis res stat Romana virisque*) [Cic., Rep., I, V, 1]: Նրանք միջակա օղակ են տիեզերական Լոգոսի և հոռմեական համակեցության միջև: Ասվածը հաստատելու համար Կիկերոնը ստեղծել է իմաստասիրական մի առասպել, որի համաձայն մահկանացուն կնքելուց հետո «բոլոր նրանք, ովքեր պաշտպանել, սատարել և ընդարձակել են հայրենիքը, առանձնակի տեղ ունեն երկնքում, որտեղ, իբրև երանելիներ, ճաշակում են հավերժությունը» [Cic., Rep., VI, XIII, 13, cf. VI, XXXIV, 26]: Նրանք գիտեն անցյալը և տեսնում են ապագայի հեռանկարը: Ս. Էմիլիանոսի օրինակով նրանք հուշում են նման այրերին. «[...] դու կլինես այն միակը, ումից կախ-

¹⁰ J.-L. Ferrary, Statesman and Law in Cicero's Political Philosophy, in *Justice and Generosity*, Proceedings of the Sixth Symposium Hellenisticum, Cambridge University Press, 1995, pp. 60-66.

ված կլինի պետության բարորությունը և իբրև դիկտատոր պետք է հաստատես համակեցական կարգը» [Cic., Rep., VI, XII, 12]:

Արդ, ո՞վ կարող է հավակնել նման դերակատարության և ի՞նչ ճանապարհով՝ ինքնակամ, թե զենքի ուժով: Երանելի դիրքորոշումն այս հարցում միանշանակ է. նման դերակատարության կարող է հավակնել միայն այն անձը, ում կրնտրի հոռմեական ողջ հանրույթը (*tota civitas*). «...այդժամ քեզ կնայի և՛ Սենատը, և՛ ընտրանին (*omnes boni*), և՛ դաշնակիցները (*socii*), և՛ լատինները (*Latini*)» [Cic., Rep., VI, XII, 12]: Այլորեն, բացառվում է իշխանության բռնազավթումը. ճգնաժամի հաղթահարումը հնարավոր է միայն ընդհանուր համաձայնությամբ և համագործակցությամբ:

Կիկերոնի համագրությամբ Հռոմի վերակառուցման խնդիրները դիտարկվում են տեսական հարթությունում: Գործողությունների կոնկրետ ծրագիր գոյություն չունի: Այն պետք է ձևավորվեր առաջիկա տարիների վայրիվերումների ընթացքում:

3. Հանրապետական միապետության նախադեպը

Ք. ա. 60-ական թթ. վերջին Պոմպեոսի «օրինապահ» վարքագիծը կանգնեցրեց նրան փակուղու առջև: Նրա քաղաքական հակառակորդները միանգամից ոգի առան և, անկախ իրենց հակասություններից, միավորվեցին նրա դեմ [Plut., Pomp., XLVI, 3-4; Luc., XLII, 6; Cato Min., XXXI, 1-2; Dio Cass., XXXII, 49; App., BC, II, 9; Vell. Pat., II, 40; Suet., Div. Jul., 19]: Բախվելով հասարակական-քաղաքական տարասեռ ուժերի դիմադրությանը՝ Պոմպեոսը ընտրեց իր նպատակին հասնելու հանգրվանային ուղի, այն է՝ գնալ ժամանակավոր զիջումների, լուծել ընթացիկ հրատապ խնդիրներ՝ չմոռանալով գլխավոր նպատակը: Այսօրինակ զիջումներից էր Առաջին եռապետությունը՝ Գնետու Պոմպեոսի, Հուլիուս Կեսարի և Մարկուս Կրասուսի կազմած ոչ պաշտոնական քաղաքական դաշինքը (Ք. ա. 60 թ.)¹¹: Երեք գործիչներ, որոնց թիկուն-

¹¹ Լ. Մինասյան, Հին Հռոմ. անցում հանրապետությունից պրինցիպատի (առաջին եռապետության փորձից), *Կանթեղ*, 22 (2005), էջ 104-112; Նույ-

քին կանգնած էին բանակը, քաղաքային բնակչությունը և հեծյալ ձեռներեցները, միավորվեցին յուրաքանչյուրի կոնկրետ խնդիրների լուծման համար, որոնք սենատական ընտրանու բացարձակ գերակայության պայմաններում լուծում գտնել չէին կարող [Plut., Caes., XII, 3; Pomp., XLVII, 5; Dio Cass., XXXVII, 55-58; App., BC, II, 9; Suet., Div. Jul., XIX, 2; Vel. Pat., II, XXVI, 1]: Այս նպատակներից դուրս դաշնակիցներից յուրաքանչյուրն ազատ էր գործելու իր հայեցողությամբ և պատասխանատվությամբ: Յուրաքանչյուրը նպատակ ուներ իշխանության խնդիրը հետագայում լուծել հոգուտ իրեն: Համադրելով իրենց ուժն ու ազդեցությունը՝ եռապետները ապահովեցին Կեսարի հաղթանակը Ք. ա. 59 թ. կոնսուլական ընտրություններում: Մյուս (սենատական) կոնսուլին՝ Մ. Բիբուլուսին, ստիպեցին լռել և փակվել տանը՝ հնարավորություն չտալով կատարել պաշտոնական պարտականությունները¹²: Կեսարը կառավարեց միանձնյա՝ ի կատար ածելով երեքի խնդիրները: Առաջին եռապետությունը հնարավորություն տվեց Պոմպեուսին հաղթահարելու քաղաքական մեկուսացվածությունը և լուծելու հրատապ խնդիրները՝ հավատարիմ մնալով իր հեռահար նպատակին: Մյուս մասնակիցները չունեին Հռոմի ապագայի հստակ տեսլական: Փոխարենը նրանց համար հրատապ էր սեփական ռազմաքաղաքական առաջընթացն ապահովելու, հզորությամբ և հեղինակությամբ Պոմպեուսին հավասարվելու խնդիրը: Այս հարցում հատկապես հաջողեց Կեսարը՝ Ք. ա. 58-49 թթ. Գալլիայում ստանալով ճիշտ այնպիսի իշխանություն, որպիսին ունեցել էր Պոմպեուսն Արևելքում (*imperium maius*): Այստեղ նա ձեռք բերեց հաղթանակած զորավարի փառք, հավատարիմ բանակ և հարստություն՝ չմոռանալով առաջընթացի «ավանդական» ուղիների մասին՝ ոս-

նի, Գնեսու Պոմպեոսը և հանրապետական կարգի ճգնաժամը Հռոմում (քաղաքական իդեալ և իրականություն), *Պատմություն և կրթություն*, 1-2 (2005), էջ 55-68:

¹² Սրամիտ հոռմեացիները, որոնք, ըստ սովորույթի, տարին կոչում էին երկու կոնսուլների անունով, «Կեսարի և Բիբուլուսի կոնսուլության» փոխարեն ասում էին «Հուլիուսի և Կեսարի կոնսուլություն» [Suet., Div. Jul., XX, 2]:

կու և պաշտոնների բաշխման միջոցով Հռոմում ձևավորելով յուրայինների հոծ միջավայր:

Ք. ա. 50-ական թթ. նշանավորվեցին Հռոմի ներքին հակասությունների սրմամբ՝ պայմանավորված երիտասարդ քաղաքական գործիչների (Պ. Կլոդիուս Պոպլիս) ծայրահեղականությամբ, սենատական ընտրախափի (Կատոն Կրտսեր) անհեռատես պահպանողականությամբ և եռապետների միտումնավոր անգործությամբ: Արդյունքում ճգնաժամը տեղի տվեց քառսի և անիշխանության¹³: Պետք չէր առանձնակի խորաթափանցություն հասկանալու համար, որ պատճառը կենսական ըմբռնումների և գործելակերպի փակուղին է, մինչդեռ անհրաժեշտ էին արմատական, հեռահար հարցադրումներ ու լուծումներ: Որքան էլ տարօրինակ հնչի՝ սենատական ընտրանու որոշ ներկայացուցիչներ միանգամից գիտակցեցին դա և սկսեցին իրական քայլեր ձեռնարկել՝ վեր կանգնելու հատվածապաշտական գործելակերպից: Շրջանառության մեջ դրվեցին ահագնացող քառսի հաղթահարման մի քանի նախագծեր, որոնց մենք առիթ ունեցել ենք անդրադառնալու առանձին քննությամբ¹⁴: Առանձնակի ճկունություն ցուցաբերեցին Սենատի ամենաանզիջում և արմատական թևի ներկայացուցիչները: Կատոն Կրտսերի և Մարկուս Բիբուլուսի նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրված նախագիծը որակապես նոր լուծում էր առաջարկում. «Եվ շատերը սկսեցին համոզել միմյանց, որ առկա չարիքից միակ դեղամիջոց կարող է լինել մենիշխանական կառավարումը: Հարկ է լոկ ընտրել մեկին, որ լինի միաժամանակ և՛ զորեղ, և՛ մեծահոգի» [App., BC, II, 20]: Ասվածը համահունչ է Պլուտարքոսի տեղեկությանը «ցանկացած իշխանություն

¹³ E. Gruen, *The Last Generation of the Roman Republic*, Berkley: University of California Press, 1995, pp. 90-120; D. Shotter, *The Fall of the Roman Republic*, London, New York: Routledge, 2005, pp. 63-71.

¹⁴ Լ. Մինայան, Պոմպեոսը և քաղաքական իրավիճակը Հռոմում Ք. ա. 54-51 թթ. (Consul sine collega – Պրինցիպատի նախափորձը), *Պատմություն և կրթություն*, 3-4 (2006), էջ 25-39:

նախընտրելի է անիշխանությունից» [Plut., Pomp., LIV, 15, 3]: Ք. ա. 52 թ. Պոմպեոսն ընտրվեց կոնսուլ առանց պաշտոնակցի (*consul sine collega*): Դիոն Կասիոսն ընդգծում է. «Սա անօրինակ բան էր, որը [նախկինում] չէր կիրարկվել որևէ պարագայում» [Dio Cass., XL, 5]: Կառավարման այս ձևը, Ապիանոսի դիպուկ բանաձևմամբ՝ «դիկտատորի իշխանության և կոնսուլի պատասխանատվության համադրությունն էր» [App., BC, II, 27]:

Ակներև է, խոսքը մենիշխանական և հանրապետական սկզբունքների համադրության մասին էր: Ուշադրություն էր հրավիրվում Պոմպեոսի հեղինակության և բարոյական որակների վրա. «Ցուցանում էին նրան, ով, ինչպես իրենք էին մտածում, բավականաչափ զորք ուներ, ժողովրդի բարեկամն էր և ղեկավարում էր Սենատը պատվով և հարգանքով, նաև չափավոր ու համեստ կյանք էր վարում» [App., BC, II, 20]: Գրեթե նույն ոգով է հնչում Սենատում հնչած Բիբուլոսի միտքը. Պոմպեոսի միանձնյա կոնսուլությամբ «պետությունը կազատվի ներկայիս անկարգությունից՝ ենթարկվելով առաքինի մեկին» [Plut., Pomp., LIV, 15]:

Ի զարգացումն այս ըմբռնման Պոմպեոսի շրջապատն իր քարոզչության մեջ ավելի ու ավելի էր ընդգծում նրա իշխանության օրինական և բարոյական հիմքերը, հնարավորինս ստվերում ուժային հարկադրանքը և շեշտում նրա կեցվածքին ու գործունեությանը բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք էին հեղինակությունը (*auctoritas*), վեհանձնությունը (*dignitas*), պատիվը (*honor*), լրջախոհությունը (*gravitas*), չափավորությունը (*moderatio*):

Այսպիսով, տասնամյա գործունեության արդյունքում, գործելով զսպվածությամբ և (երբեմն էլ՝ անսկզբունքայնությամբ սահմանակցող) ճկունությամբ, Ք. ա. 52 թ. Պոմպեոսը հասավ իր նպատակին: Իրական կերպարանք ստացավ Հանրապետության և միապետության համադրելիությունը:

4. Պատմության դասը

Պոմպեոսը համոզված էր, որ նոր ձևավորվող համակեցական կարգն այլընտրանք և լուրջ հակառակորդներ չունի, և անհրա-

ժեշտ քաղաքական կամք ու հետևողականություն չդրսևորեց սահմանադրորեն ամրագրելու իր *sine collega* կարգավիճակը: Հռոմում վերականգնելով կարգուկանոնը՝ նա ժամկետից շուտ հրաժարվեց կոնսուլական իշխանությունից և սկսեց այն աստիճան հավատալ Հանրապետության խաղաղ «թժշկման» գաղափարին, որ այլևս լուրջ չէր վերաբերվում ուժի և դիկտատորայի հնարավորությանը Հռոմում: Ավելին, նա այս մտայնությունը սկսեց վերագրել իշխանական մրցավազքի իր հիմնական ախոյանին՝ Կեսարին: Պոմպեոսի այս կեցվածքը մենք բնորոշում ենք որպես *սահմանադրական ռոմանտիզմ*: Դա էր հիմնական պատճառը, որ Ք. ա. 49 թ. սկսած Քաղաքացիական պատերազմին նա միանգամայն անպատրաստ գտնվեց ինչպես ռազմական, այնպես էլ հոգեբանական դիտանկյունից: Չոհվեց և լքեց պատմության թատերաբեմը:

Կար մի հանգամանք ևս: Ընտրությունը կատարելով հօգուտ սենատական վերնախավի՝ Պոմպեոսը քիչ էր ուշադրություն դարձնում «միջակա» ենթաշերտին, որին պատկանում էին ավելի երիտասարդ տարիքի անձինք՝ պատրաստ ծայրահեղ քայլերի հանուն դիրքի և հարստության: Նրանց իր կողմը գրավեց Կեսարը:

Ամենակարևորը. Պոմպեոսը չհասավ վերջնական հաջողության, քանզի «մոռացել» էր պլեբսին: Ճիշտ է, քարոզչական նպատակով նա իրեն անվանում էր ժողովրդի բարեկամ (*amicus populi*) և քիչ բան չարեց վերջինիս բարեկեցության համար, այդուհանդերձ չընդունեց «ժողովրդից եկող» որևէ պաշտոն կամ իշխանություն: Խոսքն առաջին հերթին տրիբունական իշխանության մասին է: Այդ բացը վիճակված էր լրացնելու Օգոստոս Օկտավիանոսին. պատմության մի դաս, որ արդիական է առայսօր:

Ինչ վերաբերում է Կեսարին, ապա նա, ըստ էության, կրկնեց Լ. Կ. Սուլլայի ուղին: Հաղթանակ տարավ Քաղաքացիական պատերազմում, դարձավ Հռոմի մենիշխան տիրակալը, սակայն հայտնվեց ռազմական ուղու փակուղայնության առջև. Հռոմում չափազանց զորեղ էին հանրապետական ավանդույթները: Ք. ա. 44 թ. նա «հանրապետական դավադրության» զոհ դարձավ:

Հռոմը ներքաշվեց նոր Քաղաքացիական պատերազմի հորձանուտի մեջ, որը տևեց գրեթե մեկուկես տասնամյակ (Ք. ա. 43-41 թթ.)՝ պատճառելով մարդկային և նյութական մեծագույն կորուստ-

ներ: Ասպարեզից հեռացան ուժեղ անհատականությունները՝ տեղը զիջելով Գայուս Հուլիուս Կեսար Օկտավիանոսին, որը դարձավ պրինցիպատի՝ հանրապետական միապետության հիմնադիրը (Ք. ա. 27 թ.): Օկտավիանոսի քարոզչությունը նրան ներկայացնում էր իբրև Աստվածային Կեսարի ժառանգորդ (filius divi Caesari). բառիս ուղղակի իմաստով դա ճշմարիտ է: Սակայն քաղաքակրթական գեների առումով դժվար է ժխտել նրա խորագույն կապը Գն. Պոմպեոսի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Appianus**, *Historia Romana*, In 4 Vol., With an Engl. Transl. by H. White, The Loeb Classical Library, Cambridge, (MA), Harvard University Press, Vol. 1, 1958; Vol. 2, 1955; Vol. 3, 1958; Vol. 4, 1955.
- Cassius Dio Cocceianus**, *Historia Romana*, In 9 Vol., With an Engl. Transl. by E. Cary, The Loeb Classical Library, Cambridge (MA): Harvard University Press, Vol. 3., 1961.
- Cicero Marcus Tullius**, *De Re Publica, De Legibus*, With an Engl. Transl. by C. W. Keyes, The Loeb Classical Library, Cambridge (MA): Harvard University Press, 1959.
- Paterculus Velleius**, *Compendium Historiae Romanae, Res Gestae Divi Augusti*, With an Engl. Transl. by F. W. Shipley, The Loeb Classical Library, Cambridge (MA): Harvard University Press, 1955.
- Plutarchus**, *Vitae*, In 11 Vol., With an Engl. Transl. by B. Parrin, The Loeb Classical Library, Cambridge (MA): Harvard University Press, 1949-1959.
- Suaetoni Gaius Tranquillus**, *De vita Caesarum*, In 2 Vol., With an Engl. Transl. by J. C. Rolfe, Cambridge (MA): Harvard University Press, Vol. 1, 1960.

Ստեփանյան Ա., *Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Արտաշեսյան դարաշրջան*, Երևան: Սարգիս Խաչենց, Փրինթինգո, 2012:

Մինասյան Լ., Գնեսու Պոմպեոսը և հանրապետական կարգի ճգնաժամը Հռոմում (քաղաքական իդեալ և իրականություն), *Պատմություն և կրթություն*, 1-2 (2005), էջ 55-68:

Մինասյան Լ., Հին Հռոմ. անցում հանրապետությունից պրինցիպատի (առաջին եռապետության փորձից), *Կանթեղ*, 22 (2005), էջ 104-112:

Մինասյան Լ., Պոմպեոսը և քաղաքական իրավիճակը Հռոմում Ք. ա. 54-51 թթ. (Consul sine collega – Պրինցիպատի նախափորձը), *Պատմություն և կրթություն*, 3-4 (2006), էջ 25-39:

Anderson W., *Pompey, His Friends and the Literature of the First Century B. C.*, Berkley: University of California Press, 1963.

Astin A. E., *Scipio Aemilianus*, Oxford Clarendon Press, 1967.

Astin A. E., Scipionic Circle, *Oxford Classical Dictionary*, Oxford, 1992, pp. 963-964.

Ferrary J.-L., Statesman and Law in Cicero's Political Philosophy, in *Justice and Generosity*, Proceedings of the Sixth Symposium Hellenisticum, Cambridge University Press, 1995, pp. 60-66.

Gelzer M., *Pompeius*, Munchen: Verlag F. Bruckmann: 1959.

Greenhalgh P., *Pompey: The Roman Alexander*, London: Weidenfeld and Nicolson, 1980.

Greenhalgh P., *Pompey: The Republican Prince*, London: Weidenfeld and Nicolson, 1981.

Gruen E., *The Last Generation of the Roman Republic*, Berkley: University of California Press, 1995.

Leach J., *Pompey the Great*, London: Croom Helm, 1978.

Mayer Ed., *Caesars Monarchie und das Prinzipat des Pompeius, Innere Geschichte Roms von 66 bis 44 v. Chr.*, Stuttgart/Berlin.

Rawson B., *The Politics of Friendship: Pompey and Cicero*, Oxford, 1978.

Seager R., *Pompey: A Political Biography*, Oxford: Blackwell, 1979.

- Shotter D., *The Fall of the Roman Republic*, London, New York: Routledge, 2005.
- Springs K. D., Litt M., Civilization, Transformation and Collapse, *Journal of World Anthropology*, 3 (2007), pp. 99-102.
- Southern P., *Pompey the Great*, Great Britain: Tempus Publishing Ltd, 2002.
- Springs K. D., Litt M., Civilization, Transformation and Collapse, *Journal of World Anthropology*, 3 (2007), pp. 99-102.
- Van Den Blom H., *Cicero's Role Models. The Political Strategy of a Newcomer*, New York: Oxford University Press, 2010, p. 185.
- Ward E., The Early Relationships between Cicero and Pompey until 80 B.C., *Phoenix*, 24 (1970), p. 119-129.
- Ward E., Cicero and Pompey in 75 and 70 B.C., *Latomus*, 29 (1970), pp. 58-71.
- Моммзен Т., *История Рима*, т. III, Москва: Госполитиздат, 1941.
- Тойнби А. Дж., *Постигжение истории*, Москва: Айрис-Пресс, 2002.
- Утченко С., *Юлий Цезарь*, Москва: Мысль, 1976.

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՊՐԻՆՑԵՊՍԻ ԱՆՁԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԻՆՑԻՊԱՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մուտք

Հռոմի պատմության կարևորագույն խնդիրներից է պրինցիպատի ծագման, կայացման և զարգացման հիմնախնդիրը: Պրինցիպատի համակարգի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրությունը, մեր կարծիքով, հիմնավորված չէ լոկ գիտական պատճառներով: Երկրորդ համաշխարհային պատերազմի իրողությունները, Խորհրդային Միության անկումը շատ արդիական են դարձնում իշխանության և հասարակության փոխհարաբերությունների և դրանց միջև ուժերի հարաբերականության խնդրի քննարկումը: Հետևաբար մեծ կարևորություն է ներկայացնում անցյալի իրողությունների ուսումնասիրությունը, որոնք համընկնում են ժամանակակից գործընթացներին և հնարավորություն են տալիս պատասխանելու որոշ հարցերի: Ուսումնասիրելով Հռոմեական կայսրության կայացման և զարգացման պատմությունը՝ վեր ենք հանում բազմաթիվ համընկման կետեր միջնադարյան, նոր, ինչպես նաև նորագույն ժամանակաշրջանի կայսրությունների հետ: Մի կողմից՝ զուգահեռները բրիտանական, ֆրանսիական և այլ կայսրությունների հետ չի կարելի ժխտել: Մյուս կողմից՝ պրինցիպատի համակարգն ունի ոչ պակաս ընդհանուր գծեր ավելի ուշ շրջանի բացարձակ և սահմանադրական միապետությունների հետ:

Հնագույն սկզբնաղբյուրները բաժանում էին պրինցեպսի իշխանությունը կրողներին «լավերի» և «վատերի»՝ միաժամանակ հասկանալով, որ առաջինների կառավարումը ոչ միշտ էր լինում բարենպաստ կայսրության համար: Փորձելով հետևել այս ավանդույթին՝ հողվածում առանձնացվում է երեքական ներկայացուցիչ այսպես կոչված «լավ» և «վատ» պրինցեպսների շարքից: Պրինցեպսների ընտրությունը կամայական չի եղել: Յուրաքանչյուրի ընտրությունը բացատրվում է Հռոմի պատմության մեջ նրա կա-

տարած եզակի և անգնահատելի դերով՝ լինի դա փոփոխություն դեպի լավը, թե՛ վատը:

1. Պրինցիպատի դրական փոփոխության միտումները «լավ» պրինցեպսների կառավարման տարիներին (Օգոստոս, Ադրիանոս, Մարկոս Ավրելիոս)

Օգոստոսի երկարատև կառավարման շրջանը ոչ միայն դարձավ Հռոմի քաղաքական նոր համակարգի հիմքերի ձևավորման շրջան, այլև հավանաբար հանդիսացավ ամբողջ պետության «ոսկե դարը»¹: «Խաղաղություն»՝ ահա այն բառը, որով Օգոստոսը բնութագրում էր իր արտաքին և ներքին քաղաքականության ուղղությունը²: Նրա նպատակն էր՝ խաղաղություն հաստատել հռոմեական քաղաքացիների խավերի, քաղաքական հակառակորդների, պրովինցիաների և կենտրոնի միջև: Պետությունն այլևս չէր բաժանվում իշխանություն տենչացող կուսակցությունների կողմից՝ կրկին դառնալով հասարակության սեփականությունը, այսինքն՝ հենված չէր քաղաքացիների խմբավորման վրա, այլ արտահայտում էր նրա կամքը, ծառայում քաղաքացիների հետաքրքրություններին:

Խաղաղության պահպանումը կարևոր տեղ էր գրավում նաև Անտոնինոսների դինաստիայի երկու ներկայացուցիչների՝ Ադրիանոսի և Մարկոս Ավրելիոսի քաղաքականության մեջ: Ադրիանոսը պրինցեպս հռչակվելով սիրիական լեգեոնների կողմից՝ իր կառավարումը սկսում է Պարթևստանի հետ խաղաղության կնքմամբ: Օրինակ ընդունելով Օգոստոսին՝ Ադրիանոսը պրինցեպսի պարտականություններին վերաբերում էր այնպիսի լրջությամբ և պատասխանատվությամբ, ինչպես ոչ ոք իր նախորդներից: Անտոնինոսները մի շարք քայլերով իրենց մեկուսացնում էին ահաբեկման քաղաքականությունից:

¹ V. Rudich, *Political Dissidence under Neron*, London and New York, 2005, p. 28.

² R. Syme, *The Roman Revolution*, Oxford University Press, 2002, p. 95.

Միաժամանակ, կարգավորվում են հարաբերությունները բանակի հետ, աղքատ բնակչությանն աջակցելու նպատակով ստեղծվում է բարեգործական համակարգ, ավելանում է կայսերական միջամտությունը պրովինցիաների կյանքին³: Գտնելով, որ կայսրության ղեկավարն իր ձեռքում պետք է կենտրոնացնի կառավարման և գիտելիքների բոլոր լծակները՝ Ադրիանոսն իր կառավարման մեծագույն մասն անցկացնում է քաղաքից քաղաք և մի պրովինցիայից մյուսն անցնելով՝ անձամբ վերահսկելով կայսրության բոլոր անկյուններում իրականացվող գործընթացները: Պրովինցիաների հանդեպ ուշադրությունը բնորոշ է նաև Օգոստոսի քաղաքականությանը⁴: Պրովինցիաներում վերացվում են կողոպուտն ու ծովահենությունը, կառուցվում են ճանապարհներ, որոնք ունեին ռազմական և առևտրական կարևոր նշանակություն:

Օգոստոսի ամենակարևոր ձեռնարկումներից էր ցենզի անցկացումը, ինչը բավական երկար ժամանակ տեղի չէր ունեցել: Այն մարդիկ, որոնք իրենց ունեցվածքով չէին համապատասխանում սենատորական դասին, հեռացվում էին սենատից: Սենատորների համար նվազագույն գումար է սահմանվում մեկ միլիոն սեստերցը: Նրա գահակալության սկզբում սենատի վիճակը չափից ավելի անմխիթար էր, որովհետև սենատորների թիվը հասել էր հազարի, այնինչ չպետք է անցներ երեք հարյուրից: Երկրորդ կարևոր խավը հեծյալներն էին, որոնք, ինչպես և նախկինում, հիմնականում տնօրինում էին դատական հանձնաժողովները⁵: Հեծյալ դառնալու համար ցենզ հաստատվեց չորս հարյուր հազար սեստերց, իսկ մյուս բոլոր «անարժանները» վտարվեցին հեծյալների դասից⁶:

Կարելի է ընդհանուր բնութագրում տալ Ադրիանոսի և Մարկոս Ավրելիոսի ներքին քաղաքականությանը: Այն ընդհանուր գծերով

³ Я. Ю. Межерицкий, *Принципат: От республики к монархии*, Москва, 1998, с. 157.

⁴ C. M. Wells, *The Roman Empire*, Harvard University Press, 2004, p. 79.

⁵ F. Robin, *The Classical World: An Epic History from Homer to Hadrian*, Basic Books, 2006, p. 153.

⁶ А. Л. Смышляев, *Деяния божественного Августа. История древнего Рима. Тексты и документы.*, Москва, 2004, с. 105.

ուղղված էր սենատի հետ հարաբերությունների կարգավորմանը, ինչն առաջնակարգ դեր էր կատարում նաև Օգոստոսի քաղաքականության մեջ:

Ադրիանոսի կառավարման տարիներին ստեղծվում է մշտական պետական խորհուրդ, ինչը հարված է հասցնում սենատի հեղինակությանը: Ադրիանոսի հրամանով ստեղծվում է նաև, այսպես կոչված, «հավերժական էդիկտ» (*edictum perpetuum*)⁷ փաստաթուղթը, որը հաստատվում է պրինցեպսի կողմից: Այդ փաստաթուղթը պրետորներին զրկում էր օրենսդրական նախաձեռնության իրավունքից. իրավունքի համախմբման պատրվակով չեզոքացվում էր սենատի և մագիստրատուրաների վարչական, դատական և օրենսդրական նշանակությունը: Պրինցեպսի իշխանության ամրապնդումը կատարվում էր ոչ թե կոպիտ ուժի, այլ հոռմեական իրավունքի շահարկման միջոցով: Օգոստոսի կառավարման տարիներին ևս կոպիտ ուժի կիրառումը բացառվում էր: Հիմնական գործող լծակը Օգոստոսի առանձնահատուկ հեղինակությունն էր (*auctoritas Augusti*)⁸, ինչը մեծ ուժ էր ներկայացնում:

Օգոստոսի կառավարման տարիներին ստեղծվում է հստակ աշխատող բյուրոկրատական ապարատ. կարգավորվում է գրասենյակային աշխատանքը պրովինցիաներում՝ խստացվելով պատիժները կաշառակերության, շորթման դեպքերում, հաստատվում է հարկերի հաստատուն քանակ, ընդունվում են մի շարք որոշումներ սեփականության, այդ թվում՝ նաև մասնավոր սեփականության ապահովման համար, լեգեոնները վերածվում են մշտական զինվորական ենթաջոկատների, որոնցից շատերը պահպանվում են դարերի ընթացքում: Ուժեղացվում են ոստիկանական ջոկատները, ստեղծվում է պրետորական գվարդիա:

Ադրիանոսը և Մարկոս Ավրելիոսը ներքին քաղաքականության ասպարեզում շարունակում էին Օգոստոսի նախանշած ուղին. Պահպանելով սենատի հետ բարյացակամ հարաբերություններ՝

⁷ A. Clifford, *Imperial Ideology and Provincial Loyalty in the Roman Empire*, University of California Press, 2000, p. 201.

⁸ C. Scarre, *Chronicle of the Roman Emperors*, London: Thames & Hudson Ltd, 2002, p. 127.

աշխատում էին այն ներգրավել կայսերական ադմինիստրացիայի մեջ և ամրապնդել բյուրոկրատական համակարգը: Ադրիանոսի կառավարման տարիներին պրինցեպսի խորհուրդը դառնում է պաշտոնական բարձրագույն պետական կառույց, որում ներգրավվում էին պրինցեպսի խորհրդականները, առաջատար իրավագետները և կենտրոնական բաժանմունքների ղեկավարները, որոնց թիվն ավելանում է երկու անգամ⁹: Ընդլայնվում էին նաև պրինցեպսի օրենսդրական լիազորությունները, պրովինցիաների կառավարման համակարգը մայրաքաղաքի կառավարման համակարգի օրինակով վերափոխվում էր, հարկային համակարգը՝ մասնավորապես արևելյան շրջաններում, մեղմացվում էր: Մարկոս Ավրելիոսի ժամանակ հռոմեափտալական վերնախավը վերջնականապես կորցնում է իր առաջատար դիրքը սենատում¹⁰: Բնականաբար, հռոմեական հասարակության հիմնական մասը կազմում էր պլեբսը, որի նկատմամբ Օգոստոսը վարում էր հնարավորինս մեղմ քաղաքականություն: Նա գտնում էր, որ պլեբսի համար ամենակարևորը հացն ու հանդեսներն են (*panem et circenses!*)¹¹: Անտոնինոսներն իրենց սոցիալական ծրագրերում ավելի հեռուն էին գնում: Առաջին Անտոնինոսները հատուկ միջոցառումներ էին ձեռնարկում Իտալիայի աղքատացող բնակչությանն օգնելու ուղղությամբ: Կայսերական գանձարանի միջոցներով ստեղծվում էր սոցիալական ֆոնդ՝ ցածր տոկոսադրույքներով մանր հողագործների վարկավորման համար: Տոկոսները վերադարձվում էին ոչ թե կայսերական գանձարան, այլ փոխանցվում էին քաղաքային գանձարաններ: Ստեղծված ֆոնդերից տրվում էին նպաստներ (*alimenta*) աղքատ ընտանիքներին, որբերին օգնելու համար, սկզբում՝ միայն տղաներին, ապա՝ նաև աղջիկներին: Ադրիանոսի կառավարման տարիներին ալիմենտների համա-

⁹ А. Петряков, *Великие Цезари. Творцы Римской империи*, Москва, 2011, с. 95.

¹⁰ Ст'ю Э. Ренан, *Марк Аврелий и конец античного мира*, СПб., 1906.

¹¹ Н. А. Машкин, *Принципат Августа. Происхождение и социальная сущность*, Москва, 1949, с. 154.

կարգը զարգանում և կատարելագործվում էր¹²: Ֆոնդերը լրացվում էին նաև առանձին բարեգործների կողմից: Որբերը և աղքատ ընտանիքների երեխաները ամսական նպաստ էին ստանում, իսկ մայրաքաղաքում հինգ հազար երեխաներ ստանում էին անվճար հաց: Աղքատներին, բացի հացից և կարագից, տրվում էր նաև գինի:

Անտոնինոսների սոցիալական քաղաքականության վրա II դարում մեծ ազդեցություն են ունենում նոր տնտեսական իրողությունները. մի խումբ խոշոր հողագործների՝ տնտեսական գործունեությունից հրաժարվելը, հողերը վարձակալությամբ տրամադրելու փորձարարության կիրառումը և ստրուկներին որոշ տնտեսական ինքնուրույնության հատկացումը: Ադրիանոսն օրենսդրականորեն կարգավորում է վարձակալների՝ կոլոնների և սեփականատերերի հարաբերությունները, Անտոնինոս Պիոսն իրավականորեն ընդունում է ստրուկների որոշ իրավական ստատուս, Կոմմոդոսը դաժան միջոցառումներ է ձեռնարկում խոշոր հողատերերից կոլոններին պաշտպանելու համար և առաջին անգամ Հռոմի պատմության մեջ լքված տարածքներում սկսում է բնակեցնել բարբարոս ցեղերի ռազմագերիներին՝ դարձնելով նրանց պետական վարձակալներ, որոնք գանձարանին վճարում էին հստակ սահմանված հարկ: Անտոնինոսները պահպանում էին այլմենտների ֆոնդը, որը Մարկոս Ավրելիոսի ժամանակ դառնում է բյուրոկրատական կառույց սեփական հաստիքներով՝ ղեկավարվելով պրեֆեկտի աստիճան ունեցող սենատորի կողմից:

Անտիկ սկզբնաղբյուրներում «լավ» պրինցեպսների նկարագրություններում, բացի ներքին և արտաքին քաղաքականության նմանությունից, կա նաև կարևոր ընդհանրություն: Նրանք բոլորը ներկայացվում էին որպես ժողովրդին մոտ կանգնած մարդիկ, որոնք իրենց հագուստով, պահվածքով և ապրելակերպով աշխատում էին չտարբերվել մյուս քաղաքացիներից: Օգոստոսն ազատորեն շրջում էր Հռոմում, Ադրիանոսը ճանապարհորդությունների ժամանակ հագնում էր հասարակ հագուստ, հանդիպում և

¹² Т. Моммзен, *История Рима*, т. II, Москва, 2005, с. 207.

շփվում էր շարքային քաղաքացիների հետ, իսկ Մարկոս Ավրելիոսն ընդհանրապես հայտնի էր իր մարդասիրությամբ և պարզությամբ: Ի տարբերություն «լավերի»՝ «վատերը» ներկայացվում էին ժողովրդից առանձնացած, իրենց շքեղ պալատներում մեկուսացված, պարուրված իրենց անձի մեծության պատրանքով:

Օգոստոսի, Ադրիանոսի և Մարկոս Ավրելիոսի կառավարման տարիները նշանավորվում են նաև շինարարական լայնածավալ աշխատանքներով, ինչպես նաև արվեստի և գիտության նկատմամբ հատուկ հովանավորչությամբ: Ամբողջ երկրում կառուցվում են թատրոններ, գրադարաններ, քաղաքները զարդարվում են բազմաթիվ արձաններով: Հռոմում կառուցվում է Ադրիանոսի դամբարանը, այսպես կոչված Սուրբ հրեշտակի դղյակը¹³: Առանձնահատուկ շքեղությամբ կառուցվում է նաև հայտնի վիլլան Տիբուրում, ջրանցք է անցկացվում Սթիմֆալից Կորնթոս: Պրինցեպսները բարձր էին գնահատում հունական մշակույթը, հովանավորում էին արվեստը, պոեզիան, փիլիսոփայությունը: Օգոստոսը կարող էր հպարտանալ, որ Հռոմը նա ստացավ աղյուսից, իսկ իր հաջորդներին փոխանցեց մարմարից: Քաղաքի վերակառուցման համար օգտագործվում էին ռազմական ծախսերի համար նախատեսված միջոցները: Շինարարությունն աշխատանքով էր ապահովում պլեբեյներին և նպաստում Օգոստոսի հեղինակության բարձրացմանը. բարձրանում էր նաև կայսրության մայրաքաղաքի՝ Հռոմի վարկանիշը: Պրինցեպսները շինարարական աշխատանքներ կատարելով՝ փորձում էին բարձր պահել իրենց հեղինակությունը:

2. Պրինցիպատի անկման միտումները «վատ» պրինցեպսների կառավարման տարիներին (Կալիգուլա, Ներոն, Կոմմոդոս)

Հռոմեական կայսրությունը գոյություն է ունեցել շուրջ տասնվեց դար և տեսել է բազմաթիվ կառավարիչների՝ կիսախելագար,

¹³ Дион Кассий, *Римская история*, LXXII, Москва, 1981, с. 19-21.

բռնակալ, դաժան, արդարամիտ: Անտիկ պատմիչների աշխատություններում զարմանալի օրինաչափություն է նկատվում: Բաժանելով պրինցեպսի իշխանության կրողներին «լավերի» և «վատերի»՝ նրանք նկարագրվում են սկզբնաղբյուրների հեղինակների կողմից գրեթե միանման: Կան ընդհանրություններ, որոնք տեսանելի են անմիջապես, մյուսներն ի հայտ են գալիս մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում: Այս միտումը նկատվում է հատկապես «վատ» պրինցեպսներին անդրադառնալիս, որոնց վերագրվում են միանման բնավորության գծեր, թերություններ և չարագործություններ:

Ավրելիոսը և Կոմմոդոսը գտնվում էին «լավի» և «վատի» հակառակ բևեռներում: Հայրը համարվում էր լավագույն պրինցեպսներից մեկը, մինչդեռ որդին՝ Կոմմոդոսը, հնարավոր է վատագույնը: Սակայն նրանց կառավարման տարիներին կայսրությունում իրավիճակը հավասարապես ծանր էր: Գիտելիքի պաշտամունքին, որին Մարկոս Ավրելիոսը նվիրեց իր կյանքը, հակադրվում է կոպիտ ուժը, որը պրոպագանդվում էր հրամանների և համապատասխան պատկերներով մետաղադրամների միջոցով: Կայսերական պալատը, Մարկոս Ավրելիոսի և նրա նախորդների կողմից ժողովված գրքերով և արվեստի հոյակապ նմուշներով, Կոմմոդոսը վերածում է գլադիատորական զորանոցի: Նա իրենից հեռացնում է հոր բոլոր խորհրդականներին՝ իր շուրջը համախմբելով մարդկանց, որոնք հայտնի էին իրենց ազատամտությամբ: Սենատորներից շատերին նա ինքնասպանություն գործելու հրաման է ուղարկում: Հստակ զուգահեռներ էին տարվում Կալիգուլայի և Ներոնի միջև: Նրանք ևս իրենց շրջապատից հեռացնում էին ուսյալ և խելամիտ խորհրդականներին՝ շրջապատվելով փառասեր և իշխանատենչ ինքնակոչներով, ինչպես դա տեղի ունեցավ Ներոնի և Սենեկայի միջև:

«Վատ» պրինցեպսները բնութագրվում են դեպի դաժանություն, այլասերվածություն և բռնություն ընդհանուր հակվածությամբ: Նրանք միտված էին զբաղվելու պրինցեպսի և, ընդհանրապես, Հռոմի քաղաքացու համար անպատվաբեր գործերով՝ անտեսելով իրենց քաղաքական պարտականությունները: Կալիգուլան սիրում էր ներկա գտնվել խոշտանգումներին և մահապատիժներ

րին¹⁴: Իբրև սովորական գլադիատոր՝ Կալիգուլան մասնակցում էր գլադիատորական խաղերին¹⁵, մինչդեռ հռոմեացիների մոտ դա ստրուկների, հանցագործների կամ ազատագիրների զբաղմունք էր, բայց ոչ երբեք ազատ մարդկանց, առավել ևս՝ պրինցեպսի: Կալիգուլան ինքն իրեն դուրս դրեց հռոմեական հասարակությունից. հաճույք ստանալով ուրիշների տանջանքներից և մերժելով մեծահոգությունը՝ նա ապացուցեց, որ արժանի չէ իշխանության: Կալիգուլան չէր խորշում կապի մեջ մտնել տղամարդկանց, պատանիների և մարմնավաճառների հետ: Նա իրեն շրջապատում էր արևելյան շոալությամբ և նույնիսկ կարող էր հասարակության մեջ հայտնվել կայսերը և ընդհանրապես հռոմեացի տղամարդուն անվայել հագուստով, երբեմն նույնիսկ՝ կանացի: Այս բնութագրությունը կարելի է կրկնել թե՛ Ներոնի, թե՛ Կոմմոդոսի առնչությամբ: Այլասերվածություն, հարբեցողություն, շոալություն, անասելի դաժանություններ՝ ահա իրողություններ, որոնք կարմիր գծով անցնում են այս երեք պրինցեպսների կառավարման տարիներով: Ժամանակակիցներն իրավացիորեն գտնում էին, որ Կոմմոդոսը մարմնավորում է Յուլիոս-Կլավդիոսների տան վատագույն ներկայացուցիչների՝ Կալիգուլայի և Ներոնի հատկանիշները: Կոմմոդոսի հարեմում մի քանի հարյուր կանայք էին և նույնքան էլ երիտասարդ տղաներ: Ժամանակակիցների խոսքերով՝ նա փորձարկել էր այլասերվածության բոլոր մեթոդները:

Անտիկ հեղինակների աշխատություններում բազմաթիվ ավանդազրույցներ են պահպանվել, որոնք նկարագրում են «վատ» պրինցեպսների կառավարման տարիների դաժանությունները: Դրանք ունեն բավական ընդհանրություններ: Պրինցեպսներին համեմատում են հրեշների, օձերի և դևերի հետ: Ասում են՝ Տիբերիոսը նույնիսկ հայտարարել է, որ հանձինս Ադրիանոսի՝ իսկական հրեշ է պատրաստում Հռոմի համար: Կոմմոդոսի մասին պահպանվել է հետևյալ ավանդույթը. «Երբ Ֆաուստինան հոյի էր

¹⁴ A. A. Barrett, *Caligula: The corruption of power*, London, 2001, p. 85.

¹⁵ Светоний, *Гай Канулина*, 30.

Կոմմոդոսով և նրա եղբորով՝ Անտոնինոսով (նրանք երկվորյակներ էին), երազ է տեսնում՝ իբր ծնել է երկու օձ, որոնցից մեկը հատկապես կատաղի էր»¹⁶: Իսկ Ներոնի դեպքում այդպիսի ավանդույթների և մարգարեական երազների պակաս ընդհանրապես չի զգացվում: Մարգարեական էին նաև նրա հոր՝ Դոմիցիոսի խոսքերը, որն ի պատասխան բարեկամների շնորհավորանքների՝ բացականչել էր, թե իրենից ու Ագրիպպինայից ոչինչ չի կարող ծնվել, բացի մարդկության համար սարսափից ու ցավից¹⁷:

Ներքին քաղաքականությունը ևս պրինցեպսներին չէր հետաքրքրում: Կայսրության ներսում տիրում էր ֆավորիտների քաղաքականությունը, որն ուղեկցվում էր վատնողականությամբ և կաշառակերությամբ: Պալատականների մրցակցությունը և պայքարը իշխանության համար արագորեն հանգեցրին կայսրության ներսում անիշխանության հաստատմանը:

Կոմմոդոսի կառավարման տարիներին ճգնաժամ է սկսում: Նա փորձում է վերականգնել Կալիգուլայի, Ներոնի և Դոմիցիանոսի կառավարման տարիների քաղաքական ուղղվածությունը՝ վերին խավերի ճնշում, սենատորական ընդդիմության դեմ հարձակումներ, բանակի և քաղաքային պլեբսի սիրաշահում, ինչը ենթադրում էր զինվորների վճարների ավելացում, բնակչության համար տեսարանների ու տոնախմբությունների կազմակերպում և շնորհների բաժանում, աստվածային մեծարումների պահանջ: Կոմմոդոսի կառավարման տարիներին բնորոշ պետական գանձարանի սպառումը, մեծաթիվ բռնագրավումները, հարկերի բարձրացումը, պետության անկարողությունը Իտալիայի համար անհրաժեշտ բնամթերքի ապահովման հարցում զրկեցին պրինցեպսին հասարակության որևէ աջակցությունից:

Անտոնինոսների կառավարման դարաշրջանը կարևորվում է նաև նրանով, որ շատ ուսումնասիրողներ Հռոմեական կայսրության անկման պատճառների կլունքները տեսնում են այս դինաստիայի պատմության ասպարեզից հեռանալու մեջ:

¹⁶ Элий Лампридий, *Коммод Антонин*, I, 3.

¹⁷ Светоний, *Нерон*, 6.

Ամփոփում

Հնարավոր չէ հասկանալ պրինցիպատի համակարգի էությունը առանց անդրադառնալու պրինցեպսների անձին: Թեպետ Օգոստոսի իշխանությունը և հեղինակությունը մնում են անգերազանցելի, և պրինցիպատի համակարգն էլ, ըստ էության, անփոփոխ չի եղել, այնուամենայնիվ այդ համակարգը հետագայում ևս գլխավորել են արժանավոր և արդարամիտ պրինցեպսներ: Սակայն պրինցիպատը երբեմն գլխավորել են ոչ այնքան արժանավոր և ուսյալ պրինցեպսներ, և պրինցիպատը ոչ միշտ է ընթացել զարգացման ճանապարհով:

Հռոմեական կայսրության անկումն անսպասելի չէր, և դրա նախանշանները նկատելի էին դեռևս II դարի կեսից սկսած, այսինքն՝ Մարկոս Ավրելիոսի կառավարման շրջանից, և կապվում են ինչպես արևելյան և հյուսիսային շրջաններում արտաքին քաղաքական դրության սրման, այնպես էլ խոր սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետ: Կոմմոդոսի սպանությունը Հռոմը կանգնեցնում է անդունդի եզրին: Թվում էր՝ կրկնվում է 68 թ. դրությունը, երբ իշխանության համար մրցում էին գահի չորս հավակնորդներ: Խոշոր բանակներից յուրաքանչյուրը ներկայացնում էր իր թեկնածուին:

Կալիգուլան, Ներոնը և Կոմմոդոսը կարծես նպատակ էին դրել ոչնչացնելու այն ամենը, ինչով հպարտանում էին հռոմեացիները, ծաղրել ավանդույթներն ու սովորույթները: Նրանց քաղաքական գործունեությունն անհեթեթ տարօրինակությունների և չար ֆարսի խառնուրդ էր:

Նրանց գործողությունների հիմնական շարժառիթը, ամենայն հավանականությամբ, ամենաթողության բացարձակեցումն էր: Դա արբեցրեց Կալիգուլային, Ներոնին և Կոմմոդոսին, ազատություն տվեց նրանց թերություններին: Թվում էր՝ նրանք իրենք իրենց և բոլոր շրջապատողներին ձգտում էին ցույց տալ անսահմանափակ իշխանություն անունը կրող անդունդի խորությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Август, *Деяния божественного Августа*, пер. И. Ш. Шифмана, Ленинград: Цезарь Август, 1990.
- Аврелий Марк, *К себе самому*, пер. В. Б. Черниговского, Москва: Алетейа-Новый акрополь, 1998.
- Гай Светоний Транквилл, *Жизнь двенадцати цезарей*, Москва: Наука, 1993.
- Капитолин Юлий, *Жизнеописание Марка Антонина Философа*, Москва: Наука, 1992.
- Кассий Дион, *Римская история*, Москва, 1981.
- Плутарх, *Сравнительные жизнеописания*, Москва: Гальба, 2005.
- Тацит, *Анналы*, Москва: АСТ, Ладомир, 2003.
- Ando C., *Imperial Ideology and Provincial Loyalty in the Roman Empire*, University of California Press, 2000.
- Barrett A. A., *Caligula: The corruption of power*, London, 2001.
- Fox R., *The Classical World: An epic history from Homer to Hadrian*, Basic Books, 2006.
- Rudich V., *Political Dissidence under Neron*, London and New York, 2005.
- Scarre Ch., *Chronicle of the Roman Emperors*, London: Thames & Hudson Ltd., 2002.
- Syme R., *The Roman Revolution*, Oxford University Press, 2002.
- Wells Colin M., *The Roman Empire*, Harvard University Press, 2004.
- Машкин Н. А., *Принципат Августа. Происхождение и социальная сущность*, Москва, 1949.
- Межевицкий Я. Ю., *Принципат: От республики к монархии*, Москва, 1998.
- Петряков А., *Великие Цезари. Творцы Римской империи*, Москва: Эксмо, 2011.
- Ренан Э., *Марк Аврелий и конец античного мира*, СПб., 1906.
- Смышляев А. Л., *Деяния божественного Августа. История древнего Рима. Тексты и документы.*, Москва, 2004.

ՆԻՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱԼԼԻԵՆՈՒՍԸ ԴՈՄԻՆԱՏԻ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏ

Մուտք

Հռոմեական կայսրության երրորդարյան ճգնաժամային իրականությունը այդ դարի 50-60-ական թվականներից զգալի փոփոխությունների ենթարկվեց: Կատարվում էին տեղաշարժեր, որոնք պետք է հանգեցնեին Հռոմեական ուշ կայսրության ծննդին և երկիրը դուրս բերեին շուրջ կեսդարյա անիշխանության ժամանակաշրջանից: Այս ամենը հնարավոր դարձավ ուժեղ անհատների ջանքերի շնորհիվ: Նման գործընթացի ռահվիրան Գալլիենուսն էր՝ կայսր-ռեֆորմատորը, որն իր գործունեությամբ դարձավ ապագա դոմինատի բազմաթիվ ինստիտուտների հիմնադիրը, և ըստ այդմ էլ այդ համակարգի նախակարապետը: Մեր հոդվածի շրջանակներում կփորձենք մեկնել Գալլիենուսյան բարենորոգումներից հիմնականները, որոնք հետագայում վերականգնվեցին և հիմք ծառայեցին պետական կառավարման նոր համակարգի կայացման համար:

Գալլիենուսի ռեֆորմները և դրանց նշանակությունը

Կայսր Գալլիենուսը հռոմեական գահին բարձրացավ կայսրության համար խիստ ծանր ժամանակաշրջանում՝ 260 թվականին: Անընդհատ ծավալվող և նոր ոլորտներ ընդգրկող ճգնաժամը հաղթահարելու խնդիրն օրակարգային էր և սպառնում էր երկրի ապագային: Նման պայմաններում անհրաժեշտ էին կտրուկ քայլեր՝ դուրս բերելու երկիրը դեպի զարգացման նոր ասպարեզ: Գալլիենուսը ստանձնեց այդ դժվարին գործի իրականացումը:

Գալլիենուսի առաջին քայլը հոր՝ Վալերիանուսի կողմից քրիստոնյաների դեմ գործադրվող բռնությունների վերացումն էր իր միանձնյա գահակալության հենց սկզբում՝ 260 թ.: Այս քայլը մասամբ մարդասիրական նկատառումներ ուներ, սակայն թերևս միտված էր խաղաղեցնելու մթնոլորտը կայսրությունում, ինչպես նաև չավելացնելու իր թշնամիների առանց այդ էլ զգալի թիվը ի հաշիվ բնակչության մի ամբողջ խմբի¹: Նրա գլխավոր խնդիրը կայսրության արևելյան պրովինցիաներում պարսկամետ դաշինքի ստեղծման արգելումն էր: Կրոնական բռնություններն անհամապատասխան էին նրա կայսերական հղացքին²: Ճիշտ է, Գալլիենուսը ճանաչեց քրիստոնեական համայնքների գոյությունը, եպիսկոպոսների ու նրանց ունեցվածքի առկայությունը, սակայն քրիստոնեությունը չդարձրեց թույլատրելի կրոն (*religio licita*): Այնուամենայնիվ, քրիստոնեական եկեղեցու համար խաղաղարարական այս քաղաքականությունն օրհնություն էր: 260-303 թթ. քրիստոնեությունն արագորեն տարածվեց կայսրության բնակչության բոլոր շերտերում, մշակվեցին նրա հիմնական գաղափարները³:

Ժամանակի մյուս կայսրերի նման՝ Գալլիենուսի մտահոգության գերագույն առարկան բանակն էր: Թե՛ քայքայվող կայսրությունը ներքին ու արտաքին թշնամիներից պաշտպանելու, թե՛ կորցրած տարածքներում իր իշխանությունը վերահաստատելու համար նա բանակի կարիք ուներ: Դրան գիտակից էին Օգոստոսից սկսած բոլոր կայսրերը, սակայն Գալլիենուսին ավելի քան երբևէ անհրաժեշտ էր ունակ ու հավատարիմ բանակ, մինչդեռ նա չուներ Անտոնինուս Պիուսի, Հադրիանուսի և անգամ Սեպտիմիուս Սևերուսի առավելությունները: Շրջափակված Արևելքում ու Արևմուտքում, հենվելով միայն Դանուբյան պրովինցիաների ու Իտալիայի վրա՝ Գալլիենուսը պետք է արդյունավետորեն դրսևորեր լայնախոհություն և նորարարություն: Ֆինանսական ու սոցիալական քաղա-

¹ P. Southern, *The Roman Empire from Severus to Constantine*, London and New York: Routledge, 2001, p. 81.

² L. de Blois, *The Policy of the Emperor Gallienus*, Leiden: Brill, 1976, p. 185.

³ *Ibid.*

քականությունը, քաղաքական ու ռազմական ավանդույթները և առհասարակ ամեն ինչ ստորադասվում էր բանակի կարիքներին⁴: Բանակի ժողովրդավարացման միտումները, որոնք նկատելի էին դեռևս Հադրիանուսի և Սեպտիմիուս Սևերուսի ժամանակներից, ավելի լայնամասշտաբ դարձան Գալլիենուսի օրոք: Մասնավորաբար՝ նա առաջխաղացման հնարավորություններ ստեղծեց հասարակ զինվորների համար, որոնք այժմ կարող էին դառնալ կրտսեր սպաներ, ապա արժանանալ հեծյալի տիտղոսի և հասարակության մեջ բարձրագույն դիրքի՝ բանակում նշանակալի ծառայություններ կատարելով⁵:

Գալլիենուսի ռազմական ռեֆորմներից ամենանշանավորը շարժական հեծելազորի կազմավորումն էր: Հիմնավորվելով Հյուսիսային Իտալիայում՝ նրան անհրաժեշտ էր հասնել Դանուբյան պրովինցիաներ, հաղթանակի դեպքում՝ Հռենոսյան պրովինցիաներ, ինչպես նաև հսկել Ալպյան անցումները հյուսիսային ցեղերի ասպատակություններից՝ միաժամանակ պաշտպանելով արևմուտքը Պոստոնուսի գալլական զորքերի հարձակումից: Թերևս սրանք էին շարժական հեծելազորը Միլանում տեղակայելու պատճառները⁶: Իրեն ենթակա ժողովուրդներից Գալլիենուսը զորակոչեց հմուտ նետաձիգների ու նիզակակիրների, որոնց վարժեցնում էին նաև փայլուն ձիավարության: Կայսրը հիմնականում հենվում էր Դալմաթիայից հավաքագրված հմուտ նետաձիգների վրա: Դալմաթները, մավրերը և օսրոյեցիները դարձան Գալլիենուսի շարժական հեծելազորի կորիզը: Այս հեծելազորի գլխավոր խնդիրը ժամանակի մարտահրավերներին դիմագրավելն էր: Հավանական է, որ Գալլիենուսը մտադրություն չուներ մարտերի ավարտից հետո պահելու հեծելազորը: Հավանական է նաև, որ նույնիսկ եթե նա ստեղծել է շարժական կայուն բանակ, ապա այդ հեծելազորը նրա մահից հետո վերացվել է Գալլիենուսի

⁴ J. Eadie, *Barbarian Invasions and Frontier Politics in the Reign of Gallienus, Hanson and Keppie (1980)*, Vol. 3, pp. 1045-1050.

⁵ *Historia Augusta*, Gallienus, 8.1.

⁶ P. Southern, *op. cit.*, p. 89.

հաջորդների կողմից՝ Դիոկլետիանոսին ու Կոստանդինոսին թողնելով վերստին բացահայտելու դրա արդյունավետությունը⁷:

Հաջորդ փոփոխությունը վերաբերում էր պրոտեկտորներին: Այդ տիտղոսն առաջին անգամ հայտնվել էր Վալերիանոսի և Գալլիենոսի միացյալ գահակալության տարիներին, իսկ Գալլիենոսի միանձնյա կառավարման շրջանում այն առավել լայն շրջանառություն ունեցավ: Չնշանավորելով դիրքը՝ տիտղոսը ցուցադրում էր հավատարմությունը կայսրին: Արիստոկրատիային հեռացնելով բանակի հրամանատարությունից՝ Գալլիենոսը ցանկանում էր ստեղծել «ռազմական նոր արիստոկրատիա»⁸: Որոշ հետազոտողների կարծիքով բանակի սպաները Գալլիենոսից ստանում էին այս տիտղոսը կոնկրետ աստիճանի⁹ հասնելուց հետո: Իսկ չորրորդ դարում պրոտեկտորը հոմանիշ էր ցենտուրիոնին¹⁰:

Որքան էլ հակասական է թվում, Գալլիենոսը հեծյալների դասի ներկայացուցիչներին շատ հաճախ էր վարձում և նրանց հանձնում հրամանատարական բարձր պաշտոններ, որոնք նախկինում սենատորական դասի համար մենաշնորհային էին: Հեծյալները արհեստավարժ զինվորներ էին և գերազանցապես կենտրոնացած էին բանակի վրա՝ ժամանակ չհատկացնելով քաղաքական ոլորտում առաջխաղացմանը¹¹: Քննարկվող ժամանակաշրջանում սենատորների մեծամասնությունն այլևս նախկինի պես չէր ձգտում համատեղելու քաղաքացիական ու ռազմական ծառայությունները. նրանք բավարարվում էին միայն սենատորական աստիճանով ու պատվատիտղոսներով: Ամենայն հավանականությամբ Գալլիենոսը հատուկ էդիկտով վերջ տվեց բանակում

⁷ A. Ferill, *The Fall of the Roman Empire: The military explanation*, London: Thames and Hudson, 1986, p. 32; L. de Blois, op. cit., pp. 28-30.

⁸ P. Southern, op. cit., p. 90.

⁹ C. Keyes, *The Rise of the Equites in the Third Century of the Roman Empire*, Princeton: Princeton University Press, 1915, p. 40.

¹⁰ M. Christol, *La carrière de Traianus Mucianus et l'origine des protectores*, *Chiron* 7 (1977), p. 402.

¹¹ J. Osier, *The Rise of the Ordo Equester in the Third Century of the Roman Empire*, Ann Arbor: University of Michigan Press, 1974.

սենատորական իշխանությանը, թեպետ հին հեղինակներից այդօրինակ քայլ հիշատակում է միայն Ավրելիոս Վիկտորը՝ նշելով, որ Տակիտոսի օրոք օրենքը կարող էր չեղյալ հայտարարվել, սակայն սենատորներն իրենք էլ արդեն հետաքրքրված չէին բանակով¹²:

Հեծյալների դասը ներկայացված էր նաև պրովինցիաների կառավարման ասպարեզում: Անցյալում հեծյալները երբեմն զբաղեցնում էին պրովինցիալ առաջնորդների ժամանակավորապես թափուր պաշտոնները (*agens vice praesidis*) մինչև նոր կառավարչի նշանակումը: Փաստորեն, նման դեպքերում հեծյալ-տեղակալն օժտված էր կառավարչի բոլոր լիազորություններով: 260 թվականից սկսած հեծյալ կառավարիչները որոշակի պրովինցիաներում նշանակվում էին ոչ թե որպես տեղակալներ, այլ լիիրավ կառավարիչներ: Գալլիենոսի այս փոփոխությունը թեպետ մարտահրավեր էր սենատին, սակայն անհրաժեշտություն էր և առաջին հերթին գործադրվում էր առավել խնդրահարույց պրովինցիաներում, որոնք ենթակա էին բարբարոսական ցեղերի հարձակումներին: Միաժամանակ, կայսրը որևէ փոփոխություն չկատարեց այն պրովինցիաներում, որտեղ զորքեր էին տեղակայված, ինչպես նաև այն սենատորական պրովինցիաներում, որտեղ նա թույլ էր տալիս սենատորներին իշխել որպես պրոկոնսուլներ¹³: Չնայած այս ամենին՝ հետագա տասնամյակներում իրադրությունը խիստ փոփոխական էր. թեպետ պրովինցիաների հիմնական մասում գերակշռում էին սենատոր առաջնորդները, սակայն սենատորական ու հեծյալ կառավարիչները հաջորդում էին միմյանց: Այսպիսով, Գալլիենոսի օրոք սենատոր կառավարիչներից ազատվելը դեռևս միտում էր և ավելի շեշտված բնույթ պետք է ստանար Դիոկլետիանոսի օրոք¹⁴:

¹² Виктор Аврелий, *О цезарях*, XXXIII. 34.

URL:<http://ancientrome.ru/antlitr/aur-vict/caesar-f.htm>. (25.08.2014).

¹³ L. de Blois, op. cit., pp. 80-81.

¹⁴ *The Cambridge Ancient History*, Vol. XII, Cambridge: Cambridge University Press, 2008, Part 1, Chapt. 3, p. 160.

Թեպետ Գալլիենուսը պատկերվում է որպես սենատի երգվյալ թշնամի, սակայն կողմերի միջև հարաբերությունները մշտապես լարված չէին: Կայսրը կապեր էր հաստատում առանձին սենատորների հետ, երբեմն էլ մեծարանքի արժանանում սենատի կողմից: Ճիշտ է, III դարում սենատը կորցրել էր իր երբեմնի հեղինակությունը, սակայն պահպանում էր ավանդական իրավունքներն ու արտոնությունները: Կատարված փոփոխությունները բնական էին և ակնկալելի: III դարի կեսից սենատորական կրտսեր բոլոր պաշտոնյաները, բացի կվեստորներից, անհետացել էին: Ուսումնասիրողները հաշվարկել են նաև սենատորների կորուստները. Լեգոնային լեգատների 25 պաշտոններ, պրետորիական աստիճանի պրովինցիալ կառավարիչների 12 պաշտոնների հետ վերացել էին: Այս ամենի արդյունքում սենատորները ստիպված էին կենտրոնանալ քաղաքացիական ծառայության վրա Իտալիայում, մասնավորապես՝ Հռոմում: Սակայն կոնսուլ դառնալու հնարավորությունները նույնիսկ այդ պարագայում մեծ չէին. կոնսուլության և պրոկոնսուլական իրավունքով կարևոր նշանակման միջև 15 տարին սահմանվել էր նվազագույն ժամկետ, իսկ առաջին և երկրորդ կոնսուլությունների միջև՝ 20 կամ 25 տարին¹⁵: III դարի կեսից սենատորական հաջող կարիերան պայմանավորված էր կայսեր հետ լավ հարաբերություններով: Ըստ որում՝ Գալլիենուսը, հավանաբար, հակակրանքով չէր վերաբերվում այս կարգավիճակին:

Գալլիենուս կայսեր վերոնշյալ բոլոր ռեֆորմները հղկվելով ու կատարելագործվելով տեղ գտան Ուշ կայսրությունում:

Նախ անդրադառնանք քրիստոնյաների հիմնահարցին: Թեև հալածանքներին վերջ տրվեց Գալլիենուսի օրոք, սակայն 303 թվականին Դիոկետիանոսը վերականգնեց դրանք: Ընդհուպ Դիոկետիանոսի հրաժարականը՝ խնդիրը վերջնական լուծում չստացավ, իսկ Կոստանդինոսի հրապարակած Միլանի հրովարտակր 313 թվականին վերջնականապես դադարեցրեց բոլոր հալածանք-

¹⁵ M. Christol, *Essai sur l'Evolution des Carrières Sénatoriales dans la 2e moitié du IIIe Siècle après*, Paris, 1986, p. 66.

ները քրիստոնյաների հանդեպ, և քրիստոնեություն դավանելը թույլատրելի դարձավ ամբողջ կայսրությունում:

Խիստ ուշագրավ է շարժական բանակի հարցը: Մինչև IV դարը արշավանքների շարժական բանակն արդեն միանգամայն կազմավորված ինստիտուտ էր: Բյուզանդական ժամանակագիր Գեորգոս Կեդրենոսը Գալլիենուսի շարժական հեծելազորն է համարում այս բանակի նախատիպը¹⁶: Կոստանդինոսի օրոք վերջնական ձևակերպում ստացավ դաշտային շարժական բանակը:

Գալլիենուսի օրոք սկսված՝ Սենատին ու պրետորիական պրեֆեկտներին իշխանությունից զրկելու գործընթացը նույնպես հաջողությամբ պսակվեց: Պրետորիական գվարդիան լուծարվեց, փոխարենը ստեղծվեց նոր թիկնազոր՝ *scholae*, որն առաջին անգամ կիրառել էր Դիոկետիանոսը: Ազնվականները և սենատորական դասը հեռացվեցին պրովինցիալ կառավարման համակարգից:

Ամփոփում

Գալլիենուսի գահակալությամբ Հռոմեական կայսրությունը մուտք գործեց փոփոխությունների շրջափուլ: Չրկված լինելով փորձնական քայլեր ձեռնարկելու հնարավորությունից՝ Գալլիենուսը որդեգրում էր հինը՝ երբեմն զոհաբերելով նաև ավանդական արժեքները,¹⁷ և նոր բան ձեռք բերելու համար մշակում մեթոդներ:

Գալլիենուսի ձեռքբերումները դրեցին Ուշ հռոմեական կայսրության զարգացման հիմքերը: Անտիկ հեղինակները ևս գիտակցել են նրա դերակատարությունը. Ավրելիոս Վիկտորը նրան բնութագրելիս գրեթե նույնքան էջ է հատկացրել, որքան Դիոկետիանոսին ու Կոստանդինոսին: Անշուշտ չպետք է կարծել, թե Գալլիենուսից մինչև Կոստանդինոս ճանապարհը հարթ էր. հետագայի կայսրերը նախկին շատ նորամուծություններ վերափոխման էին ենթարկել և իրենց հարմարեցրել: Ռազմական ու քաղաքական կարիքներն էին թելադրում գործադրվելիք քայլերի բնույթը:

¹⁶ Cedrenus, *Compendium Historiarum*, in *Migné*, Vol. 121, p. 495.

¹⁷ P. Southern, *op. cit.*, pp. 81-82.

Այս ամենի արդյունքում հստակորեն տեսանելի է Գալլիենուսի կարևորագույն դերակատարումը դոմինատի կայացման գործում: Նրա ստեղծած ինստիտուտները ներդրվեցին կայսրության կառավարման համակարգում՝ ընդգծելով դրանց հիմնադրի հեռատեսությունը և մտքի ճկունությունը, ճգնաժամը հաղթահարելու վճռականությունը: Գալլիենուսին իրավամբ պետք է համարել դոմինատի նախակարապետը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Cedrenus**, *Compendium Historiarum*, in *Migné*, Vol. 121.
Historia Augusta, Vol. III, English translation by David Magie, Harvard, 1932.
- Аврелий Виктор**, *О цезарях*,
URL:<http://ancientrome.ru/antlittr/aur-vict/caesar-f.htm>,
(25.08.2014)
- Blois L. de**, *The Policy of the Emperor Gallienus*, Leiden: Brill, 1976.
- Christol M.**, *Essai sur l'Evolution des Carrières Sénatoriales dans la 2e moitié du IIIe Siècle après*, Paris, 1986.
- Christol M.**, *La carrière de Traïanus Mucianus et l'origine des protectores*, *Chiron 7* (1977).
- Eadie J.**, *Barbarian Invasions and Frontier Politics in the Reign of Gallienus*, *Hanson and Keppie*, Vol. 3, 1980.
- Ferill A.**, *The Fall of the Roman Empire: The military explanation*, London: Thames and Hudson, 1986.
- Keyes C.**, *The Rise of the Equites in the Third Century of the Roman Empire*, Princeton: Princeton University Press, 1915.
- Osier J.**, *The Rise of the Ordo Equester in the Third Century of the Roman Empire*, Ann Arbor: University of Michigan Press, 1974.
- Southern P.**, *The Roman Empire from Severus to Constantine*, London and New York: Routledge, 2001.
- The Cambridge Ancient History*, Vol. XII, Cambridge: Cambridge University Press, 2008.

ՆԵԼԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՔՈՉՎՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՉԻՆԳԻՉ ԽԱՆԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Մուտք

Համաշխարհային պատմության մեջ ամենամեծ տերության ստեղծման պատիվը պատկանում է Չինգիզ խանին: Նա կանգնած է Համամոնղոլական տերության ստեղծման ակունքներում, ում շնորհիվ ոչ միայն միավորվեցին մոնղոլական բազմաթիվ ցեղերն ու տոհմերը, այլև նրա կատարած նվաճումների արդյունքում ստեղծվեց մի հսկայական քոչվորական կայսրություն: Տերության ստեղծման և նրա վարչաքաղաքական համակարգի ձևավորման հարցում մեծ է եղել Չինգիզ խան անհատի ներդրումը: Անհատ, ում կերպարը դարեր շարունակ եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել քոչվորական քաղաքակրթության տարածական կազմակերպման Չինգիզ խանի պատկերացումները: Անդրադարձ է կատարվում նրա իրականացրած քաղաքական, ռազմական, իրավական և վարչական բարեփոխումներին, որոնք էլ կարևոր հիմք են հանդիսանում նրա տերության կազմավորման համար: Հասկանալու համար Չինգիզ խանի վարչատարածքային քաղաքականության յուրահատկությունները՝ անհրաժեշտ է ներկայացնել ու գնահատել վերոնշյալ բարեփոխումները և անդրադառնալ դրանց դերին քոչվորական քաղաքակրթության կազմակերպման մոնղոլական փուլում:

1. Պետության կազմավորման Չինգիզ խանի մոդելը

12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբին Մոնղոլական տափաստանում Համամոնղոլական պետության ստեղծման համար կային համապատասխան քաղաքական, տնտեսական և գաղափարամշակութային նախադրյալներ: Թեմուչինին հաջողվում է միավորել մոնղոլական ցեղերը և 1206 թ. մարտին հրավիրված

մեծ Ղուրուլթայի ժամանակ նոյոնների կողմից հռչակվում է տափաստանի ժողովուրդների մեծ խան՝ Չինգիզ խան՝ հիմք դնելով Համամոնղոլական պետությանը: Եվրասիական տափաստաններում մոնղոլներից առաջ պետականություն էին ստեղծել կիդանները, չժուրջժենները և թյուրքերը: Պետականության կառուցումն ընթացել է երկու փուլով՝ ավանդական նախապետության և բուն պետականության: Մոնղոլների մոտ առաջին փուլն ընդգրկում է 1189-1206 թթ., երբ Չինգիզ խանը միավորեց բոլոր ցեղերը: Երկրորդ փուլում նա ձեռնամուխ եղավ պետական ապարատի կառուցմանը: Որպես կանոն՝ նախապետությունից լիարժեք պետության անցնելը կատարվում է արտաքին նվաճումների ճանապարհով²: Նման պետություններում, այդ թվում՝ Չինգիզ խանի Համամոնղոլական պետությունում, հիմնական դերը պատկանում էր զինված ուժերին: Չինգիզ խանը նաև զարգացրեց քոչվորական քաղաքակրթության որոշ սկզբունքներ, օրինակ՝ նախապետության փուլում պահպանվում է առաջնորդի իշխանությունը, սակայն նա կարողացավ ստեղծել կենտրոնացված պետություն: Քոչվորական կյանքի ավանդույթները ազդեցություն թողեցին նաև մոնղոլների վրա, ինչն առավել արտահայտվեց պետության հիմնադրման ու կառուցման գործընթացում: Չինգիզ խանը բարեփոխումները սկսեց ռազմական բնագավառից, քանի որ պետության հիմքում դրվեց ռազմավատատիրական համակարգը: Բանակը խանի իշխանության հենասյունն էր և տերության ողնաշարը: Ռազմական բարեփոխումներում ամենակարևորը անձնական պահակազորի՝ քեշիկի դերի մեծացումն էր, ինչը տոհմացեղային սկզբունքներից հրաժարվելու պայմաններում դառնում էր իշխանության հենարանը և հակակշռում էր ամբողջ բանակին³: Մյուս կող-

¹ Չինգիզ անվան ստուգարանության վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Ґашид ад-Дин, *Сборник летописей*, т. 1, кн. 2, пер. с персидск. О. И. Смирновой, М.-Л, 1952, с. 150; Е. И. Кычанов, *Жизнь Темучжина, думавшего покорить мир*, Москва, 1995, с. 87-88.

² Р. П. Храпачевский, *Военная держава Чингисхана*, Москва, 2005, с. 119.

³ Б. В. Базаров, Н. Н. Крадин, Т. Д. Скрынникова, *Монгольская империя и кочевой мир*, Улан-Удэ, 2004, с. 152.

մից՝ այդ ճանապարհով ստեղծվում էր առաջին վարչական անձնակազմը⁴: Քեշիկում պահպանվում էր երկաթյա կարգապահություն, խաղաղ ժամանակ ևս նրանք գործում էին ռազմական կանոնների համաձայն⁵: Նման հզոր ռազմական ուժի ստեղծմամբ Չինգիզ խանը կարողացավ ամրապնդել իր իշխանությունը:

Չինգիզ խանը ռազմական սկզբունքները դրեց տերության հիմքում՝ բանակն ու տերությունը դարձնելով ամբողջություն: Նա Կենտրոնական Ասիայում հունների իշխանության շրջանից հայտնի տասնյակների համակարգին տվեց նոր բովանդակություն⁶: Այն ձևավորվեց ոչ թե նախկին տոհմական սկզբունքներով, այլ պետական իշխանությամբ, որն այս դեպքում խանն էր: Նա բնակչությանը բաժանեց «Տասնյակների», «Հարյուրների» և «Հազարների», իսկ «Հազարները» միավորվում էին «Թումենների» մեջ: Այս սկզբունքը կիրառվեց նաև բանակի նկատմամբ⁷: Չինգիզ խանը զորքը բաժանեց երեք մասի՝ կենտրոնի, աջ և ձախ թևերի⁸: Այս համակարգը քոչվորների համար նորություն չէր, սակայն առանձնահատկությունն այն էր, որ Չինգիզ խանը դա կիրառեց որջ մոնղոլական հասարակության նկատմամբ:

Չինգիզ խանը բարեփոխումներ կատարեց իրավական համակարգում: Նրա թողած օրենքների ժողովածուն հայտնի է «Մեծ

⁴ Kh. Shagdar, *Historical Tradition of Mongolian Civil-Military Relations*, р. 4, URL:file:///C:/Documents%20and%20Settings/Администратор/Мои%20документы/Downloads/1shagdar.pdf, (15.06.2014).

⁵ Э. Хара-Даван, *Чингисхан. Великий завоеватель*, Москва, 2008, с. 120-123.

⁶ Е. И. Кычанов, ук. соч., с. 127:

⁷ А. Доманин, *Монгольская империя Чингизидов. Чингисхан и его преемники*, Москва, 2010, URL: <http://oldevrasia.ru/library/Aleksandr-Domanin-Mongolskaya-imperiya-CHingizidov-CHingiskhan-i-ego-preemniki/> (15.05.2014).

⁸ Э. Хара-Даван, ук. соч., с. 134:

Յասա» կամ «Չինգիզ խանի Յասա» անվամբ⁹: Ամենայն հավանականությամբ «Աեծ Յասան» հրապարակվել է 1206 թ. Ղուրուլթայի ժամանակ: Այն ամփոփում էր ինչպես հին ավանդույթներն ու սովորույթները, այնպես էլ Չինգիզ խանի կողմից մշակված օրենքները¹⁰, և կարգավորում էր հասարակական հարաբերությունները¹¹: Հայ միջնադարյան պատմիչ Վարդան Արևելցու վկայությամբ՝ «մոնղոլները պահպանում էին Չինգիզ խանի սահմանած կարգը և ուրիշներին էլ հրամայում էին պահպանել այն»¹²: Այդու՝ «Յասան» կիրառվում էր ինչպես սեփական, այնպես էլ նվաճված ժողովուրդների նկատմամբ¹³: Ըստ էության, դա նոր իրավական համակարգ էր, որը պետք է համապատասխաներ կայսրության պահանջներին՝ ելակետ¹⁴ ընդունելով տոհմացեղային պետությունը: Այսպիսով՝ «Յասայում» ամփոփվեցին մոնղոլական հասարակության սոցիալ-քաղաքական կյանքն ու ավանդույթները, և այն որպես մոդել Չինգիզ խանի կողմից օգտագործվեց պետության կազմավորման նպատակով:

Հարկ է փաստել, որ Չինգիզ խանի բարեփոխումները հասարակական կյանքի ոչ բոլոր բնագավառներն էին ընդգրկում. Օրինակ՝ նա լուրջ քայլեր չձեռնարկեց տնտեսության բնագավառում,

⁹ **Հեթում Պատմիչ, Թաթարաց. Յեղեալ ի Լադին օրինակ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտչի Աթոռակալ Վարդապետի Աղբերան, Վենետիկ, Ս. Ղազար, 1842, էջ 37:**

Ф. Ф. Мухаметов, Монгольская Яса и ее роль в системе общественных отношений Чингисхана,

URL:<http://thietmar.narod.ru/articles/mongolskaya-yasa-i-ee-rol-1.htm> (10.06.2014).

¹⁰ **Э. Д. Филиппс, Монголы. Основатели империи Великих ханов, Москва, 2004, с. 11.**

¹¹ **Г. Лэмб, Чингисхан. Властелин мира, Москва, 2007, с. 71-72.**

¹² **Վարդան Արևելցի, Տիեզերական ւայրմություն, Երևան, 2001, էջ 210:**

¹³ **Э. Хара-Даван, Чингисхан как полководец и его наследие, Алма-Ата, 1990, URL:<http://gumilevica.kulichki.net/HD/index.html> (10.05.2014).**

¹⁴ **Г. В. Вернадский, О составе Великой Ясы Чингисхана, Bruxelles, 1939, с. 33.**

իսկ հարկային համակարգը երկար ժամանակ գտնվում էր շատ ցածր մակարդակի վրա: Խանը կարևորեց կայսրության մայրաքաղաքի դերը, ուստի սկսեց Կարակորումի շինարարությունը, որն էլ դարձավ Համամոնղոլական տերության տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոնը: Այսպիսով, Չինգիզ խանի բարեփոխումները կարևոր դեր խաղացին Համամոնղոլական պետության ստեղծման գործում: Անշուշտ, առաջնային դերը պատկանում էր ռազմական բարեփոխումներին, քանի որ ռազմական համակարգի սկզբունքների հենքի վրա Չինգիզ խանը ստեղծեց քոչվորական քաղաքակրթության մոնղոլական վարչաքաղաքական համակարգի տիպը: Վստահորեն կարելի է ասել, որ նա պետության կազմավորման հիմքում դրեց ռազմական մոդելը:

2. Քոչվորական տերության տարածքային կազմակերպումը

Չինգիզ խանի բարեփոխումներն ուղղված էին տերության վարչաքաղաքական համակարգի կազմակերպմանը: Նա կայսրությունների կառուցման երկու սկզբունքներից՝ ռազմավարական և մշակութային, վերցրեց առաջինը: Քոչվորական քաղաքակրթության ավանդույթներով այս սկզբունքին բնորոշ էր էթնոտարածքային այնպիսի բաժանումը, որի հիմքում ընկած էր եվրասիական տարածաշրջանում լայնորեն տարածված երկթևային համակարգը¹⁵: Այդ համակարգի ձևավորման վերաբերյալ գոյություն ունեն մի քանի տեսակետներ: Դրանցից մեկի համաձայն՝ պետության տարածքի բաժանումը երկու թևերի ծնվել է ռազմակազմակերպական ձևից, երբ ցեղերին խմբավորել են աջ և ձախ թևերում¹⁶: Որպես կանոն պարտված ցեղերը միավորվում էին ավելի թույլ

¹⁵ **С. Г. Агаджанов, Очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIII вв., Ашхабад, 1969, с. 103-104.**

¹⁶ **Н. Л. Жуковская, Г. Г. Стратанович, Калмыки, Народы Поволжья и Приуралья. Историко-этнографические очерки, Москва: Наука, 1985, с. 274.**

ուլուսում՝ ծախ թևում, իսկ հաղթանակած ցեղերն ու նրանց դաշնակիցները կազմում էին աջ թևը: Բացի այդ, իրականացվող նվաճումների պայմաններում պետության տարածքի բաժանումը մի քանի մասերի ուղղակի անհրաժեշտություն էր, քանի որ միայն կենտրոնն ի վիճակի չէր կառավարելու այդ հսկայական տարածքները: Անշուշտ, հաշվի են առնվել նաև դինաստիական պայքարը, գահաժառանգման սկզբունքը, ինչպես նաև աշխարհագրական գործոնը: Միապետության պայմաններում երկթևային համակարգը ենթադրում էր երկիշխանություն: Այս երևույթը կարելի է բնութագրել համակառավարում հասկացությամբ, ինչը նշանակում է տերության տարբեր մասերում գտնվող երկու պետությունների համաժամանակյա ղեկավարում¹⁷: Չինգիզ խանի կողմից այս սկզբունքի կիրառման մասին վկայում են աղբյուրները, մասնավորապես՝ Լուբսան Դանզան «Ալթան թոբչիում» նկարագրում է Չինգիզ խանի կողմից իր ուղեյի բաժանումը որդիների ու հրամանատարների միջև, երբ 1225 թ. վերադառնում է Արևմտյան արշավանքից¹⁸: Խանը տերության տարածքը բաժանում է իր չորս որդիների միջև¹⁹: Չինգիզ խանի կողմից տերության բաժանումը հիշատակում է նաև 13-14-րդ դարերի պատմիչ Ռաշիդադ-դինը՝ նկարագրելով գործի և դրա հիման վրա տարածքի բաժանումը²⁰:

Չինգիզ խանի կողմից երկթևային համակարգի կիրառումը նորություն չէր: Այն կիրառվել էր տարածաշրջանի հին և վաղ միջնադարյան քոչվորական պետություններում, այդ թվում՝ ժուժանական, հինթյուրքական և կարախանյանների կազանատներում: Քոչվորական կայսրություններում վարչատարածքային կազմակերպման սկզբունքներն ընդհանուր էին, օրինակ՝ տարածքի բաժանումը երկու թևերի, համակառավարության ստեղծումը գլխավոր կազանի ղեկավարությամբ, արևմտյան մասի ենթար-

¹⁷ В. В. Трепавлов, *Государственный строй Монгольской империи XIII в.*, Москва, 1993, с. 76.

¹⁸ Лубсан Данзан, *Алтан тобчи* (“Золотое сказание”), пер., коммент. и прил. Н. П. Шастиной, Москва, 1973, с. 229.

¹⁹ Дж. Мэн, *Чингисхан. Жизнь, смерть и воскрешение*, Москва, 2006, с. 292.

²⁰ Рашид ад-Дин, ук. соч., с. 274-276:

կումն արևելյանին և այլն: Սակայն թևերի երկրորդական բաժանումը բնորոշ է միայն խոշոր կայսրություններին, ինչպիսիք էին հինթյուրքականը և մոնղոլականը: Այսինքն՝ թևերի համակարգը և համակառավարումը քոչվորական ավանդական ինստիտուտներ էին, որոնք մոնղոլները ժառանգել էին իրենց նախորդ կայսրություններից: Չինգիզ խանը, հետևելով քոչվորական քաղաքակրթության վերոնշյալ ավանդույթներին, իր պետությունը բաժանեց արևմտյան և արևելյան թևերի, որտեղ արևմտյան մասի կառավարիչները ենթարկվում էին արևելյանին, արևմտյան կառավարիչները ղեկավարում էին բնակչությանը և ստանձնում գործի հրամանատարությունը, սակայն գահը ժառանգելու իրավունք չունեին, և համակառավարության ներկայացուցիչները մոտ ազգականներ էին²¹: Չինգիզ խանն իր տերությունը բաժանեց երկու թևի՝ աջ (բարունգար) և ձախ (ջունգար), կենտրոնի և ուլուսների: Աջ թևի ենթարկվելը ձախին հետևյալ կերպ է ներկայացնում 17-րդ դարի պատմիչ Աբուլ-դահին. «Մոնղոլների պատկերացմամբ՝ ձախ կողմը գերադասելի է աջից, քանի որ պետության մարմնում սիրտը թագավորն է, իսկ աստված սիրտը տեղավորել է ձախ կողմում»²²: Որոշ հեղինակների կարծիքով կենտրոնից հետո գլխավորն աջ կողմն է, ապա՝ ձախը: Ըստ էության դրա բացատրությունն այն է, որ մոնղոլների և որոշ թյուրքական ժողովուրդների համար ավանդական էր հարավային կողմնորոշումը, որի դեպքում արևելքը համընկնում էր ձախ թևին, իսկ արևմուտքը՝ աջին, ուստի առավել բարձր կարգավիճակ ուներ ձախ կամ արևելյան թևը:

Չինգիզ խանը հատուկ կարգավիճակ էր տվել կենտրոնին: Ռաշիդ ադ-դինի վկայությամբ կենտրոնը (գոյ) Չինգիզ խանի անձնական «հազարյակն» էր և «չպետք է գերազանցեր հազար մարդը»²³: Նշված զորախմբի շուրջ կազմակերպվում էր ռազմական

²¹ В. В. Трепавлов, ук. соч., с. 78:

²² Родословное древо тюрков, *Сочинение Абуль-Гази, хивинского хана*, пер. и предисл. Г. С. Саблукова, Казан: изд. Академии Наук СССР, 1906, с. 163.

²³ Рашид-ад-дин, ук. соч., с. 266:

ուժը: Հարկավոր է փաստել, որ կենտրոնն ավելի շատ ուներ տարածքային նշանակություն, քանի որ Չինգիզ խանը տերությունը թե-թումենների բաժանելուց հետո առանձնացրեց նրանց միջև ընկած ևս մեկ թումեն, որն ընդգրկում էր Օնոնի, Քերուլենի և Թուսույի ավազանները²⁴: Այս երեք թումենները միավորվում էին կենտրոնական ուղեյի շուրջ՝ Գոլուն ուլուս, որն իրենից ներկայացնում էր «հայրենի վրանը» և համարվում էր Չինգիզյանների հայրենական կալվածքը: Որպես արքայական տիրույթ (դոմեն) այն անցավ Չինգիզ խանի փոքր որդուն՝ Թուլույին, որի հետ նրան անցան նաև «Չինգիզ խանի սեփական զինվորները, որոնք պատկանում էին կենտրոնին, աջ թևին և ձախին»²⁵: Սա բնավ էլ չէր նշանակում, թե կրտսեր արքայազնը դառնում էր ամբողջ կայսրության գործերի գլխավոր հրամանատար, քանի որ կենտրոնն առանց մեծ խանի տիրույթի էական իշխանություն չուներ: Ըստ էության գոյը կամ կենտրոնը այնքան էլ մեծ տարածք չէր ընդգրկում և փաստացի ուներ ուլուսի կարգավիճակ: Ավելի ուշ՝ Ուգեդեյի թագադրման ժամանակ, 1229 թ. Չաղաթայը «Գոլուն ուլուսի ղեկավարումը հանձնում է Ուգեդեյին»՝ զորքերի հետ²⁶: 13-րդ դարի 60-ական թթ. ձևավորվում են չորս խոշոր ուլուսներ: Հետագա տասնամյակներին Չինգիզ խանի մշակած վարչական համակարգը ենթարկվում է փոփոխությունների, ձևավորվում են առանձին պետություններ, սակայն մեծ առաջնորդի մշակած հիմնական սկզբունքները պահպանվում են: Այդու՝ Չինգիզ խանն իր տերության վարչական բաժանման հիմքում դրեց քոչվորական քաղաքակրթությանը բնորոշ սկզբունքները՝ դրանք ներդաշնակելով մոնղոլական ավանդույթների հետ:

²⁴ В. В. Третьяков, укр. соч., с. 97:

²⁵ Рашид-ад-дин, укр. соч., с. 274:

²⁶ С. А. Козин, *Сокровенное сказание. Монгольская хроника 1240 г.*, т. 1, М.-Л.: изд. Академии Наук СССР, 1941, с. 191, Չինգիզ խանին հաջորդում է Ուգեդեյը: Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայրենիքի*, աշխատասիրություն Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 232-233:

Ամփոփում

Համամոնղոլական տերության ստեղծումն ու զարգացումը կապված է Չինգիզ խանի անվան հետ: Նա նախածեռնեց մի շարք բարեփոխումներ, որոնց մեջ ամենանշանավորը ռազմականն էր: Այն որպես պետական կազմավորման մոդել դրվեց մոնղոլական տերության հիմքում: Պետության տարածքային կազմավորման խնդրում Չինգիզ խանն օգտագործեց քոչվորական քաղաքակրթության սկզբունքները, մասնավորապես՝ թևերի համակարգը: Արդյունքում, Չինգիզ խանը կայսրությունը բաժանեց կենտրոնի, երկու թևերի և չորս ուլուսների, որոնք ևս իրենց տեղերում պահպանում էին բաժանման նման սկզբունքը: Քոչվորական քաղաքակրթության այս ավանդույթը զարգացնելով՝ Չինգիզ խանը կարողացավ ապահովել իր կայսրության հետագա գոյությունը, որը նրա մահից հետո շարունակեց զարգանալ և ընդլայնվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Արևելյի Վարդան, *Տիեզերական պարմություն*, Երևան, 2001:
- Գանձակեցի Կիրակոս, *Պարմություն Հայոց*, աշխատասիրություն Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
- Հեթում Պատմիչ, (*Պարմություն թաթարաց*) *Յեղեալ ի Լապին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտչի արձանակալ Վարդապետի Աղգերեան, Վենետիկ*, 1842:
- Shagdar Kh., *Historical Tradition of Mongolian Civil-Military Relations*,
URL:file:///C:/Documents%20and%20Settings/Администратор/Мои%20документы/Downloads/1shagdar.pdf (15.06.2014).
- Агаджанов С. Г., *Очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIII вв.*, Ашхабад, 1969.
- Базаров Б. В., Крадин Н. Н., Скрынникова Т. Д., *Монгольская империя и кочевой мир*, Улан-Удэ, 2004.
- Вернадский Г. В., *О составе Великой Ясы Чингисхана*, Bruxelles: Les editions Petropolis, 1939.
- Доманин А., *Монгольская империя Чингизидов. Чингисхан и его приемники*, Москва: Центрполиграф, 2010,
URL:http://oldevrasia.ru/library/Aleksandr-Domanin_Mongolskaya-imperiya-CHingizidov-CHingiskhan-i-ego-preepniki/ (15.05.2014).
- Жуковская Н. Л., Стратанович Г. Г., *Калмыки. Народы Поволжья и Приуралья. Историко-этнографические очерки*, Москва: Наука, 1985.
- Козин С. А., *Сокровенное сказание. Монгольская хроника 1240 г.*, т. 1, М.-Л., 1941.
- Кычанов Е. И., *Жизнь Темучжина, думавшего покорить мир*, Москва, 1995.
- Лубсан Данзан, *Алтан тобчи ("Золотое сказание")*, пер., коммент. И прил. Н. П. Шастиной, Москва, 1973.
- Лэмб Г., *Чингисхан. Властелин мира*, Москва, 2007.

- Мухаметов Ф. Ф., *Монгольская Яса и ее роль в системе общественных отношений Чингисхана*,
URL:http://thietmar.narod.ru/articles/mongolskaya-yasa-i-ee-rol-1.htm (10.06.2014).
- Мэн Дж., *Чингисхан. Жизнь, смерть и воскрешение*, Москва: изд. Эксмо, 2006.
- Рашид ад-Дин, *Сборник летописей*, т. 1, кн. 2, пер. с персидск. О. И. Смирновой, М.-Л.: изд. Академии Наук СССР, 1952.
- Родословное древо тюрков, *Сочинение Абуль-Гази, хивинского хана*, пер. и предисл Г. С. Саблукова, Казан, 1906.
- Трепавлов В. В., *Государственный строй Монгольской империи XIII в.*, Москва, 1993.
- Филлипс Э. Д., *Монголы. Основатели империи Великих ханов*, Москва, 2004.
- Хара-Даван Э., *Чингисхан как полководец и его наследие*, Алма-Ата: КРАМДС-Ахмед Ясави, 1990,
URL:http://gumilevica.kulichki.net/HD/index.html (10.05.2014).
- Хара-Даван Э., *Чингисхан. Великий завоеватель*, Москва, 2008.
- Храпачевский Р. П., *Военная держава Чингисхана*, Москва, 2005

ԱՐԱՄ ՊՈՂՈՍՅԱՆ

ՉԻՆՊԻՉ ԽԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՄՈՆՂՈՒԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մուտք

Չինգիզ խան. այս անունը մարդկության կողմից, թերևս, ամենահաճախ հնչած անուններից է: Այն հատուկ ուշադրության առարկա է դարձել ոչ միայն պատմաբանների, այլև գեղարվեստական ժանրի հեղինակների, անգամ միջին դարերում ապրած մոզերի, շամանների համար: «Washington Post»-ը 1995 թ. Դեկտեմբերին Չինգիզ խանին ճանաչեց որպես «հազարամյակի մարդ»²⁷: «American Journal of Human Genetics»-ի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Չինգիզ խանի և նրա որդիների գենն առկա է ասիական շատ ժողովուրդների մոտ²⁸:

13-րդ դարը մեծ փոփոխությունների ժամանակաշրջան էր: Աշխարհի քաղաքական քարտեզը կրկին զգալի վերափոխումների պիտի ենթարկվեր: Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջանին տիրելու համար կրոնական քողի ներքո շարունակվում էր պայքարը քրիստոնեական և մուսուլմանական աշխարհների միջև: Դրա փայլուն օրինակը 1204 թ. Կոստանդնուպոլսի գրավումն էր և կողոպուտը: Այս ավերածությունների հեղինակները, որին դարեր շարունակ սպասում էր բյուզանդական աշխարհը, ոչ թե արաբները, թյուրքերը կամ այլ քոչվորներն էին, այլ քրիստոնյա «դաշնակից» խաչակիրները: Սա պապերի Արևելյան էքսպանսիայի փայլուն դրսևորում էր: Մյուս կողմից՝ 13-րդ դարի սկզբին Եվրոպայում սկիզբ է առնում այսպես կոչված «ներքին» խաչակրաց արշավանքը՝ ուղղված հերետիկոսական հոսանքների դեմ (ալբիգոյաններ,

²⁷ B. Lange, Genghis Khan, *Ancient World Leaders*, Chelsea: Infobase Publishing, 2003, p. 12.

²⁸ H. Mayell, *Genghis Khan a Prolific Lover*, DNA Data Implies for National Geographic News, February 14, 2003, URL: http://news.nationalgeographic.com/news/2003/02/0214_030214_genghis.html (14.07.2014).

կատարներ և այլք): Միջերկրածովյան տարածաշրջանի համար մղվող պայքարին զուգընթաց իր նվաճումներն էր շարունակում խորեզմշահ Մուհամմադը, որի ծրագրերում ընդգրկվել էր նաև Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջանը: Վերոնշյալ ռազմաքաղաքական անցուղարձեղին զուգահեռ Հեռավոր Արևելքում ծավալվում էին կարևորագույն իրադարձություններ:

Մոնղոլական տափաստաններում 1206 թ. արձանագրվեց քոչվորական նոր կայսրության ստեղծում, որը գալիս էր փոխարինելու նախկին քոչվորական կայսրություններին և որակական առումով այլ մակարդակի վրա էր գտնվելու: 1206 թ. հրավիրված կուրլայայում մոնղոլական քիաթ-բորջիգին²⁹ ցեղի առաջնորդ Թեմուչինն ընտրվեց համամոնղոլական խան (խաքան)՝ Չինգիզ խան (Չինգիզ Մեծ) անունով: Այս իրադարձությունը կատարվեց քրիստոնեամահմեդական աշխարհից աննկատ: Արևմուտքում քչերը գիտեին Մոնղոլիայի և տափաստանային ժողովուրդների մասին:

Ինչպես նկատել է Գ. Վ. Վերնադսկին, այդ ժամանակաշրջանում եվրոպացու աշխարհագրական մտահորիզոնը, նույնիսկ 1241թ., Արևելքում տեսնում էր եթովպացիներին, մավրերին, լավագույն դեպքում, հինդուսներին, ուստի Արևմուտքում երկար ժամանակ տիրում էր այն կարծիքը, որ մոնղոլներն Արևելքից չեն, և առաջ էին քաշվում նրանց ծագման և բնակեցման մասին առասպելական պատմություններ³⁰:

²⁹ Ռաշիդ ադ-դինի մոտ բառը մեկնաբանվում է իբրև «կապտաչյաներ», (Рашид ад-дин, *Сборник летописей*, т. 1, кн. 2., М.-Л., 1952, с. 48), իսկ ըստ Ա. Օչիրի՝ այն առաջացել է «բերի»՝ «զալլ» և «թեգին»՝ «արքայազն» բառերից (А. Очир, О происхождении этнических названий монголов боржигин, хатагин, элджигин и цорос, *Монголо-бурятские этнонимы*, УУ., 1996, с. 3-4).

³⁰ Г. В. Вернадский, *Монголы и Русь*, Москва, 2000, с. 7.

Քոչվորական կայսրությունների ծագման և զարգացման վերաբերյալ գիտության մեջ գոյություն ունեն բազմաթիվ վարկածներ և տեսություններ: Ընդհանրացված կերպով Ն. Քրադինը և Տ. Աքրիննիկովան առաջադրել են քոչվորական կայսրությունների ձևավորման «չորս տարբերակների» տեսությունը, որոնք իրենց հերթին ունեն իրենց ճյուղային կառուցվածքները³¹:

Առաջին տարբերակը (*մոնղոլական*) իրենից ներկայացնում է դասական ճանապարհով քոչվորական էթնոսի «ներքին ինտեգրացիա» դեպի կենտրոնացված կայսրություն: Որպես կանոն, սա պայմանավորված է քոչվորների ներսում տաղանդավոր քաղաքական և ռազմական գործչի ի հայտ գալով, ում հաջողվել է միասնական պետության ներսում միավորել ցեղային միությունները և մանր խանությունները (օր.՝ Մոդեն հուննունների մոտ, Տան Շի Խուայը՝ սյանբինների, Աբաոցզին՝ կիդանների, և, վերջապես, Չինգիզ խանը՝ մոնղոլների): Քոչվորների միավորումից հետո կայսրության պահպանումը խանը կամ խաքանը պետք է իրականացներ արտաքին ռեսուրսների ներհոսքի ճանապարհով: Եթե դա նրան չէր հաջողվում, ապա պետությունը փլուզվում էր նույն արագությամբ, ինչ արագությամբ ստեղծվել էր:

Երկրորդ տարբերակը (*թյուրքական*) պայմանավորված էր գոյություն ունեցող քոչվորական կայսրության հետ փոխհարաբերություններով՝ *պերիֆերիայի* (հունարեն՝ ծայրամասային, հակադրման իմաստով) մակարդակում: Տարբերակը ուսումնասիրելու նպատակով կարելի է դիտարկել, օրինակ, թյուրքերի և ժուժանների, կամ ույղուրների և թյուրքերի փոխհարաբերությունները:

Երրորդ տարբերակը (*հոնական*) կապված էր քոչվորների՝ դեպի հողագործական-նստակյաց շրջաններ տեղաշարժերի հետ, որին հետևում էր այդ շրջանների բնակչության հնազանդեցումը (ավարական, բուլղարական և հունգարական տերությունները՝ Եվրոպայում, Հյուսիսային Չինաստանում՝ 4-6-րդ դդ. խառնակ շրջանը, կարա-կիդանները՝ Արևելյան Թուրքեստանում):

³¹ Н. Н. Крадин, Т. Д. Скрынникова, *Империя Чингис-хана*, Москва, 2006, с. 121-122.

Չորրորդ տարբերակը (*խազարական*) պայմանավորված էր առավել խոշոր քոչվորական կայսրության գոյությամբ, որի տրոհման հետևանքով առաջանում են ավելի փոքր քոչվորական կայսրություններ: Այս տարբերակի համար օրինակ են ծառայում թյուրքական և մոնղոլական քոչվորական կայսրությունները: Առաջինի դեպքում Թյուրքական խաքանությունը³² տրոհվում է, և ձևավորվում են Արևելաթյուրքական ու Արևմտաթյուրքական խաքանություններ, ավելի ուշ՝ Արևմտաթյուրքականից ձևավորվում է Խազարական խաքանությունը և քվազիկայսերական այլ միավորներ: Երկրորդի դեպքում տեսնում ենք Մոնղոլական խանությունը և հետագայում առանձնացած Ջուչիդների, Չաղաթայիդների, Հուլախանների ուլուսները և Յուան կայսրությունը: Ջուչիդների (Ոսկե հորդա) տրոհման արդյունքում ձևավորվում են Դրիմի, Նոդայի և մյուս խանությունները:

Քոչվորական կայսրությունների ձևավորման համար կարևորվում են նաև տափաստաններում կլիմայական փոփոխությունները, որոնցով պայմանավորվում են քոչվորների տեղաշարժերը հսկայական տափաստաններում (օրինակ՝ թյուրքական ցեղերի տեղաշարժերը Հեռավոր Արևելքից՝ Մոնղոլիայից և Ալթայից դեպի Միջին Ասիա և Իրանական սարահարթ):

Միջնադարյան քոչվորական հասարակությունների մոտ, որպես կանոն, պետության ձևավորման համար կարևոր պայման էր հանդիսանում կանոնավոր զորքի առկայությունը³³: Այս

³² Թյուրքական խաքանությունը (մոտ 552-603 թթ.) վաղ ավատատիրական քոչվորական կայսրություն էր, որի սահմանները ձգվում էին Կորեայից մինչև Դրիմ: Ավանդության համաձայն պետությունը գլխավորում էր Աշինա տոհմը՝ թյուրքուսների ցեղից (Տե՛ս Ն. Гумилев, *Древние тюрки*, Москва, 1967, URL:<http://gumilevica.kulichki.net/OT/ot03.htm>) (22.07.2014).

³³ Այս հարցում կարևոր տեսակետ է հայտնել Ռենֆրյուն: Նա գտնում է, որ Չինգիզ խանի ստեղծած պետությունը որակապես տարբերվում էր նախորդներից, քանի որ խանի կողմից հիմք էր դրվել քաղաքական միավորման կենտրոնի շինարարությանը՝ մայրաքաղաք Կարակորումին: Նա քաղաքական կենտրոնի հիմնադրումը համարում է պետության առաջացման կարևոր պայման (*The Nature and Aims of Archaeology*)

հարցում Չինգիզ խանն իրագործեց անկարելին. ռազմական ուժերի կանոնակարգումը և հզորացումը ոչ միայն հնարավորություն տվեցին վերջ դնել միջցեղային ռազմական ընդհարումներին, այլև դիմելու նվաճումների: Չինգիզ-խանի ռազմական բարեփոխումները, ինչպես նաև դաժան հաշվեհարդարը դավաճանների և կամ տիրող կարգերին դեմ գնացողների հետ, կարելի է բացատրել նաև նրա անձնական հատկանիշներով: Երիտասարդ հասակում նրա հետ կատարվածը և ցեղակիցների դավաճանությունն անվստահություն էին առաջացրել վերջինիս մոտ, ուստի վերջինս ռազմական բարեփոխման հիմքում դրեց ոչ թե տոհմացեղային սկզբունքը, այլ թումանների կազմակերպված համակարգը: Դա իր արտացոլումը գտավ նաև պետական կառավարման համակարգի ձևավորման մեջ: Պետության կարևորագույն օղակների գլուխ կանգնած էին ոչ թե Չինգիզ խանի որդիները և բարեկամները, այլ տաղանդավոր զորավարներ և պետական գործիչներ:

Վերոնշյալ բարեփոխումներն ակնառու էին Խորեզմշահերի կայսրության դեմ պատերազմում: Վերջինս համարվում էր ժամանակաշրջանի իսլամական աշխարհի «ալ-զա'իմը»՝ առաջնորդը: Ի տարբերություն Չինգիզ-խանի՝ խորեզմշահ Մուհամմադը զորքի բաժանման հարցում առաջնորդվում էր տոհմացեղային սկզբունքով, և նրա հիմնական հենարանն էին կազմում քոչվոր թյուրքական անկանոն զորամիավորումները, իսկ մոնղոլական թումանների ստորաբաժանումները պատերազմում ցույց էին տալիս իրենց առավել արդյունավետ կողմերը: Պատերազմն ընթանում էր միջնադարյան ռազմական հնարքներին համապատասխան, սակայն մոնղոլների հանկարծակի հարձակումը և կեղծ նահանջի հնարքը եկան փոխարինելու դրանց և պատերազմի մեջ կտրուկ բեկում առաջացրին: Պետք է հիշատակել նաև մոնղոլների հետախուզական արշավանքների մարտավարությունը. մինչ պատերազմի սկսելը մոնղոլները հետախուզական արշավանքի միջոցով տեղե-

կություններ էին հավաքում նվաճվելիք երկրի մասին: Մոնղոլների կողմից Խորեզմի տերության նվաճման համար հետախուզական նախապատրաստության դասական օրինակ էին ցուցաբերում մուսուլման առևտրականները, ովքեր ծառայում էին մոնղոլների մոտ (պատվիրակությունները, Օթարի 450 մահմեդական առևտրականները): Ռազմական հնարքի յուրօրինակ դրսևորում էր մոնղոլների կողմից զորքի եռամաս բաժանումը և հիմնական շեշտը հանկարծակիության վրա դնելը, այսպես կոչված «մոնղոլական բիցկրիզը», որը, օրինակ, ձեռնարկեցին հիտլերականները Երկրորդ աշխարհամարտում, կամ Ռոբերտ Լին Հյուսիսային Ամերիկայում Մեքսիկական պատերազմի ժամանակ: Ուստի միամիտ կլինի պատերազմի պատճառը տեսնել Օթարի միջադեպի մեջ³⁴: Երկու աշխարհակալ տերությունների բախումն անխուսափելի էր: Արտաքին նվաճումների հետագա ծավալումն անխուսափելի էր նաև Մոնղոլական խանության համար, քանզի նոր ռազմավարատիրական նյոյնական համակարգն այդ էր պահանջում Չինգիզ խանից: Տերությունն այնքան պետք է գոյատևեր, որքան կշարունակվեին նրա արտաքին նվաճումները, ուստի պատահական չէ, որ այն անկում ապրեց 14-րդ դարի սկզբին, երբ արտաքին նվաճումները դադարեցին:

Բայց, այնուամենայնիվ, Մոնղոլական խանության ձևավորումը և նվաճումները ունեցան դարակազմիկ նշանակություն. Հեռավոր Արևելքը բացվեց Արևմուտքի համար, և նախկինում միմյանց մասին աղոտ պատկերացում ունեցող ժողովուրդները հայտնվեցին մոնղոլական գլոբալիզացիայի հորձանոտում: «Pax Mongolica», ահա թե ինչպես կարելի է քննադատել այս գործընթացը. առևտրական ուղիների կանոնակարգում, Եվրասիական տափաստան-

³⁴ Պատմության մեջ Օթարի միջադեպ են անվանում 1218 թ. Չինգիզ խանի պատվիրակների հետ տեղի ունեցած հայտնի դեպքը, երբ Օթարը քաղաքում Ինալ-Չուկի կամ Յանալի ամիրայի հրամանով բոլորը ոչնչացվեցին, ինչը դեպի արևմուտք մոնղոլական արշավանքների սկսման անմիջական պատճառն էր (А. Доманин, Монгольская империя Чингизидов. Чингизхан и его преемники, Москва, 2010,

URL: http://oldevrasia.ru/library/Aleksandr-Domanin_Mongolskaya-imperiya-CHingizidov-CHingiskhan-i-ego-preemniki/13 (16.07.2014).

ների միավորում, մշակույթների փոխներթափանցման և նոր աշխարհընկալումների ձևավորման արդյունք:

Քոչվորների հարձակումները նստակյաց-հողագործական շրջանների վրա, լինեին դրանք արաբ-բեդուինները թե թյուրք-օղուզները, կործանիչ էին, բայց դրանով հանդերձ այս հարձակումները կրում էին տարերային բնույթ: Սակայն Չինգիզ խանը և իր հրամանատարները բերեցին ավերածությունների և կոտորածների կանոնակարգված համակարգ, քաղաքների և բնակչության ամբողջական ոչնչացում. սա իրենից ներկայացնում էր ահաբեկչական գործառույթների մի ամբողջ համակարգ, և, ըստ երևույթին, մի բան է պատերազմում հաղթելը, բայց բոլորովին այլ խնդիր է պատերազմի արդյունքների պահպանման համար ձևավորված վախը որպես զենք օգտագործելը մոնղոլների կողմից: Այս առումով ուշագրավ է ան-Նասավի³⁵ կողմից մոնղոլների ավերածությունների որակումը. «Մարդիկ ականատես եղան այնպիսի աղետների, որոնց մասին չէին լսել նախկին դարերում: Արդյո՞ք լսել էին, որ ինչ-որ հորդաներ դուրս գային արևածագի կողմի երկրներից և հասնեին Դերբենդ և դիչաղների երկիր: Չէր հասցնում արևը մտնել որևէ երկիր, երբ արդեն այն թալանված էր, քաղաքներն ավերված, արյունահեղությունը, թալանը և ավերածություններն այնքան ահասարսուտ էին, որ գյուղերը լքվել էին, իսկ հողագործները մերկ էին մնացել»:

Ամփոփում

Առաջին հայացքից Մոնղոլական կայսրությունը հիշեցնում էր նախկինում գոյություն ունեցած տերություններին՝ հուննուների, թյուրքերի կամ ույղուրների կազմած քոչվորական միավորումներին: Սակայն իրականում Մոնղոլական կայսրությունն էապես տարբերվում էր նախկինում ձևավորված տերություններից: Մարքսիստական պատմագրությունն ըստ արժանվույն չի գնահատել

³⁵ Шихаб ад-Дин Ан-Насави, *Восточная литература*, Москва, 1996, URL: http://www.vostlit.info/Texts/rus8/Nasawi_2/text2.phtml?id=1763 (24.06.2014).

Չինգիզ խանի դերը պատմության հուլովույթում: Այն մոնղոլական պետության ձևավորումը դիտարկում էր որպես սոցիալ-տնտեսական զարգացման արդյունք և դասակարգային հասարակության ձևավորման հետևանք³⁶: Չգերազնահատելով անհատի դերը պատմության մեջ՝ պետք է այնուամենայնիվ փաստել, որ պատմությունն այս դերը տվել է հենց Չինգիզ խանին: Նրա չլինելու դեպքում էլ պետք է ձևավորվեր Մոնղոլական պետությունը, սակայն վստահաբար կարող ենք փաստել, որ չէր ունենա այն առանձնահատկությունները, որոնք ձևավորվեցին Չինգիզ խանի բարեփոխումների արդյունքում: Չինգիզ խանի բարեփոխումները և նրա անձնական ներդրումը մոնղոլների պատմության մեջ թույլ են տալիս այս տարբերությունները համակարգել հետևյալ երեք ոլորտներում.

1. *Մոնղոլական կայսրությունը ձևավորվեց ոչ այն ավանդական ճանապարհով, որով նախկինում ձևավորվել էին քոչվորական տերությունները Տափաստանի և Չինաստանի հարաբերությունների ոլորտում:*

2. *Մոնղոլական կայսրության ներսում արմատապես փոխվեց քոչվորական հասարակությունը, էապես հարված հասցվեց րոհմացեղային կացութաձևին, ձևավորվեց քաղաքական կազմակերպված համակարգ, որը նախկինում գոյություն չէր ունեցել:*

³⁶ Այս տեսակետի ջերմեռանդ պաշտպանն էր Բ. Վլադիմիրցովը, ով իր ուսումնասիրություններում փաստում էր, որ մոնղոլների մոտ դասակարգերի առաջացումն և նուբերական դասի պահանջներն էին հանգեցրել մոնղոլական կայսրության ձևավորմանը, և որ մոնղոլների մոտ առկա էին բոլոր պայմանները պետության առաջացման համար (Б. Я. Владимирцов, *Общественный строй монголов*, Ленинград, 1934, с. 73-74): Սակայն այս դեպքում, ինչպես ստացվեց, որ Չինգիզ խանի մահվանից հետո, և կայսրության անկումից հետո մոնղոլները կրկին վերադարձան իրենց կացութաձևին, և մինչև 20-րդ դարը պետական կառավարման համակարգը, որը կար Չինգիզ խանի օրոք, կարծես իսպառ վերացել էր: Այս հարցերը նորագույն ուսումնասիրությունների կարիք են զգում:

3. Մոնղոլները, ի փարբերության նախկինում գոյություն ունեցած համակարգի, սկսեցին կառավարման համակարգ ձևավորել և կառավարել նվաճված երկրները, այլ ոչ թե բավարարվել սուսկ ավերածություններով և շրթթումներով, ինչ անում էին, օրինակ, հուննուները, սյանրիները և ույղուրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Lange B., Genghis khan, *Ancient World Leaders*, Chelsea: Infobase Publishing, 2003.
- Mayell H., *Genghis Khan a Prolific Lover*, DNA Data Implies for National Geographic News February 14, 2003, URL:http://news.nationalgeographic.com/news/2003/02/0214_030214_genghis.html (14.07.2014).
- Вернадский Г. В., *Монголы и Русь*, Москва: Аграф, 2000.
- Владимирцов Б. Я., *Общественный строй монголов*, Л., 1934.
- Гумилов Л., *Древние тюрки*, Москва: Наука, 1967, URL:<http://gumilevica.kulichki.net/OT/ot03.htm> (22.07.2014).
- Доманин А., *Монгольская империя Чингизидов. Чингисхан и его преемники*, Москва: Центрполиграф, 2010, URL:http://oldevrasia.ru/library/Aleksandr-Domanin_Mongolskaya-imperiya-CHingizidov--CHingiskhan-i-ego-preemniki/13 (16.07.2014).
- Крадин Н. Н., Скрынникова Т. Д., *Империя Чингис-хана*, Москва, 2006.
- Очир А. О происхождении этнических названий монголов боржигин, хатагин, элджигин и цорос, *Монголо-бурятские этнонимы*, УУ., 1996.
- Рашид ад-Дин, *Сборник летописей*, т. 1, кн. 2., М.-Л., 1952.
- Шихаб ад-Дин Ан-Насави, Москва, 1996, URL:http://www.vostlit.info/Texts/rus8/Nasawi_2/text2.phtml?id=1763 (24.06.2014).

ՍԱՐԳԻՍ ԲԱԼԴԱՐՅԱՆ

ՖԱԹԻՄՅԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅԱՁԳԻ ԱՌԱՋԻՆ ՎԵՋԻՐԸ

Մուտք

11-րդ դարի առաջին քառորդին Վասպուրականի հայերի վերանակեցմամբ³⁷ սկիզբ դրվեց հայ ժողովրդի զանգվածային արտագաղթի նոր փուլի: Դրա հատկանշական գծերից էր այն, որ հասարակության ստորին ու միջին խավերի կողքին արտագաղթում էին նաև իշխանական տների ներկայացուցիչներ, ինչը յուրատեսակ երաշխիք էր նորահաստատ վայրերում հայերի համախմբման և քաղաքական դերակատարության հետագա բարձրացման գործում: Այս առումով չափազանց խոսուն է Կ. Կահենի դիտարկումը. «Ամենակարևոր արտագաղթերը հայերինն ու թուրքերինն են»³⁸: Սեփական հայրենիքը հարկադրաբար լքած ու այլադավան երկրներում հաստատված հայերի քաղաքական կշռի բարձրացման տպավորիչ դրվագ է հայազգի վեգիրների դերակատարությունը մահմեդական եգիպտոսում:

1. Քաղաքական վերելքի ճանապարհին

909 թ. արաբ Ուբայդալլան, որին վիճակված էր դառնալ Ֆաթիմյանների նշանավոր տան սկզբնավորողը, հաջողության հասավ Իֆրիկիա երկրամասին տիրող Ալլաբյանների դեմ պայքարում և իր իշխանությունը հաստատեց Հյուսիսային Աֆրիկայի կենտրոնական մասում: Հետաքրքիր է, որ նա սերված էր համարվում Մուհամմեդ մարգարեի դուստր Ֆաթիմայից, որից էլ առաջ եկավ դինաստիայի Ֆաթիմյան անունը: Ուբայդալլայի հաջորդներից Մուփզզն ընդարձակեց իշխանությունը դեպի արևելք՝ 969 թ.

³⁷ Վ. Վարդանյան, *Վասպուրականի Արժրունյաց թագավորությունը*, Երևան, 1969, էջ 210-216:

³⁸ C. Cahen, *La Syrie du Nord à l'époque des croisades*, Paris, 1940, p. 184.

գրավելով Եգիպտոսը, որտեղ մի քանի տարի անց կառուցվեց նոր մայրաքաղաք՝ Կահիրեն:

Ֆաթիմյանների պետության հզորացումն ընդգրկում է Ազիզ (975-996 թթ.) և Հակիմ (996-1021 թթ.) խալիֆների գահակալության շրջանը: Կեսդարյա վերելքին փոխարինելու է գալիս ներքաղաքական ու տնտեսական կացության վատթարացումը, ինչն առավել ակնհայտ է դառնում ալ-Մուսթանսիրի (1036-1094 թթ.) օրոք³⁹: Մի կողմից՝ չնահանջող երաշտն ու սովը, մյուս կողմից՝ թյուրքերից, նուբիացիներից ու նեգրերից հավաքագրված վարձկան զորքերի հրամանատարները անկառավարելի էին դարձրել ներքին դրությունը երկրում⁴⁰: Հետաքրքիր է, որ ծանր իրավիճակի հաղթահարումը խալիֆը տեսավ Աքքայի բերդապետ, հայազգի Բադր ալ-Ջամալին մայրաքաղաք հրավիրելու և նրան վեզիրի իշխանությամբ օժտելու մեջ: Վերջինս Բանու Ամմար արաբական նշանավոր տոհմի ներկայացուցիչ Ջամալ ալ-Դավլայի երբեմնի մամլուքն էր (գերի-գինվոր): Ցուցաբերելով հմուտ ռազմական գործչի որակներ՝ Բադրն այնուհետև երկու անգամ նշանակվել էր Դամասկոսի կառավարիչ, ապա նրան էր հանձնվել Աքքայի ծովաբերդի պաշտպանությունը⁴¹: Նրա հայազգի լինելը վկայված է ինչպես հայկական, այնպես էլ օտար սկզբնաղբյուրներում: Հայկական աղբյուրներից միայն Մատթեոս Ուտհայեցին փոքրիկ հիշատակություն ունի Բադրի մասին. «յարեաւ ընդդեմ նորա (թուրք Աթսիսի-Ս. Բ.) ծառայն Ազիզին (պատմագիրը շփոթում է Ազիզ և Մուսթանսիր խալիֆներին-Ս. Բ.) թագատրին Մսրայ, զորս բերին նմա ծառայ ի Հայոց ազգէն»⁴²: Հայ մատենագրության անտարբերությունն օտար երկրում քաղաքական իշխանության ղեկը

³⁹ Ֆաթիմյանների քաղաքական պատմության ամփոփ շարադրանքը տն՛ս Ռ. Семенова, *Из истории фатимидского Египта*, Москва, 1974, с. 9-31.

⁴⁰ Հ. Թուրչյան, XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից, *Արևելագիտության ժողովածու*, 1964, հ. 2, Երևան, էջ 302:

⁴¹ S. Dadoyan, *The Fatimid Armenians, Cultural and Political Interaction in the Near East*, Leyde, 1997, pp. 107-108.

⁴² Մատթեոս Ուտհայեցի, *Ժամանակագրութիւն*, քննական բնագիրը Մ. Մելիք-Աղամյանի, Ն. Տեր-Միքայելյանի, Երևան, 1991, էջ 250:

ստանձնած հայի նկատմամբ պատահական չէր: Բադրը, հավատափոխ հայ լինելով, այլևս հետաքրքրություն չէր առաջացնում կրոնական ոգով առաջնորդվող հայ միջնադարյան պատմագիրների մոտ: Ի տարբերություն դրա՝ նրա մասին վկայություններն առատ են օտար, առաջին հերթին՝ արաբ պատմագիրների երկերում:

Ստանալով խալիֆի հրավերը՝ Բադրը թողնում է Աքքան և իր 100 առագաստանավերով շուրջ 40-օրյա նավարկությունից հետո 1073 թ. ժամանում Կահիրե: Հավատարիմ սպաների հետ նա մեկ օրվա ընթացքում սպանում է վարձկան զորքերի անհնազանդ հրամանատարներին, իսկ նրանց զինվորներին քնաջնջում կամ ստրկության վաճառում: Անգլիացի պատմաբան Ֆիլիպ Հիթթին այսպես է ընդհանրացնում Բադրի գործունեությունը. «Բադր ալ-Ջամալին... սկսեց կառավարել այնպիսի եռանդով, որ քառսից դուրս բերեց ու կարգավորեց ապարատը և կյանքի նոր շունչ տվեց Ֆաթիմյան վարչակարգին»⁴³: Վերջ տալով ներքաղաքական անկայուն դրությանը՝ Բադրը շուտով խալիֆից ստացավ գրչի և սրի վեզիրի պաշտոնը, որը նրան օժտում էր քաղաքացիական ու ռազմական լայն իշխանությամբ: Նրան տրվեցին նաև գերագույն դատավորի ու զորքի գլխավոր հրամանատարի պաշտոնները: Պատահական չէ, որ Մատթեոս Ուտհայեցին նրան անվանում է Ամիր-Ճոշ⁴⁴, որը բանակի հրամանատարի՝ Ամիր ալ-Ջույուշի աղավաղված տարբերակն է: Դառնալով Ֆաթիմյան Եգիպտոսի վեզիր՝ Բադրը սկիզբ դրեց հայազգի վեզիրների մի շարքի, որոնք իշխանությունն իրենց ձեռքում պահեցին 1073-1162 թթ.⁴⁵: Հատկանշական է, քննարկված ժամանակաշրջանը նշանավորում է Եգիպտոսի պատմության նոր փուլ, երբ կառավարման համակարգում վճռական դերակատարությունը խալիֆից անցնում է վեզիրին

⁴³ P. Hitti, *History of the Arabs*, London, 1951, p. 622.

⁴⁴ Մատթեոս Ուտհայեցի, նշվ. աշխ., էջ 250:

⁴⁵ G. Dédéyan, *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés*, Vol. 1, Lisbonne, 2003, p. 264.

2. Ներքին ու արտաքին քաղաքականության մի քանի հարցեր

Ինչ վերաբերում է հետագա տարիներին Բաղր ալ-Ջամալիի ծավալած գործունեությանը, ապա պետք է նշել, որ նա աչքի ընկավ առավելապես երկրի ներքին կյանքը կարգավորող ձեռնարկումներով: Թյուրք զորավար Աթսիսը, որը 1071 թ. գրավել էր Երուսաղեմը, 5 տարի անց Ֆաթիմյաններից խլեց Դամասկոսը, ապա նաև Սիրիայի մեծագույն մասը՝ բացառությամբ հարավային մի քանի շրջանների: Չնայած այդ անհաջողություններին՝ Բաղրին այնուհանդերձ հաջողվեց 1077 թ. հետ մղել Աթսիսի հարձակումը Եգիպտոսի ուղղությամբ: Երկրի պաշտպանունակության ամրապնդման նկատառումով նա ձեռնամուխ եղավ Կահիրեի պարիսպների երկրորդ գծի, ինչպես նաև երեք հզոր դարպասների շինարարությանը: Այս նպատակով Եդեսիայից բերելով մեծաքանակ հայ վարպետներ՝ նա շինարարական աշխատանքների ղեկավարումը վստահեց դարձյալ հայի՝ Հովհան Կրոնավոր անունով⁴⁶:

Բաղր ալ-Ջամալին ավելի հմուտ ու հաջողակ էր երկրի կառավարման ներքին հարցերում: Նկատի ունենալով տարիներ շարունակ մոլեգնած երաշտն ու սովը՝ նա ամբողջ գյուղացիությանը երեք տարով ազատեց բոլոր հարկերից⁴⁷, ինչը նպաստեց և՛ իր իշխանության նկատմամբ վստահության աճին, և՛ երկրի տնտեսական կացության բարելավմանը: Հետաքրքիր է, որ պետության ֆինանսական միջոցները զգալիորեն աճելով, հատեցին 12 մլն դինարի սահմանագիծը⁴⁸: Ժ. Դեդեյանն առանձնացնում է նրա ներքին քաղաքականության երեք հատկանշական ձեռնարկումներ⁴⁹: Նախ՝ հաստատեց վեզիրային ժառանգական դինաստիա, ինչը շոշափելի նշանակություն ունեցավ ներքաղաքական պառակտիչ պայքարից խուսափելու և խաղաղություն հաստատելու հարցում:

⁴⁶ Հ. Թուրքյան, նշվ. աշխ., էջ 306:

⁴⁷ Անդ: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հ. 3, Երևան, 1976, էջ 516:

⁴⁸ M. Fierro, *The New Cambridge History of Islam*, Vol. 2, Cambridge, 2011, p. 207.

⁴⁹ G. Dédéyan, op. cit., pp. 265-266.

Բացի այդ, Բաղրը Ֆաթիմյանների ծավալապաշտական գաղափարախոսությունը փոխարինեց եգիպտական տրոնն ռազմական դիկտատուրայով⁵⁰: Եվ, վերջապես, երկրում ապահովվեց հայերի վճռորոշ դերը: Պետական պաշտոնեության համակարգում մեծ թիվ էին կազմում հայ պաշտոնյաները: Հայերի թվաքանակը գերակշռող էր նաև բանակում: Հայազգի վեզիրը, ըստ Մատթեոս Ուտիայեցու, «վառեալ գունդ զորաց ի Հայոց զօրականացն»⁵¹: Նման վկայություն ունի նաև արաբ պատմագիր Միքայել Տինիսթին. «Ամիր այ-Ջույուշի բանակի մեծագույն մասը կազմված էր հայերից»⁵²:

3. Բաղր ալ-Ջամալին և հայկական իրականությունը

Անդրադառնալով Բաղր ալ-Ջամալիի և հայերի առնչություններին՝ տեղին է նշել, որ Եգիպտոսում հաստատված հայության թվաքանակն այդ ժամանակաշրջանում հասնում էր «իբրև երեսուն հազարաց»⁵³: Հայերի աջակցությանն ապավինելը դիտելով որպես իշխանության ամրապնդման միջոց՝ Բաղր ալ-Ջամալին, բնականաբար, պետք է խրախուսեր հայերի նոր արտագաղթը Եգիպտոս, ինչպես նաև նրանց քաղաքական ու կրոնական համախմբումը: Այդ ժամանակաշրջանում տարաբնակեցված հայությանը միավորելուն միտված կառույցը Հայոց եկեղեցին էր, որի առաջնորդի հոգևոր իրավասությունն արդեն դուրս էր եկել Մեծ Հայքի սահմաններից: Հայոց կաթողիկոսությունը ոչ միայն Մեծ Հայքի, այլև տարասփռված ողջ հայության հոգևոր առաջնորդն էր: Փաստորեն Հայոց կաթողիկոսության («Հայոց Մեծաց») աշխարհագրական ընկալումը փոխարինվում էր էթնիկական հատկանիշով⁵⁴:

⁵⁰ W. Hamblin, *The Fatimid Army During the Early Crusades*, Michigan, 1985, p. 9.

⁵¹ Մատթեոս Ուտիայեցի, նշվ. աշխ., էջ 250:

⁵² G. Dédéyan, op. cit., p. 264.

⁵³ Մատթեոս Ուտիայեցի, նշվ. աշխ., էջ 228:

⁵⁴ Ա. Բոզոյան, Հայոց կաթողիկոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, *Քրիստոնյա Արևելքը և Հայաստանը*, Երևան, 2000, էջ 80-82:

Հայոց եկեղեցու առաջնորդը, այդպիսով, ընդունում է «Կաթողիկոս ամենայն հայոց» տիտղոսը: Պայմանավորված կատարված փոփոխություններով՝ հայոց կաթողիկոսը պարտադրված էր պարբերաբար ելնել ճանապարհորդությունների՝ այցելելու համար իր հոգևոր իշխանությանը ենթակա հայության տարբեր հատվածներին: Հայկական սկզբնաղբյուրները վկայում են, որ կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերն իր աթոռակալության տարիներին (1065-1105 թթ.) եղել է Կ. Պոլսում, Հռոմում, երկու անգամ Եգիպտոսում, Երուսաղեմում և հավանաբար նաև մի շարք այլ վայրերում, ուր կար հայ բնակչություն: Հատկանշական է, որ հայ պատմագիտության մեջ գերիշխող տեսակետը Գրիգոր Վկայասերի ճանապարհորդությունները բացառապես հայոց հայրապետի ունեցած կրոնական-բարեպաշտական մղումներով բացատրելն է: Ն. Պողարյանը կաթողիկոսի ուղևորությունները կապում է «նախասիրած ճգնավորական կենցաղը վարելու և քրիստոնեական կեդրոնները այցելելու փափագի»⁵⁵, իսկ Մ. Շիրինյանը՝ «ասկետիկ սխրանքների տենչի»⁵⁶ հետ: Մ. Օրմանյանը, նույն տրամաբանությամբ առաջնորդվելով, փորձում է բացատրությունը տեսնել «կրոնատրական բարեպաշտութեան»⁵⁷ մեջ: Իրականում, սակայն, Գրիգոր Բ-ի ճանապարհորդությունները հետևանք էին մի կողմից կաթողիկոսական պարտականությունների կատարման, մյուս կողմից՝ քաղաքական որոշակի նպատակադրումների:

Կենտրոնանալով հայոց կաթողիկոսի Եգիպտոս կատարած այցի վրա՝ նշենք, որ հայկական սկզբնաղբյուրների վկայություններն այս հարցում համանման չեն⁵⁸: Հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Կիրակոս Գանձակեցու վկայությունը, ըստ որի՝ Գրիգոր կաթողիկոսը Եգիպտոսում հայտնվել է նավաբեկության հետևանքով: «Առափնյա իրավունքով» ստրկացվելու վտանգի առկա-

⁵⁵ Ն. Պողարյան, *Հայ գրողներ*, Ե-ժէ դարեր, Երուսաղեմ, 1971, էջ 194:
⁵⁶ М. Ширинян, Григор II Вкасер, *Православная энциклопедия*, т. XII, Москва, 2006, с. 449.
⁵⁷ Մ. Օրմանյան, *Ազգապատում*, հ. Ա, էջմիածին, 2001, սյուն 1498:
⁵⁸ А. Кароian-Kouymjian, *L'Égypte vue par des Arméniens*, Paris, 1988, p. 19-23.

յության պայմաններում⁵⁹ նա աղոթքի միջոցով հասել է նրան, որ հորդառատ անձրև տեղա ամբողջ Եգիպտոսի վրա: Դա սարսափ է հարուցել բնակչության շրջանում, որովհետև միայն Մովսես մարգարեի և Հիսուս Քրիստոսի այցելության ժամանակ էր անձրևել Եգիպտոսում⁶⁰: Հայոց հայրապետը «բազում փառք և մեծութիւն ընկալաւ ի թագաւորեն Եգիպտոսի»⁶¹: Հայ պատմագրության մեջ հյուսվել է ավանդություն՝ բացատրելու համար հայոց հայրապետի ջերմ ընդունելությունը մահմեդական երկրում: Մատթեոս Ուտհայեցին տեղյակ չէ նավաբեկությունից: Կաթողիկոսի հայտնվելը Եգիպտոսում նա կապում է «ընդ առաջին անապատսն Եգիպտացոց»⁶² շրջելու ցանկության հետ: Անկախ այս ամենից՝ ակնհայտ է, որ ամենավճռական դերակատարությունն այս հարցում խաղացել են Բադր ալ-Ջամալիի վեզիրությունն ու մեծ թվով հայ բնակչության առկայությունը Եգիպտոսում⁶³:

Կիրակոս Գանձակեցին տեղեկացնում է, որ Ֆաթիմյան խալիֆը (ենթադրելի է՝ վեզիրը) Գրիգոր Վկայասերին առաջարկել է հայոց կաթողիկոսական աթոռը հաստատել Ալեքսանդրիայում⁶⁴: Մերժելով առաջարկը՝ Գրիգորն իր քրոջորդի Գրիգորիսին ծեռնադրել է այդ կողմերի հայության հոգևոր առաջնորդ: Ալեքսանդրիայի աթոռն իր գոյությունը պահպանել է ավելի քան 80 տարի՝ մինչև Սալահ ադ-Դինի իշխանության հաստատումը: Հայոց կաթողիկոսը, Վարդան վարդապետի վկայությամբ, Եգիպտոսում կառուցել է սովել մի շարք հայկական եկեղեցիներ⁶⁵:

⁵⁹ Ю. Барсегов, Отказ армян от берегового права, *Պայման-բանասիրական հանդես*, 1971, N 1, с. 97:

⁶⁰ Կիրակոս Գանձակեցի, *Պայմութիւն Հայոց*, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 96-97:

⁶¹ Մատթեոս Ուտհայեցի, նշվ. աշխ., էջ 228:

⁶² Անդ, էջ 206:

⁶³ А. Кароian-Kouymjian, Le catholicos Grégoire II le Martyrophile et ses pèrègrinations, *Բազմավէպ*, 1974, Vol. 3-4, p. 319-320.

⁶⁴ Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 97:

⁶⁵ Վարդան Վարդապետ, *Հաւաքումն պայմութեան*, Վենետիկ, 1862, էջ 102:

Տեղեկություն կա նաև այն մասին, որ Բադր ալ-Ջամալին փորձել է կարգավորել միջեկեղեցական հարաբերությունները ղափտների ու հայերի միջև: Այս նպատակով 1086 թ. Ալեքսանդրիայում հրավիրվել է եկեղեցական ժողով, որի մասնակիցների թվում էր երկրորդ անգամ Եգիպտոս այցելած հայոց կաթողիկոսը⁶⁶: Երկար քննարկումների արդյունքում ղափտի եկեղեցու առաջնորդ Կյուրեղը և Գրիգոր Վկայասերը «Հայոց և Ղևիտեաց մէջ եղած հակառակութիւնը դադրեցուցին»⁶⁷:

Բադրը շարունակեց զբաղեցնել վեզիրի պաշտոնը մինչև մահը՝ 1094 թ.: Նրան փոխարինեց որդին՝ Շահնշահը, որը 1089 թ. սկսած հոր օգնականն էր: Վերջինիս վիճակված էր ծավալել ավելի ակտիվ արտաքին քաղաքականություն, իսկ ներքին կառավարման համակարգում հասնել բացարձակ ու անսահմանափակ իշխանության:

Ամփոփում

Բադր ալ-Ջամալին, դնելով Ֆաթիմյան Եգիպտոսում հայերի քաղաքական դերակատարության բարձրացման հիմքը, նշանակալի տեղ է գրավում հայոց միջնադարյան պատմության ուսումնասիրության գործում: Հայկական սկզբնաղբյուրների վկայությունների և հատկապես հայերեն գրված ծավալուն ուսումնասիրությունների բացակայությունը խիստ անհրաժեշտ է դարձնում մեր անդրադարձը Ֆաթիմյան Եգիպտոսի առաջին հայազգի վեզիրին ու նրա տպավորիչ գործունեությանը:

⁶⁶ G. Dédéyan, op. cit., p. 274-275.

⁶⁷ Ղևտեղ Ալիշան, *Շնորհալի և պարագայ իր*, Վենետիկ, 1873, էջ 169:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ալիշան Ղևտեղ, *Շնորհալի և պարագայ իր*, Վենետիկ, 1873:
 Գանձակեցի Կիրակոս, *Պատմութիւն Հայոց*, Երևան, 1961:
 Մատթեոս Ուտհայեցի, *Ժամանակագրութիւն*, Երևան, 1991:
 Վարդապետ Վարդան, *Հաւաքումն պատմութեան*, Վենետիկ, 1862:
 Բոզոյան Ա., Հայոց կաթողիկոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, *Քրիստոնյա Արևելքը և Հայաստանը*, Երևան, 2000, էջ 80-85:
 Թուրջյան Հ., XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից, *Արևելագիտության ժողովածու*, 1964, հ. 2, Երևան, էջ 301-315:
Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976:
 Պողարեան Ն., *Հայ գրողներ*, Ե-ԺԷ դարեր, Երուսաղեմ, 1971:
 Վարդանյան Վ., *Վասպուրականի Արժրունյաց թագավորությունը*, Երևան, 1969:
 Օրմանյան Մ., *Ազգապատում*, հ. Ա, Էջմիածին, 2001:
 Cahen C., *La Syrie du Nord à l'époque des croisades*, Paris, 1940.
 Dadoyan S., *The Fatimid Armenians: Cultural and political interaction in the Near East*, Leyde, 1997.
 Dédéyan G., *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés*, Vol. 1, Lisbonne, 2003.
 Fierro M., *The New Cambridge History of Islam*, Vol. 2, Cambridge, 2011.
 Hamblin W., *The Fatimid Army during the Early Crusades*, Michigan, 1985.
 Hitti P., *History of the Arabs*, London, 1951.
 Kapoian-Kouymjian A., *L'Égypte vue par des Arméniens*, Paris, 1988.
 Kapoian-Kouymjian A., *Le catholicos Grégoire II le Martyrophile et ses pérégrinations*, *Բազմավէպ*, 1974, Vol. 3-4, pp. 306-325.
 Барсегов Ю., Отказ армян от берегового права, *Պատմա-քաղաքագիտական հանդես*, 1971, N 1, էջ 95-110:
Православная энциклопедия, т. XII, Москва, 2006.
 Семенова Л., *Из истории фатимидского Египта*, Москва, 1974.

ՆԱՐԻՆԵ ԶՈՒՐԱԲՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ԱՌԱՋԻՆԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Մուտք

1020-ական թթ. սկզբին Վասպուրականի հայության վերաբնակեցմամբ սկիզբ է դրվում հայ ժողովրդի արտագաղթի նոր փուլի, որին նպաստում էին ինչպես պետականության վերացման աստիճանական գործընթացը բուն Հայաստանում, այնպես էլ Բյուզանդական կայսրության խրախուսողական դիրքորոշումը նշված հարցում: Արտագաղթի ուղի էր բռնում նաև հայ ավատատիրական միջավայրը, որն իր հետ տանում էր պետականության վերականգնման գաղափարն ու հնարավորությունը: Հենց այդ հանգամանքը, որոշ այլ գործոնների հետ մեկտեղ, պայմանավորում է հայկական նոր իշխանության, ապա նաև թագավորության առաջացումը Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս՝ Կիլիկիայում:

Որքան էլ արտառոց կարող է թվալ, ստեղծված պատմագիտական հսկայական ժառանգության մեջ խիստ խնդրական է Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադրի հարցադրումը: Համընդհանուր ընդունելության արժանացած այն տեսակետը, որի համաձայն՝ իշխանության հիմնադրի պատիվը շնորհվում է Ռուբեն Ա-ին, ներկայումս համարվում է հիմնազուրկ, անգամ առասպելական: Նկատի ունենալով վերոնշյալ հարցադրման կարևորությունը, ինչպես նաև նորագույն ուսումնասիրություններում տեղ գտած տեսակետների աններդաշնակությունը՝ սույն հոդվածով փորձ կկատարենք լուծում տալու Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադրի խնդրին՝ մի կողմ թողնելով իշխանության ձևավորման գործընթացի մնացյալ դրվագները:

1. Սամուել Անեցու ժամանակագրության արժանահավատության խնդիրը

Կիլիկիայի հայկական իշխանության ձևավորումը հայ պատմագիտական մտքի հիմնադիր Մ. Չամչյանցի կողմից վերագրվել է Ռուբեն Ա-ի գործունեությանը¹: Ուսումնասիրողները, համաձայնվելով նշված տեսակետի հետ, իշխանության հիմնադրումն այդուհետ կապել են Ռուբենի հետ²: Փաստորեն, 18-րդ դարավերջից ձևավորվում է պատմագիտական ավանդույթ Կիլիկիայի հայկական իշխանության առաջացումը Ռուբեն Ա-ին վերագրելու շուրջ:

Ուսումնասիրողներին շփոթության մեջ է գցել Սամուել Անեցու վկայություններին հավատ ընծայելու գաղափարը: Պատմագիրն իր «Ժամանակագրությունը» ավարտել է 1163 թվականին³, ուստի խնդրո առարկա իրադարձություններից հեռու լինելով ընդամենը 7-8 տասնամյակով, կարող էր հանդես գալ արժանահավատ ժամանակագրի հավակնությամբ: Համակարգելով Ռուբենի մասին Սամուել Անեցու երկում պահպանված տեղեկությունները⁴՝ Մատթեոս Ուռհայեցու նշած երկու փաստի դիմաց կատանանք տասներեքը⁵: Դրանք սոսկ ուրվագծորեն ներկայացնելով՝ կունենանք հետևյալ պատկերը. Ռուբենը, որը Գագիկ Բ-ի հետ ազգակցական կապեր ուներ, նրա մահից հետո իր իշխանության ներքո

¹ Մ. Չամչյանց, *Պատմություն Հայոց*, հ. Գ., Վենետիկ, 1984, էջ 6:

² Ս. Պալասանյան, *Պատմություն Հայոց*, Թիֆլիս, 1902, էջ 329; Բակուրյան, *Մի տեսություն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ*, Նիկոսիա, 1904, էջ 10; Մ. Օրմանյան, *Ազգապատմություն*, հ. Ա, Բեյրութ, 1959, էջ 683; Մ. Զուրաբյան, Կիլիկիայի հայկական իշխանությունը, *Հայ ժողովրդի պատմություն*, Հ. Գ, Երևան, 1976, էջ 677; Գ. Միքայելյան, *Կիլիկիայի հայկական պետության պատմություն*, Երևան, 2007, էջ 83-88:

³ Կ. Մաթևոսյան, Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը և պատվիրատուն, *Պատմա-բանասիրական հանդես*, 1992, 1, էջ 156-162:

⁴ Սամուել Անեցի, *Հաաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 116, 135-136:

⁵ Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հ. Ա., Երևան, 2005, էջ 65-66:

գտնվող Կոսիտառա բերդից անցել է Կոռնոզլու կամ Կոլիմոզլու գյուղի շրջանը, և ունենալով այդ վայրերի հայության աջակցությունը, գրավել է Կիլիկիայի լեռնային շրջանները: Եզրակացնում ենք, որ Ռուբենը, ըստ Սամուել Անեցու «Ժամանակագրության», ոչ միայն նորաստեղծ հայկական իշխանության հիմնադիրն է, այլև ծագմամբ՝ Բագրատունի:

Չզայթակղվելով վերը նշված վկայությունների առատությամբ՝ հարկ է նկատի ունենալ հետևյալը: Սամուել Անեցու «Ժամանակագրության» 1893 թ. հրատարակությունը, որից օգտվել են հետազոտողները, Արշակ Տեր-Միքելյանի կողմից կազմվել է հետագա դարերի ընթրինակություն հանդիսացող ձեռագրերի հիման վրա, ուստի լի է բազմաթիվ և բազմաբնույթ ընդմիջարկություններով⁶: «Ժամանակագրության» հնագույն ձեռագիրը, որը ներկայումս պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, որևէ ակնարկ չունի Ռուբինյանների և Կիլիկյան անցուդարձերի մասին: Փաստորեն, Ռուբեն Ա-ի գործունեության վերաբերյալ Սամուել Անեցին ևս չի տիրապետում որևէ տեղեկության, իսկ նրա «Ժամանակագրության» մեջ պահպանված հիշատակություններն էլ հատուկ միտումով պահպանված ընդմիջարկություններ են, ըստ այդմ էլ չեն պատկանում Սամուել Անեցու գրչին: Ինչպես իրավացիորեն արձանագրում է Լ. Տեր-Պետրոսյանը, «Սամուել Անեցու Ժամանակագրությունը պետք է հանել Կիլիկիայի պատմության ստուգապատում աղբյուրների ցանկից»⁷:

2. Ռուբեն, թե՛ Կոստանդին

Հակառակ հայ պատմագիտական ավանդույթին՝ սկզբնաղբյուրների վկայությունների քննությունը⁸ հանգեցնում է բուրբուրվին

⁶ Սամուել Անեցի, նշվ աշխ., էջ Է, ԻԵ: Գ. Միքելյան, նշվ աշխ., էջ 87: Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 471-472:

⁷ Անդ, էջ 474:

⁸ Կիլիկիայի հայկական իշխանության ձևավորման վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունների համահավաք պատկերը տե՛ս Ե. Քասունի, Ռուբեն Ա. և Ռուբինյան իշխանության հիմնադրությունը, Բեյրութ, 1972, էջ 9-32:

այլ եզրակացության: Բնութագրական պետք է համարել իրադարձություններին ժամանակով ամենամոտ պատմագիր Մատթեոս Ուռհայեցու սակավախոսությունը. նա արձանագրում է Ռուբենի գործունեության ընդամենը երկու դրվագ: Պատմագիրը վկայում է, որ Ռուբենը Կոստանդինի հայրն էր, ինչպես նաև Գագիկ Բ Բագրատունի արքայի զորականներից մեկը⁹: Ն. Ադոնցի բնորոշմամբ՝ «Մատթեոսին ծանոթ է միայն Ռուբենի անունը»¹⁰: Լ. Տեր-Պետրոսյանն էլ արձանագրում է, որ պատմագրի համար «այդ իշխանը կարծես ոչ թե կոնկրետ պատմական անձ է, այլ ընդամենը հեռավոր մի հուշ»¹¹:

Հատկանշական է, որ հետագա պատմագիրներից Սմբատ Սպարապետն ու Վարդան Արևելցին, հետևելով Մատթեոս Ուռհայեցուն, աննշան տարբերությամբ հաղորդում են միայն այն, ինչ որ վերջինս: Լինելով արքայի եղբայրն ու նրա գործակիցը՝ Սմբատ Սպարապետն ու Վարդան Արևելցին «քաջածանոթ պետք է լինեին Կիլիկյան արքունիքի ավանդույթներին»¹² և ավելի իրազեկ Ռուբենի կենսագրության մանրամասներին: Նրանց անտեղյակությունից կարելի է եզրակացնել, որ ինչպես Մատթեոս Ուռհայեցու ապրած ժամանակաշրջանում, այնպես էլ 13-րդ դարի առաջին կեսին Ռուբենի՝ որպես իշխանության հիմնադրի դերակատարությունն ամենևին էլ իրական չէր համարվում:

Այսպիսով, ո՛չ 12-րդ դարի, ո՛չ էլ 13-րդ դարի առաջին կեսի աղբյուրները Ռուբենի գործունեության մասին վկայություններ չեն պարունակում, ինչն ակնհայտորեն ցույց է տալիս, որ նրա՝ որպես Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադրի դերակատարությունն ու Բագրատունիների հետ ունեցած ազգակցությունը հետագայում ստեղծված շինծու հորինվածքներ են: Ավելին, սկզբնաղ-

⁹ Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, Երևան, 1991, էջ 276:

¹⁰ Ն. Ադոնց, *Ռուբինյանների նախահայրը*, Երկեր, հ. Ե, Երևան, 2012, էջ 504:

¹¹ Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, Երևան, 2007, էջ 64:

¹² Նույն տեղում, էջ 66-67:

բյուրներն իշխանության հիմնադրումը հաճախ ուղղակիորեն վերագրում են Կոստանդինին¹³: Մի շարք աղբյուրներից բերենք, օրինակ, Հեթում Պատմիչի վկայությունը. «Կոստանդին էառ զՎահկայ: Եւ նախ սարկիրեաց ի Կիլիկեայ, ի վերայ ազգին Հայոց»¹⁴: Աստի ամենին էլ պատահական չէ Ե. Քասունու հետևյալ գնահատականը. «Կիլիկիոյ մէջ Ռուբինեան անկախ իշխանական տան հիմնադիրը Կոստանդինն է»: Իսկ ինչ վերաբերում է Ռոբենին, ապա նրան, ըստ ուսումնասիրողի, «կը մնայ միայն Ռոբենեան ընտանիքին հայրը ըլլալու պատիվը»¹⁵:

Հետազոտողական է այն, որ ընդունելի չի կարելի համարել անգամ Ռոբենի՝ Կոստանդինի հայրը լինելու հանգամանքը: Թեև Նզգենաղբյուրները Կոստանդինին միաբերան անվանում են «մորդի Ռոբենի», «Որդի Ռուբենայ», այնուհանդերձ համանման դրացում է սրբում նաև Թորոսին ու Լևոնին, որոնց հայրը, ինչպես ռայսեր է, Կոստանդինն է: Պարզ է դառնում, որ «Որդի Ռուբենի» արտահայտությունը բնութագրում է ոչ թե հայրանունը, այլ տոհմանունը, հետաքրքիր պարտադիր չէ, որ Կոստանդինի հոր անունը Ռոբեն եղած լիներ: Որպես այս տրամաբանական հարցադրման ապացույց՝ հարկ է մատնանշել հետևյալ հանգամանքը. Կոստանդինի ավագ որդին Թորոսն էր, ուստի պապի և անդրաւնիկ թողան անունների համապատասխանության քարացած ավանդույթից կարելի է բխեցնել, որ Թորոսի պապի, կամ որ նույնն է՝ Կոստանդինի հոր անունը ևս պետք է Թորոս լիներ¹⁶: Այսպիսով՝ առավել հավանական ենք համարում կարծել, որ Ռուբենը լավագույն դեպքում Կոստանդինի սուկ հեռավոր նախնին էր:

3. Ռուբենը՝ գաղափարախոսական գեղը

Ինչ վերաբերում է պատմական իրականության միտումնավոր փոփոխմանը, ապա դա կատարվել է 13-րդ դ. առաջին կեսին: 1248 թ. Վարդան Արևելցին, Իշդխ ասորի քահանայի օգնությամբ, հայերեն թարգմանելով Միքայել Ասորու ժամանակագրությունը, դրանում կատարում է քնագրային փոփոխություն: Ասորի ժամանակագիրը, հետևելով 12-13-րդ դդ. հայ պատմագիրներին, Ռուբենին չի հատկացրել Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադրի դեր, մինչդեռ նրա երկի հայերեն թարգմանության մեջ, գաղափարախոսական լուրջ նպատակադրումով, ներմուծվել է նման տեղեկություն: Ռուբենի՝ իբրև իշխանության հիմնադրի դերակատարման օրինականացումը շարունակվել է նաև հետագայում: Լևոն Բ արքայի (1269-1289 թթ.) քարտուղար Վահրամ Բարունին, հանձնարարական ստանալով շարունակելու Ներսես Շնորհալու «Վիպասանութին» երկը և շարադրելու Ռուբինյան տոհմի պատմությունը, 1276-1277 թթ. գրում է մի չափածո ստեղծագործություն՝ «Ոտանավոր պատմութիւն Ռուբինեան»: Ռուբենին Բագրատունյաց ծագումով և Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադրի դերակատարությամբ ներկայացնող այդ երկը դառնում է օրինակելի աղբյուր 13-րդ դարավերջից ստեղծագործած գրիչներից շատերի համար: Այս առումով խիստ բնութագրական է Անանուն ժամանակագրի հետևյալ վկայությունը «Ի ՁՃԻՎ (1197) թվին թագաւորեաց Լևոն Բագրատունեաց ի Կիլիկիա»¹⁷:

Վերը նշված ձեռնարկումները պայմանավորված էին Ռուբինյանների արքայական ծագման լեգենդով: Իրենց հոչակելով Բագրատունիների ազգակիցները, ու դրանով իսկ նաև իրավահաջորդները՝ Ռուբինյան տան ներկայացուցիչներն օրինական տեսք էին հաղորդում իրենց թագավորական իշխանությանը Կիլիկիայում: Կոստանդինը, չլինելով Բագրատունյաց վերջին արքայի ժամանակակիցը, ըստ էության չէր կարող նպաստ բերել լեգենդի ստեղծման գործին, մինչդեռ Ռուբենը, ապրած լինելով հենց Բագրատունի նշված արքայի ժամանակներում, ազգակցից բացի

¹³ Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 391-392:

¹⁴ Համառոտ պատմությունն Հեթոնյ տեառն Կորիկոսոյ, Մանր ժամանակագրություններ, հ. Ա, Երևան, 1951, էջ 74:

¹⁵ Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 75:

¹⁶ Լ. Տեր Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 77-79:

¹⁷ Անանուն ժամանակագրություն, Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 385:

կարող էր լինել նաև նրա մերձավոր գործակիցը: Ուստի ավելի հավանական է կարծել, որ Ռուբենի գաղափարախոսական դերակատարումը Բագրատունիների հետ կապի ապահովումն էր:

Որպես Բագրատունյաց արքայական տան իրավահաջորդներ՝ Ռուբինյաններն օրինական հիմնավորում էին ստանում դրսևորելու արքայական հավակնություններ նաև թուն Հայաստանի նկատմամբ: Այս նպատակով Լևոն Ա արքայի և նրա հետնորդների կողմից շրջանառության մեջ դրվեց «Ամենայն հայոց թագավոր» տիտղոսը¹⁸, որը «Ամենայն հայոց կաթողիկոս» տիտղոսի¹⁹ նույնատիպ դրսևորումն էր:

Ամփոփում

Այսպիսով՝ Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադիրն իրականում Կոստանդինն է: Ռուբենը, իրեն վերագրված Բագրատունյաց ծագման շնորհիվ, իշխանության ձևավորման գործում խաղացել է լոկ գաղափարախոսական դեր: Իսկ ինչ վերաբերում է իշխանության հիմնադրի գործունեության այլ մանրամասներին, ինչպես, ասենք, իշխանավարության թվագրման պարզաբանմանը, ապա դա կարող է դառնալ առանձին հոդվածի նյութ:

¹⁸ Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 196-201:

¹⁹ Ա. Բոզոյան, Հայոց կաթողիկոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 80-85:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Անեցի Սամուել, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
- Ուտհայեցի Մատթեոս, Ժամանակագրութիւն, Երևան, 1991:
- Բակուրյան, Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, Նիկոսիա, 1904:
- Ադոնց Ն., Ռուբինյանների նախահայրը, Երկեր, հ. Ե, Երևան, 2012:
- Բոզոյան Ա., Հայոց կաթողիկոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 80-85:
- Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, Երևան, 1976:
- Մաթևոսյան Կ., Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը և պատվիրատուն, Պատմաբանասիրական հանդես, 1992, թ. 1, էջ 156-162:
- Մանր ժամանակագրություններ, հ. Ա, Երևան, 1951:
- Միքայելյան Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007:
- Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1984:
- Պալասանյան Ս., Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1902:
- Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հհ. Ա-Բ, Երևան, 2005-2007:
- Քասունի Ե., Ռուբէն Ա. եւ Ռուբինյան իշխանութեան հիմնադրութիւնը, Բեյրութ, 1972:
- Օրմանյան Մ., Ազգապատմութիւն, հ. Ա, Բեյրութ, 1959:

**ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼԻԱՆԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ**

**ՖՐԻԴՐԻԽ ԱՌԱՋԻՆԸ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ
ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ**

Մուտք

11-րդ դարի երկրորդ կեսին Առաջավոր Ասիայում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք փոխեցին համաշխարհային պատմության զարգացման ընթացքը, և ձևավորվող նոր ուժերը փորձեցին իրենց գործողություններով ներազդել դրանց վրա:

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդական կայսրության նկատմամբ տարած հաղթանակի արդյունքում մահմեդականությունը ընդունած սելջուկ-թյուրքերի հաստատվելն Առաջավոր Ասիայում վերափոխեց քրիստոնեություն-խլամ քաղաքակրթությունների միջև ձևավորված սահմանային հավասարակշռությունը հոգուտ վերջինի:

Այս հավասարակշռությունը վերականգնելու նպատակով Արևմտյան Եվրոպայում սկսվեց քարոզչություն, որի դրսևորումը դարձավ Խաչակրաց առաջին արշավանքը: Դրա արդյունքում խաչակիրները Մերձավոր Արևելքում գրավեցին զգալի տարածքներ և ստեղծեցին խաչակրաց պետություններ, սակայն հիմնական խնդիրը՝ քրիստոնեական և մահմեդական քաղաքակրթությունների միջև հավասարակշռության վերականգնումը, մնաց չլուծված:

Արևմտյան և Արևելյան քաղաքակրթությունների միջև ձևավորված փոխհարաբերությունները խոր ու ընդգրկուն էին և ուղղորդեցին նաև Արբազան Հռոմեական կայսրության Արևելյան քաղաքականությունը, որն առավել ցայտուն դրսևորվեց Հոհենշտաուֆենների (Շտաուֆեն՝ 1138-1254 թթ.), մասնավորապես՝ Ֆրիդրիխ Առաջին Շիկամորուսի կառավարման տարիներին (1152-1190 թթ.): Գալով իշխանության՝ վերջինս ձեռնամուխ եղավ ժամանակի հրա-

մայականով որոշակիացում պահանջող մի շարք խնդիրների լուծմանը:

1. Հաշվի առնելով, որ դարեր ի վեր արևմտյան քրիստոնեական միջավայրի կենտրոնը գտնվում էր Հռոմում, Ֆրիդրիխը փորձեց ամրապնդել իր դիրքերն Իտալիայում և այն դարձնել կայսրության համապարփակ (քաղաքական, տնտեսական և մշակութային) կենտրոն:

2. Կաթոլիկ և ուղղափառ քրիստոնեական միջավայրերը վերամիավորել մեկ միասնական քաղաքակրթական միջավայրում: Խնդիրն այն է, որ այդ երկու միջավայրերը վաղուց ի վեր տարանջատվել էին, իսկ 1054 թ. եկեղեցիների մեծ բաժանման հետևանքով ժամանակակիցների գիտակցության մեջ դրանք սկսեցին ընկալվել որպես առանձին համակարգեր¹: Ֆրիդրիխ Շիկամորուսն իր առջև խնդիր դրեց՝ վերականգնել քրիստոնեական աշխարհի միասնությունը, ուստի Բյուզանդիայի հետ մշակվելիք քաղաքականության մեջ այս խնդիրը ստացավ գերակայություն:

3. Ֆրիդրիխը փորձեց նոր մոտեցումներ դրսևորել քրիստոնեություն-մահմեդականություն փոխհարաբերությունների նկատմամբ, որոնք պետք է ներառեին ոչ միայն ավանդական առճակատման, այլև երկու քաղաքակրթությունների համակեցության սկզբունքը:

Արևմտյան Հռոմեական կայսրության անկման շրջանում հռոմեական քաղաքակրթության պահպանման դերը ստանձնեց պապականությունը: Օգտվելով Արևմտյան Հռոմեական կայսրության թուլացումից՝ նրա քաղաքակրթությունը յուրացնելու և դրա իրավահաջորդը դառնալու հավակնություններ ցուցաբերեցին հույները և գերմանացիները: Այդ շրջանում կային նաև ուժեր, որոնք փորձում էին կործանել հռոմեական քաղաքակրթությունը:

Արևմտյան Հռոմեական քաղաքակրթության պահպանման և յուրացման համար մղվող պայքարի մեջ մտավ նաև պապականու-

¹ P. Gemeinhardt, *Die Filioque-Kontroverse zwischen Ost- und Westkirche im Frühmittelalter*, Berlin, New York: de Gruyter, 2002, s. 300-301.

թյունը: Այս հարցում մեծ դերակատարություն ունեցավ Հռոմի պապ Լևոն Ա Մեծը (440-461 թթ.): Պապականության ձգտումներն իրենց արտացոլումը գտան 451 թ. Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովում, որտեղ նախ ընդունվեց որոշում, ըստ որի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսը՝ որպես «կայսերական քաղաքի» եպիսկոպոս, ստանում էր նույն արտոնությունները և պատիվները, ինչ ուներ «Հին Հռոմի» եպիսկոպոսը: Սակայն Կոստանդնուպոլսի եպիսկոպոսին տրված իրավունքները տարածվում էին միայն Արևելքում²: Այս ճանապարհով պապականությունը փորձում էր Արևելյան Հռոմեական կայսրությանը հեռու պահել հռոմեական քաղաքակրթության իրավահաջորդությունը ստանձնելու հավակնություններից:

Հռոմեական քաղաքակրթության իրավահաջորդ դառնալու համար պապականությանն անհրաժեշտ էր յուրացնել նաև աշխարհիկ իշխանության որոշակի հատկանիշներ: Այս խնդիրը ևս լուծվեց Քաղկեդոնի ժողովում՝ հանձինս երկաթնակության (աստվածային և մարդկային) բանաձևի:

Հռոմեական եկեղեցուն հաջողվեց կաթոլիկություն տարածել ոչ միայն Արևմտյան Հռոմեական կայսրության տարածքում, այլև դրա սահմաններից դուրս, մասնավորապես՝ Իռլանդիայում, Բրիտանիայում, Գերմանիայում, Սկանդինավյան թերակղզում: Այս հանգամանքը հնարավորություն տվեց պապականությանը՝ մտածելու Եվրոպայի մշակութային միասնության գաղափարի շուրջ: Կարևոր դերակատարում ունեցավ Հռոմի պապ Գրիգորիոս Ա Մեծը (590-604 թթ.), ով այդ ծրագրի կենսագործումն ապահովելու նպատակով կատարեց մի շարք ձեռնարկումներ, մասնավորապես՝ մկրտեց լանգոբարդների արքայազնին, սերտ հարաբերություններ հաստատեց Իսպանիայի հետ, Ավգուստինոսի գլխավորությամբ քարոզչական առաքելություն ուղարկեց Անգլիա, որի արդյունքում մկրտվեցին Քենթի թագավոր Էտելբերտ Առաջին Սուրբը (591-616 թթ.) և նրա ժողովուրդը³:

Պապական արքունիքը հասկանում էր, որ Եվրոպայի միասնությունն ամբողջական կդառնար միայն այն դեպքում, եթե այն միաժամանակ լրացվեր քաղաքական ավելի բարձր համակարգով՝ հանձինս կայսերական իշխանության, քանզի հռոմեական քաղաքակրթությունը ձևավորվել էր կայսրության շրջանակներում:

Արևմտյան Եվրոպայի պատմական զարգացման արդյունքում ֆրանկական թագավոր Կարլոս Մեծը (768-814 թթ.) նվաճեց որոշակի տարածքներ, ինչը հիմք հանդիսացավ քաղաքական միասնության ապահովման համար: Պապականությունը փորձեց օգտագործել այս հանգամանքը և 800 թ. Կարլոս Մեծին թագադրեց Արևմտյան Հռոմեական կայսրության թագով, որը պետք է դառնար Եվրոպայի քաղաքական և մշակութային միասնության խորհրդանիշ⁴: Այս ճանապարհով պապական արքունիքը փորձում էր ապահովել միասնության քաղաքական և մշակութային բաղադրատարրերը: Ուշագրավ է, որ Կարլոս Մեծի թագադրության մասին պահպանվել է ոչ միայն պաշտոնական, այլև ֆրանկական ավանդույթը: Ըստ վերջինի՝ Սուրբ Պետրոսի տաճարում տոնական պատարագի ժամանակ Կարլոսին է մոտենում Լևոն Գ պապը (795-816 թթ.) և նրա գլխին դնում կայսերական թագը, իսկ տաճարում գտնվող ֆրանկները և հռոմեացիները բացականչում են. «Կեցցե՛ Կարլոս Ավգուստինոսը՝ Աստծո կողմից պսակված մեծ և խաղաղարար հռոմեական կայսրը»⁵:

Ֆրանկական տերության տրոհումից հետո կայսերական իշխանության և Եվրոպայի միասնության գաղափարի կրողները՝ ի դեմս ստեղծված Սրբազան Հռոմեական կայսրության, դարձան գերմանացիները: Այս պարագայում Հռոմը շարունակում էր դիտվել որպես Եվրոպայի մշակութային և քաղաքական միասնության

⁴ Պատահական չէ, որ, վերազնահատելով Կարլոս Մեծի պատմական առաքելությունը, 20-21-րդ դդ. սկզբի պատմագիտական միտքը նրան անվանում է «Առաջին Եվրոպացի» կամ «Եվրոպայի հայրը»: Այս մասին տե՛ս S. Fischer-Fabian, *Karl der Grosse: der erste Europäer*, Bastei Lübbe, 2002. J. Schwarz, *Das Europäische Mittelalter*, W. Kohlhammer Verlag, s. 2006.

⁵ А. П. Леваидовский, *Карл Великий*, Москва, 1999, с. 34.

² Я. В. Ковальский, *Папы и папство*, Москва, 1991, с. 20.

³ Նույն տեղում, էջ 25-26:

կենտրոնի խորհրդանիշ: Դրա վառ դրսևորումներից էր Օտտոն Երրորդի (983-1002 թթ.) կողմից Հռոմում՝ Ավենտինյան բլրի վրա, կայսերական պալատի կառուցումը (998 թ.), որի ճակատին արձանագրված էր «Արբազան պալատ» (“Sacrum palatium”): Պատահական չէ, որ Օտտոնն իր պալատի կառուցման համար ընտրեց այն տարածքը, որը ժամանակին հռոմեական կայսրերի նստավայրն⁶ էր: Այս քայլով կայսրը փորձում էր Հռոմեական կայսրության քաղաքական կենտրոնի ավանդույթը համադրել նոր ձևավորվող միասնական Եվրոպա գաղափարի հետ: Այսպիսով Հռոմը դառնալու էր միասնական Եվրոպայի մշակութային-քաղաքական կենտրոն:

Հասարակական-քաղաքական գիտակցության մեջ շրջանառվող միասնական Եվրոպա հասկացությունը սկսեց փոխարացնող հատկանիշներ ձեռք բերել հատկապես 1054 թվականից, երբ տեղի ունեցավ եկեղեցիների բաժանումը, որն իրավաբանորեն ձևակերպեց քրիստոնեության ներսում երկու խոշոր՝ Արևմտյան և Արևելյան բյուզանդական քաղաքակրթությունների տարանջատումը⁷: Դարեր շարունակ Արևմուտքի և Արևելքի մշակութաքաղաքական և տնտեսական տարաբնույթ զարգացումների արդյունքում աստիճանաբար ձևավորվեց քաղաքակրթական երկու միջավայր, որոնք այնքան տարբեր էին, որ նույնիսկ քրիստոնեությունն ի վիճակի չեղավ դրանք համահարթեցնել, ուստի համապատասխանաբար նրա ներսում ևս ձևավորվեց երկու խոշոր ուղղություն: Դրանց կենտրոններ դարձան Հռոմը և Կոստանդնուպոլիսը: Բյուզանդական եկեղեցու որդեգրած քաղաքականության մասին հետաքրքիր է Վ. Լորանի կարծիքը. «Հռոմից «մշտապես» ամբող-

⁶ М. Л. Бульст-Тиле, К. Йордан, Й. Флекенштейн, *Священная Римская империя: эпоха становления*, СПб., 2008, с. 12.

⁷ P. Gemeinhardt, նշվ. աշխ., էջ 299:

ջական բաժանում և արևելյան երեք պատրիարքության (Անտիոք, Ալեքսանդրիա, Երուսաղեմ) ենթարկում Կոստանդնուպոլսին»⁸:

Քրիստոնեության երկու ուղղությունները ստացել էին իրենց տարածական միջավայրերը և ապահովում էին երկու քաղաքակրթությունների մշակութային տարանջատվածությունը:

Եվրոպայի միասնության գիտակցության իրավահաջորդությունը յուրացրած Արբազան Հռոմեական կայսրության այս գաղափարախոսությունը կյանքի կոչելու համար կոնկրետ քայլեր ձեռնարկեցին նաև Հոհենշտաուֆենների արքայատոհմի ներկայացուցիչները, մասնավորապես՝ Ֆրիդրիխ Առաջին Շիկամորուրը: Հաշվի առնելով, որ Հռոմը վերածվել էր կայսրության և քրիստոնեության գաղափարական կենտրոնի, Ֆրիդրիխը փորձում էր հաստատվել այնտեղ՝ իր քաղաքական գործունեությունը սրբազանացնող «օրինանքը» ստանալու համար:

Միջնադարում, արևմտյան քաղաքակրթության շրջանակներում, մշակվել էր երկու իշխանությունների փոխհարաբերությունների զաղափարաբանությունը⁹, ըստ որի հոգևոր իշխանությունը գերադասվում էր աշխարհիկին, սակայն սա իրավական կարգավորում չստացավ, քանզի կայսրությունն ինքն էր փորձում յուրացնել գերակայությունը. «Հռոմեական կայսրն ընտրվում է Աստծո կամոց: Նա կլինեք ընդամենն Աստծո սուվերը, եթե չլինեք Հռոմի տերը»¹⁰: Մշտապես պայքարի առարկա դարձած այս կնճոտ խնդիրը Ֆրիդրիխը փորձեց լուծել Իտալիայում վերջնական հաստատվելու ուղիով: Թեև այս խնդիրը փոխգիջումային ճանապարհով լուծվել էր 1122 թ. սեպտեմբերի 23-ին Հռոմի պապ Կալիքստոս Բ-ի (1119-1124 թթ.) և կայսր Հենրիխ 5-րդի (1106-1125 թթ.)

⁸ А. В. Бармин, Столкновение 1053-1054 гг., *Византия между Западом и Востоком. Опыт исторической характеристики*, отв. ред. Г. Г. Литаврин, СПб., с. 144.

⁹ Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հատ. Բ, ՀՀ Առաջին Նախագահի արխիվ, Երևան, 2007, էջ 12:

¹⁰ Ф. Рапп, *Священная Римская империя германской нации*, СПб., 2009, с. 188.

միջև Վորմսի համաձայնագրով, սակայն դա չբավարարեց կողմերին, և Ֆրիդրիխ Առաջինի կառավարման սկզբում այս վեճը նորից հրապարակ ելավ¹¹: Կայսրը չչարունակեց Օտտոների քաղաքականությունը և փորձեց նոր սկզբունքների շրջանակներում կարգավորել պապականության հետ փոխհարաբերությունները, քանզի վերջինս ևս փոխել էր իր դիրքորոշումը: Պապական աթոռը խոստանում էր Ֆրիդրիխին ճանաչել որպես Ս. Պետրոսի սիրելի որդի, եթե նրա կայսերական թագադրության արարողությունը տեղի ունենար Հռոմում: Սա ենթադրում էր, որ նա կդառնար սրբազան կայսր, ուստի նրա վրա էր դրվում «ծովից այն կողմ» գտնվող հունական տարածքներում Ս. Պետրոսի իշխանությունը վերականգնելու առաքելությունը¹²:

Եկեղեցիների բաժանումից (1054 թ.) հետո պապականությունը պայքար էր մղում արևելյան (հունական) եկեղեցին կաթոլիկ եկեղեցու կազմակերպման շրջանակներում ներառելու համար: Այս դեպքում կայսրության և պապականության հարաբերություններում վերջինս կստանար գերագահ կարգավիճակ, որը ձեռնտու չէր Ֆրիդրիխին: Սա չէր նշանակում, որ Ֆրիդրիխը հրաժարվում էր կայսերական թագից, հակառակը՝ նա դա փորձում էր ստանալ իրեն ձեռնտու պայմաններով: Ֆրիդրիխը լավ հասկանում էր, որ չունի բավարար քաղաքական, տնտեսական և մշակութային հենարան, ուստի փորձում էր յուրացնել հոգևոր իշխանության որոշակի հատկանիշներ, մասնավորապես՝ իշխանության սրբազնացում, ամուր եկեղեցական կառույցի ներառում կայսրության ռազմաքաղաքական կառավարման համակարգում, քրիստոնեական գաղափարախոսության օգտագործում կայսրության հեղինակության բարձրացման համար: Պապականության այս ծրագիրը չէր տեղավորվում Ֆրիդրիխի քաղաքական հայեցակարգում,

¹¹ *Les tendances actuelles de l'histoire du Moyen Âge en France et Allemagne*, sous la direction de Jean-Claude Schmitt et Otto Gerhard Oexle, Paris: Publications de la Sorbonne, 2002, p. 284.

¹² P. Rassow, *Honor Imperii, die neue Politik Friedrich Barbarossas 1152-1159*, Darmstadt: Wissenschaftliche Buchgesellschaft, 1961, s. 62.

ուստի նա փորձեց այս փոխհարաբերություններում ներառել նոր սկզբունքներ, որոնք նոր բովանդակություն հաղորդեցին Ֆրիդրիխի քաղաքականությանը: Թեև 1155 թ. հունիսի 18-ին նա Հռոմում թագադրվեց կայսերական թագով, սակայն չկատարեց պապականության կողմից առաջարկված նախապայմանները և ձեռնամուխ եղավ իր քաղաքական գաղափարախոսության կյանքի կոչմանը:

Քրիստոնեական միասնության գաղափարաբանությունը դրսևորվում էր նաև Սրբազան Հռոմեական կայսրության իշխանությունը խորհրդանշող թագի կառուցվածքի մեջ: Սրբազան կայսրերի թագադրության ժամանակ կիրառվող թագը բաղկացած էր միմյանց ագուցված, ութաթև աստղի տեսք ստացող երկու քառակուսիներից, որոնք խորհրդանշում էին սրբազան քաղաքները՝ Հռոմը և Երուսաղեմը: Ֆրիդրիխը Հռոմն ընկալում էր որպես ներկայի, իսկ Երուսաղեմը՝ ապագայի մայրաքաղաք¹³: Նրա պատկերացմամբ Սրբազան Հռոմեական կայսրությունը վերջին երկրային կայսրությունն էր, որի շրջանակներում իրագործվելու էր Քրիստոսի երկրորդ գալուստը: Առաջնորդվելով այս գաղափարով՝ Ֆրիդրիխն իր առաքելությունն էր համարում քրիստոնյա աշխարհի անցյալի ու ապագայի միավորումը մեկ միասնական քաղաքակրթական միջավայրում:

Խաղաղ ճանապարհով չհասնելով իր ծրագրի իրագործմանը՝ կայսրը որոշեց Իտալիայում մասնավորապես Հռոմում հաստատվել զենքի միջոցով և հինգ անգամ արշավանք կազմակերպեց դեպի Իտալիա:

Թեև դրանք ավարտվեցին անհաջողությամբ, սակայն 1177 թ. Վենետիկում Հռոմի պապ Ալեքսանդր Գ-ի (1159-1181 թթ.) և Ֆրիդրիխի միջև կնքվեց զինադադար, որտեղ կողմերը փորձեցին փոխզիջումային տարբերակով հարթել երկու իշխանությունների միջև առկա հակամարտությունը: Կայսրը Վենետիկի Ս. Մարկոսի տաճարում ծնկի իջավ պապի առջև, ինչպես նաև որոշ տարածքային զիջումներ կատարեց «Ս. Պետրոսի աթոռին», սակայն Վենետիկի զինադադարը չի կարելի համարել Ֆրիդրիխ Շիկամո-

¹³ Փ. Pann, *Եզվ. աշխ.*, էջ 140:

րուսի դիվանագիտական պարտություն: Փոխզիջումային այս տարբերակը հնարավորություն տվեց կողմերին ձեռնամուխ լինելու որոշակի խնդիրների լուծմանը:

Պապականությունն աշխատում էր ապահովել Ֆրիդրիխի մասնակցությունը նախատեսվող խաչակրաց արշավանքին: Փոխզիջումային տարբերակի շնորհիվ Ֆրիդրիխը հասավ նրան, որ Հարավային Իտալիայում հաստատվելու նպատակով կազմակերպեց արքայազն Հենրիխի և սիցիլիական արքայադուստր Կոնստանցիայի քաղաքական ամուսնությունը: Պատահական չէր, որ նա Հենրիխին դարձրեց իր գահակիցը: Խաչակրաց արշավանքին մասնակցելու դիմաց պապականությունը Ֆրիդրիխին խոստացավ տրամադրել գործողությունների ազատություն Արևելքում:

Ֆրիդրիխ Առաջինի քաղաքականության մեջ միասնական Եվրոպա գաղափարախոսությանը զուգահեռ կարևոր տեղ էր զբաղեցնում Օտտոններից ժառանգություն ստացած համաքրիստոնեության հայեցակարգը: Կայսեր կարծիքով՝ խաչակրաց արշավանքին մասնակցելը համաքրիստոնեական ծրագիրը կյանքի կոչելու իրական հնարավորություններ էր ստեղծում: Վենետիկի գինադադարը, Կոնստանցի պայմանագիրը, ապա նաև Հենրիխի ամուսնությունը Ֆրիդրիխին թույլ էին տալիս ենթադրելու, որ Իտալիայում հաստատվելու բոլոր հիմքերը կան: Դա հնարավորություն էր տալիս կայսերը մտածելու նախկին Հռոմեական կայսրությունը որպես համընդհանրական քրիստոնեական տերություն վերականգնելու մասին: Գաղափարախոսության էությունը կայանում էր քրիստոնեություն դավանող ժողովուրդներին մեկ միասնական մշակութային կառույցի շրջանակներում համախմբելու մեջ:

Ֆրիդրիխ Շիկամորուսի քաղաքական այս հայեցակարգը ենթադրում էր հարաբերությունների որոշակիացում Արևելյան Հռոմեական կայսրության (Բյուզանդիա) հետ:

Համաքրիստոնեական գաղափարախոսությունը կյանքի կոչելու համար արևմտյան կայսրը փորձում էր յուրացնել դարեր շարունակ արևելյան քրիստոնեական միջավայրում Բյուզանդական կայսեր հեղինակությունը: Ուշագրավ է, որ Ֆրիդրիխը արևելահռոմեական Մանուել 1-ին կայսերը (1143-1180 թթ.) 1176 թ. ուղղված նամակում նրան կոչում էր rex (թագավոր), մինչդեռ Կոնրադ 3-րդը բյուզանդական կայսրերին դիմում էր imperator (կայսր) ձևով¹⁴: Արևմտյան կայսրը Մանուելին ուղղված նամակում շեշտում էր, որ «գերմանական կայսրերը, իրենց իշխանությունը ժառանգել են հռոմեական կայսրերից և պետք է կառավարեն ոչ միայն Հռոմեական կայսրությունը, այլև «հունական թագավորությունը»¹⁵: Ուստի Ֆրիդրիխը կոչ էր անում ընդունել արևմտյան կայսեր գերագահությունը և պապականության դավանաբանական հեղինակությունը:

Ստեղծվելիք համաքրիստոնեական միջավայրում Բյուզանդական կայսեր համար նախատեսվող դերը երևում է Ֆրիդրիխ Առաջինի՝ Արևելյան Հռոմեական կայսրությանը տված «Փոքրիկ Հունաստան» անվանման մեջ: Այսպիսով, Սրբազան Հռոմեական կայսեր քաղաքական մտապատկերի հեռանկարում արևելյան միապետը ստորադասվելու էր արևմտյանին:

Արևելահռոմեական կայսր Իսահակ 2-րդ Անգելոսը (1185-1195 թթ.) խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին Ֆրիդրիխին ուղղած նամակում իրեն անվանում էր «Հռոմեական կայսր», իսկ նրան՝ «Ալեմանիայի թագավոր»՝ ակնարկելով, որ Սրբազան Հռոմեական կայսրությունը գերմանական ժողովրդի կամքի դրսևորումն է, իսկ Ֆրիդրիխ Առաջինը՝ ընդամենը «կարմրա-

¹⁴ А. А. Васильев, *История Византийской империи*, т. 2, СПб, 2000, с. 32.

¹⁵ Նույն տեղում, էջ 35:

մորուք թագավոր և «գերմանական զայրույթի» առաջնորդ», ում միակ նպատակը կայսրության սահմանների ընդարձակումն է¹⁶:

Համաքրիստոնեական գաղափարաբանության իրագործման համար նպատակավոր պայմաններ ստեղծվեցին 1176 թ. սեպտեմբերի 17-ին Միդիոկեֆալոնի ճակատամարտում Ռումի սելջուկյան սուլթանությունից Բյուզանդիայի կրած պարտությունից հետո, որի արդյունքում վերջինիս դիրքերը տարածաշրջանում թուլացան: Օգտվելով այս իրավիճակից՝ Ֆրիդրիխը փորձեց բարձրացնել իր քաղաքական հեղինակությունը Մերձավոր Արևելքում:

Համաքրիստոնեական միջավայր ստեղծելու Ֆրիդրիխի ծրագիրն իր կնիքը դրեց մահմեդական միջավայրի հետ կայսեր ձևավորելիք հարաբերությունների վրա: Նոր մոտեցում ցուցաբերելով երկու քաղաքակրթությունների փոխհարաբերությունների նկատմամբ՝ փորձեց ապահովել քրիստոնեության և մահմեդականության համակեցության սկզբունքը: Նրա կանխատեսած քրիստոնեական միջավայրը ոչ թե հակադրվելու էր, այլ խաղաղ գոյակցելու էր մահմեդական քաղաքակրթության հետ՝ ապահովելով երկու քաղաքակրթությունների սահմանային հավասարակշռությունը:

Պատահական չէ, որ հաջակրաց երրորդ արշավանքի նախօրեին Սրբազան Հռոմեական կայսրը փորձում էր գործնական հարաբերություններ հաստատել Ռումի սելջուկյան և Եգիպտոսի Այյուբյան սուլթանությունների հետ:

Կայսեր արևելյան քաղաքականությունն ի սկզբանե չէր նախատեսում վերոնշյալ մահմեդական պետությունների հետ ռազմական առճակատում, ինչը երևում է 1171-1173 թթ. Սալահ ադ-Դինի հետ Ֆրիդրիխի դիվանագիտական հարաբերություններում: Նամակներում Սալահ ադ-Դինը Ֆրիդրիխին կոչում էր «imperator», իսկ վերջինս նրան դիմում էր «հաղթող թագավոր» («rex victoriosus») ձևով: Նրանցից յուրաքանչյուրն ընդունում էր մյուսի գերակա

կարգավիճակը համապատասխան քաղաքակրթական միջավայրում¹⁷:

Ստեղծվելիք համաքրիստոնեական միջավայրում մահմեդական ուժերի հետ սահմանային հավասարակշռությունը պահպանելու Ֆրիդրիխի փորձերի մասին է վկայում Ռումի սելջուկյան սուլթանության հետ դիվանագիտական հարաբերությունների զարգացումը: Խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին Ֆրիդրիխ Շիկամորուսի և սելջուկյան սուլթան Քիլիջ-Արսլան Երկրորդի (1155-1192 թթ.) միջև ձևավորվել էին դաշնակցային հարաբերություններ՝ ընդդեմ Բյուզանդիայի¹⁸:

Ամփոփում

Ընդհանուր հայտարարի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ 12-րդ դարի երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում Սրբազան Հռոմեական կայսրությունում հաստատված Հոհենշտաուֆենների արքայատոհմի ներկայացուցիչ Ֆրիդրիխ Առաջին Շիկամորուսի որդեգրած քաղաքականությունը նպատակ ուներ ամրապնդելու կայսրության գերակա կարգավիճակը ոչ միայն Եվրոպայում, այլև Քրիստոնյա Արևելքում: Կայսրը գիտակցում էր, որ ծրագրի կյանքի կոչման համար անհրաժեշտ է հաստատուն կերպով ամրապնդել դիրքերն Իտալիայում՝ այն դարձնելով կայսրության քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն: Պապականության և Հյուսիսային Իտալիայի քաղաքների հետ պայքարում հասնելով փոխզիջումային հաջողության՝ կայսրն իր հայացքն ուղղեց դեպի Բյուզանդիա և Մահմեդական Արևելք: Որդեգրած համաքրիստոնեական գաղափարախոսության շրջանակներում կայսրը փորձում էր յուրացնել Քրիստոնյա Արևելքում բյուզանդական կայսեր ունե-

¹⁷ Քննարկվում էր Սալահ ադ-Դինի որդու և Ֆրիդրիխի դստեր ամուսնության հարցը, ինչը հետագայում կյանքի չկոչվեց: Տե՛ս H. Möhring, *Saladin und der Dritte Kreuzzug*, Wiesbaden: Franz Steiner Verlag, 1980, s. 107-108.

¹⁸ Արաբական աղբյուրներ, Բ, Իրն ալ-Ասիր, Երևան, 1981, էջ 275:

¹⁶ K. Görich, *Friedrich Barbarossa: Eine Biographie*, München: C. H. Beck, 2011, s. 671.

ցած քաղաքական և դավանաբանական հեղինակությունը: Ֆրիդրիխի՝ Արևելյան Հռոմեական կայսրության հետ մշակվող հարաբերությունների արդյունքում նախատեսվում էր, որ բյուզանդական կայսրը պետք է ստորադասվեր արևմտյանին: Ինչ վերաբերում է Մահմեդական Արևելքի հետ հարաբերություններին՝ Ֆրիդրիխը ցանկանում էր ոչ այնքան ռազմական առճակատում, որքան սահմանային հավասարակշռության հաստատում երկու քաղաքակրթությունների միջև: Դրանով էին պայմանավորված Ֆրիդրիխի հարաբերությունները Ռումի սելջուկյան և Եգիպտոսի Այյուբյան սուլթանությունների հետ:

Պատմական գործընթացներ կազմակերպելու ուղղությամբ գործունեություն ծավալած այլ անհատների նման Ֆրիդրիխ Առաջինին ևս չհաջողվեց ամբողջությամբ իրագործել իր ծրագիրը, սակայն նրա գաղափարները մնացին արդիական և տարբեր դարաշրջաններում փորձեր կատարվեցին դրանք կյանքի կոչելու ուղղությամբ¹⁹:

¹⁹ Այն, ինչ չհաջողվեց իրագործել Ֆրիդրիխ Առաջինին անժամանակ մահվան պատճառով, որոշակիորեն ի կատար ածվեց նրա թոռան՝ Ֆրիդրիխ Երկրորդի (1220-1250 թթ.) կողմից: Այս մասին մանրամասն տե՛ս M. A. Köhler, *Allianzen und Verträge zwischen fränkischen und islamischen Herrschern im Vorderen Orient*, Berlin, New York: Walter de Gruyter, 1991, s. 409-411:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Արաբական աղբյուրներ*, Բ, Իքն ալ-Ասիր, Երևան, 1981:
- Տեր-Պետրոսյան Լ.**, *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, Երևան, ՀՀ Առաջին Նախագահի արխիվ, 2007.
- Fischer-Fabian S.**, *Karl der Grosse: der erste Europäer*, Bastei Lübbe, 2002.
- Gemeinhardt P.**, *Die Filioque-Kontroverse zwischen Ost- und Westkirche im Frühmittelalter*, Berlin, New York: de Gruyter, 2002.
- Görich K.**, *Friedrich Barbarossa: Eine Biographie*, C. H. Beck, München, 2011.
- Köhler M. A.**, *Allianzen und Verträge zwischen fränkischen und islamischen Herrschern im Vorderen Orient*, Berlin, New York: Walter de Gruyter, 1991.
- Les tendances actuelles de l'histoire du Moyen Âge en France et Allemagne*, sous la direction de Jean-Claude Schmitt et Otto Gerhard Oexle, Paris: Publications de la Sorbonne, 2002.
- Möhring H.**, *Saladin und der Dritte Kreuzzug*, Wiesbaden: Franz Steiner Verlag, 1980.
- Rassow P.**, *Honor Imperii, die neue Politik Friedrich Barbarossas 1152-1159*, Darmstadtsenschaftliche Buchgesellschaft.
- Schwarz J.**, *Das Europäische Mittelalter*, W. Kohlhammer Verlag, 2006.
- Бульст-Тиле М. Л., Йордан К., Флекенштейн Й.**, *Священная Римская империя: эпоха становления*, СПб., 2008.
- Васильев А. А.**, *История Византийской империи*, т. 2, СПб, 2000.
- Византия между Западом и Востоком. Опыт исторической характеристики*, отв. ред. Г. Г. Литаврин, СПб., 2001.
- Ковальский Я. В.**, *Папы и папство*, Москва, 1991.
- Левандовский А. П.**, *Карл Великий*, Москва, 1999.
- Рапп Ф.**, *Священная Римская империя германской нации*, СПб., 2009.

ՆՈՐ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԹԻՆՈՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆԹԵՊՅԻՆ ԵՎ 17-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ ԿԻՒԿԻՈ ՀՈԳԵՎՈՐ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՀԱՐՏԸ

Մուտք

16-17-րդ դդ. Կիլիկիայի հայ աշխարհիկ ու հոգևոր կյանքի վերաբերյալ ցավոք քիչ տեղեկություններ կան պահպանված: Այդ առումով բացառություն չէ նաև 17-րդ դարի առաջին քառորդի պատմությունը: Կիլիկիայում, ինչպես և հայաբնակ ու հայապատկան այլ տարածքներում, աշխարհիկ իշխանության վերջին բեկորներն էին մնացել: Ընդ որում, լեռնային շրջաններում պահպանված աշխարհիկ իշխանության կրողներն իրենց ունեցած ազդեցությամբ ու նշանակությամբ վերածվել էին խիստ տեղական նշանակություն ունեցող սուբյեկտների: Ընդհանրացնելով նշենք, որ աշխարհիկ իշխանության կրողները վերոհիշյալ ժամանակաշրջանում, ըստ էության, չունեին արդեն համակիլիկյան նշանակություն: Բնական է, որ օսմանյան տիրապետության առկայության պայմաններում այդ դերակատարումը պետք է ստանձնեի Կիլիկիո կաթողիկոսարանը: Հայոց նվիրապետությունն այս շրջանում իրոք աննախանձեղ իրադրության մեջ էր գտնվում: Նախ բավական քանք ու միջոցներ էին խլում Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության հետ ունեցած հակասությունները և առաջնության համար մղված պայքարը, որոնք երբեմն թույլ, երբեմն ուժգին դրսևորումներով առաջնային գործունեության դաշտ էին մղվում: Վերոնշյալ ժամանակաշրջանում մյուս նկատելի բացասական երևույթը հայոց նվիրապետությունների և պատրիարքությունների աթոռին մեկից ավելի ղեկավարների ու տարատեսակ հավակնորդների առկայությունն էր: Ընդ որում, դա բնորոշ էր ինչպես Էջմիածնի ու Սսի կաթողիկոսություններին, այնպես էլ Երուսաղե-

մի ու Կ. Պոլսի պատրիարքություններին: Բավական բարդ էր պահպանել գոյությունը և հայ առաքելական հոտի անվտանգությունը օսմանյան տիրապետության և, հատկապես, տարբեր թուրքմենական ցեղախմբերի առկայության, երբեմն էլ ուղղակի գերակայման պայմաններում: Այս ամենին գումարվում էր նաև կաթոլիկ եկեղեցու ակտիվացած դերակատարումը Մերծավոր Արևելքում, այդ թվում և Կիլիկիայում: Ուստի հաճախ Կիլիկիո աթոռակալները ստիպված էին դավանաբանական որոշ զիջումների գնալ Արևմուտքի աջակցությունը ստանալու ակնկալիքով:

Հովհաննես Անթեպցին՝ Կիլիկիո աթոռակալ

Ահա այս բարդ ու հակասական ժամանակաշրջանում էր ստիպված գործել Ազարիա Ջուղայեցուն Կիլիկիո աթոռին փոխարինած Հովհաննես Անթեպցին: Վերջինիս աթոռակալման սկիզբ սովորաբար ընդունված է համարել 1601 թ., դրա մասին գրում է հենց ինքը՝ Հովհաննես Անթեպցին: Նա ժամանակաշրջանի կիրթ և ուսյալ հոգևորականներից մեկն էր և բավական մեծ ազդեցություն է ունեցել կաթողիկոսարանում դեռ Ազարիա կաթողիկոսի կենդանության շրջանում: Հովհաննեսի ծագման և սկզբնական գործունեության մասին չափազանց քիչ նյութեր կան, հայտնի է միայն, որ վերջինս ծնվել է Անթեպում: Դրա մասին վկայում է ինքը.

*Եւ սոսկ անուամբ վարդապետի
Որ ըստ ծննդեանս իմ անթեպցի
Մնամբ վարժմամբ կիլիկեցի
Արքայանիստ մեծ աթոռի
Աստուածապահ Սիս քաղաքի՝*

Ըստ երևույթին վաղ հասակում տեղափոխվելով Սիս՝ նա նվիրվում է հոգևոր գործունեությանը, աշակերտելով սկզբում Խաչատուր, ապա և Ազարիա կաթողիկոսների մոտ: Սակայն իր կազմած հիշատակարաններում Հովհաննեսը շեշտում է, որ ինքն աշա-

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հատ. Ա, Երևան, 1974, էջ 40:

կերտել է միայն Ազարիա Ջուղայեցուն: Իսաչատուր կաթողիկոսին չհիշատակելը կարծում ենք, ինչպես և ճիշտ նկատում է Բ. Կյուլեսերյանը, պայմանավորված է այն հանգամանքով, որ Ազարիային աշակերտելու գործընթացն առավել տևական էր: Բացի դրանից, Հովհաննեսի հեղինակած հիշատակարանները գրվել են Ազարիայի աթոռակալման շրջանում և, քնական է նաև, որ կաթողիկոսի հովանավորությունն ու սերը վայելող եպիսկոպոսը պետք է նախապատվությունը տար գործող վեհափառին: Մ. Օրմանյանը կարծում է, որ 1588 թ. Հովհաննեսն ինքն է օծվել Կիլիկիո կաթողիկոս: «...ե Յովհաննէս Այնթապցի, մականուանեալ Բարեբարոյ, իրեն համամիտներ կը գտնէ, եւ ինքն ալ կաթողիկոս կ'օծուի Սոյ մեջ 1588-ին»², սակայն կարծում ենք այս հիշատակումը, որը սկզբնաղբյուրներով փաստված չէ, չի համապատասխանում իրականությանը: Մ. Օրմանյանը Կիլիկիայում ձևավորված իրավիճակը փորձում է մեկնաբանել միարար-հակամիարար պայքարով. «Այդ երկպառակութիւնները եւ բաժանումները հետեանք էին Ազարիայի Հռոմի հետ հաստատած յարաբերութեան, եւ որչափ ալ ցաւալի ըլլայ այդ հետեանքը, յայտնապէս կը ցուցնէ, թէ Կիլիկիա բովանդակ համախոհ չէր Ազարիայի ստորագրած դասնութեան, եւ թէ Ազարիայի ըրածը անձնական կամ մասնատուր գործ մը եղած էր»³: Ինչպես վերև արդեն նշվեց՝ Հովհաննես եպիսկոպոսի ազդեցությունը Սսի կաթողիկոսարանում բավական մեծ էր. ասվածի ապացույց կարող է ծառայել 1585 թ. Ազարիայի կողմից նրան Հռոմ ուղարկվող պատվիրակության ղեկավար նշանակելը: Այնտեղ պետք է քննության առնվեր երկու եկեղեցիների միության հարցը: Բնական է, որ այսպիսի պատասխանատու հարցի համար Ազարիան պետք է ուղարկեր իր մերձավորագույն համախոհին, որը փաստացիորեն հենց Հովհաննես եպիսկոպոսն էր: Հռոմի պապին ուղղված նամակում Ազարիան նշում էր. «ի յընտրել զիմ եղբայր վարդապետն Յովհաննես եպիսկոպոսն հասկացող ու

² Մ. Օրմանյան, *Ազգապատում*, հ. Բ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 2001, սյուն 2663:

³ Նույն տեղում, սյուն 2664:

քարոզող եւ պարկեշտ վարուք ճգնութեամբ ի փոքունց»⁴: Պատվիրակության հետ Հռոմ են ուղևորվում նաև մի քանի երիտասարդներ, որոնք այնտեղ պետք է ուսումնառություն անցնեին: Ցավոք այս խիստ կարևոր դեսպանության մանրամասները մեզ հայտնի չեն, հայտնի չէ նաև, թե որքան է Հռոմում մնացել Հովհաննեսը: Այս հանգամանքը, ինչպես նաև Ազարիայի վերաբերյալ դրական հիշատակումները խոսում են կաթողիկոսի և Հովհաննեսի լավ հարաբերությունների մասին: Մ. Օրմանյանի պնդումները նրանց հարաբերություններում առկա թշնամության և 1580-ական թթ. Հովհաննեսի կաթողիկոսական հավակնությունների մասին չեն կարող իրական լինել:

Հովհաննես Այնթապցու վերաբերյալ հաջորդ իրադարձությունը, որը ցուցանում է նրա ունեցած լուրջ դերակատարումը Սսի կաթողիկոսարանում, կապված է Երուսաղեմի Սբ. Հակոբի վանքի ունեցած պարտքերի հետ: Բանն այն է, որ տեղի Դավիթ եպիսկոպոսի օրոք վանքն ընկնում է խիստ ծանր պարտքերի տակ, ինչի պատճառով վանականները ստիպված են լինում վանքի ամբողջ ունեցվածքը գրավադրել: Նման պայմաններում Սբ. Հակոբի վանքն այդ ծանր բեռից ազատվելու համար Ազարիա Ջուղայեցու գլխավորությամբ Ամիդում հավանաբար 1600 թ. տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում որոշում է կայացնում կատարել համազգային հանգանակություն հիմնականում Սսի նվիրապետության ենթակա տարածքներում: Ըստ Բ. Կյուլեսերյանի՝ Սեբաստիայում իրականացվելիք հանգանակության պատասխանատվությունը դրվում է Հովհաննես եպիսկոպոսի վրա⁵: Գրիգոր Դարանադցին նշում է, որ «զայլ գաւառքն, որ յերի կալով Սեբաստիոյ՝ զԵտրկիա, զԳաղատիա, զՀալապ եւ զամենայն տունն Կիլիկեցոց ինքն՝

⁴ Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ Հռոմէական եկեղեցոյ ի Փլորենտինս Սիւնհոդոսի, գրեց Աղեքսանդր վ. Պաճեան, Վիեննա, 1878, էջ 309:

⁵ Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), գրեց Բարգէն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939, սյուն 202:

⁶ Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 157:

կաթողիկոսն յանձն էառ իւր աշակերտօքն ժողովել»⁶: Վերոնշյալ շրջաններից հանգանակություն կատարելու պատասխանատուն փաստորեն Ազարիան էր, ով իր աշակերտներից Հովհաննեսին հանձնարարում է դրամահավաք իրականացնել Սեբաստիայում: Համապատասխան գումարի հավաքագրումից հետո Ազարիան գումարը Երուսաղեմ տանելու և տեղում պարտքերի հետ կապված խնդիրները լուծելու համար Հովհաննեսին ուղարկում է Երուսաղեմ: Ինչպես պարզ է դառնում Գրիգոր Դարանաղցու վկայությունից. «Եւ կաթողիկոսն այլ ետուր քսան հազար ղուրուշ ի Յովհաննէս վարդապետն եւ բազում տօլվաթաւորք այլ ի յարեւելից կողմանցն ի հետն եղիր՝ յուխտականաց եւ վաճառականացն, որ գնացին շատ մի գրաւ գերծուցին եւ ով որ հազըր գտուան պարտատէրքն՝ զպարտքն ետուն. Ի Շամայ փաշայէն չաւուշ ի հետ էին վերուցեր, որ ոչ ոք ուժ չառնէ նոցա»⁷: Ապա շարունակելով՝ պատմիչը նշում է, որ «Եւ վարդապետն Յովհաննէս ամենայն տանուտէրքն ծաղանօք յարտաքսեցին եւ հնին ի վաննացն եւ յիստակեցին զվանքն եւ զմեծամեծաց գլխաւոր պարտքերն տուին եւ այլ շատ փոքունց եւ մեծունաց եւ աննշանից մնաց պարտք. զորքանութիւն պարտուցն գրեցին մինչ ի մեկ լումափողսն եւ առեալ զմնացորդ պարտուց գիր եւ տարան առ Ազարիան ի Հալապ»⁸: Կաթողիկոսի այս առաջադրանքը և Հովհաննես Անթեպցու կողմից դրա՝ ըստ էության անթերի կատարումը խոսում է նվիրապետի կողմից իր աշակերտի հանդեպ տաճած չափազանց բարձր վստահության և, իհարկե, վերջինիս ունեցած մեծ ազդեցության մասին: Կարելի է հաստատապես պնդել, որ այս շրջանում Անթեպցին արդեն դիտարկվել է կաթողիկոսի կողմից որպես իր հավանական հաջորդ: Ցավոք որոշակիորեն հայտնի չէ, թե ի պաշտոնն ինչ դիրք է զբաղեցրել Հովհաննեսը Կիլիկիո կաթողիկոսության աստիճանակարգում: Որ նա վայելել է կաթողիկոսի մեծ

վստահությունը, փաստ է, սակայն թե պաշտոնական աստիճանասանդուղքի որ հաստվածում է գտնվել, պարզ չէ: Բ. Կյուլեսերյանն իր երկասիրության մեջ ուշադրություն է դարձնում Անթեպցիի Սեբաստիայի՝ Օսմանյան հայաբնակ շրջանների այդ խոշոր կենտրոնի հետ ունեցած կապերին: Գրիգոր Դարանաղցին Ճգնիկ Հակոբ վարդապետի մասին նշելիս փաստում է, որ վերջինս Սեբաստիայում աշակերտել է Հովհաննես վարդապետին, որ հետո դարձավ Կիլիկիո կաթողիկոս⁹: Նույն պատմիչը քիչ հետո մեջքերում է ևս մեկ ուշագրավ տեղեկություն, ըստ որի՝ 1593 թ. «...եւ գնալոյ ի Սեբաստիա, շրջելով ի գէղորէսն՝ Յովհաննէս կաթողիկոսի ժամանակին, որ դեռ վարդապետ էր...», ապա նկարագրում է ոմն Վարդան արեղայի պատմությունը: Վերջինս, առանց համապատասխան կրթության, զավառում ներկայանում է որպես վարդապետ, որին, ըստ Գրիգոր Դարանաղցու, բացահայտում և պատժում է հենց Անթեպցին¹⁰:

Նշվեց, որ Սեբաստիայում իրականացվող դրամահավաքի պարտականությունները դրվել են Հովհաննեսի վրա: Բ. Կյուլեսերյանը ենթադրում է, որ նա ազդեցիկ դիրք ուներ տեղի թեմում¹¹: Կարծում ենք, որ նախորդ հիշատակման մեջ ներկայացված «Յովհաննէս կաթողիկոսի ժամանակին, որ դեռ վարդապետ էր» արտահայտությունը խոսում է նրա տեղի թեմական առաջնորդ լինելու մասին: Անդրեաս վրդ. Ալեքսանյանի կողմից նրան չհիշատակելը¹² դեռ որևէ ապացույց չի կարող լինել այն մասին, որ Անթեպցին չի զբաղեցրել թեմի առաջնորդի աթոռը: Դրա համար նա ուներ համապատասխան եկեղեցական աստիճան. դեռ 1585թ. Հովհաննեսը, որպես Հոռոմ մեկնող հայկական պատվիրակության ղեկավար, հիշատակվում է եպիսկոպոսական աստիճանով: Ազա-

⁹ Նույն տեղում, էջ 336:

¹⁰ Նույն տեղում, էջ 418-419:

¹¹ Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 205:

¹² Պատմություն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ եւ սահմանաց նորա կամ արքեպիսկոպոսութեան նորին, աշխատասիրութեամբ Անդրեաս վրդ. Ալեքսանդրեանի, Վենետիկ, 1911, էջ 168-169:

⁶ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղեցոյ, Երուսաղեմ, 1915, էջ 321:

⁷ Գրիգոր Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 321:

⁸ Նույն տեղում, էջ 322:

րիա Ջուղայեցու մահից հետո՝ 1601 թ. դեկտեմբերի քսանին, ինչպես Հովհաննես Անթեպցին է հիշատակում, նա ընտրվում է Կիլիկիո կաթողիկոս¹³: Նրա ընտրությունը գեթ Կիլիկիայի սահմաններում բավական հաջող է անցել, համենայն դեպս Կիլիկիո հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչների մեծ մասը կողմնակից է եղել նրա ընտրությանը. «...Ատանա մխիթարել զաթոռակալ քահանայսն եւ զիշխզսն Կիլիկեցոց, որ աստ Ատանա ժողովեալ էին...: Ապա կուտեալ բոլոր բնակիչքն գաւառիս ի վերայ իմ թէ մի վասն Աստուծոյ առաջնորդ հայրենի աթոռոյ քո...»: Ադանայի ժողովի ներկաներից Հովհաննեսը հիշատակում է Ադանայի Ստեփանոս, Ջեյթունի Մկրտիչ և Հաճընի Սարգիս եպիսկոպոսներին, ցավոք նա որևէ կերպ չի հիշատակում ժողովին մասնակից աշխարհիկ իշխանության ներկայացուցիչների անունները¹⁴:

Այնուամենայնիվ նոր կաթողիկոսի ընտրությունը երկփեղկեց Կիլիկիո աթոռը: 1601 թ. Հալեպում կաթողիկոս է օծվում Կարկառի Աբ. Տիմոթեոս վանքի վանահայր Պետրոս Կարկառեցին: Նա Կիլիկիո նվիրապետության սահմաններում բավական մեծ հեղինակություն էր վայելում, նշանավոր ամիոյան խորհրդակցության արդյունքներով Պետրոսն էր Կարինում զբաղվելու հանգանակության խնդիրներով¹⁵: Գրիգոր Դարանաղցին Պետրոսի ընտրությունը պատճառաբանում է հետևյալ կերպ. «Եւ հալապցիք հակառակ Յովհաննէսին հարկ եղին ի վերայ Պետրոսին եւ ստիպէին զնա լինել կաթողիկոս ասելով թէ՛ յանգ է քեզ եւ արժան լինել կաթողիկոս յանուն Սուրբ Յերուսաղեմայ...: Այսպէս եւ այնպես ասելով հագի ի յոչ կամայ ի հաւանութիւն ածին եւ օրինեցին եւ նստուցին ի Հալապ¹⁶»: Փաստորեն ըստ Գրիգոր Դարանաղցու Պետրոսի աթոռակալումն ակամա է ստացվում: Այս լուրը ստանալուն պես Կիլիկիայում հրավիրվում է նվիրապետի ընտրության

¹³ Հայերեն ձեռագրերի Ժ՛ դարի հիշատակարաններ, հատ. 2-րդ, էջ 47:

¹⁴ Պապմութին կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 205:

¹⁵ Գրիգոր Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 321:

¹⁶ Նույն տեղում, էջ 330:

ժողով, ուր հալեպցիների գործունեությունը խիստ քննադատելուց հետո որոշվում է նոր կաթողիկոս ընտրել Հովհաննեսին: Հակառակ Հալեպի աթոռի փորձերին՝ այնուամենայնիվ Կիլիկիո նվիրապետության թեմերի մեծ մասը պահպանեց հավատարմությունը Սսի աթոռին. «Եւ եղեն երկու բանակ եւ պառակտեցաւ ժողովորդն, ոմանք ի Պետրոսն դարձան՝ Հալապ եղած հայքն, եւ այլ ամենայն աշխարհն կիլիկեցոց եւ անթապցոց եւ զէթոնցոց եւ քիլիսացոց եւ տարանդացոց եւ տիպրիկցիք եւ էնկէլցիք ի Յովհաննէս դարձան ձեռագրովք եւ հնազանդ եղեն նմա ասելով թէ՛ մեք մեր հայրենի աթոռ զՍիս գիտեմք եւ ոչ զՀալապ¹⁷»: Սա նշանակում էր առանց այդ էլ պառակտված հայոց եկեղեցու երիցս պառակտում, որն անշուշտ նման անհանգիստ դարաշրջանում խիստ հոռի հետևանքներով հղի կարող էր լինել Մերձավոր Արևելքի հայության համար: Հաջորդող ամիսներին թշնամանքը կողմերի միջև գնալով խորացավ: Ընդ որում, կրկին, ըստ Գր. Դարանաղցու, թշնամանքի բորբոքման հարցում ակտիվ էր Պետրոսը, այն դեպքում երբ Հովհաննեսն իր հիշատակություններում չի էլ նշում Հալեպի աթոռի հետ ունեցած տարածայնությունների մասին:

Հալեպի աթոռի ձևավորման պատճառների մասին բավական ուշագրավ դատողություն է առաջարկում Բ. Կյուլեսերյանը: Ըստ նրա՝ Պետրոսի ընտրությունը պայմանավորված էր Հալեպում առկա ջուղայեցի բավական ազդեցիկ առևտրական խմբավորմամբ: Ընդ որում, նրա ենթադրությամբ առևտրական խմբավորումը հնարավոր մասնակցություն կարող էր ունեցած լինել դեռևս Ազարիա Ջուղայեցու ընտրության հարցում¹⁸: Բացի այդ, 1613 թ. Գրիգոր Պարոնտիրոջ Երուսաղեմի առաջնորդի օժովը, որը տեղի ունեցավ ոչ թե Կիլիկիո աթոռակալի՝ տվյալ դեպքում Հովհաննես Անթեպցու կողմից, այլ Էջմիածնի Ավետիս աթոռակից կաթողիկոսի կողմից, ըստ Բ. Կյուլեսերյանի, ջուղայեցիների խմբավորման

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Պապմութին կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 257:

գործունեության արդյունքում է տեղի ունեցել¹⁹: Ցավոք հայտնի չէ Անթեպցու վերաբերմունքը ոչ այս հարցի և ոչ էլ էջմիածնի հետ հարաբերությունների կապակցությամբ, բայց ակնհայտ է, որ այստեղ խնդիրը ոչ այնքան ջուղայեցիների Անթեպցու հետ ունեցած թշնամական հարաբերություններն են, որքան Կիլիկիո և էջմիածնի աթոռների մրցակցությունը: Այնուամենայնիվ, կարճատև թշնամանքից հետո երկու կողմերին հաջողվում է կարգավորել հարաբերությունները հայ հոգևոր աշխարհի այս շրջանի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Գրիգոր Կեսարացու միջնորդությամբ²⁰: 1602 թ. ամռանը, երբ Գրիգորը Կիլիկիայում էր, կայանում է համաձայնություն, ըստ որի երկու կաթողիկոսներն էլ շարունակում են աթոռակալել իրենց վիճակներում, նրանցից որևէ մեկի մահից հետո նոր կաթողիկոս չի ընտրվում, այլ նրա աթոռն ուղղակիորեն փոխանցվում է մյուսին: Այս հաշտությամբ, ապա և 1608 թ. Պետրոսի մահով վերջ գտավ բավական վտանգավոր պառակտումը: Այս թվականից սկսած Հալեպի պառակտված թեմը կրկին վերամիավորվեց Կիլիկիո ընդհանրական աթոռի հետ: Պետք է նշել, որ նոր կաթողիկոսի ընտրության տարին բավական բարդ էր կիլիկիահայության համար: Ինչպես նշվում է ոմն Գրիգորի հիշատակարանում «... ի մեծ թվին Հայոց ՌԾ-1601թ. ամի, եղև ատերում և փախուստ Սիս քաղաքին, և փախաք ի լեռուն է լեռուն, և ի քաղաքէ ի քաղաք»²¹: Ցավոք այս արշավանքի վերաբերյալ այլ տեղեկություն չկա, դրա մասին չի հիշատակում նաև Հովհաննեսը: Մնում է ենթադրել, որ կրկին, ինչպես և Ազարիայի աթոռակալման շրջանում, 1600 թ. Սիսը գրավվել և ավերվել է ջալալիների կողմից: Բացառված չէ նաև, որ այստեղ խոսքը նույն արշավանքի մասին է, որը սխալմամբ թվագրվել է 1601:

Այդ հարձակումը միակը չեղավ. չորս տարի անց՝ 1605 թ., ջալալիների առաջնորդ Դավիթը կրկին արշավում է Կիլիկիա. այս անգամ նրանց նպատակակետը Ադանան էր: Դրա մասին հիշատակում է Հովհաննեսն իր Կեսարիա կատարած թեմական այցից

¹⁹ Նույն տեղում, սյուն 258-260:

²⁰ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հատ. 2-րդ, էջ 81:

²¹ Նույն տեղում, էջ 45:

վերադառնալուց հետո. նա ժամանակավորապես կանգ է առնում Ադանայում, երբ տեղի է ունենում ջալալիների արշավանքը: Ընդ որում, այս շրջանը բավական ծանր էր ոչ միայն Կիլիկիայի հայության, այլև Օսմանյան կայսրության արևելյան նահանգների, հատկապես՝ Արևմտյան Հայաստանի բնակչության համար: 1590-ական թթ. սկսվել էր ջալալիների հերթական ապստամբությունը, որից փաստորեն անմասն չմնաց նաև Կիլիկիան: 1605 թ. «Դավիթ ոմն անուն պաշարեաց զքաղաքն Սիս, 1500 հետևակօք, իսկ բնակիչք քաղաքիս ամրացան ի բերդն՝ յերկիտէ նոցա. և որքան եկին և մղեցան ի կոիւ, այնքան լի ամօթով յետս դարձան հակառակորդացն դասք և և ամենայն կերպ հնարից նոցա...»: Դավիթին այդպես էլ չի հաջողվում գրավել Սիսը, մոտ երեսուն օր պաշարելուց հետո, նա ստիպված է լինում դադարեցնել այն²²: Ապա ջալալիները, հասնելով Ադանայի մատույցների մոտ, լուրջ դիմադրության են հանդիպում ադանացիների կողմից: Ցավոք հիշատակությունից պարզ չի դառնում թե ովքեր են ղեկավարում պաշտպանությունը՝ տեղի հայերը, թե տեղի օսմանյան վարչակազմի ներկայացուցիչները: Այնուամենայնիվ, հիշատակագրի դրական մոտեցումը հաշվի առնելով կարելի է պնդել, որ քաղաքի պաշտպանությամբ առավելապես զբաղվել են հենց ադանացի հայերը տեղի վերնախավի գլխավորությամբ: Ասվածի վկայություն կարող է ծառայել նաև այն հանգամանքը, որ 1602 թ. ժողովը տեղի էր ունեցել Ադանայում, ուր հավաքվել էին «զիշխանսն կիլիկեցոց»: Անշուշտ սրանց զգալի մասը կարող էր ներկայացնել հենց Ադանա քաղաքը և մի քանի տարի անց մասնակցություն ունեցած քաղաքի պաշտպանության կազմակերպման հարցում: Ինչևէ, ըստ ժամանակագրի, թեև ադանացիները կարողանում են կանգնեցնել ջալալիների առաջխաղացումը, այնուամենայնիվ վերջիններիս հաջողվում է քաղաքի դարպասների՝ Կամրջայ դուռի (Կամուրջի դարպասի) մոտ մարտկոցներ տեղադրել և ձեռնամուխ լինել քաղաքի պաշարմանը: Այդուհետ, սակայն, իրադրությունը կտրուկ կերպով փոխվում է. ադանացիներին օգնության են հաս-

²² Ղ. Ալիշան, Սիսուան եւ Լեւոն մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 228:

նում լեռնցի զինվորներ, որոնց Անթեպցին անվանում է սոխթա-
ներ: Լեռնցիների ջրկատներն անսպասելիորեն հարձակվում և
քաղաքի մատուցներից փախուստի են մատնում ջալալիներին:
Սակայն այս հաջողությունը կարճատև է լինում, քանզի ադանա-
ցիները փոխանակ օժանդակելու նախընտրում են ավարառության
ենթարկել Դավիդի ճամբարը: Արդյունքում, օգտվելով դաշնակից-
ների ճամբարում առկա անմիաբանությունից՝ ջալալիները կարո-
ղանում են մտնել քաղաք: Բնակչության մի մասը և իհարկե առա-
ջին հերթին տեղի աշխարհիկ ու հոգևոր վերնախավը հազիվհազ
կարողանում է պատսպարվել միջնաբերդում: Միջնաբերդում
պատսպարված ադանացիները պնդում են, որ այնտեղ տեղա-
փոխվի նաև Հովհաննես կաթողիկոսը: Վերջինս սակայն միջնա-
բերդ է ուղարկում միայն սուրբ Աջերը, իսկ ինքը, կարողանալով
դուրս գալ քաղաքից, վերադառնում է Սիս: Ինքը՝ Դավիդը, դրանից
հետո երեսուն օր մնալով ու թալանելով քաղաքը և մեծ գլխագին
վերցնելով միջնաբերդում ապաստանած բնակչությունից, վերա-
դառնում է²³: Այս փոքրիկ տեղեկությունը հայոց պատմության
տեսանկյունից արժևորվում է նրանով, որ փաստորեն 17-րդ դա-
րասկզբին Կիլիկիայի հարթավայրային շրջաններում հայկական
բնակչության շրջանում դեռևս պահպանվում էր տեղական որոշա-
կի ինքնուրույնություն: 1606 թ. թվագրվող ևս մեկ հետաքրքիր
հիշատակություն է պահպանվել. «Թվին ՌԾԵ(1606) իարաց ամսոյ
ԻԱ(21) ժողովեալ իշխանքն Բարձրբերթու հոգևոր նախանձ շար-
ժեալ, որ ի պատահմանց չար աագակաց... եկեալ ի գիշերի
գողացան զանաթք եկեղեցոյն Բարձրբերթոյ, որպէս և է գրեալ ի
գուշտն Մաթիոսի աւետարանչին (թուն գողությունը եղել էր 1591
թ.)»²⁴, ապա հիշատակագիրը ներկայացնում է թե ինչպես «... և
խորհուրդ արարեալ միաբան ժողովուրդ մեծամեծաբն և եկեալ ի
տեառն տէր Յովաննէս կաթողիկոսն և ասացին, թէ, Հոգևոր տէր,

²³ Պապմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 208-209:

²⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. 1-ին, էջ 227:

²⁵ Նույն տեղում:

մեզ դատաստան արա և զմեր պապենի յիշատակն ի մեզ տուր»²⁶:
Այս հիշատակության մեջ ուշադրության արժանի են նաև իշխանք
և արքայաբնակ Բարձրբերդ արտահայտությունները. դրանցից
գատ հիշատակվում է նաև մեծահասարակ իշխան պարոն Աստվա-
ծատուրը, որը քիչ հետո հիշատակվում է նաև պարոն խոճայ Աստ-
ուածատուր ձևով: Սա վկայում է, որ անգամ 17-րդ դարասկզբին
Բարձրբերդում հայկական միջնադարյան պետականության այդ
վերջին կենտրոններից մեկում, դեռևս պահպանվել էին հայ
ազնվականության մնացորդները, դրան զուգահեռ վառ էր մնացել
պետականության հիշողությունը հայաբնակ այս տարածքում: Հով-
հաննես Անթեպցին բավական մեծ ուշադրություն էր դարձնում
նաև Երուսաղեմի խնդրին: Թեև Գրիգոր Պարոնտերը 1613 թ.
Երուսաղեմի պատրիարք էր օծվել Ավետիս Էջմիածնի աթոռակից
կաթողիկոսի կողմից, այնուամենայնիվ արդեն հաջորդ՝ 1614 թ.
Հովհաննեսը ուխտի և նորընտիր պատրիարքին տեսակցելու
նպատակով ժամանում է Երուսաղեմ: Այստեղ՝ Սբ. Հակոբի
վանքում, Կիլիկիո կաթողիկոսն օրհնում է մեռողը²⁷, որը լինելով
նվիրապետի մենաշնորհը, հաստատում է նրա իրավունքն այս
թեմի նկատմամբ: Այս իրադարձությամբ էլ փաստացիորեն վերջ է
գտնում Հայեպի հակաթոռ կաթողիկոսության հետևանքների
հարցը: Կարճ ժամանակ անց՝ 1616 թ. Անթեպցին ևս մեկ անգամ
այցելում է Երուսաղեմ: Այս հաջողության հարցում անշուշտ իր
դերակատարումն է ունենում Էջմիածնի կաթողիկոսության բավա-
կան ծանր դրությունը՝ կապված էջմիածնական կաթողիկոսական
աթոռակալների միջև վեճի և նյութական ծանր վիճակի
հետ: Հատկանշական է, որ Անթեպցին բավական ակտիվություն
է ցուցաբերում նաև Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ
կապված: 1613 թ. մայիսին, ըստ Գրիգոր Դարանաղցու, նա
Մինաս Էրզրումցի վարդապետի, Մինաս Քացախ Սսեցի վարդա-

²⁶ Նույն տեղում:

²⁷ Տ. Հ. Թ. Սաալանեսեց, Պապմութիւն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1931,
էջ 570:

պետի²⁸ և Գրիգոր Կեսարացու ընկերակցությամբ ժամանում է Կ. Պոլիս Հովհաննես Խոյ պատրիարքին հեռացնելու նպատակով²⁹: Ճիշտ է, Բ. Կյուսեբեյանը կասկածի տակ է առնում այս տեղեկության ժամանակագրական իսկությունը³⁰, այնուամենայնիվ էականն Անթեպցու ունեցած մեծ հեղինակության հաստատումն է:

Ամփոփում

Հովհաննես Անթեպցին մահացավ 1621 թ.՝ ժամանակակիցների հիշողության մեջ մնալով որպես ուսյալ և արգասաբեր հովվապետ, ում հաջողվեց պահպանել Կիլիկիո կաթողիկոսության միասնականությունը և տարածաշրջանային հոգևոր կենտրոնի համարումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ալիշան Ղ., Սիսուան եւ Լեւոն մեծագործ, Վենետիկ, 1885,
ժամանակագրության Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ
Դարանաղեցույ, Երուսաղեմ, 1915,
Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հատ. Ա, Բ, Երևան,
1974,
Պապմութին ականատր քաղաքին Սեբաստիոյ եւ սահմանաց նորա կամ
արքեպիսկոպոսութեան նորին, աշխատասիրութեամբ Անդրէաս
վրդ. Աղեքսանդրեանի, Վենետիկ, 1911,
Պապմութին կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա
ընդ Հոռմէական եկեղեցույ ի Փլորենտեան Սինհողոսի, գրեց
Աղեքսանդր վ. Պալմեան, Վիեննա, 1878,
Պապմութին կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), գրեց
Բարզէն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ,
Անթիլիաս, 1939,
Սաւալանեանց Տ. Հ. Թ., Պապմութին Երուսաղէմի, Երուսաղէմ, 1931,
Օրմանեան Մ., Ազգապարոմ, հատ. Բ, Մայր Աթոռ Սր. Էջմիածին, 2001:

²⁸ Մինասը Հովհաննեսի առավել ուշիմ աշակերտներից ու հետևորդներից էր, ուստի և պատահական չէ, որ վերջինիս մահից հետո նա զբաղեցրեց կաթողիկոսական աթոռը: - Դ. Թ.:

²⁹ Գրիգոր Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 180:

³⁰ Պապմութին Կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 212:

ՏԻԳՐԱՆ ԵՓՐԵՄՅԱՆ

ՀՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՍԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀՈՆՈՎՈՒՅԹՈՒՄ
(Կոնստրուկտիվիզմ)

Մուտք

Հուլանդացի խոշոր մտածող և դիվանագետ Հուգո Գրոտիուսը (1583-1645 թթ.) արդարացիորեն համարվում է արդի միջազգային իրավունքի և հարաբերությունների համակարգի գլխավոր ճարտարապետը: 17-րդ դարի կեսին, երբ Եվրոպայի հիմնական քաղաքական միավորներ ճանաչվեցին պետությունները, Գրոտիուսն առաջարկեց միջազգային իրավունքի նոր նախագիծ, որն արտացոլում էր այդ իրողությունը¹:

Ռազմաքաղաքական առումով պետությունների՝ իբրև միջազգային հարաբերությունների հիմնական միավորների ձևավորման գործընթացում բեկումնային նշանակություն ունեցան 1618 թ. Եվրոպայում բռնկված Երեսնամյա պատերազմը (1618-1648 թթ.) և այն եզրափակող Վեստֆալյան պայմանագրերը (1648 թ.): Երեսնամյա պատերազմն առաջին համաեվրոպական պատերազմն էր և սկսվեց իբրև կրոնական պատերազմ Գերմանիայի կաթոլիկ ու բողոքական խմբավորումների միջև: Այն քաղաքական համատեքստ ստացավ, երբ Հռոմեական սրբազան կայսրության տիրակալներ ավստրիական Հաբսբուրգները փորձեցին իրենց ազդեցությունը տարածել Եվրոպայում: Իսկ Ֆրանսիան, թեպետ կաթոլիկ երկիր էր, այս վտանգը չեզոքացնելու համար միացավ բողոքական խմբավորմանը (1635 թ.):² Գերմանական ազգի հռոմեա-

կան սրբազան կայսրության կայսր Ֆերդինանդ 2-րդի փորձը՝ փրկելու կայսրությունը, ձախողվեց: Այստեղ գլխավոր դեր կատարեց Ֆրանսիան՝ ի դեմս Ռիշելիեի դիվանագիտության. Կարդինալը պաշտպանեց բողոքական երկրներին՝ առաջնորդվելով Ֆրանսիայի գերակա պետական շահերով (*raison d'état*)³:

1648 թվականից ձևավորված հորիզոնական հարաբերություններն ինքնիշխան պետությունների միջև փոխարինեցին կայսրության և եկեղեցու հիերարխիայով քողարկված տարասեռ ֆեոդալական միավորների միջև ուղղաձիգ-աստիճանակարգային հարաբերություններին: Պետական ինքնիշխանության համախմբումը և հարկադրանքի միջոցների ներքին մենաշնորհումը պետական իշխանություններին տվեց բացառիկ վերահսկողություն արտաքին քաղաքականության գործիքների (բանակ, դիվանագիտություն և այլ) նկատմամբ: Սրա և սահմանագծված տարածքայնության հաստատմամբ քաղաքական դաշտը տարանջատվեց առանձին ներքին և արտաքին ոլորտների՝ հենված ներքին քաղաքական հիերարխիայի և արտաքին աշխարհաքաղաքական անարխիայի վրա: Վեստֆալյան պայմանագրերից հետո ոչ-տարածքային քաղաքական միավորները (ավատատերեր, ազատ քաղաքներ և այլ) դուրս մնացին միջազգային քաղաքականությունից⁴:

Գաղափարական առումով արդի միջազգային համակարգի կայացումը հիմնավորվեց ժամանակի խոշոր իրավագետների և քաղաքական իմաստասերների աշխատություններում: Մասնավորապես՝ Հ. Գրոտիուսի «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» (*De Jure Belli ac Pacis*, 1625) ու «Ազատ ծով» (*Mare Liberum*, 1608) աշխատությունները գաղափարների պատմության մեջ նոր ժամանակաշրջան ուրվագծեցին՝ ստեղծելով ընդհանրական սկզբունքների համակարգ և պարզաբանելով ինքնիշխան տիրակալների և ազգերի խաղաղության և ընդհանուր համաձայնության ուղիները: Գրոտիուսի գաղափարների ազդեցությունը

¹ M. P. Scharf, Seizing the "Grotian Moment": Accelerated formation of customary international law in times of fundamental change, *Cornell International Law Journal*, Vol. 43, 2010, p. 443.

² R. Bonney, *The Thirty Years' War 1618-1648*, Oxford: Osprey Publishing, 2002, p. 7.

³ H. A. Kissinger, *Diplomacy*, New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore: Simon & Schuster, 1994, p. 59.

⁴ B. Teschke, *The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations*, London - New York: Verso, 2003, p. 3.

եվրոպական հասարակական-քաղաքական մտքի վրա առեւելի էր: 1633 թ. եվրոպական մի շարք երկրներ՝ Լեհաստանը, Դանիան, Իսպանիան, Անգլիան և Շվեդիան, գրեթե միաժամանակ պետական ծառայության անցնելու հրավերներ ուղարկեցին նրան: 1634-1644 թթ. Հ. Գրոտիուսը Շվեդիայի դեսպանն էր Փարիզում: Հատկանշական է, որ Շվեդիայի արքա Գուստավուս Ադոլֆուսը Գրոտիուսի աշխատությունն Աստվածաշնչի հետ միասին պահում էր իր բարձի տակ⁵:

Սույն հոդվածում քննարկվում է Գրոտիուսի քաղաքական միտքն արդի կոնստրուկտիվիզմի դիտանկյունից: Ըստ այդմ, ազգերին և ազգերի հասարակությանը Գրոտիուսի իդեալիստական և հոլիստական մոտեցումը դիտարկվում է Ալեքսանդր Վենտի ստրուկտուրալ կոնստրուկտիվիզմի տեսության շրջանակներում: Ըստ այս մոտեցումների՝ պետությունները (ազգերը) կառուցված են ընդհանուր համոզմունքներով և կազմակերպական կառույցներով, որոնք տալիս են նրանց կազմակերպված հարկադրանքի տարածքային օրինական մենաշնորհ: Այս կերպ, միջազգային քաղաքական դերակատարների ինքնությունները ոչ թե մեկընդմիջ տրված, այլ սոցիալապես կառուցարկված են: Գաղափարներն ունակ են փոխելու միջազգային քաղաքականության բնույթը՝ ձևավորելով ընկերային կառույցներ և դերակատարներին օժտելով որոշակի ինքնություններով և շահերով:

1. Գաղափարների դերը միջազգային հարաբերություններում

Կոնստրուկտիվիստական աշխարհայացքն ընկած է Գրոտիուսի, Կանտի և Հեգելի միջազգային քաղաքական տեսությունների հիմքում: Այն իշխող էր միջազգային հարաբերություններում երկու համաշխարհային պատերազմների միջակայքում այն կերպով, ինչն այժմ միջազգային հարաբերությունների ուսումնասիրողները հաճախ անվանում են «իդեալիզմ»: Հետպատերազմյան շրջանում

միջազգային քաղաքականության ոլորտում կարևոր կոնստրուկտիվիստական մոտեցումներ զարգացրին Կարլ Դոյչը, Էրնստ Հասսը և Հեդիկ Բուլը⁶:

Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային քաղաքականության տեսականացման համար հիմնականում իբրև շրջանակ էր ծառայում ռեալիզմը (իրապաշտություն), մարքսիզմը և լիբերալիզմը (ազատականություն)՝ ելակետ ընդունելով ուժը, շահը (դասակարգային, պետական կամ ազգային) և հաստատությունները: Թեպետ այս տեսությունների ջատագովները տարածայնություններ ունեն ելակետերի հարաբերական կշիռների վերաբերյալ, սակայն նրանք մեծամասամբ համաձայն են, որ այս երեք գործոնները միասին հնարավորություն են տալիս բացահայտելու միջազգային իրավիճակները: Ի հակադրություն այս մատերիալիստական մոտեցումների՝ մի շարք միջազգային հարաբերությունների ուսումնասիրողներ այսօր ընդգծում են չորրորդ գործոնը՝ «գաղափարները»⁷:

Վերջին տասնամյակներում բազում գիտական աշխատություններ են գրվել միջազգային հարաբերություններում գաղափարների դերի վերաբերյալ: Անհրաժեշտություն է զգացվում միջազգային հարաբերություններում տարբերակելու գաղափարների դերի մեկնաբանման կոնստրուկտիվիստական և ռացիոնալիստական (ներլիբերալ) մոտեցումները⁸:

Միջազգային քաղաքականության կոնստրուկտիվիստական մտքի վերածնունդն արագացավ Սառը պատերազմի վերջում, քանզի միջազգային հարաբերությունների հիմնական տեսությունները (ներոնեալիզմ, նեոլիբերալիզմ) պարզապես դժվարացան բացատրել Սառը պատերազմի մոտալուտ ավարտը կամ համա-

⁶ A. Wendt, *Social Theory of International Politics*, Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1999, p. 3.

⁷ A. Wendt, *op. cit.*, pp. 92-94.

⁸ E. Adler, *Seizing the Middle Ground: Constructivism in world politics*, *European Journal of International Relations*, London: SAGE Vol. 3(3), pp. 319-320.

⁵ J. Miller, Hugo Grotius, *The Stanford Encyclopedia of Philosophy*, Spring 2014 Edition, Edward N. Zalta (ed.), URL: <http://plato.stanford.edu/archives/spr2014/entries/grotius/> (13.06.2014).

կարգային փոփոխությունն ընդհանրապես⁹: Ն. Օնաֆն առաջինն էր, որ 1989 թ. օգտագործեց «կոնստրուկտիվիզմ» եզրույթը¹⁰: Այնուհետև, 1992 թ., միջազգային հարաբերություններում կոնստրուկտիվիստական տեսությունը զարգացրեց Ա. Վենտը¹¹: Թեպետ միջազգային հարաբերություններում կենտրոնական դեր ունեն Վենտի աշխատությունները, այդու՛հ է. Կրատքվիլը և Ն. Օնաֆը ևս կարևոր դեր են խաղացել կոնստրուկտիվիզմի կառուցարկման մեջ¹²:

Է. Ադլերը սահմանում է, - «Կոնստրուկտիվիզմը նյութական աշխարհի դինամիկ նորմալիզմի և իմացական մեկնաբանություններից կախված այն կերպն է և հայացքը, որում նյութական աշխարհը ձևավորում է և ձևավորված է մարդկային գործակցությամբ և փոխգործակցությամբ»:¹³ Կոնստրուկտիվիզմը ցույց է տալիս, որ անգամ ամենաամուր ընկերային հաստատությունները հիմնված են կոլեկտիվ ըմբռումների վրա, որ դրանք մարմնական կառույցներ են, որոնք ծնվել են ոչնչից մարդկային երևակայությամբ և ապա տարածվել ու համախմբվել: Ինչևէ, կոնստրուկտիվիզմն առաջարկում է միջազգային հարաբերությունների ըմբռնման ընդհանուր շրջանակ, որում կարող են ընդգրկվել մի շարք մոտեցումներ և տեսություններ¹⁴: Այն տեսությունները, ըստ որոնց միջազգային կառույցը և սոցիալապես բաշխվող հիմնարար գիտելիքը ազդում են ոչ միայն պետությունների վարքագծի, այլև ինքնությունների և շահերի վրա, համարվում են «կոնստրուկտիվիստական»: Այդպիսիք են «անգլիական դպրոցը» («Գրոտիուայան դպրոց»), որն ասոցացվում է Հեյլի Բուլի (1932-1985 թթ.), որը

⁹ A. Wendt, op. cit., pp. 4-5.

¹⁰ St' u N. Onuf, *World of Our Making: Rules and rule in social theory and international relations*, Columbia: University of South Carolina Press, 1989.

¹¹ A. Wendt, *Anarchy is What States Make of It: The social construction of power politics*, *International Organization*, Vol. 46, No. 2, Spring, MIT Press, 1992, pp. 394-395.

¹² M. Zehfuss, *Constructivism in International Relations: The politics of reality*, New York: Cambridge University Press, 2004, pp. 10-11.

¹³ E. Adler, op. cit., p. 322.

¹⁴ M. Zehfuss, op. cit., p. 7.

բաց կերպով չի անդրադառնում պետական ինքնությունների ձևավորմանը, բայց միջազգային համակարգին մոտենում է ինչպես հանրություն, որը կարգավորվում է ընդհանուր նորմերով, և Ռոբերտ Բոջսի «նեոգրամշիական մարքսիզմի» հետ, որն ավելի քան մյուս մարքսիստական տեսությունները, հետաքրքրված են գաղափարաբանության դերով և այլն¹⁵:

Ըստ Վենտի՝ միջազգային հարաբերությունները սոցիալապես կառուցարկված են և ոչ թե պատմականորեն տրված¹⁶: Ընկերային կյանքում նյութական ուժերի և գաղափարների հարաբերական կարևորության շուրջ բանավեճը նոր չէ միջազգային հարաբերությունների մեջ: Գործնականում տեսաբանները խմբվում են մատերիալիզմի և իդեալիզմի շուրջ: Երկու կողմերն էլ ընդունում են գաղափարների դերը, բայց չեն համաձայնվում, թե որքան մեծ է դրանց ազդեցությունը¹⁷:

Համաձայն իդեալիստների՝ հասարակության հիմնարար գործոնները բնությունը և ընկերային գիտակցության կառույցն են: Վերջինը Վենտը նաև անվանում է «գաղափարների կամ գիտելիքի տեղաբաշխում»: Երբեմն այս կառույցը կիսվում է դերակատարների միջև նորմերի, կանոնների կամ հաստատությունների տեսքով, երբեմն՝ ոչ: Երկու դեպքում էլ ընկերային կառույցը կարող է ազդել տարբեր կերպ՝ սահմանելով ինքնություններ և շահեր, օգնելով դերակատարներին գտնելու խնդիրների համար ընդհանուր լուծումներ, որոշելով վարքագծի կանոններ և այլն: Այս հնարավորությունները չեն հերքում նյութական ուժերի դերը, սակայն ըստ իդեալիստների՝ նյութական ուժերը երկրորդական են: Հայսմ, ըստ Ա. Վենտի՝ միջազգային համակարգի նյութական բևեռացումը նշանակություն ունի, սակայն թե ինչ նշանակություն ունի՝ կախված է այդ բևեռների բարեկամներ կամ թշնամիներ լինելու հանգամանքից, ինչն ընդհանուր գաղափարների գործառույթ է: Ինչպես, օրինակ, Սառը պատերազմն ավարտվեց 1989 թ., իսկ

¹⁵ П. А. Цыганков (Рук. авт. колл.), *Международные отношения: социологические подходы*, Москва, 1998, с. 84-85.

¹⁶ M. Zehfuss, op. cit., pp. 4-5.

¹⁷ П. А. Цыганков, указ. соч., с. 68.

փոփոխությունները նյութական բնեռներում կատարվեցին 1991 թ. «երկրբեռականության ավարտով»: Ի տարբերություն գաղափարները խիստ պատճառահետևանքային պայմաններում դիտարկելու մատերիալիստական միտումի՝ Վենտը սա ձևակերպում է իբրև «գաղափարների կառուցիկ հետևանքներ» (the constitutive effects of ideas)¹⁸:

Համաձայն Ն. Օնաֆի կոնստրուկտիվիստական տեսության՝ հանրությունը և մարդիկ ստեղծում են միմյանց զուգահեռ շարունակական գործընթացներ: Օնաֆը իր տեսությունն անվանում է «կոնստրուկտիվիզմ»՝ ընդգծելու համար իր համոզմունքն առ այն, որ «անհատները և հասարակությունը շարունակաբար սահմանում են միմյանց կանոնների միջոցով, և որ այդ կանոնները կախված են լեզվի կատարողական ուժից»¹⁹: Կանոնները կարգավորում են աշխարհը և սահմանում իրավիճակներ: Կանոններն ուղեցույց են մարդկային վարքագծի համար և դրանով իսկ հնարավոր են դարձնում ընդհանուր իմաստի գոյությունը: Օնաֆի կանոնների հղացականացումը կախված է խոսքից, որը հանգեցնում է գործողության: Խոսքային ակտի (speech acts) հաջողությունը կախված է հասցեատիրոջ պատասխանից: Այսու՝ լեզուն ոչ միայն նկարագրում կամ ներկայացնում է իրականությունը, այլև կառուցում է այն²⁰:

Ի տարբերություն Օնաֆի՝ Վենտը կենտրոնանում է ինքնության խնդրի շուրջ: Նա պնդում է, որ շահերը սահմանող գաղափարներն իրենց հերթին սահմանված են միջազգային համակարգի մշակույթով կամ ընդհանուր գաղափարներով: Գաղափարներն այս մակրո մակարդակում հասնում են պետությունների գլոբալիզացիային և վերածվում շահերի արդեն այլ, միջազգային կառույցի ավելի միկրո մակարդակում²¹: Եվ մարդիկ գործում են այլ օբյեկտների և


¹⁸ A. Wendt, *Social Theory of International Politics*, pp. 20-24.

¹⁹ N. Onuf, *The Constitution of International Society*, *European Journal of International Law*, Vol. 5, No. 1, 1994, p. 4.

²⁰ N. Onuf, op. cit., pp. 10-19.

²¹ A. Wendt, *Social Theory of International Politics*, p. 125.

դերակատարների նկատմամբ ըստ այն իմաստների, որ առարկաներն ունեն իրենց համար²²:



Ըստ այդմ, ինքնություններն են ձևավորում շահերը: Դերակատարների շահերը սոցիալական համատեքստից անկախ չեն, ընդհակառակը, դերակատարները սահմանում են իրենց շահերն իրավիճակի սահմանման գործընթացում: Երբեմն իրավիճակներն աննախադեպ են, և մարդիկ են կառուցում նրանց իմաստը և այդպիսով նաև իրենց շահերը՝ նախադեպերով կամ նորարարությամբ: Հաճախ նրանք ունեն առտնին որակներ, որոնց մարդիկ վերագրում են իմաստներ ըստ հաստատութենականապես սահմանված դերերի: Վենտի ձևակերպմամբ՝ հաստատությունները հակադրվում են անհատներին իբրև հարկադրանքի ընկերային իրողություններ, սակայն շարունակում են գործել ըստ հավաքական գիտելիքի: Հայտնի հաստատութենականացումը նոր ինքնությունների և շահերի յուրացման գործընթաց է²³:

2. Հուզո Գրոտիուսի կոնստրուկտիվիստական միտքը

Հուզո Գրոտիուսի «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» և «Ազատ ծով» աշխատություններում կենտրոնական նշանակություն ունեն միջազգային իրողության ընկերային բնույթը և միջազգային հանրության (պետությունների հասարակության) հղացքը: Բացահայտելով հասարակական իրողության համակե-

²² A. Wendt, *Anarchy Is What States Make of It: The social construction of power politics*, p. 397.

²³ A. Wendt, *Anarchy Is What States Make of It: The social construction of power politics*, pp. 397-399.

ցութային բնույթի անխուսափելիությունը՝ Գրոտիուսը գրում է. «Վեճերն առաջանում են նրանց միջև, ովքեր իրենց տարածայնությունները լուծելու համար կապված չեն ընդհանուր քաղաքացիական օրենքներով...»²⁴: Չարգացնելով ազատ ծովերի տեսությունը՝ Գրոտիուսն առաջ է քաշում ազգերի իրավահավասարության և առևտրի ազատության սկզբունքները²⁵: Գրոտիուսը տարբերում է իրավունքի երեք տարատեսակ՝ բնական իրավունք, աստվածային իրավունք և մարդկային իրավունք: Ըստ Գրոտիուսի՝ «բնական իրավունքը ճշմարիտ բանականության թելադրանքն է»: Աստվածային իրավունքը բխում է աստվածային կամքից, որով այն առանձնանում է բնական իրավունքից: Քանզի «բնության օրենքն այնքան անփոփոխելի է, որ այն չի կարող փոխվել անգամ Աստծո կողմից: Թեպետ և Աստծո իշխանությունն անսահման է, այնու՛կան բաներ, որոնց վրա այն չի տարածվում»²⁶: Գրոտիուսը սահմանում է, - «Պետությունն ընդհանուր իրավունքները և առավելությունները վայելելու համար միավորված ազատ մարդկանց կատարյալ մարմին է... ազգերի իրավունքն ավելի ծավալուն իրավունք է, որի իշխանությունը բխում է բոլոր ազգերի կամ գոնե շատերի համաձայնությունից: Շատերի, որովհետև հազվագյուտ իրավունք կարող է գտնվել ընդհանուր բոլոր ազգերի համար՝ բացառությամբ բնական իրավունքի, որն ինքնին նույնպես սովորաբար կոչվում է ազգերի իրավունք»²⁷: Այս կերպ, ըստ Գրոտիու-

²⁴ Hugo Grotius, *The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations*, 1625, translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by David J. Hill, Elibron Classics, Adamant Media Corporation, 2005. This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition (Washington & London: M. Walter Dunne, 1901), p. 17.

²⁵ Hugo Grotius, *The Freedom of the Seas or the Right Which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade*, 1608, translated with A Revision of the Latin Text of 1688 by Ralph Van Deman Magoffin, ed. James Brown Scott (New York: Oxford University Press, 1916), Frelock Book Series edition, Oslo, 2008, p. 7.

²⁶ Hugo Grotius, *The Rights of War and Peace*, pp. 21-22.

²⁷ Hugo Grotius, op. cit., p. 25.

սի, հասարակության ամենահիմնարար գործոնը բնությունն է և ընկերային գիտակցության կառույցը:

Ինչևէ, միջազգային հարաբերություններում կոնստրուկտիվիստական մոտեցման առանցքը միջինքնութենական հարաբերությունների խնդիրն է: Համաձայն Վենտի *սպրոկկուրալ կոնսպրոկկուրիզմի* տեսության՝ միջազգային քաղաքական մշակույթի փոփոխությունը հնարավոր է, բայց ոչ հեշտ, և կախված է տվյալ պատմական պայմաններից, քանզի իբրև ինքնակարգավորվող մարգարեություն մշակույթն ունի բնական հավասարակշիռ միտումներ²⁸: Ավելին, մշակույթները գիտելիքի հավաքական ներկայացումներ են: Դրանք խմբեր ներկայացնող գիտելիքի կառույցներ են, որոնք ժամանակի ընթացքում անհատական վարքագծում առաջացնում են մակրո մակարդակի մոդելներ²⁹: Օրինակները ներառում են կապիտալիզմը, Վեստֆալյան համակարգը, ապարտեիդը, ազատ առևտրի ռեժիմները, պետությունները և այլք: Սառը պատերազմի տարիներին ամերիկյան և խորհրդային համոզմունքը, թե իրենք թշնամիներ են, գիտելիք էր այս իմաստով: Ընդհանուր գիտելիքը կարող է լինել և՛ համագործակցային, և՛ հակամարտող: Թշնամի լինելը կարող է լինել նույնքան մշակութային փաստ, որքան ընկեր լինելը³⁰:

Հավաքական գիտելիքի ազդեցությունը չի հանգեցնում անհատական համոզմունքների: Կապիտալիզմի մասին համոզմունքները կարող են լինել սխալ կամ ոչ ամբողջական, մինչդեռ դրանց առաջացրած գործողությունները կարող են միտված լինել վերարտադրելու այն հավաքական ներկայացումը, որը կոչվում է կապիտալիզմ: Նույն կերպ, առնվազն 1867 թ. իբրև Կանադա հայտնի հավաքական ներկայացումը գոյություն ունի, որ թեպետ իր անդամների 100 տոկոս փոփոխությանը, օգնում է բացատրել իր քաղաքացիների վարքագծի համախառն շարունակականությունը՝ կանադական օրենքներին ենթարկվելը, Կանադայի պատերազմ-

²⁸ A. Wendt, *Social Theory of International Politics*, pp. 314-315.

²⁹ A. Wendt, op. cit., p. 161.

³⁰ A. Wendt, op. cit., p. 141.

ներին մասնակցելը, կանադական դրոշը պատվելը, եթե նույնիսկ նրանք մտադիր չեն լինելու «լավ կանադացիներ»³¹:

Այս առումով հետաքրքրական է Հ. Գրոտիուսի մոտեցումը: Մասնավորապես՝ նա գրում է.

«Այս արհեստական մարմիններն ունեն սերտ նմանություն բնական մարմնին, որը, չնայած իր բաղադրիչ մասնիկների փոփոխությանը, չի կորցնում իր ինքնությունը, այնքան ժամանակ, քանի դեռ ընդհանուր ձևը պահպանվում է: Եվ այսպես, երբ Սենեկան ասում է, որ ոչ ոք նույնը չէ իր ծեր տարիքում, ինչ նա եղել է երիտասարդ ժամանակ, նա նկատի ունի միայն բնական էությունը:

Այնպես որ ազգը, ինչպես Ալփենուան ու Պլուտարքոսն են խոսում աստվածային վրեժխնդրության ուշ, բայց անսխալ մոտեցման մասին, ներկայումս նույնն է, ինչ որ եղել է հարյուր տարի առաջ, այնքան ժամանակ, քանի դեռ ոգին, որը սկզբում ձևավորեց և հետո պահեց մարմինը միասին, պահպանում է իր ինքնությունը, թեպետ և նախորդ շրջանի իր անդամներից ոչ մեկն այժմ չի ապրում:

Այսպես, ժողովրդին դիմելու սովորույթ է առաջացել՝ ներկայումս ապրողներին վերագրել բազում դարեր առաջ եղածը, ինչը կարելի է տեսնել և՛ պատմիչների (profane historians) մոտ, և՛ սուրբ գրքերում: Այսու՝ Տակիտուսի մոտ Անտոնիոս Պրիմուսը ծառայելով Վեսփասիանոսին, երրորդ լեգիոնի զինվորներին հիշեցնում է նախորդ ժամանակներում իրենց արածների մասին, թե ինչպես են նրանք Մարկոս Անտոնիոսի հրամանատարությամբ հաղթել պարթևներին և Կորբոլոնի հրամանատարությամբ՝ հայերին: Ավելի շատ նախապաշարմունք կար, քան, հետևաբար, ճշմարտություն նաև Պիզոնի՝ իր ժամանակի աթենացիներին ուղղված նախատինքի մեջ, որը մերժում էր նրանց համարել իբրև աթենացիներ, քանզի նրանց տեսակը վերացել էր բազում աղետներից, և նրանք ավելին չէին, քան երկրի բոլոր ազգերի խառնուրդ³²: Մենք ասում ենք՝ այս նախատինքում կար ավելի շատ նախապաշարմունք, քան ճշմարտություն: Թեպետ այդպիսի խառնուրդը կարող էր նվազեցնել արժանապատվությունը, այն չէր կարող ոչնչացնել ազգի գոյությունը: Նա ինքն էլ գիտեր սա, քանզի նախատում էր իրօրյա աթենացիներին նախորդ ժամանակներում Փիլիպոս Մակեդոնացու դեմ իրենց տկար

³¹ A. Wendt, *Social Theory of International Politics*, p. 162.

³² Hugo Grotius, *The Rights of War and Peace*, p. 118.

ջանքերի և իրենց լավագույն ընկերների նկատմամբ ապերախտության համար: Այժմ, քանզի իր բաղադրիչ մասերի փոփոխությունը չի կարող ոչնչացնել ազգի ինքնությունը, ոչ էլ անգամ հազարամյակը կամ ավելին, այնպես էլ չի կարող մերժվել, որ ազգը կարող է կորցնել իր գոյությունը երկու եղանակով՝ կամ իր բոլոր անդամների վերացմամբ, կամ իր ձևի և ոգու վերացմամբ: Այս կերպ նաև յուրաքանչյուր համայնքի (community) դեպքում:

Ազգը կորցնում է իր ձևը՝ կորցնելով իր բոլոր կամ որոշ ընդհանուր իրավունքներ, և սա տեղի է ունենում կամ երբ ամենքը ստրկացված են, ինչպես միկենացիները, ովքեր վաճառվեցին արգիվացիներին (Argives) աքայացիների կողմից, օլինթացիները (Olynthians) Փիլիպոսի, թեբեսացիներն Ալեքսանդրի, և բրուտիացիները (Brutians) ստրկացվեցին հռոմեացիների կողմից, կամ երբ, թեպետ և նրանք պահպանում են իրենց անձնական ազատությունը, գրկված են ինքնիշխանության իրավունքներից»³³:

Ըստ Գրոտիուսի՝ ամենևին էլ տարբերություն չկա, թե ինչպիսին է կառավարման ձևը՝ միապետական, արիստոկրատական, թե՞ դեմոկրատական: «Հռոմեական ժողովուրդը նույնն էր անկախ թագավորական, կոնսուլական, թե կայսերական կառավարումից...: Երբ թագավորը կամ թագավորական ընտանիքը վերանա, ինքնիշխանության իրավունքները կվերադառնան ժողովրդին, քանզի ինքնիշխանությունը ներհատուկ է թագավորին՝ իբրև գլխի, ժողովրդին՝ իբրև մարմնի և, հետևաբար, նաև ընտրովի կառավարությանը: Եվ ամենևին էլ այս փաստարկը չի տապալվել Արիստոտելի առարկությամբ, ով ասում է, որ եթե կառավարման ձևը փոխվում է, պետությունն այլևս նույնը չէ, ինչպես երաժշտության ներդաշնակությունն է ամբողջությամբ փոխվում դորիականից փոնոզիական չափմանն անցնելիս»³⁴:

Իսմբային համոզմունքները հաճախ դրոշմված են «հավաքական հիշողության», միջերի, պատումների և ավանդույթների մեջ, որոնք սահմանում են, թե ով է խումբը և ինչպես է այն հարաբերվում ուրիշներին: Այս պատումները պարզապես ընդհանուր

³³ Hugo Grotius, op. cit., p. 119.

³⁴ Hugo Grotius, op. cit., p. 120.

համոզմունքներ չեն, որ կրում են անհատները յուրաքանչյուր պահ (թեպետ և կախված են այդ համոզմունքներից), սակայն ըստ էության պատմական ֆենոմեն է, որը սերնդեսերունդ կենդանի է պահվել սոցիալիզացիայի և ծիսակարգերի շարունակական գործընթացներով: Այսպիսի հիշողությունների շնորհիվ է, որ խմբերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում շարունակականություն և ինքնություն: Այնքան ժամանակ, քանի դեռ անհատներն իրենց դիտարկում են իբրև հավատարիմ ու նվիրված խմբին, հավաքական հիշողություններն իբրև հավաքական գործողության համախմբման միջոց հասանելի կլինեն, եթե անգամ ֆենոմենոլոգիական իմաստով անհատները չեն հավատում և, այդպիսով, դրանք կարող են օգնել բացատրելու ամփոփ վարքագծի մոդելները (patterns)³⁵:

Վենտը պնդում է, թե այն միջազգային համակարգում, որտեղ պետություններն ունեն էական հավաքական ինքնություն, քիչ հավանական է, որ նրանք զգան թե իրենց անվտանգությունը կախված է մեկը մյուսի ռազմական ուժի հավասարակշռումից. «պետությունները զսպում են ընդդեմ սպառնալիքների (threats), ոչ թե ուժի, քանի դեռ պետությունները վստահ են, որ ուրիշները նույնականանում են իրենց անվտանգության հետ, նրանք չեն դիտարկի մեկը մյուսին իբրև ռազմական սպառնալիքներ: Ծիշտ է այդպիսի վստահությունը բարդ է ստանալ, բայց դա հնարավոր է: Այսօր Կանադան այդքան էլ անհանգստացած չէ իր անվտանգությանն ամերիկյան սպառնալիքով, կամ էլ Բրիտանիան ֆրանսիական վտանգով: Զսպելու փոխարեն պետությունները, որոնք հասել են փոխադարձ նույնականացման այս մակարդակին, ավելի շատ հակված են իրենց անվտանգեցնելու հավաքական անվտանգությանը արտաքին սպառնալիքի դեմ՝ «բոլորը մեկի, մեկը բոլորի համար» սկզբունքով³⁶:

«Եթե մարդկությանն առնչվող որևէ բան առնչվեր նաև որևէ մեկին անհատապես, մենք վստահորեն կապրեինք շատ ավելի խաղաղ աշխարհում, քանզի շատերի ինքնավստահությունը կնվա-

³⁵ A. Wendt, *Social Theory of International Politics*, p. 163.

³⁶ A. Wendt, op. cit., p. 106.

զեր, և նրանք, ովքեր հիմա անտեսում են արդարությունը նպատակահարմարության պատրվակով, կմոռանային անարդարության դասն ի վնաս իրենց...»,- գրում է Հ. Գրոտիուսը «Քրիստոնեական աշխարհի կառավարիչներին և ազատ ու անկախ ազգերին» ուղղված իր ուղերձում³⁷: Այս կերպ, իր ազատ ծովերի տեսության համապատկերում Գրոտիուսը հիմնավորում է միջազգային վարչակարգի անհրաժեշտությունը: Միջազգային վարչակարգերը սովորաբար սահմանվում են իբրև ընկերային հաստատություններ, որոնց անդամների ակնկալիքները միջազգային խնդիրների շուրջ համընկնում են: Ակնկալիքների համընկման ընդգծումն իբրև վարչակարգերի սահմանադիր հենք՝ դրանց օժտում է անխուսափելի միջառարկայական որակներով: Հետևաբար, մենք ճանաչում ենք վարչակարգերին իրենց ցանկալի և ընդունելի ընկերային վարքագծի սկզբունքային ու ընդհանուր ըմբռնումներով: Այսու՝ վարչակարգերի գոյաբանությունը հենված է ամուր միջառարկայական տարրին, ինչն էական ազդեցություն ունի դերակատարների վարքագծի վրա³⁸:

Ընդգծելով հավաքական ինքնության իրողությունը՝ Գրոտիուսը գրում է. «Նրանց կարծիքը, ովքեր մտածում են, որ ընկերությունը ծագում է միայն անհրաժեշտությունից, իբրև կեղծ մերժված է ավելի ողջամիտ փիլիսոփաների կողմից, քանզի մենք զգում ենք ինքնարվուս և բնական հակում դեպի ընկերային հարաբերությունը: Գթությունն, իրող, հաճախ հորդորում է և որոշ դեպքերում պատվիրում մեզ նախընտրել շատերի բարիքը մեր անհատական օգուտից»³⁹:

³⁷ Hugo Grotius, *The Freedom of The Seas*, p. 6.

³⁸ F. Kratochwil and J. Ruggie, *International Organization: A state of the art on an art of the state*, 1986, pp. 764-769. Միջազգային ռեժիմների հղացքը բաղկացած է չորս վերլուծական բաղադրիչներից՝ սկզբունքներ («beliefs of fact, causation, and rectitude»), նորմեր («standards of behavior defined in terms of rights and obligations»), կանոններ («specific prescriptions and proscriptions for action») և որոշումների կայացման ընթացակարգեր («prevailing practices for making and implementing collective choice»).

³⁹ Hugo Grotius, *The Rights of War and Peace*, p. 80.

Ընդհանուր գաղափարները, երբեմն համագործակցող կամ հակամարտող, կառուցում են բռնությունը պետությունների միջև: Այն է՝ հինգ հարյուր բրիտանական միջուկային մարտագլխիկներն ավելի քիչ են սպառնում ԱՄՆ-ին, քան հինգ հյուսիսկորեականները: Ոչնչացման ուժերին իմաստավորում են ապակառուցողական հարաբերությունները (“relations of destruction”), որում դրանք ներդրված են⁴⁰: Սառը պատերազմի ընթացքում, որը մշակութային գոյացություն էր, Միացյալ Նահանգները և Խորհրդային Միությունն ընդհանուր համոզմունք ունեին, որ նրանք թշնամիներ էին, ինչն օգնում էր սահմանելու իրենց ինքնություններն ու շահերը տվյալ իրավիճակում և վերարտադրելու Սառը պատերազմը: Ընկերային ընդհանուր գիտելիքն առանցքային դեր է խաղում որոշ ժամանակով փոխազդեցությունը կանխատեսելի դարձնելու համար՝ առաջացնելով հավասարակշիռ (homeostatic) միտումներ, որոնք կայունացնում են ընկերային կարգը: Այդ կերպ մշակույթը միտված է վերարտադրելու ինքն իրեն⁴¹:

Միջազգային հարաբերությունների կոնստրուկտիվիստական (կառուցողական) տեսության համաձայն՝ արտաքին ինքնիշխանության փոխադարձ ճանաչումը կարևոր մեղմացուցիչ հանգամանք է միջազգային անարխիայի համար: Այդու՝ Վենտը Գրոտիուսի նման ընդգծում է, որ «պետությունը կարող է ունենալ արտաքին ինքնիշխանություն, եթե անգամ այն ճանաչված չէ այլ պետությունների կողմից»⁴²:

⁴⁰ A. Wendt, *Social Theory of International Politics*, pp. 254-255.

⁴¹ A. Wendt, *op. cit.*, p. 187.

⁴² A. Wendt, *op. cit.*, p. 208. Միջազգային քաղաքականության պատմության մեծ մասը պետություններն ապրել են Հոբսյան մշակույթում: 17-րդ դարում Եվրոպայում ձևավորվեց Լոկյան մշակույթը, որտեղ հակամարտությունը զսպվում էր ինքնիշխանության փոխադարձ ճանաչմամբ: Այս մշակույթն էլ դարձավ համընդհանուր՝ զուգահեռ պահպանելով Հոբսյան մշակույթի որոշ տարրեր: Ըստ Վենտի՝ 20-րդ դարի վերջում միջազգային համակարգում մեկնարկել է մեկ այլ կառուցվածքային փոփոխություն դեպի հավաքական անվտանգության Կանտյան մշակույթ:

Ինքնիշխանության սկզբունքների համապատկերում հատկաշնչական է Գրոտիուսի հետևյալ մոտեցումը.

«Հարց է, թե արդյո՞ք մարդը պարտավոր է պաշտպանել մյուսին, կամ ազգը մեկ այլ ազգի՝ անարդարությունից և ագրեսիայից... Թեպետ քնական իրավունքով և ընկերային կարգով սահմանված, ինչպես նաև պատմական վկայություններով հաստատված կանոն է, որ յուրաքանչյուրն ինքնիշխան գերագույն դատավոր է իր թագավորությունում և իր հպատակների համար, որոնց վեճերին ոչ մի օտար իշխանություն չի կարող արդարացիորեն միջամտել»⁴³:

«Ինքնիշխանության սկզբունքը փոխակերպում է իրավիճակը՝ ապահովելով սոցիալական հենարան պետությունների անվտանգության և անհատականության համար: Այս ըմբռնումները և սպասումները ոչ միայն սահմանում են պետության որոշակի տեսակ՝ ինքնիշխան պետություն, այլև համայնքի որոշակի կերպ, քանզի ինքնությունները հարաբերական են: Այս համայնքի էությունը սահմանափակ տարածքում բացառիկ քաղաքական իշխանության իրագործման միմյանց իրավունքի փոխադարձաբար ճանաչումն է»⁴⁴: Մի կողմից՝ ինքնիշխան լինելը նշանակում է ունենալ բացառիկ իշխանություն որոշակի տարածքի նկատմամբ: Մյուս կողմից՝ տարածքը և իշխանությունը կորցրած պետությունը կարող են ևս համարվել ինքնիշխան, քանզի ինքնիշխանությունը ներհատուկ է պետական անհատականությանը: Ինքնիշխանության այս առանձնահատկության շնորհիվ է, որ պետությունները կարող են հարաբերվել իրար հետ, քանզի դա նշանակում է, որ իրենց գոյությունն անկախ է: Ինքնիշխան պետությունների Վեստֆալյան համակարգի մշակույթը հիմնված է փոխադարձ ճանաչման սկզբունքի վրա, ինչն ապահովում է յուրաքանչյուր պետու-

⁴³ Hugo Grotius, *The Rights of War and Peace*, pp. 287-288.

⁴⁴ A. Wendt, *Anarchy is What States Make of it: The social construction of power politics*, p. 412.

թյան իրավունքները և ազատությունները, օրինակ, արտաքին ներխուժումից, միջազգային իրավունքի առաջ հավասարությունից՝ այն հնարավորությունները, որոնք կարող են իրենց համար ապահովել միայն հզոր պետությունները⁴⁵:

Ամփոփում

Հուզո Գրոտիուսի քաղաքական միտքը միջազգային հարաբերությունների պատմության մեջ նոր ժամանակաշրջան ուրվագծեց՝ ստեղծելով ընդհանրական սկզբունքների համակարգ և կառուցարկելով նոր միջազգային իրողությունը, որը փոխարինեց կայսրության և եկեղեցու հիերարխիայով պայմանավորված միջնադարյան համընդհանրական աշխարհակարգին: Գրոտիուսի միջազգային քաղաքական տեսության հիմքում ընկած է այն մոտեցումը, ինչն արդի դիտանկյունից բնորոշվում է կոնստրուկտիվիստական: Այս կերպ, ազգերին և ազգերի հասարակությանը Գրոտիուսի իդեալիստական և ստրուկտուրալ-հոլիստական մոտեցումը հանդիսանում է միջազգային հարաբերություններում կոնստրուկտիվիզմի տեսության հիմքը: Ըստ այդմ, ազգերը (պետությունները) կառուցված են ընդհանուր համոզմունքներով և կազմակերպական կառույցներով: Գրոտիուսի քաղաքական մտքի ազդեցությունն իր ժամանակի և հետագա միջազգային քաղաքականություն իրականացնողների վրա անառարկելի է: Գրոտիուսի գաղափարները փոխեցին միջազգային քաղաքականության բնույթը՝ ուղղորդելով արդի միջազգային ընկերային կառույցների և հաստատությունների ձևավորումը:

⁴⁵ A. Wendt, *Social Theory of International Politics*, p. 182.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Grotius Hugo, *The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations*, 1625, translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by David J. Hill, Elibron Classics, Adamant Media Corporation, 2005. This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition (Washington & London: M. Walter Dunne, 1901).
- Grotius Hugo, *The Freedom of the Seas or the Right Which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade*, 1608, translated with A Revision of the Latin Text of 1688 by Ralph Van Deman Magoffin, Ed. James Brown Scott (New York: Oxford University Press, 1916), Frelock Book Series edition, Oslo, 2008.
- Adler E., Seizing the Middle Ground: Constructivism in World Politics, *European Journal of International Relations*, London: SAGE Vol. 3(3).
- Bonney R., *The Thirty Years' War 1618-1648*, Oxford: Osprey Publishing, 2002.
- Kissinger Henry A., *Diplomacy*, New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore: Simon & Schuster, 1994.
- Kratochwil F. and Ruggie J., International Organization: A State of the art on an art of the state, *International Organization*, Vol. 40, No. 4, MIT Press, Autumn, 1986.
- Miller J., Hugo Grotius, *The Stanford Encyclopedia of Philosophy*, Spring 2014 Edition, Edward N. Zalta (ed.), URL: <http://plato.stanford.edu/archives/spr2014/entries/grotius/> (13.06.2014).
- Onuf N., The Constitution of International Society, *European Journal of International Law*, Vol. 5, No. 1, 1994.

- Onuf N.**, *World of Our Making: Rules and rule in social theory and international relations*, Columbia: University of South Carolina Press, 1989.
- Scharf Michael P.**, Seizing the “Grotian Moment”: Accelerated Formation of Customary International Law in Times of Fundamental Change, *Cornell International Law Journal*, Vol. 43, 2010.
- Teschke B.**, *The Myth of 1648: Class, geopolitics, and the making of modern international relations*, London-New York: Verso, 2003.
- Wendt A.**, Anarchy is What States Make of It: The social construction of power politics, *International Organization*, Vol. 46, No. 2, MIT Press, Spring, 1992.
- Wendt A.**, *Social Theory of International Politics*, Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1999.
- Zehfuss M.**, *Constructivism in International Relations: The politics of reality*, New York: Cambridge University Press, 2004.
- Международные отношения: социологические подходы*, Рук. авт. колл. П. А. Цыганков. Москва, 1998.

ԱՆՆԱ ԽԱՉՅԱՆ

ՀՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՍԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Մուտք

Ֆեոդալիզմից կապիտալիզմին անցման ժամանակաշրջանում վերաիմաստավորվեցին քաղաքական իշխանության, պետության և հասարակության, անհատի և պետության հարաբերությունների, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հիմնախնդիրները՝ կապված թե՛ քաղաքական տեղաշարժերի, թե՛ քաղաքական տեսության զարգացման հետ: Դարաշրջանի իրավական և քաղաքական աշխարհայացքում ձևավորվեցին նոր պատկերացումներ մարդու իրավունքների և ազատությունների մասին: Նման անցումային դարաշրջաններում, երբ հանրային կանգնում է իր ապագայի ընտրության այլընտրանքների առջև, անհատների դերակատարությունը հույժ բարձրանում է: Նման անհատներից էր **Հուգո Գրոտիուսը** (1583-1645 թթ.)՝ հոլանդացի նշանավոր մտածող և իրավաբան, պետական գործիչ, նոր ժամանակներում բնական և միջազգային իրավունքի ռացիոնալիստական հայեցակարգի հիմնադիրներից մեկը: Նրան անվանում են նաև «ժամանակակից միջազգային իրավունքի հայր»¹: «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» (1625 թ.) հայտնի աշխատությունը գրել է հանուն «արդարության պաշտպանության»: Երկի հիմնական նպատակը արդարության սկզբունքի բացահայտումն է միջազգային հարաբերություններում, իսկ գլխավոր գաղափարը՝ այն, որ գոյություն ունեն որոշ օրենքներ, որոնք վեր են առանձին պետություններից և կիրառելի են միջպետական հարաբերությունները կարգավորելիս: Արդարության չափանիշն է որոշում, թե ինչպես պետք է կենսագործվի ազատությունը, իսկ

¹ P. Asbach, O. Schröder, *War, the State and International Law in Seventeenth Century Europe*, United Kingdom, Farnham: Ashgate Publishing Company, 2010, p. 130.

արդարության աղբյուրը նախ անհատի դրսևորման մեջ է, ապա՝ սոցիալական կապերի ռացիոնալ իրագործման:

1. Բնական և համակեցական իրավունք

Գրոտիուսի իրավաքաղաքական հայացքները հիմնված են բնահրավական տեսության վրա: Նա առաջին անգամ շարադրեց բնական իրավունքի համակարգված տեսությունը՝ քաղաքական և իրավական նոր պայմաններին համապատասխան էապես ձևափոխելով սուբյեկտների և քրիստոնեական աստվածաբանության ավանդույթները: Գրոտիուսի բնական իրավունքի սկզբունքների մեջ նկատելի է դրանց բուրժուական բնույթը: Սա, որոշ առումներով, հարված էր պետության և իրավունքի թեոլոգիական տեսությանը:

Ըստ Գրոտիուսի՝ «բնական իրավունքի մայրը հենց մարդու բնությունն է, իսկ մարդկային բնության արարիչը ողջ գոյի Արարիչն է: Այսինքն՝ իրավունքը ներդրված է հենց մարդու բնության մեջ: Բնական իրավունքը սահմանվում է որպես «առողջ բանականության կարգադրագիր», որին հակասող կամ համապատասխանող որևէ գործողություն ճանաչվում է կա՛մ «բարոյապես ամոթալի», կա՛մ «բարոյապես անհրաժեշտ»²: Նա բնական իրավունքը սահմանում է որպես «իրավունք՝ բառի բուն իմաստով», որը «նշանակում է՝ հատկացնել ուրիշներին այն, ինչ արդեն նրանց է պատկանում, և կատարել նրանց նկատմամբ մեզ վրա դրված պարտականությունները»³:

Գրոտիուսը հստակորեն չի սահմանազատել իրավունքը և բարոյականությունը, թեև որոշ փորձեր է կատարել և ինչ-որ կերպ փորձել սահմանազատել իրավական նորմերը զուտ բարոյական

² Hugo Grotius, *The Law of War and Peace*, Paris, 1625, book 1, chap. 1, § X, 1.

URL: <http://www.lonang.com/exlibris/grotius/http://www.constitution.org/gro/djbp.htm> (15.08.2014).

³ Hugo Grotius, op. cit., Prolegomena, X.

վարքագծի կանոններից՝ նշելով, որ «իրավունքն իր արտաքին իրականացումը չի սրանում, եթե զուրկ է կյանքի կոչվելու ուժից»⁴:

Ի տարբերություն բնական իրավունքի հավերժական և բացարձակ անփոփոխ սկզբունքների՝ մարդկանց կամքով հաստատված իրավունքը (այսինքն՝ իրավունքը լայն իմաստով) «փոփոխվում է ժամանակի ընթացքում և տարաբնույթ է տարբեր տեղերում»⁵: Մարդկային փոփոխական իրավունքին Գրոտիուսն հակադրում է բնական իրավունքը: Քանի որ կամքով հաստատված իրավունքի աղբյուրը կամ Աստծո, կամ մարդկանց կամքն է, ուստի այն բաժանվում է աստվածային և մարդկային իրավունքի⁶: Մարդկայինը, իր հերթին, բաղկացած է քաղաքացիական իշխանությունից բխող ներպետական իրավունքից և ազգերի իրավունքից (միջազգային իրավունքից), որը ստանում է «պարտադիր ուժ՝ բոլոր ժողովուրդների կամ նրանցից շատերի կամքով»⁷: Ըստ Գրոտիուսի՝ ներպետական օրենքները պետք է նպաստեն իրավունքի, արդարության իրականացմանը: Բայց իրավունքի առանձնահատկությունն այն է, որ այն ենթադրում է հարկադրանքի հնարավորություն այն է, որ այն ենթադրում է հարկադրանքի հնարավորություն, եթե դրա նորմերը չեն պահպանվում կամովի: Սա չի նշանակում, որ ուժով չպահպանվող իրավունքը դադարում է գոյություն ունենալուց:

2. Պետության ծագումը և ինքնիշխանության գաղափարը⁸

Իրավունքն իրականացնելիս ուժի կիրառման հիմնահարցը զուգակցվում է պետության գաղափարի հետ: Պետությունը կատարում է հարկադրանքի գործառույթ: Սակայն Գրոտիուսն առար-

⁴ Hugo Grotius, op. cit., Prolegomena, XIX.

⁵ Hugo Grotius, op. cit., Prolegomena, XXX.

⁶ Hugo Grotius, op. cit., book 1, chap. 1, § XI, 2; § XII.

⁷ Hugo Grotius, op. cit., book 1, chap. 1, § XIV, 1.

⁸ P. Borshberg, Grotius, the Social Contract and Political Resistance: A study of the unpublished theses LVI, *International Law and Justice Working Paper (2006/7)*, National University of Singapore, pp. 39-49, 49-57.

կում է այն դրույթը, թե ուժն է ստեղծում իրավունքը: Պետության և ներպետական իրավունքի ծագումը նա բացատրում է մարդկանց շփման բնական ծագմամբ, պայմանագրային տեսությամբ՝ որպես բնական իրավունքի տրամաբանական հետևություն: Փոխադարձ անվտանգություն ապահովելու նպատակով մարդիկ համաձայնության եկան՝ կնքելով հասարակական դաշինք, ինչը դարձավ պետության ծագման հիմքը: Այսպես սկիզբ է առնում քաղաքացիական իշխանությունը: «Բնական վիճակից քաղաքացիական հասարակության» ու պետությանն անցման արդյունքում արդարության իրավական սկզբունքը լրացվում է օգուտի և նպատակահարմարության քաղաքական սկզբունքով: Այսինքն՝ պետություն ստեղծելիս մարդիկ գիտակցաբար հետապնդում են գործնական նպատակներ ու շահեր: Եթե Արիստոտելը պետությունը համարում էր ազատ մարդկանց շփման բարձրագույն և կատարյալ ձև, իսկ Կիկերոնի համար պետությունն իրավական հաղորդակցության և ընդհանուր շահերի պաշտպանության ձև էր, ապա Արիստոտելի և Կիկերոնի գաղափարների ազդեցությամբ նա պետությունը սահմանում է որպես «ազատ մարդկանց կախարչայ միություն՝ կնքված հանուն իրավունքի և ընդհանուր օգուտի պահպանման»⁹:

Սակայն, վերոհիշյալ դրույթի վերաբերյալ Պետր Պավել Ռեմեկը գրում է. «Չնայած այն բանին, որ Գրոտիուսը պետության տրամաբանական ծագումը բացատրելու համար կիրառում է անկախ մարդկանց միջև հասարակական կապի հղացքը, նա, այնուամենայնիվ, չի նշում, որ ժամանակակից պետությունների պատմական ծագումը պետք է հիմնված լինի հենց այդ կապի վրա»¹⁰:

Սոցիալական առումով պետությունը մեծամասնության համաձայնություն է ընդդեմ փոքրամասնության, թույլերի և ճնշվածների

⁹ Hugo Grotius, op. cit., book 1, chap. 1, § XIV, 1.

¹⁰ P. P. Remec, *The Position of the Individual in International Law According to Grotius and Vattel*, The Hague: Martinus Nijhoff, 1960, p. 74.

միություն ընդդեմ ուժեղների ու հզորների: Ընդունելով հասարակական դաշինքի հայեցակարգը՝ Գրոտիուսը ժողովրդին չի համարում ինքնիշխանության կրող, այսինքն՝ դեմ է միապետների կամքի նկատմամբ ժողովրդի կամքի գերակայության ընդունմանը: Ըստ նրա՝ կարելի է ենթադրել, որ ժողովուրդը ժամանակին օժտված է եղել ինքնիշխանությամբ, սակայն զրկվել է դրանից, երբ ինքնակամ փոխանցել է ինքնիշխանությունը իր ընտրած անձանց:

Արևմտաեվրոպական իրավաքաղաքական մտքի պատմության մեջ Ժան Բոդենն առաջինը ձևակերպեց և հիմնավորեց ինքնիշխանություն հասկացությունը՝ որպես գերագույն պետական իշխանության էական հատկանիշ. «*Ինքնիշխանությունը պետության մշտական և բացարձակ իշխանությունն է: Բացարձակ՝ որևէ օրենքով չկապված իշխանություն քաղաքացիների և հպատակների նկատմամբ*»: Բացարձակ է այն իշխանությունը, որը տրված է ժողովրդի կողմից՝ առանց որևէ պայմանի և սահմանափակումների: Մշտական համարվում է այն իշխանությունը, որը գոյություն ունի սեփական իրավունքի հիման վրա և տրված չէ որոշակի ժամկետով (*Les six livres de la République*).

Գրոտիուսն ինքնիշխանությունը բնորոշում է որպես պետության գլխավոր հատկանիշ: Պետությունը կոչված է ապահովելու հասարակական անդորր, այդ պատճառով այն օժտված է բարձրագույն իրավունքով¹¹: Սակայն քաղաքացիական իշխանությունը պետության մեջ համարվում է բարձրագույն և ինքնիշխան, եթե նրա գործողությունները չեն հսկվում կամ ենթական չեն օտար իշխանության, չեն կարող արգելվել որևէ մեկի կողմից, բացի այդ իշխանությունը կրողից:

3. Պետության կառավարման ձևերը

Գրոտիուսն ընդունում է կառավարման տարբեր ձևերի գոյությունը՝ միապետական, ազնվապետական, քաղաքացիական ազատ համակեցության, ժողովրդավարական հանրապետության

¹¹ Hugo Grotius, op. cit., book 1, chap. 3, § VI, 2.

և այլն: Ընդ որում, պետական կառավարման այս կամ այն ձևի ընտրությունը որոշիչ նշանակություն չունի, քանզի դրանք բոլորն էլ օրինաչափ են և պայմանավորված հասարակական դաշինքի բնույթով: «ժողովուրդը կարող է ընտրել կառավարման ցանկացած ձև, քանի որ այս կամ այն իրավակարգը պետք է գնահատել... դրանում մարդկանց կամքի իրականացման տեսանկյունից»: Այնուամենայնիվ նա համակրում է կառավարման միանձնյա և ազնվապետական ձևերը:

Հուլանդացի մտածողը հատուկ ուշադրություն է դարձնում բարձրագույն իշխանությանը դիմադրելու օրինաչափության հարցին: Նրա դիրքորոշումը հանգում է հետևյալին. որքանով պետության ստեղծման և քաղաքացիական իշխանության հաստատման վերաբերյալ համաձայնության կնքմամբ մարդիկ զրկվում են իրենց իրավունքներից ու ազատություններից, այդքանով նրանք զրկվում են նաև դիմադրելու իրավունքից: Սակայն բացառիկ դեպքերում նա հնարավոր է համարում քաղաքացիների դիմադրությունն իշխանությունների բռնության հանդեպ՝ մասնավորապես, եթե բռնությունը սպառնում է ինչ-որ մեկի կյանքին: Հետևաբար, բացառիկ դեպքը, որն արդարացնում է դիմադրության կազմակերպումը բարձրագույն իշխանության դեմ, մարդու հիմնարար բնական իրավունքի՝ կյանքի իրավունքի խախտումն է: Հատկանշական է, որ Գրոտիուսը տվյալ դեպքում նկատի ունի մարդկային անհատի կյանքը¹²: Հպատակները, շարունակում է նա, այդ իրավունքից կարող են օգտվել հատկապես այն դեպքում, երբ կառավարչի գործողություններն ուղղված են ողջ ժողովրդի ոչնչացմանը: Քանզի, ըստ նրա, «կառավարելու կամքը և պետությունը կործանելու միտված կամքը անհամարելի են»¹³:

4. Միջազգային իրավունքի նոր ըմբռնումը

Իրավունքը և արդարությունը, իրավական կարգավորումը Գրոտիուսը համարում է ժողովուրդների փոխհարաբերությունների

¹² Hugo Grotius, op. cit., book 1, chap. 4, § VII, 1, 2.

¹³ Hugo Grotius, op. cit., book 1, chap. 4, § XI.

հիմքը: «Ազգերի իրավունքը» կամ «միջազգային իրավունքը» ստեղծվում է պետությունների միջև համաձայնության հաստատման ուղիով՝ ղեկավարվելով ընդհանուր օգուտի գաղափարով, այսինքն՝ արդեն «ոչ թե մարդկային յուրաքանչյուր համակեցության» օգուտի համար «առանձին վերցրած, այլ այդպիսի բոլոր համակեցությունների ամբողջությունների շահերի»¹⁴: Միջազգային հարաբերություններում ևս նա հերքում է այն տեսակետը, որ ուժն է որոշում ամեն ինչ:

«Ազգերի իրավունք» դրույթի հետ կապված, թերևս, ուսումնասիրողներից ոմանք որոշ վերապահումներ են ունենում: Մասնավորապես՝ Ռուլանդ Փորթմանը նշում է, որ Գրոտիուսն օգտագործելով «ազգերի իրավունք» տերմինը, չէր քննում պետությունների միջև իրավունքի հարցը: Նա պետությունը դիտում էր որպես «ազատ մարդկանց միություն», որը ղեկավարների անհատական իշխանության տակ գտնվող անհատների զուտ համագումար էր (mere summation)՝ առանց սեպարատ ինքնության¹⁵: Իսկ Պետր Պավել Ռեմեկը Գրոտիուսի «ազգերի իրավունք» դրույթը համարում է, ըստ էության, իրավունք՝ գլխավորապես ազգերի ղեկավարների միջև, որոշ վերապահումներով՝ քաղաքացիների խմբերի կամ գլխավոր անհատների միջև¹⁶: Ռ. Փորթմանը դա համարում է ոչ միջպետական իրավունք¹⁷:

Հետաքրքիր են Գրոտիուսի հայացքները պատերազմի և խաղաղության հիմնահարցի վերաբերյալ: Նրա հայեցակարգի համաձայն՝ ո՛չ բնական իրավունքը, ո՛չ ազգերի իրավունքը, ո՛չ աստվածային օրենքները չեն արգելում պատերազմները¹⁸: Սակայն պա-

¹⁴ Hugo Grotius, op. cit., Prolegomena, XVII.

¹⁵ R. Portman, Legal Personality in International Law. Cambridge Studies in International and Comparative Law, New York: Cambridge University Press, 2010, p. 32.

¹⁶ P. P. Remec, op. cit., pp. 72-74.

¹⁷ R. Portman, op. cit., p. 32.

¹⁸ Hugo Grotius, op. cit., book 1, chap. 2.

տերազմները լինում են արդար և ոչ արդար: Արդար պատերազմը (ինքնապաշտպանության՝ սեփական տարածքի, բնակչության, ունեցվածքի պաշտպանության նպատակով) զավթչի կատարած իրավախախտման բնական պատասխանն է: Ոչ արդար պատերազմներն առաջին հերթին զավթողական պատերազմներն են¹⁹:

Ընդունելով պատերազմի անխուսափելի բնույթը՝ Գրոտիուսը կոչ է անում հնարավորինս հետևել որոշակի կանոնների. Չափավորել սարսափներն ու դաժանությունները, խնայել կանանց, երեխաներին ու ծերերին, մարդկայնորեն վերաբերվել ռազմագերիներին, խաղաղ քաղաքացիներին, խուսափել ունեցվածքի ոչնչացումից և այլն²⁰: Իրավունքի նորմերի հաստատումը նրա արծազանքն էր Երեսնամյա պատերազմի ընթացքում ռազմական գործողությունների վարման բարբարոսական մեթոդների նկատմամբ: Չավթիչները պարտավոր են հատուցել իրենց գործողություններով հասցված վնասը և պատիժ կրել: Արդար պատերազմները նույնպես պետք է խելամտորեն վարել, քանի որ չի կարելի մոռանալ, որ «պարերազմները մղվում են հանուն խաղաղության հաստատման», և որ խաղաղությունը հանդիսանում է «պարերազմի վերջնական նպատակը»²¹: Խաղաղության և ազատության հարաբերակցության հարցում նա նախընտրում է խաղաղությունը, քանզի «քաղաքացիական պարերազմն առավել վար է անօրինական կառավարումից»: Գրոտիուսի պատերազմի և խաղաղության ուսմունքի համար բնորոշ է խաղաղարարական պաթոսը:

Գրոտիուսը նշված սկզբունքները տարածում է նաև չեզոք պետությունների վրա: Այն պետությունները, որոնք պատերազմի հարցերում չեզոք դիրք են գրավում, պետք է ձեռնպահ մնան «համագործակցելու նրա հետ, ով անարդար պատերազմ է վարում,

¹⁹ Hugo Grotius, op. cit., book 1, chap. 1.

²⁰ Hugo Grotius, op. cit., book 3, chap 11-15.

²¹ Hugo Grotius, op. cit., book 1, chap. 1, § 1.

կամ նրա, ով խոչընդոտում է արդար պատերազմ վարողի շարժընթացը...: Իսկ կասկածելի դեպքերում անհրաժեշտ է պահպանել հավասարություն՝ պատերազմող երկու կողմերի հանդեպ»²²:

Ամփոփում

Գրոտիուսը կանգնած էր միջազգային իրավունքի՝ որպես ինքնուրույն գիտության ակունքներում: Նա միջազգային իրավունքում այսպես կոչված «գրոտիուսական» ուղղության հիմնադիրն է, ուղղություն, որը զուգակցում է բնական իրավունքի դպրոցի փիլիսոփայական գաղափարները միջազգային իրավական պրակտիկայի հետազոտության հետ²³: Այս հայեցակարգի համաձայն՝ միջազգային հարաբերությունները պետք է հիմնվեն բանականության, իրավունքի, հավասարության, համագործակցության սկզբունքների, միջազգային միասնական իրավակարգի վրա՝ ստեղծված ինքնիշխան պետությունների բարի կամքով:

Խաղաղ գոյակցության գաղափարը հիմնարար է, որի իրականացման համար անհրաժեշտ է, որ բոլոր պետությունները հետևեն որոշակի օրենքների: Որպեսզի որևէ պետություն դառնա համաշխարհային ընկերակցության լիիրավ անդամ, պետք է անհրաժեշտաբար իրականացնի մի շարք նախապայմաններ, օրինակ՝ կատարի ստանձնած պարտականություններն ու խոստումները, պահպանի հավասարության սկզբունքը:

Աշխարհի զարգացած երկրները պետք է դրսևորեն հարգանք միջազգային իրավունքի նկատմամբ: Նրանք պետք է հասկանան, որ 21-րդ դ. միջազգային համագործակցությունն ուժային կենտրոնների աշխարհի չէ, այլ միմյանց հարգող ժողովուրդների և մշակույթների: Անհրաժեշտ է նոր աշխարհաքաղաքական բարոյակա-նություն՝ հիմնված միջազգային իրավունքի վրա:

²² Hugo Grotius, op. cit., book 3, chap. 17, § III, 1.

²³ K. Akashi, Cornelius van Bynkershoek: His role in the history of international law, The Hague: Kluwer Law International, 1998, pp. 134-135.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Grotius Hugo**, *The Law of War and Peace*, Paris, 1625.
URL://<http://www.lonang.com/exlibris/grotius/http://www.constitution.org/gro/djbp.htm> (15.08.2014).
- Akashi K.**, *Cornelius van Bynkershoek: His role in the history of international law*, The Hague: Kluwer Law International, 1998.
- Asbach O. and Schröder P.**, *War, the State and International Law in Seventeenth Century Europe*, United Kingdom: Farnham, Ashgate Publishing Company, 2010.
- Borschberg P.**, Grotius, the Social Contract and Political Resistance: A study of the unpublished theses LVI, *International Law and Justice Working Paper (2006/7)*, National University of Singapore, pp. 39-49, 49-57.
- Portman R.**, *Legal Personality in International Law, Cambridge Studies in International and Comparative Law*, New York: Cambridge University Press, 2010.
- Remec P. P.**, *The Position of the Individual in International Law According to Grotius and Vattel*, The Hague: Martinus Nijhoff, 1960.

ՆԺԴԵՇ ՀՈՎԱՍԵՓՅԱՆ

ԱՄՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՅՐԵՐ

(Ժառանգություն, հեղափոխություն, պետականություն)

Մուտք

Ամերիկայի Միացյալ Նահանգների ստեղծման ժամանակահատվածի պատմաքաղաքագիտական սույն հակիրճ ակնարկում փորձել ենք ընդհանրական և մասնավոր դիտանկյուններով ներկայացնել այդ երկիրը հիմնադրած գործիչներին: Անհրաժեշտաբար ընդգծելով «հիմնադիր հայրեր» որակված մարդկանց գաղափարական ու քաղաքական տեսանկյունների ընկալումը՝ կանդիդատական հեղափոխության հանդեպ նրանց վերաբերմունքի հիմնահարցին: Ուսումնասիրության հաջորդ խնդրին է պատշաճում այն արժեքների ու ներուժի քննարկումը, որ ունեցել են նրանք, ավելին՝ ժառանգել անտիկ պատմաշրջանից՝ հատկապես հույներից ու հռոմեացիներից: Վերջիններից, ըստ էության, բխում է նաև պետական ինստիտուտների ու ավանդույթների ամրակայման գործընթացի ուսումնասիրությունը:

Նախևառաջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հետևյալ թյուրըմբռնմանը, ըստ որի՝ հիմնադիր հայրերը կայացրել են ԱՄՆ-ն փոխհամաձայնեցված ու նույնամիտ գործողություններով: Իրականում, պետական այրերի միջև գոյություն ունեին ոչ միայն լրջագույն տարաձայնություններ, հակասություններ, ընդհուպ հավակնությունների մրցավազք, այլև նույնիսկ անձնական թշնամանք: Ի վերջո, նորություն չէ, որ պետության հիմնադրության գործընթացն անկարող է չլուծելի բանավեճերի, անհամաձայնությունների, նույնիսկ բախումների արարներով¹: Իրականու-

¹ J. M. Estano, Friendship and Conflicts: The relationship of the U.S. founding fathers, *The International Student Journal*, Vol. 1, no. 10, 2006. URL:<http://www.studentpulse.com/articles/24/friendship-and-conflict-the-relationship-of-the-us-founding-fathers> (24.08.2014).

թյունը, արդ, փաստում է, որ պետության հիմնադրությունն այնքան էլ ներդաշնակ միջավայրում չի տեղի ունենում:

Վերջապես, պատահական չէ, որ պետական հաստատությունների հղացումից ու առարկայացումից հետո ԱՄՆ հիմնադիր հայրերից ոմանք (իրենց առավելագույնս դրսևորողները) միմյանց դեմ ակտիվ, համառ պայքար են սկսում, ինչն, ի դեպ, լիովին տրամաբանական է ու օրինաչափ: Այս հանգամանքը գալիս է փաստելու, որ պետության հիմնադրման ներդաշնակությունը գլխավորապես գտնվում է կոնյունկտուրային հարթության վրա՝ հանգելով «փոխհրաձգությունների», հակադրությունների և անգամ՝ թշնամանքի²: Այսուամենայնիվ, լիովին տրամաբանական է, որ իշխանության հասնելուն պես «հիմնադիրների» միջև պիտի պայքար սկսվի՝ հիմք դնելով քաղաքական ընդդիմության ինստիտուտին:

Հիմնադիր հայրերի ազատության ընկալումները բավականին տարբեր են եղել ժամանակակից համանման ըմբռնումներից: Նրանք, կարելի է ասել, բնավ ազատականներ չէին: Նրանց ազատության ընկալումը տեղավորվում է երկու հոսանքում.

Առաջին. քաղաքակիրթ հանրապետական ավանդույթներ, երբ քաղաքացիները հանդես են գալիս որպես դասական վերածննդի դարաշրջանի ժառանգորդներ, ինչն ընդգծում է նրանց պատասխանատվությունը համագործակցության հանդեպ և խրախուսում սեփական բարեկեցությունից հանրային ծառայությունը գերադասելու պարագան:

Երկրորդ. բնական իրավունքների ավանդույթներ՝ Ուիլյամ Օքամից և Ջոն Լոկից ազդված, որոնք ընդգծում են կառավարության պարտականությունն անհատի, հատկապես նրան ի վերուստ տրված ազատության, սեփականության, երջանկության իրավունքները պաշտպանելու հարցում:

Ընդհանուր առմամբ՝ հանրապետական ու լիբերալ հոսանքները ճանաչում էին այն փաստը, որ ազատությունն ինքնին պարառում է մարդու ու պետության իրավունքներն ու պարտականությունները: Ավելին՝ ազատությունը պետք է վերահսկվի անվտան-

² R. Chernow, *The Feuding Fathers*, 2010.

URL:<http://online.wsj.com/news/articles/SB1000151892> (24.08.2014).

գության երաշխավորությամբ, հակառակ դեպքում՝ կարող է վերածվել անարխիայի³, ինչպես սովորեցնում էին Պոլիբիոսը, Սալուստիոսը, Լիվիոսը և Տակիտոսը. սա կարելի է համարել որպես «հիմնադիրների»՝ հոռմեական փորձին քաջածանոթության առաջին դրսևորումներից, ավելին՝ փաստերից մեկը:

1. Կողմնորոշումային սկզբունքայնություն

Հարկ է նաև անդրադառնալ «հիմնադիրների» աշխարհայացքային կերպին՝ արդյո՞ք նրանք պահպանողականներ էին, թե՞ նորարարական հանրապետականներ: Ելնելով այն հանգամանքից, որ պատմագիտության մեջ «հիմնադիր հայրերի» պատվավոր քառյակը ներկայացնում են Վաշինգտոնը, Համիլտոնը, Ջեֆերսոնն ու Ֆրանկլինը, փորձենք վերոնշյալ պարագան կիրառել այս գործիչների նկատմամբ:

Համիլտոնն իրականում իր ժամանակի ամենահեղափոխական մտածողներից՝ Ադամ Սմիթի հետևորդներից էր, ում «Ազգերի հարստություն»⁴ աշխատությունն այս գործիչին օժանդակեց հաստատելու անընդհատ հեղափոխության գաղափարը, որը կարելի է բնութագրել որպես ստեղծարար ավերումի նախադեպ: Ավելին, Համիլտոնը հստակորեն դեմ էր արտահայտվում ստրկությանը: Նրան է պատկանում Սահմանադիր ժողով հրավիրելու գաղափարը, որը պիտի չեղյալ հայտարարեր դելեգատներին ուղղված Կոնֆեդերացիոն կոնգրեսի հանձնարարականները, մի կողմ նետեր ամերիկյան Առաջին սահմանադրությունը՝ հատկապես կապված կոնֆեդերացիայի դիվեմայի հետ ու երկնել նորը⁵: Ի վերջո, Համիլտոնը ձգտում էր ուժեղացնել կենտրոնական իշխանությունը և թուլացնել նահանգների դերակատարությունը:

Հետաքրքիր է, որ շատերը Վաշինգտոնի կերպարում տեսնում են պահպանողականության տարրեր: Այսուհանդերձ նրա անձնա-

³ R. Ferguson, *Alexander Hamilton, James Madison, John Jay: The Federalist*. New York: Barnes and Noble Classics, 2006, no. 17.

⁴ A. Smith, *Wealth of Nations*, URL:<http://www.econlib.org/library/Smith/smWN.html> (24.08.14).

⁵ R. Ferguson, op. cit, no 15.

կան հատկանիշներն ու նախապատվությունները հուշում են նրա դասական հանրապետականության մասին: Բենջամին Ֆրանկլինի դեպքը լիովին այլ է՝ հաշվի առնելով նրա «փառքը» ֆրանսիական սալոններում: Հատկանշական է, որ նա ևս հանգեց ստրկության վերացման անհրաժեշտությանը: Այս դեպքում պահպանողականության մասին խոսելն անիմաստ է:

Թոմաս Ջեֆերսոնի հետ կապված հարկ է նկատել, որ նա հաճախ որակվում է որպես հետպատերազմյան պահպանողականության առաջամարտիկ՝ հատկապես Ռասել Քըրքի կողմից⁶: Ջեֆերսոնն ավանդապաշտների կողմից հաճախ է հարվածներ ստացել՝ կապված իր՝ Ֆրանսիական հեղափոխության հանդեպ ունեցած ջերմ վերաբերմունքի համար, սակայն գործնականում նրա գաղափարաբանությունը նվազ կշիռ իսկ չունի պահպանողական համարվելու համար:

Հետաքրքիր է նաև Ջոն Դիկինսոնի կերպարը, ով, հույս տաժելով թագի հետ համաձայնության հասնելու հարցում, ձգտում էր անմասն մնալ Լոնդոնի հետ կամուրջներն այրելու քաղաքականությունից: Նա նույնիսկ հրաժարվել է ստորագրել Անկախության հռչակագիրը, թեպետ բացառիկ կամավորությամբ էր մասնակցել պատերազմին: Ինչ վերաբերում է Ջոն Ադամսին, ապա նրա հայացքները, գաղափարաբանությունը և մեկնաբանությունները, որոնց կանդաղառնանք ստորև, վստահաբար չեն ելնում պահպանողականության դիրքերից:

Ընդհանրացնելով կարելի է փաստել, որ «հիմնադիր հայրերի» մոտ հստակ սահմանազատում ու կողմնորոշումային սկզբունքայնություն գոյություն չի ունեցել՝ լինել պահպանողական, թե՛ ազատական: Յուրաքանչյուրի մոտ էլ, ըստ էության, տեսնում ենք զանազան տատանումներ ու հապաղումներ: Հավելենք, որ ուսումնասիրողներից ոմանք այն կարծիքին են, որ փոխադարձ լարվածությունն ու հակասությունները պակաս խթան չհանդիսացան

⁶ R. A. Kirk, *Jefferson and the Faithless*,

URL:<http://stormfields.files.wordpress.com/2013/08/rak-jefferson-1941-copy.pdf>, (24.08.2014).

«հիմնադիրների»՝ այս երկրի պատմության մեջ պետական գործիչների լավագույն սերունդը դառնալու գործում:

2. Հեղափոխություն

Անդրադառնալով հեղափոխության ընկալման խնդրին՝ առանձնացնենք Ադամսի հայեցակետը⁷, ըստ որի՝ հեղափոխության սկիզբ պետք է համարել ոչ թե Լեքսինգտոնը⁸ և Կոնկորդը⁹, այլ դրանց նախորդած շուրջ 14 տարիների համահավաք գործընթացները: Նրա համոզմամբ՝ հեղափոխությունը տեղի ունեցավ ոչ այնքան ռազմի դաշտում, որքան մարդկանց մտքում և սրտերում: Ինչպես Փիթեր Մենքալն է նկատում, ամերիկացիների զգացմունքների փոփոխությունը կառավարության հանդեպ շեփոհահարեց իրական հեղափոխությունը: Որպես դրա արդյունք՝ ամերիկացիները դարձան հանրապետության քաղաքացիներ և ոչ թե միապետության հպատակներ: Մարդիկ վերագտան ինքնուրույնությունը և ստեղծեցին պետություն ու ազգային կառավարություն՝ սեփական կարիքները բավարարելու նպատակամղումով: Այսպիսի հեղափոխությունը նախանշեց քաղաքականության բնույթն Արևմտյան աշխարհում:

Ամերիկյան հեղափոխությունը հաճախ դիտարկվում է որպես ինտելեկտուալ շարժում: Հատկանշական է, որ ամերիկյան հասարակությունն իրականում բավականին լավ էր հասկանում, որ ինքը հավանաբար շատ ավելի ազատ է, շատ ավելի ինքնուրույն, քան աշխարհի որևէ վայրում տվյալ ժամանակաշրջանում ապրող որևիցե մարդկային համակեցություն: Դենիել Լեոնարդը նկատում է, որ Ամերիկյան հեղափոխությանը բնորոշ էր շատ ավելի ապստամբական հոեոտրիական¹⁰, իսկ Փիթեր Օլիվերի համոզ-

⁷ D. McCullough, *John Adams*, Massachusetts, 2011, p. 6.

⁸ *Battle of Lexington Green*, 1775, Eyewitness to History, URL:<http://www.eyewitnesstohistory.com/lexington.htm>, (24.08.2014).

⁹ *Battle of Concord*,

URL:<http://www.u-s-history.com/pages/h655.html> (24.08.2014).

¹⁰ G. S. Wood, *The Idea of America, Reflections on the Birth of the United States*, New York: The Penguin Press, 2011, Part I, Chapter one, p. 26.

մամբ՝ այն «անպատճառ ու անբնական ապստամբությունն էր¹¹»: Նկատելի է, որ Թոմաս Փեյնն ու Ջոն Ադամսը ի վերջո հանգեցին այն եզրակացության, որ իրենց իրականացրած հեղափոխությունը, ըստ էության, տեղի էր ունեցել հետևյալ բանաձևով՝ «փոփոխություններ մարդկանց հոգում և ուղեղում»: Արդ պատահական չէ, որ ամերիկյան հաջորդ սերունդները, լինելով ազատության ժառանգներ, նկրտումներ ցուցաբերեցին ոչ թե վերաստեղծել, այլ պահպանել ազատությունը¹²:

Իմպերիալիստական ճգնաժամի տարիներին ամերիկյան առաջնորդները հանդես էին գալիս ապստամբական դրոշի ներքո՝ շեշտելով, որ ապստամբությունն իրականացնում են ոչ թե անգլիական սահմանադրության դեմ, այլ այդ սահմանադրության սկզբունքների հիման վրա: Ավելին, նրանք հանդես էին գալիս Վիգերի կուսակցության ներկայացուցչի պատմուճանով և պայքարում անգլիական թագի կողմնակից Թորիների դեմ: Ամերիկյան գաղափարները պարզաբանում էին, որ Ամերիկայում մարդիկ վարում են պարզ կենցաղ՝ ի հեճուկս անգլիական բարդ ու սոփեստացված կենցաղավարության¹³:

3. Նեոհռոմեական կերպավորում

Ամերիկյան հեղափոխությունը (նույնն է, թե անկախության համար մղված հակաբրիտանական պատերազմը) հաճախ որակվում է որպես գաղութարարների պատերազմ, ինչը կարծես ի սկզբանե նպաստեց նրան՝ վերաճելու նեոհռոմեական հեղափոխության: Ամերիկացիները, ըստ էության, շեշտադրեցին և վերածնեցին նեոհռոմեական կոնցեպտները (ընդհանուր հասկացությունները)՝ խառը կառավարության, ազատության և օրենքի իշխանությունը: Ըստ էության, փորձ էր արվում հստակորեն

¹¹ G. S. Wood, op. cit, pp. 26-27.

¹² G. S. Wood, op. cit, pp. 26-28.

¹³ G. S. Wood, *The American Revolution*, New York: Modern library, a Devision Random House, Inc., 2002, Chapter 3.

առանձնացնել հունական և հռոմեական ժողովրդավարությունները:

Ջոն Ադամսը՝ ամենակտիվ քաղաքական գիտնականներից և սահմանադրական տեսաբաններից մեկը, Ամերիկյան հեղափոխության ժամանակ շեշտում էր այն «գործերը և պատճառները, որ հարուցիչ դարձան ամերիկյան համակարգերի համար»¹⁴: Հատկանշական է, որ Ադամսի նշած հեղինակների շարքում իրենց կարևորագույն տեղն ունեին բրիտանացիները, ինչպես օրինակ՝ Ջոն Լոկը, Թոմաս Գոբդոնը և այլք: Բայց և այնպես ուշագրավ էին հռոմեական դասականները, ինչպես՝ Կոննելիուս Տակիտուսը և Մարկուս Տուվիուս Կիկերոնը, ում Ադամսը հաճախ և մանրամասնորեն էր մեջքերում հանրապետական կառավարության հավասարակշռության և վերահսկողության խնդիրները քննելիս: Ադամսը մեծապես արժևորում էր Պոլիբիուսի գաղափարաբանությունը՝ Հռոմեական հանրապետականության իդեալականության կապակցությամբ¹⁵: Ադամսը ընդգծում է. «Քանի որ աշխարհի դարերը չեն երկնել այնպիսի մեծ պետական գործչի և փոխստփայի, ինչպիսին Կիկերոնն է, նրա հեղինակությունը մնալու է խիստ բարձր»:

Ադամսը և ամերիկյան հեղափոխության մյուս դերակատարները իրենց տեսնում էին Կիկերոնի և բրիտանական վիգերի հետ միասին՝ ազատության երկուհազարամյա հայեցակարգի համապատկերում: Ադամսը հետևելով Արիստոտելին և Լիվիուսին՝ ազատության ավանդույթը օրենքների, և ոչ թե մարդու կառավարության հետ միասին հակադրում էր տիրանիային և կոռուպցիային: Ամերիկյան հեղափոխականներն ընտրեցին խառը և հավասարակշռված «ազատության սահմանադրությունը», որ ոգեկոչվել էր Պոլիբիուսի և Կիկերոնի կողմից որպես բացարձակ, առավելապես ինովացված երաշխիք ազատությունների համար՝ ընտրու-

¹⁴ J. Adams, *Defence of the Constitutions of Government of the United States of America. 1787-1788*,

URL:http://www.constitution.org/jadams/jai_00.htm (24.08.2014).

¹⁵ Polybius, *The Histories, The Constitution of the Mid-Republic*, URL:<http://thelatinlibrary.com/law/polybius.html> (24.08.2014).

թյունների և քաղաքական ներկայացուցչականության համակարգերով՝ նախընտրելով անուղղակի ժողովրդավարություն: Նման գործողությամբ ամերիկացիները սահմանազատեցին հունական խառնակ դեմոկրատիան և հարաբերականորեն կայուն Հռոմը, թեպետ եղան նահանգներ, որ ներքին հարաբերությունների տիրույթում առաջին հորիզոնականում էին դնում անհատի բացարձակ ազատության կոնցեպտը՝ հարաբերականորեն ոգեշնչված հույներից¹⁶:

Ամերիկացիները սիրում էին իրենց վերաբերվել որպես հռոմեական գործիչների, կրել նրանց անունները՝ որպես պատվանուն և այդ էլ նրա համար, որ ընդգծեին իրենց դժվարությունները: Նման ձևով շեշտվում էր նրանց գործի կարևորությունը: Փորձ էր արվում հավասարության մեջ դիտարկել վերոհիշյալ հռոմեացիներին ու ինքզինքը՝ արդարության և կայունության երաշխավորության ու ապահովության համատեքստում: Նշանակալի է երկու մակարդակ ունեցող այս կոնցեպտը. նախ՝ պաշտպանել օրենքը, ազատությունն ու սահմանադրության հավասարակշռությունը միապետական նկրտումների ներխուժումների նկատմամբ, ապա և գերապատվել ժողովրդավարությունը:

Ամերիկացիները ձեռնամուխ եղան նոր ինստիտուտներ հիմնելու քաղաքականությանը՝ հիմնարկեք ստեղծելով իրենց անկախ կառավարության համար: Թոմաս Փայնը մեղադրում էր թագավորական իշխանությանն ու Անգլիային այն բանի համար, որ միապետական կարգը թունավորում է պետությունը, իսկ թագը՝ կլանում հասարակությանը: Այդօրինակ կառավարմամբ երկրներում թագավորն է օրենքը, մինչդեռ ազատ երկրներում՝ օրենքը պիտի լինի թագավոր: ԱՄՆ Կոնգրեսը 1776 թ. մայիսի 10-ին ընդունեց Տեղական կառավարման ֆորմացիայի ռեզոլյուցիան (կազմավորման որոշումը), որով գաղութները պետք է հաստատեին նոր կառավարություններ՝ վերացնելով թագի ներքո գտնվող իշխանա-

կան գործառույթներ իրականացնող մարմինները, և բոլոր ուժային կառավարումները ենթարկեցնեին ժողովրդի իշխանությանը: Հռոմեական *imperium populi*-ի¹⁷ տեղափոխվեց ԱՄՆ, երբ նորակախ գաղութները հաստատեցին իրենց նոր հանրապետական սահմանադրությունները՝ առանց թագավորի իշխանության:

1776 թ. հուլիսի 4-ին ընդունված Անկախության դեկլարացիայի արդյունքում ամերիկացիները նպատակադրվեցին ստեղծել կառավարման նոր մոդելներ, որոնք կփոխարինեին բրիտանական տապալված հաստատություններին: **Հռոմը Միացյալ Նահանգներ ներմուծեց իր անունը՝ հանրապետությունը, նպատակը՝ ազատությունը և տեխնիկան՝ զսպումների և հավասարակշռության մեխանիզմը:** Ջոն Ադամսը եղավ այս համակարգի ամրապնդման ջատագովն ամերիկյան նոր սահմանադրության շրջանակներում¹⁸: Ադամսը պնդում էր, որ «չկա ավելի լավ կառավարություն, քան հանրապետությունը»: Նա հետևում է Լիվիուսին՝ գնահատելով հանրապետությունը որպես «ոչ թե մարդկանց, այլ օրենքների կայսրություն», ապա պնդելով, որ կառավարման ցանկացած կերպ, որ երաշխավորում է օրենքները, կլինի լավագույն հանրապետությունը: Ադամսն առաջարկում էր երկհարթակ կառավարություն՝ ժողովրդական ժողով, ինչպես Հռոմում, որ վերահսկվում է երկրորդ օրենսդիր հարթակի կողմից, և ընտրված գործադիր իշխանություն¹⁹: Ավելացնենք, որ Ջոն Ադամսը և

¹⁶ R. Kirk, What did Americans Inherit from the Ancients, *The Intercollegiate Review*, Spring 1989, pp. 43-48.

¹⁷ A. Lintott, What was the "Imperium Romanum", *Greece & Rome*, Second series, Vol. 28, No. 1, Cambridge University Press, Jubilee year (April 1981), pp. 53-67. URL: <http://www.jstor.org/stable/642483> (24.08.14).

¹⁸ Տե՛ս Ռիչարդ Հենրի Լին ուղղված նամակը՝ հրապարակված 1776 թ.: J. Adams, *Thoughts on Government. The Founders' Constitution*, Vol. 1, Chapter 4, Document 5, The University of Chicago Press, 1776. URL: <http://press-pubs.uchicago.edu/founders/documents/v1ch4s5.html> (24.08.2014).

¹⁹ Ի դեպ, Լին և վիրջինիացիներն ընդունեցին Ադամսի խորհուրդը և իրենց նահանգում ստեղծեցին նոր սահմանադրություն՝ ներկայացուցչների պալատով, սենատով, տարեկան ընտրվող գործադիր կառավարչով և անկախ դատավորներով: Վիրջինիա նահանգն ընդունեց նաև «Իրա-

Մասաչուսեթսի Սահմանադրության հեղինակները հիշեցնում էին քաղաքացիներին, որ «պատվարժանությունը, արդարությունը, զսպվածությունը, լրջությունը, արտադրությունը և տնտեսվարությունը խիստ կարևոր են պաշտպանելու ազատության առավելությունները և պահպանելու ազատ կառավարությունը»:

Քանի որ նշյալ փուլի կարևոր առանցքներից էին նաև ռազմական գործողությունները, ուստի հարկ ենք համարում այս առթիվ նկատել, որ սույն ոլորտում կիրառվեցին հռոմեական ավանդույթներն ու մոդելները՝ հանձին Ջորջ Վաշինգտոնի և նրա զինվորների²⁰, որ վերցրին հռոմեական պատկերը՝ պաշտպանելու իրենց արժանապատվությունը: Երբ 1777-1778 թթ. ձմռանը Վաշինգտոնը և նրա մի քանի զինվորները սառչում էին Ֆորջ հովտում, Վաշինգտոնը զինվորների առաջ ներկայացրել էր Ուտիկայում Կատոնի կյանքի վերջին րոպեներն ու մահը՝ ներկայացման տեսքով ասոցացնելով իրենց ու Հռոմեական հանրապետական կարգի պաշտպանների պատասխանատվությունը: Վաշինգտոնն ու իր զինվորականները կերպավորել էին հռոմեական զորահրամանատար Կինկինանտուսին, ով թողել էր իր այգին և լծվել հանրապետության փրկության գործին, ապա իր կողմից փրկված քաղաքացիների երախտամոռության հանգույն կրկին վերադարձել հին գործիքներին: Վաշինգտոնը, ի դեպ, այդպես էլ վարվեց և պատերազմի հաղթական ավարտից հետո վերադարձավ իր ֆերման՝ կոչ անելով զինակիցներին, որպես “Society of the Cincinnati”-ների²¹, նույն կերպ վարվել: Բանաձևը հետևյալն էր՝ հրաժարվել ամեն ինչից հայրենիքին ծառայելու համար²², ինչը խոսում է նրանց հանրապետական իդեալների մասին:

վունքների մասին բիլը», որով հռչակվում էր՝ «ամբողջ իշխանությունը ... ծագում է ժողովրդից»:

²⁰ Վաշինգտոնն անչափ հարգված էր զինվորականության շրջանում, ինչն ինքնին հնարավորություն էր ստեղծում բանակն ավելի կոտ պահելու ու կարգավանոն հաստատելու դրա շրջանակում: St’u D. McCullogh, 1776, New York: Simon & Schuster, 2005, p. 43.

²¹ Society of Cincinnati.

URL: <http://www.soetyofthecincinnati.org/about/history>, (24.08.14).

²² Omnia reliquit servare rempublicam.

4. Հաստատութենականացում

1781 թ. Յորքթաունի մոտ բրիտանացիների պարտությամբ ավարտվեց անկախության համար մղվող Ամերիկյան պատերազմը, իսկ 1783 թ. Փարիզի համաձայնագրով աշխարհում սկիզբ դրվեց նոր ազգության: «Հիմնադիրները» ելնելով պատմության առանձին նախադեպերից, ինչպես, օրինակ, Հռոմի ու Կարթագենի հանրապետականությունը, միջնադարյան Վենետիկի ու Նիդերլանդների փորձը, Կրոմվելի հանրապետականության էքսպերիմենտը՝ վճռեցին Ամերիկյան հայտարարել աշխարհի առաջին սահմանադրական հանրապետությունը: Ջեյմս Օտիսը, հեղափոխության առաջին հզոր հռետորը, գաղութների համար հաստատել էր երկու կարևորագույն նախահեղափոխական դասական իդեալներ՝ ուշադրություն հրավիրելով հունական գաղութային քաղաքականության և հռոմեական բնական օրենքի դոկտրինաների վրա²³: Հույներին նա ներկայացնում էր որպես գաղութների ամբողջական հավասարությունն ու անկախությունը ճանաչողների, իսկ հռոմեացիներին զնահատում այն գաղափարի համար, որ «ճշմարիտ օրենքը բնության հետ ներդաշնակության գլխավոր պատճառն է և զսպումներն ու հավասարակշռությունը երաշխավորող գործնականում ամենաճիշտ պայմանը»: Հունական քաղաքականությունը ցույց էր տալիս ամերիկացիներին, թե ինչպես է Մեծ Բրիտանիան պարտավոր հարգել իր գաղութները, իսկ հռոմեական տեսլականը սովորեցնում էր կառավարական իշխանության սահմանափակում: Օտիսը նշում էր, որ բրիտանական հավասարակշիռ սահմանադրությունը բրիտանացիներին տալիս էր ամենալավ հնարավորությունը՝ ազնիվ դերակատարություն սկսած Հուլիոս Կեսարից, բայց բրիտանացի քաղաքական գործիչները Կեսարի նման խաթարել են հավասարակշռության համակարգն ու հայեցակարգը՝ ավերելով սեփական պետությունը²⁴:

²³ J. Otis, *Rights of the British Colonies Asserted and Proved*, 1764.

URL: http://www.constitution.org/bcp/otis_rbcap.htm (24.08.2014).

²⁴ Ուշագրավ է Օտիսի կարծիքը հռոմեական երևելիներից Կեսարի հանդեպ, ում նա, կարելի է ենթադրել, արհամարիում էր՝ համարելով Հռոմի փառքի և հզորության կործանող:

Վաշինգտոնն ու իր կողմնակիցները օգնեցին ապահովելու Միացյալ Նահանգների ֆեդերալ և ըստ այդմ՝ հանրապետական Սահմանադրությունը: Անկախության համար պայքարը հաղթեց՝ ի հեճուկս 13 սուվերեն նահանգների ստեղծած «Համագործակցության» (Commonwealth), որի վերաբերությամբ նկատելի էր դրա թույլ և անկամ դիվանագիտական առաջնորդությունը²⁵: Այս հոսքի ջատագովները մատնանշում էին ֆեդերալ հաստատությունների անհրաժեշտությունը՝ շեշտելով հին տեղական նահանգային օրենսդիր գործիչների համեմատությամբ ֆեդերալ ինստիտուտի կարևորությունը: Քանի որ զինվորները մնում էին չվճարված, և նահանգները ձախողվեցին իրենց ֆինանսական պարտավորությունները կատարելիս, ուժեղ ֆեդերալ կառավարության ստեղծումն ավելի արդիական դարձավ: Այս համատեքստում Ջոն Ադամսը պնդում էր, որ եթե ֆեդերալ կառավարությունը պիտի ավելի մեծ իշխանություն ունենա, ապա պետք է օժտված լինի ամբողջական հանրապետական կառավարչաեղանակով՝ Սենատով, ընտրովի գործադիր իշխանությամբ, օրենքի կառավարմամբ և ժողովրդական ինքնուրույնության հիմնարար բազիսով՝ ինչպես ենթադրում էր հանրապետական Հոմերի սահմանադրությունը:

Ֆեդերալիստները՝ հանձինս Համիլտոնի²⁶, պնդում էին կոմերցիոն հանրապետության ստեղծման անհրաժեշտությունը, իսկ հակաֆեդերալիստները՝ հանձինս Թոմաս Ջեֆֆերսոնի, գերադասում էին խոշոր հողատիրական բնույթի գյուղատնտեսական հանրապետությունը²⁷: Հատկանշական է, որ Ջոն Ադամսը հանդես էր գալիս որպես ֆեդերալիստների կուսակցության ներկայացուցիչ,

²⁵ Նահանգային հետագա բաժանումների ու սահմանային հստակեցումների մանրամասները տե՛ս M. Stein, *How the States Got Their Shapes: The people behind the border lines*, Smithsonian Books, Washington DC, Cover Illustration, 2011.

²⁶ R. Ferguson, *op. cit.*, No 30.

²⁷ T. Jefferson, *Notes on the State of Virginia*, <https://archive.org/details/notesonstateofvi01jeff> (24.08.2014).

ով ամերիկյան անկախության նվաճումը դարձրեց իր կյանքի ծրագիրը²⁸: Ժողովրդավարության արժեքների անկման վախից նա ստեղծեց իր հեղափոխական նկրտումները և դարձավ Համիլտոնի գաղափարաբանության աջակիցը: Նա առավելապես մտածող էր, քան կուսակցական գործիչ, և իրականում ավելի հաջողված տեսաբան, քան քաղաքական առաջնորդ, ով ի վերջո հակվեց Համիլտոնի՝ ուժեղ կառավարության ու սեփականության պահպանության թեզերի կողմը:

Անդրադառնալով քաղաքական ինստիտուտներից ընդդիմության ձևավորման խնդրին՝ պետք է շեշտենք Թոմաս Ջեֆֆերսոնի դերն ու նշանակությունը այս հարցում: Նա Ամերիկայի պատմության մեջ առաջին գործիչն էր, որ հասկացավ կուսակցությունների էքզիստենցիալ նշանակությունը²⁹: Նա զգաց կուսակցական աշխատանքների կարևորությունը՝ հատկապես պայմանավորված այն հանգամանքով, որ կազմակերպված ու ամուր ընդդիմությունը երկրի զարգացման ու հզորացման պարտադիր պայման է կառավարության հավանական այլընտրանքի համատեքստում³⁰:

Միացյալ Նահանգների պատմության մեջ, այդուհանդերձ, ամենամեծ հոշակն ունի Ջորջ Վաշինգտոնը: Արդ, անգամ պատահական չէ, որ մայրաքաղաքը նրանք կոչեցին առաջին նախագահի պատվին: Առաջին նախագահի շուրջ հյուսելով մեծ զորավարի առասպելը՝ ամերիկացիներն ի սկզբանե գնահատել են նրա՝ իշխանությանը չկառչելու քաջությունը: Վաշինգտոնի մեծագույն հոշակվելու գլխավոր կովանը նրա՝ իշխանությունից հեռանալու

²⁸ J. J. Ellis, *Founding Fathers: The revolutionary generation*, First Vintage edition, New York: a Division of Random House Inc, 2000, p. 135.

²⁹ Thomas Jefferson on Politics and Government: Political parties, URL: <http://famguardian.org/Subjects/Politics/thomasjefferson/jeff0800.htm> (24.08.2014).

³⁰ St'us Thomas Jefferson on Politics and Government: Difference of Opinion, URL: <http://famguardian.org/Subjects/Politics/thomasjefferson/jeff0750.htm> (24.08.2014).

կամքն էր³¹: Մեծ Բրիտանիայի Ջորջ 3-րդ արքան արձանագրում էր, որ Վաշինգտոնի՝ իշխանությունից հեռանալու կարողությունը նրան դարձրեց աշխարհում ամենամեծ մարդը³²: Արձանագրվել է, որ ԱՄՆ առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնը ստեղծեց նախադեպ, ըստ որի՝ նախագահները պաշտոնավարելու հնարավորություն ունեին ոչ ավելի, քան երկու ժամկետ՝ 4-ական տարով: Դա խախտվել է միայն Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի օրոք, երբ վերջինս երկու անգամից ավելի անընդմեջ ընտրվեց նախագահի պաշտոնում³³: Անշուշտ, անուրանալի է Վաշինգտոնի կողմից ամերիկյան արտաքին քաղաքականության երկարամյա ավանդույթի ձևավորումը՝ նկատի ունենալով 1793 թ. հայտարարությունը՝ կապված պետական չեզոքության վարքագծի հետ. «Ամերիկայի Միացյալ Նահանգների դերակատարությունն ամբողջանում է հակամարտող ուժերի միջև ընկերային ու անկողմնակալ հարաբերություններ պահպանելու կարողության մեջ³⁴»: Ըստ էության, ԱՄՆ-ն աշխարհի միակ պետությունն է, որ 150 և ավելի տարիներ պետության բարձրագույն ղեկավար է ընտրել ավանդույթի ուժով՝ հզորագույն կամային որակի փաստարկմամբ:

³¹ Հատկանշական է, որ հատկապես արևմտյան քաղաքակրթությունում ժողովրդավարության զարգացման ընթացքում՝ մասնավորապես 20-րդ դարից ի վեր, կամավոր հրաժարականներն ընդհանուր օրինաչափության վերածվեցին: Վաշինգտոնի պարագան ավելի է կարևորվում՝ նախևառաջ հաշվի առնելով այն, որ Վաշինգտոնը կամովին հրաժարականի է դիմել 18-րդ դարում՝ ի հեճուկս պաշտոնավարումը շարունակելու ամենատեսակ հորդորների ու խնդրանքների:

³² D. Boaz, *The Man Who Would Not Be King*, 2006, URL:<http://www.cato.org/publications/commentary/man-who-would-not-be-king> (24.08.2014).

³³ F. D. Roosevelt, URL:<http://www.whitehouse.gov/about/presidents/franklinroosevelt> (24.08.2014).

³⁴ W. S. Churchill, *The Age of Revolution*, Barnes & Noble, Inc., Book 3, Chapter 23, 2005, p. 242.

Ամփոփում

Դասական շրջանի բազում ազդեցություններից Ամերիկայի հիմնադրման վրա կենտրոնական եղավ Հռոմի քաղաքական պատմությունը, քանի որ Ամերիկյան հեղափոխությունը բնույթով քաղաքական էր: Այն գուցեև չլիներ այնպիսին, ինչպիսին եղավ դասական շրջանի ազդեցությամբ, կամ էլ գուցե հազիվ թե կարողանար նույնական լինել այնքան, որքան կարողացավ՝ պայմանավորված այս վերջին հանգամանքով: Հեղափոխության նշանակալի հաղթանակով ֆեդերալ սահմանադրությունը Ամերիկյան Հանրապետությունը պարտեց իր հնագույն, բայց միաժամանակ որակյալ, արդյունավետ և անընդհատ հարմարեցվող մոդելներով: Ըստ էության, հետագա հեղափոխությունները դատապարտված էին հայացք ձգել Ամերիկյան և Ֆրանսիական հեղափոխություններին՝ քաղաքական փորձառություն ձեռք բերելու նպատակադրությամբ այնպես, ինչպես ամերիկացիներն արեցին իրենց դարաշրջանում՝ ի դեմս Հռոմի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Polybius, *The Histories: The constitution of the mid-republic*. URL:<http://thelatinlibrary.com/law/polybius.html> (24.08.2014).

Adams John, *Defence of the Constitutions of Government of the United States of America. 1787-1788*.

URL:http://www.constitution.org/jadams/ja1_00.htm, (24.08.2014).

Adams John, *Thoughts on Government, The Founders' Constitution*, Vol. 1, Chapter 4, Document 5, The University of Chicago Press, 1776.

URL:<http://presspubs.uchicago.edu/founders/documents/v1ch4s5.html> (24.08.2014).

- Smith Adam**, *Wealth of Nations*.
URL:<http://www.econlib.org/library/Smith/smWN.html>
(24.08.14).
- Jefferson Thomas**, *Notes on the State of Virginia*.
URL:<https://archive.org/details/notesonstateofvi01jeff>,
(24.08.2014).
- Thomas Jefferson on Politics & Government: Difference of opinion*,
URL:<http://famguardian.org/Subjects/Politics/thomasjefferson/jeff0750.htm>, (24.08.2014).
- Thomas Jefferson on politics and government: Political parties.
URL:<http://famguardian.org/Subjects/Politics/thomasjefferson/jeff0800.htm> (24.08.2014).
- Churchill Winston S.**, *The Age of Revolution*, Barnes & Noble Inc., 2005.
- Battle of Concord*.
URL:<http://www.u-s-history.com/pages/h655.html> (24.08.2014).
- Battle of Lexington Green, 1775*.
URL:<http://www.eyewitnesstohistory.com/lexington.htm>,
(24.08.2014).
- Boaz D.**, *The Man Who Would Not Be King*, 2006.
URL:<http://www.cato.org/publications/commentary/man-who-would-not-be-king>, (24.08.2014).
- Chernow R.**, *The Feuding Fathers*, 2010.
URL:<http://online.wsj.com/news/articles/SB1092> (24.08.2014).
- Ellis Joseph J.**, *Founding Fathers: The revolutionary generation*, First Vintage edition, books New York a division of random house inc, 2000.
- Estano J. M.**, Friendship and Conflicts: The relationship of the U.S. Founding fathers, *The International Student Journal*, Vol. 1, No. 10, 2006.
URL:<http://www.studentpulse.com/articles/24/friendship-and-conflict-the-relationship-of-the-us-founding-fathers>,
(24.08.2014).

- Ferguson Robert A.**, *Alexandr Hamilton, James Madison, John Jay: The Federalist*. New York, Barnes and Noble Classics, 2006.
- Jefferson and the Faithless*.
URL:<http://stormfields.files.wordpress.com/2013/08/rak-jefferson-1941-copy.pdf> (24.08.2014).
- Lintott A.**, What was the "Imperium romanum", *Greece & Rome*, Second series, Vol. 28, No. 1, Cambridge University Press, Jubilee year (Apr., 1981,), pp. 53-67.
URL:<http://www.jstor.org/stable/642483> (24.08.14).
- McCullogh D.**, *1776*, New York: Simon & Schuster, 2005.
- McCullough D.**, *John Adams*, Massachusetts, 2011.
- Otis J.**, *Rights of the British Colonies Asserted and Proved*, 1764.
URL:http://www.constitution.org/bcp/otis_rbcap.htm
(24.08.2014).
- Russel Kirk**, What Did Americans Inherit from the Ancients, *The Intercollegiate Review*, Spring 1989, pp. 43-48.
- Stein Mark**, *How the States Got Their Shapes: The people behind the border lines*, Smithsonian Books, Washington DC, Cover Illustration, 2011.
- Wood Gordon S.**, *The American Revolution*, New York: Modern library, a division Random House, Inc., 2002.
- Wood Gordon S.**, *The Idea of America*, New York: The Penguin Press, 2011.

ԱՐԵՎ ՔՈՉԻՆՅԱՆ

ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏ ԵՎ ՕԳՈՍՏՈՍ ՕԿՏԱՎԻԱՆՈՒՍ

Մուտք

Անհատը պատմության հղովույթներում. անսպառ թեմա, որն արդիական է անգամ մեր օրերում: Անհատականության (առաջնորդի) ու հասարակության փոխհարաբերությունների վերլուծությունը թույլ է տալիս պատասխանել հասարակական կառավարումը, առաջնորդությունը, քաղաքական համակարգերի և պատմության անցումային շրջաններն ուսումնասիրողների շատ հարցերին: Այս տեսանկյունից ուշագրավ է պատմության մեջ հսկայական դերակատարություն ունեցած երկու անհատականությունների՝ Օգոստոս Օկտավիանուսի և Նապոլեոն Բոնապարտի, նրանց գործունեության, ստեղծած համակարգերի, պատմական ժառանգության, գաղափարների համեմատական վերլուծությունը, նրանց և հասարակության փոխհարաբերությունների ուսումնասիրությունը:

Փորձենք համառոտ ներկայացնել յուրաքանչյուրին, ապա՝ համադրել:

1. Օգոստոս Օկտավիանուս

Պաշտոնական անունը՝ Գայոս Հուլիոս Կեսար Օկտավիանուս Օգոստոս («օգոստոս» լատիներեն նշանակում է «սրբազան», «բարձրյալ», հետագայում ստացել է կայսերական տիտղոսի նշանակություն), ծննդյան ժամանակ տրված անունը՝ Գայոս Օկտավիոս Թոփինուս (Ք.ա. 63 թ., սեպտեմբերի 23, Հռոմ - Ք.ա. 14 թ., օգոստոսի 19, Նոլա): Օկտավիանուսը Հուլիոս Կեսարի քրոջ թոռն էր և, Կեսարի կտակի համաձայն, նրա որդեգիրն ու ժառանգորդը: Կեսարի սպանությունից հետո Օկտավիանուսը Մարկոս Անտոնիոսի և Մարկոս Լեպիդոսի հետ ստեղծեց Երկրորդ եռապետությունը (Ք. ա. 43 թ.), իսկ եռապետության կազմալուծումից հետո հասավ ըստ էության միանձնյա իշխանության: Օկտավիանուսի

օրոք հաստատված կառավարման համակարգը ստացել է արինցիպատ անվանումը: Այն հիմնված էր հանրապետության և մենիշխանության «փոխհամաձայնության» վրա և հաճախ բանաձևվում է իբրև հանրապետական միապետություն:

Հռոմում նոր ձևավորվող կառավարման համակարգի առջև ծառայել էին բազմաթիվ խնդիրներ՝ կապված նոր սոցիալ-տնտեսական և քաղաքական հաստատությունների ստեղծման հետ¹: Հարկավոր էր ստեղծել նոր՝ ավելի ավտորիտար պետական կառույցներ, որոնք կփոխարինեին նախկին անարդյունավետ պոլիսահամայնքային կառույցներին: Նոր ստեղծվող իշխանության մարմինների կողքին պաշտոնապես պահպանվում էին հանրապետական մարմինները, գործում էր Սենատը, գործադիր իշխանության մարմինները (մագիստրատուրաները), հրավիրվում էին աշխարհաժողովները: Օգոստոսի գործունեությունը ծավալվում էր «հանրապետության վերականգնման» (*res publica restituta*) կարգախոսի ներքո, կարգախոս, որով ներշնչված էր հանրապետական կարգի ճգնաժամի դարաշրջանի հոմեոսական գրեթե բոլոր պետական, քաղաքական գործիչների գործունեությունը (Գրակքոս եղբայրներ, Սուլլա, Մարիոս, Պոմպեոս, Կեսար և այլք): Օգոստոսը հավաստիացնում էր, որ Ք. ա. 27 թվականից հետո նրա իշխանությունը չէր գերազանցում հռոմեական որևէ պաշտոնյայի իշխանությունը, նա գերազանցում էր բոլորին միայն իր հեղինակությամբ (*auctoritas*) [Деяния Божественного Августа, 34, 1]: Մինչդեռ համադրելով մի շարք պաշտոններ (մագիստրատուրաներ), որոնք առանձին-առանձին միանգամայն «հանրապետական» էին և ավանդական, նա փաստացի հասավ միահեծան և բացարձակ իշխանության²: Ստեղծվեց համակարգ, որի կրողը,

¹ P. Холланд, *Октавиан Август, Крестный отец Европы, Москва, 2010, с. 195-206.*

² A. Jones, *The Imperium of Augustus, Journal of Roman Studies, Cambridge, 1951, pp. 112-119.*

շարժիչը և հիմնասյունը խարիզմատիկ առաջնորդն էր՝ Օգոստոսը³:

Օգոստոսի պետականակերտ գործունեության կարևորագույն ձեռքբերումներից նշենք հանրապետական տոհմիկ վերնախավի անարդյունավետ և ժամանակավրեպ իշխանությանը կից կայսերական միահեծան իշխանության ստեղծումը՝ հիմնված ճյուղավորված ծառայողական ապարատի վրա: Սա հնարավոր էր դարձնում հսկայական տերության արդյունավետ կառավարումը, տերություն, որ բաղկացած էր բազմաթիվ պրովինցիաներից, որոնք կանոնակարգված կառավարում էին պահանջում⁴: Այսպիսով, չնայած պաշտոնապես գործող հանրապետական մարմինների գոյությանը, պրինցիպատը, որպես կառավարման համակարգ, պետք է դասակարգել ավտորիտար միապետական համակարգերի շարքին, որը, սակայն, բացառիկ է այնքանով, որ հիմնված է ոչ թե բռնի ուժի, այլ հեղինակության և փոխզիջման վրա⁵: Խոսքերիս լավագույն ապացույցը Սենատ-Օգոստոս ջերմ և արդյունավետ փոխհարաբերությունների ու համագործակցության առկայությունն էր վերջինիս գրեթե ողջ կյանքի ընթացքում⁶:

2. Նապոլեոն Բոնապարտ

Նապոլեոն Բոնապարտը (1769 թ., օգոստոսի 15, Այաչո, Կորսիկա - 1821 թ., մայիսի 5, Լոնգվուդ, Սուրբ Հեղինեի կղզի), Ֆրանսիական Հանրապետության առաջին կոնսուլ (1799-1804 թթ.), Ֆրանսիացիների կայսր (1804-1815 թթ.): Նապոլեոն Բոնապարտը ծնվել է կորսիկացի ազնվական փաստաբանի ընտանիքում:

³ И. Шифман, *Цезарь Август*, Ленинград, 1990, с. 93-95.

⁴ A. Clifford, *Imperial Ideology and Provincial Loyalty in the Roman Empire*, Berkeley, Los Angeles, and London: University of California Press, 2000, Chapter 5.

⁵ K. Raaflaub, M. Toher, *Between Republic and Empire: Interpretations of Augustus and his principate*, Berkeley: University of California Press, 1993, pp. 75-119.

⁶ E. Walter, *Age of Augustus*, New York: Cambridge University Press, 2005, pp. 33-52.

1784թ. ավարտել է Բրիտնի ռազմական դպրոցը, 1784-1785 թթ. սովորել Փարիզի ռազմական դպրոցում: Ծառայությունը սկսել է 1785 թ. Վալանսում՝ որպես հրետանային գնդի կրտսեր լեյտենանտ: Ռազմական բացառիկ ընդունակությունների շնորհիվ ութ տարում դարձել է գեներալ: Աչքի է ընկել Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ. 1793 թ. խռովարար միապետականների տևականորեն պաշարած Տուլոնն ազատագրվել է նրա մշակած պլանով, որի համար 24-ամյա կապիտանը ստացել է բրիգադի գեներալի կոչում:

1795 թ. հոկտեմբերի 5-ին Փարիզում միապետական խռովության ջախջախումից հետո Նապոլեոնը նշանակվել է Փարիզի կայազորի պետ, Իտալական արշավանքի ժամանակ՝ ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար: Օգտվելով Դիրեկտորիայի (Առաջին Հանրապետության կառավարությունը 1795-1799 թթ.) թուլությունից և հենվելով ֆրանսիական բուրժուազիայի ազդեցիկ շրջանների վրա՝ նա 1799 թ. նոյեմբերի 9-ին (հանրապետության օրացույցով՝ Բրյումերի 18-ին) պետական հեղաշրջում է կատարել, հաստատել կոնսուլության վարչակարգ և իր ձեռքում կենտրոնացրել երկրի ամբողջ իշխանությունը: 1802 թ. Նապոլեոնը նշանակվել է ցլյանս կոնսուլ, իսկ 1804 թ. դեկտեմբերի 2-ին, պլեբեսցիտի արդյունքների հիման վրա, Փարիզի Աստվածամոր տաճարում օծվել բոլոր ֆրանսիացիների կայսր՝ Նապոլեոն I անունով:

Ֆրանսիայում Բրյումերյան հեղաշրջմանը, ապա նաև կայսրության հռչակմանը հաջորդեց Նապոլեոն Բոնապարտի անձնիշխանությունն ապահովող համակարգի ստեղծումը, որն ավարտին հասցրեց ֆրանսիական հասարակության արմատական փոփոխությունների շրջանը⁷: Նոր ձևավորված համակարգն իր էությանը հին հռոմեական պրինցիպատի արդիականացված և իր ժամանակին հարմարեցված տարբերակն էր. այն հեղափոխական

⁷ A. Grab, *Napoleon and the Transformation of Europe*, New York: Palgrave Macmillan, 2003, pp. 113-145.

ծեռքերումների հաստատութենականացման և հին կարգին բնորոշ բացարձակ և կենտրոնացված իշխանության համադրում էր⁸:

Տեղի ունեցավ ֆրանսիական հասարակության ժամանակավոր կերպափոխություն: Նախկին հեղափոխական շարժմանը, հանրապետության և հավասարության գաղափարներին փոխարինելու եկավ քարիզմատիկ առաջնորդի և նրա բացառիկ ունակությունների հանդեպ հավատը⁹: Անշուշտ, այս կերպափոխության մեջ ահռելի դեր ունեցան Բոնապարտի անձնական ունակությունները և որակները, նրա ունեցած աննախադեպ հաջողությունները մարտի դաշտում: Բայց կային նաև այլ ներհասարակական և հոգեբանական պատճառներ¹⁰: Հասարակությունը Ֆրանսիայում պարզապես հոգնել էր քաղաքական անկայունություններից և հեղափոխություններից: Հասարակական պահանջ էր դարձել կայունությունը, համակարգի հաստատունությունը և ձեռք բերված նվաճումների ամրագրումն ու հաստատութենականացումը¹¹: Այս ամենը փայլուն կերպով իրականացվեց Բոնապարտյան վարչակարգի կողմից: Ստեղծվեց խիստ վերահսկողության տակ գտնվող գերկենտրոնացված բյուրոկրատական համակարգ: Նապոլեոնի բնորոշ մամբ՝ իր ստեղծած համակարգի հաջողության բանալին ոչ թե ազատություններն ու հավասարությունն էին, այլ իրազեկությունը¹²:

Բոնապարտն անձնական իշխանության լեզվի մոտություն ապահովեց քարիզմատիկ կերպարի ու ռացիոնալ իրավական իշխանության համադրման հիման վրա¹³:

⁸ R. Asprey, *The Rise of Napoleon Bonaparte*, New York: Basic Books, 2000, pp. 489-501.

⁹ M. Baehr, P. Richter, *Bonapartism, Caesarism and Totalitarianism*, Cambridge: Cambridge University Press, 2004, pp. 5-28.

¹⁰ Э. Радзинский, *Наполеон*, Москва: Вагриус, 2004, с. 169-199.

¹¹ S. Englund, *Napoleon. A Political Life*, New York, 2004, pp. 283-315.

¹² I. Woloch, *Napoleon and His Collaborators: The making of a dictatorship*, New York and London, W.W. Norton, 2001, pp. 55-71.

¹³ J. Chandler, G. Chandler, *On Effective Leadership*, New York, 2013, pp. 159-165.

3. Զուգակշիռը

Ա) Զարմանալիորեն նման են պատմական իրավիճակները: Հանրապետությունը մայրամուտ էր ապրում, և վերջինիս իշխանության մարմինները ու համակարգերը սպառել էին իրենց, սկիզբ էին առել անվերջանալի խժոժություններ, քաղաքացիական պատերազմներ, ահաբեկչություն, հեղաշրջումներ: Հասարակությունը հոգնել էր անիշխանությունից, թույլ կենտրոնից, ծախու քաղաքական գործիչներից, անհետևողական մոտեցումներից և այլն: Նման իրավիճակներում հասարակական լայն զանգվածները փրկությունը տեսնում են ուժեղ անհատի շուրջ միավորվելու, վերջինիս իշխանությանը ենթարկվելու մեջ: Առաջնորդի միահեծան իշխանությունն էլ հաճախ, ինչպես վերոնշյալ դեպքերում, ապահովում է անցումային փուլերում հասարակության վերակառուցումը և լավագույն կառավարումը:

Բ) Նմանություններ են բացահայտվում նաև հասարակական կառավարման համակարգերում. սկզբնական շրջանում հանրապետական մարմինների պահպանում, բայց դրանց կողքին հաճախ նոր հաստատությունների ձևավորում և առաջնորդի անձի կենտրոնական դեր, որն ավելի ուշ վերածվում է խիստ կենտրոնացված միահեծան իշխանության:

Գ) Համադրման ենթակա են բարեփոխումները հատկապես պետական կառավարման համակարգում՝ ռազմական, սոցիալական, իրավական և ավանդության բնագավառներում: Բոլոր ոլորտներում նորամուծությունների հետ առաջ էր բերվում նաև անցյալում կուտակված փորձի համադրում: Երկու համակարգերում էլ իշխանությունը ձգտում էր համակարգել (բայց ոչ վերահսկել) հասարակական կյանքի բոլոր մակարդակներն ու ոլորտները: Զարկ է տրվում տնտեսությանը. բոլոր ոլորտները գրանցում են աննախադեպ աճ: Երկու համակարգերն էլ դեմ են դուրս գալիս ժողովրդավարացման-ազատականացման միտմանը և ապացուցում են, որ անցումային փուլերում հասարակությունը կարող է կամուրջ գիջել իր իրավունքների ու ազատությունների մեծ մասը՝ հոգուտ առաջնորդի, եթե վերջինս ապահովում է բավականաչափ հավատ իր հանճարի ու ընտրած ճանապարհի հանդեպ:

Դ) Անհատական մակարդակում համեմատությունները դարձյալ բերում մի շարք նմանությունների բացահայտման: Առաջին հերթին դա քարիզմատիկ առաջնորդի կերպարն է:¹⁴¹⁵ Ամբողջ համակարգեր կառուցված են եղել նրանց անձերի շուրջ, և ժամանակաշրջաններ կոչվել են նրանց անուններով: Երկու դեպքերում էլ ձևավորվել է գերմարդկային ունակությունների հանդեպ հավատ: Երկուսն էլ մարդիկ են, որոնք անձամբ են ստեղծել իրենց քաղաքական առաջընթացը և կերպարը: Առաջնորդներ, որ չեն ծնվել իշխելու համար, բայց դարձել են իշխանավորի բացառիկ ու օրինակելի տիպարներ: Երկուսն էլ հրաշալի համադրում են քարիզմատիկ առաջնորդի և առաջնորդ-բարեփոխիչի կերպարները:

Ե) Կան և նշանակալի տարբերություններ այս երկու անհատների միջև, որոնք և պայմանավորեցին նրանց ստեղծած համակարգերի ճակատագրերի և նրանց թողած պատմական ժառանգության տարբերությունները: Օգոստոսն իր բնույթով չափազանց հավասարակշռված և զգուշավոր անձնավորություն էր: Ռեալ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելով հանդերձ՝ պահպանում էր փոխզիջումն ու ներդաշնակությունը իր և Սենատի, Իտալիայի և պրովինցիաների, բանակի և քաղաքացիների միջև: Նա բացառիկ էր ոչ միայն իր ստեղծած կառավարման համակարգի շնորհիվ, այլև այն փաստի զորությամբ, որ չլինելով ո՛չ տաղանդաշատ զորավար, ո՛չ հաղթանդամ ռազմիկ և ո՛չ էլ պլեբսի կողմից սիրված հռետոր՝ նա կարողացավ մեկը մյուսի հետևից հաղթել իր բոլոր մրցակիցներին ու հասնել անսահմանափակ իշխանության: Նրա բացառիկ հաջողությունների գաղտնիքներն էին սթափ բանականությունն ու հաշվարկը և, որ ամենակարևորն է, նպատակահարմարությամբ առաջնորդվելը: Մինչդեռ Նապոլեոն Բոնապարտը, չնայած իր հանճարեղ էությանը և կառավարչի բնատուր տաղանդին, հավասարակշռված գործիչ չէր, իսկ նրա ստեղծած համակարգը գերկենտրոնացված էր. չէին պահպանվել

¹⁴ P. Zanke, *The Power of Images in the Age of Augustus*, University of Michigan Press, 1990, pp. 243-267.

¹⁵ S. Englund, op. cit., pp. 193-196.

կամ ծիծաղի առարկա էին դարձել հանրապետական հաստատությունները, փոխարենն ասպարեզ էին եկել Նապոլեոնի անձի պաշտամունքը, կայսերական պաթոսը, ներքին խառնակությունները¹⁶: Քաղաքական հարցերը լուծվում էին ոչ թե քաղաքական ճանապարհով, այլ ռազմական և ոստիկանական միջոցներով: Համակարգը հենվում էր բռնության և Բոնապարտի անձնական քարիզմայի վրա, չէր ստեղծվել հաստատութենականացված իշխանական համակարգ: Առաջին պլան էին մղվում կայսերական հավակնությունները, այլ ոչ նպատակահարմարությունը:¹⁷

Ամփոփում

Անհատը, անկախ պատմության և հասարակության վրա թողած հետքից ու բերած փոփոխությունների մակարդակից, հասարակության բաղկացուցիչ մասն է: Ծնվելով ու ապրելով տվյալ հասարակությունում՝ նա ներթափանցում է որոշակի գաղափարներ, աշխարհընկալման և ինքնընկալման համակարգեր: Սակայն երբեմն հասարակության կողմից ձևավորված անհատն իր մեջ բավական ռեսուրսներ ու տոկոսություն է գտնում հակադրվելու նրան, երևան բերելու նոր գաղափարներ ու մոտեցումներ: Երբեմն այդ գաղափարները կյանքի կոչվելով՝ հանգեցնում են քաղաքակրթական նոր տիպաբանության ձևավորման, առավել հաճախ լինում են կարճաժամկետ և անցողիկ: Այնուամենայնիվ, մարդկության պատմության գրեթե բոլոր շրջադարձային իրավիճակները կապված են առանձին անհատականությունների և նրանց գործունեության հետ, որոնք, իրենց շուրջը համախմբելով մարդկային հոծ զանգվածներ և համախոհներ, ճակատագրական պահին կարողացել են արմատապես փոխել պատմության ընթացքը:

Նեց այդպիսի վառ անհատականությունների՝ Օկտավիանոս Օգոստոսի և Նապոլեոն Բոնապարտի հանճարով ու կազմակերպչական ցիրով են պայմանավորված համապատասխանաբար հռ-

¹⁶ R. Alexander, *Napoleon*, London: Arnold, 2001, pp. 203-214.

¹⁷ F. Schneid, *Napoleon's Conquest of Europe*, London, 2005, pp. 3-11.

մեական և ֆրանսիական հասարակությունների կերպափոխության գործընթացները, կերպափոխություններ, որոնց արդյունքում ստեղծվում են նոր՝ շատ ավելի արդյունավետ կառավարման համակարգեր: Թեև պրինցիպատ և կոնսուլատ (նեոպրինցիպատ) հասարակական կառավարման համակարգերը դասվում են ավտորիտար-միապետական համակարգերի շարքին, սակայն դրանք բացառիկ են, քանզի հիմնված չէին ուժի և բռնության, այլ հարգանքի, հեղինակության, քարիզմայի, առաջնորդի գերմարդկային ուժերի հանդեպ հավատի վրա: Հատկապես ուշագրավ է այն փաստը, որ երկու դեպքում էլ անցումը տեղի է ունեցել ազատական համակարգից իմպերատիվին, ընդ որում՝ ժողովրդի և հանրության լիակատար աջակցությամբ:

Բոլոր նմանություններով ու տարբերություններով հանդերձ՝ պատմական այս երկու անհատները իրենց անջնջելի հետքն են թողել համաշխարհային պատմության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Alexander R., *Napoleon*, London: Arnold, 2001.
- Asprey R., *The Rise of Napoleon Bonaparte*, New York: Basic Books, 2000.
- Baehr P. and Richter M., *Bonapartism, Caesarism and Totalitarianism*, Cambridge: Cambridge University Press, 2004.
- Chandler G. and Chandler J., *On Effective Leadership*, New York, 2013.
- Clifford A., *Imperial Ideology and Provincial Loyalty in the Roman Empire*, Berkeley, Los Angeles, and London, 2000.
- Englund S., *Napoleon. A Political Life*, New York: Scribner, 2004.
- Grab A., *Napoleon and the Transformation of Europe*, New York: Palgrave Macmillan, 2003.
- Jones A., *The Imperium of Augustus*, *Journal of Roman Studies*, Cambridge, 1951.
- Raaflaub K., Toher M., *Between Republic and Empire: Interpretations of Augustus and his principate*, Berkeley: University of California Press, 1993.
- Schneid F., *Napoleon's Conquest of Europe*, London, 2005.
- Walter E., *Age of Augustus*, New York, 2005.
- Woloch I., *Napoleon and His Collaborators: The making of a dictatorship*, New York and London, W.W. Norton, 2001.
- Zanke P., *The Power of Images in the Age of Augustus*, University of Michigan Press, 1990.
- Радзинский Э., *Наполеон*, Москва: Вагриус, 2004.
- Холланд Р., *Октавиан Август, Крестный отец Европы*, Москва, 2010.
- Шифман И., *Цезарь Август*, Ленинград: Наука, 1990.

ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱԼ

ԲՈՆԱՊԱՐՏԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Մուտք

Բոնապարտի իշխանության հաստատմամբ Ֆրանսիայում կատարվեց հեղափոխական գործընթացների արդյունքում ձևավորված սոցիալական, իրավական ու տնտեսական նոր իրողությունների և բացարձակ (ավտորիտար) քաղաքական իշխանության համադրում: Ներքին կյանքի համակարգային վերափոխման և պետական կարգի արդիականացման արդյունքում Ֆրանսիան կրկին գերիշխող դերակատարություն ստանձնեց Եվրոպայում: Արդիական պետության գաղափարը Բոնապարտի կառավարման տարիներին ստացավ իրական մարմնավորում: Հեղափոխության հավասարեցման և միատեսականացման քաղաքականությունն ու Բոնապարտի ամուր դիկտատուրան ըսան տարում քայքայեցին մասնավոր և տեղական առանձնահատկությունների համակարգը: Բոնապարտի օրոք սահմանադրական նոր կարգի և կենտրոնացված կառավարման համակարգի ձևավորմամբ հաստատվեց ներդաշնակ սոցիալական, տնտեսական ու քաղաքական հարաբերությունների միջավայր:

Բոնապարտն անձնական իշխանության լեգիտիմությունն ապահովեց քարիզմատիկ կերպարի ու ռացիոնալ իրավական իշխանության հիման վրա՝ ներքին վերափոխումները, արտաքին քաղաքականությունն ու պատերազմները ծառայեցնելով լեգիտիմացման գերնպատակին:

Բոնապարտի վարչակարգի կողմից կատարվեցին իշխանության, ֆինանսատնտեսական, կրթական համակարգների, ինչպես նաև իրավական վերափոխումներ, արդիականացվեց հարկադրանքը, իրականացվեցին ռազմական նորարարություններ ու սոցիալական կարգավորման նոր քաղաքականություն:

1. Իշխանության համակարգի վերափոխումը

Պետական կառավարման համակարգում պահպանվեցին հանրապետական հաստատությունները, սակայն զգալիորեն ավելացան գործադիր իշխանության լծակները, խախտվեցին գործադիր ու օրենսդիր իշխանությունների գործառնական համամասնությունները և դադարեցին գործել իշխանության երկու թևերի փոխադարձ հակակշռման մեխանիզմները: Օրենսդիր իշխանության կողմից հնարավոր դիմադրությունը թուլացնելու նպատակով օրենքների ընդունման գործընթացն առավել մասնատվել էր Սենատի, Տրիբունատի և Օրենսդիր կորպուսի միջև:

Գործադիր իշխանության հիմնական մարմիններ դարձան մեկ ղեկավարման և ուղղահայաց ենթակարգության հիման վրա գործող նախարարությունները, որոնք իրականացնում էին պետության առևտրաարդյունաբերական, հարկային, ռազմական և անվտանգության քաղաքականություն: Վերացվեց տեղական ինքնակառավարումը, և վարչատարածքային միավորները սկսեցին կառավարել կենտրոնից նշանակված պաշտոնյաները: Ձևավորվեց վարչական արդարադատության համակարգ¹⁸:

Կենտրոնացված և հզոր վարչական մեքենայի կազմավորմանը զուգահեռ սահմանադրությամբ երաշխավորվեց մասնավոր սեփականության ինստիտուտի պաշտպանությունը:

2. Ֆինանսատնտեսական վերափոխումները

Վարչարարության կենտրոնացմամբ և հարկահավաքման նոր մեթոդների կիրառմամբ կարգավորվեց հարկահավաքության գործընթացը: Կառավարության համար պարտք վերցնելը դյուրացնելու, ամենամյա մուրհակների վճարումն ապահովելու և ազգային արժույթը՝ ֆրանկը, կայունացնելու նպատակով հիմնվեց Ֆրանսիայի բանկը¹⁹: Տնտեսության ոլորտում որդեգրվեց մերկան-

¹⁸ О. А. Жидков, Н. А. Крашенинникова, *История государства и права зарубежных стран*, Москва, 2004. с. 84.

¹⁹ Г. Киндер, В. Хильгеман, *Всемирная История*, Москва: Рыбари, 2003, с. 305.

տիլիզմի՝ տնտեսական ազգայնականության քաղաքականություն, որն իրականացվում էր պետության կողմից օտարերկրյա ապրանքների վրա բարձր մաքսատուրքեր սահմանելու, տեղական արդյունաբերողներին սուբսիդավորելու և վարկավորելու, տեխնոլոգիական նորարարությունների ուղղությամբ տարվող աշխատանքներին ու դրանց արդյունքների կիրառմանը օժանդակելու, ենթակառուցվածքները՝ ճանապարհները, կամուրջները և ջրանցքները պետության հաշվին նորոգելու ու նորերը կառուցելու, ինչպես նաև գործարար հարաբերությունները կանոնակարգելու եղանակներով:

3. Կրթական համակարգի վերափոխումը

Ն. Բոնապարտին պետք է վերագրել հանրային կրթության համակարգի զարգացումը և կայացումը: Պետության կողմից վերահսկվող ու օժանդակվող, ինչպես նաև պետության նկատմամբ հավատարմություն սերմանող կրթության հասանելիությունը բոլոր քաղաքացիներին, կրթական համակարգի վերափոխման գլխավոր նպատակն էր: Քայլեր իրականացվեցին նախնական կրթության հանրայնացման ուղղությամբ: Բացվեցին լիցեյներ, որոնք գտնվում էին կառավարության ուղիղ վերահսկողության տակ²⁰: Հիմնվեց համալսարան, այն է՝ միասնական կրթական համակարգ, որն իր մեջ ներառում էր պետական կրթական ամբողջ համակարգը՝ դրա բոլոր աստիճանական փուլերով կամ մակարդակներով:

4. Իրավական վերափոխումները

Վարչակարգի ամենանշանակալի ձեռքբերումներից էր ֆրանսիական միասնական իրավական համակարգի ներդրումը և օրենսդրության կողավորումը՝ մասնավորապես հինգ օրենսգրքերի ընդունումը, որի արդյունքում կանոնակարգվեցին սոցիալական և տնտեսական հարաբերությունները, երաշխավորվեց քաղաքացիների իրավահավասարությունը, համակարգվեցին կոմերցիոն

²⁰ N. Davies, *Europe*, London: Pimlico, 1997, p. 711.

(առևտրային) գործառույթները, միասնականացվեցին չափերի և քաշերի համակարգերը:

Բոնապարտի օրենսդրությունը համադրում էր դրույթներ հարավում կիրառվող հռոմեական իրավունքից, հյուսիսում կիրառվող սևտոնական սովորության իրավունքից, որոնք միահյուսվում էին հեղափոխական շրջանի ֆրանսիական հասարակության հիերարխիկ կառուցվածքն ու մարդու սոցիալական կարգավիճակը փոփոխության ենթարկած օրենսդրական նորամուծությունների հետ: Ֆրանսիայի նոր իրավական համակարգը հարմարեցվում էր հեղափոխության արդյունքում քաղաքական թատերաբեմ ելած միջին խավի գերակայությամբ հասարակությանը, որում մի կողմից երաշխավորվում էր բոլոր քաղաքացիների հավասարությունն օրենքի առջև, իսկ մյուս կողմից ապահովվում էր մասնավոր սեփականության ինստիտուտը:

Ֆրանսիական իրավական նոր համակարգի անկյունաքարն էր «Քաղաքացիական օրենսգիրքը» կամ նապոլեոնյան կոդեքսը, որում համադրվում էին հեղափոխական առավել կարևոր իդեալները բացարձակ վարչակարգի իրավաքաղաքական առաջնայնությունների հետ²¹: Այն ներառում ու հավասարակշռում էր սովորության և հռոմեական իրավունքների դրույթները, ինչպես նաև համադրում էր անհատական իրավունքների մասով հեղափոխական էգալիտար սկզբունքները հռոմեական իրավունքի՝ սեփականության իրավունքների վերաբերյալ պահպանողական մոտեցման հետ: Օրենսգրքում ամրագրվում էին քաղաքացու համընդհանուր իրավունքները և օրենքի առջև բոլոր քաղաքացիների հավասարության՝ հեղափոխության հիմնարար սկզբունքներից մեկը:

5. Հարկադրանքի արդիականացումը

Ֆրանսիայում դեռևս Հեղափոխության սկզբից հասարակական հարաբերություններում բնությունը որոշիչ գործոն էր դարձել

²¹ E. Weber, *A Modern History of Europe*, New York: W.W. Norton & Company Inc., 1971, p. 539.

և վերածվել էր քաղաքական մշակույթի առանցքային հիմնատար-
րի: Այս համատեքստում Բոնապարտի ռեժիմը կիրառեց հարկա-
դրանքի քաղաքականության նոր մոտեցումներ և մեխանիզմներ:
Հեղափոխության տարիներին և հատկապես դրանից հետո Բոնա-
պարտի կառավարման շրջանում ուղիղ կառավարման մոդելին
անցում կատարելիս պետության կողմից վարվող հանրային
անվտանգության ապահովման քաղաքականությունն արձագան-
քողականից դարձավ նախաձեռնողական²²: Ձևավորվեցին ներ-
քին հետախուզության և տեղեկատվության փոխանցման նոր
համակարգեր, որոնց արդյունքում տեղական վարչակարգերը
պատասխանատու դարձան պետական իշխանության ու դրա
կարևոր կլիենտների դեմ ուղղված շարժումների կանխարգելման
և խափանման համար: Ոստիկանական ուժերը ներթափանցեցին
հասարակության մեջ, ու ոստիկանական համակարգի գործունեու-
թյան համար պետության կողմից հատկացվեցին հսկայական
միջոցներ:

Հանրային կարգի պահպանման գործընթացում կարևոր դերա-
կատարում ունեին ռազմականացված ոստիկանական միավորում-
ները՝ ժանդարմները: Ժանդարմներն օժանդակում էին
ոստիկանությանը հանցագործների ձերբակալության ժամանակ,
մաքսանենգության դեմ պայքարում, ճանապարհների անվտան-
գության ապահովման հարցում և այլն:

Անվերահսկելի տեղեկատվական հոսքերը պատերազմող երկ-
րում կարող էին հանրային կյանքի ապակայունացման լուրջ
սպառնալիք հանդիսանալ: Հետևաբար, Փարիզում և դեպարտա-
մենտներում հրատարակվող թերթերը տեղեկատվության վրա
կիրառվող գրաքննության պայմաններում վերածվեցին վարչա-
կարգի պաշտոնական տեղեկատվական օրգանների: Կառավա-
րության կողմից վերահսկվում էին նաև գրահրատարակչությունը
և թատրոնը:

²² C. Tilly, *Coercion, Capital, and European States, A.D. 990-1992*,
Cambridge: Basil Blackwell Inc., 1992, p. 110.

6. Ռազմական նորարարությունները

Բոնապարտի կառավարման համակարգում առանձնահատուկ
դերակատարում ուներ բանակը, որը միաժամանակ ներքին կայու-
նության հիմնական երաշխավորներից էր ու արտաքին քաղաքա-
կանության կարևորագույն գործիք²³: Ֆրանսիական բանակը
պատմական այդ ժամանակահատվածում համալրման ձևով և
քանակով, կազմակերպչական կառուցվածքով, անձնակազմի
արհեստավարժությամբ, տարբեր օղակների միջև հստակ փոխ-
գործակցությամբ, արագաշարժությամբ, ոչ ավանդական մարտա-
վարական հնարքներով դարձավ ամենաառաջավորը Եվրոպա-
յում: Բոնապարտի նորարարությունների հիմքում նախորդ փորձի
ուսումնասիրումն ու կիրառումն էր, ինչը, սակայն, բավարար չէր
ռազմական գերակայության հասնելու համար. դրանք պետք է
համադրվեին նոր տեխնոլոգիայի՝ «հանրապետական բանակի»
հետ, որի հիմնարար գործոնը քաղաքացի-զինվորն էր:

Քաղաքական և սոցիալական տեղաշարժերի արդյունքում
փոխվել էր պատերազմի բնույթը և այն դինաստիական՝ սահմա-
նափակ միջոցներով ու մասնակցությամբ ձեռնարկումից վերած-
վել էր համախմբված ազգային պայքարի՝ յուրաքանչյուր քաղաքա-
ցու գոյությունն ապահովող տոտալ պատերազմի, որում զանգվա-
ծային բանակների հավաքագրումը, կազմակերպումը, մատակա-
րարումը վերափոխեցին պատերազմի վարման ձևը և ազդարարե-
ցին արդիական պատերազմների սկիզբը:

Ֆրանսիական բանակը համալրվում էր համընդհանուր զինա-
պարտության հիման վրա իրականացվող զանգվածային զորակո-
չի միջոցով, որի արդյունքում բանակը ստանում էր քանակական
գերակշռություն հակառակորդների նկատմամբ, ինչպես նաև
պատրաստված պահեստազոր: Համընդհանուր զորակոչը համա-
ծայնության և հարկադրանքի մեխանիզմների համակարգ էր:

Ռազմական գերակայության կարևորագույն գործոններից էր
ֆրանսիական բանակի ճկուն կառուցվածքը: Այն բաղկացած էր
կորպուսներից, որոնք ինքնուրույն միավորներ էին և բանակի

²³ N. Davies, *op. cit.* p. 715.

ռազմավարական նպատակների շրջանակներում ունեին գործողությունների լայն ազատություն:

Քանակում սկսեց մշտապես գործել ժամանակակից գործառույթներով գլխավոր շտաբ: Շտաբը բաղկացած էր մի քանի բաժիններից, որոնց պատասխանատվության ոլորտում էին զորքերի տեղաշարժը, մատակարարումը, կապի ապահովումը, ոստիկանական գործառույթները, ռազմական արդարադատության համակարգը, ռազմական հոսպիտալները, ռազմագերիների հիմնահարցը, զորակոչը, դասալրության հետ կապված խնդիրները, հաղորդակցական գծերը և հետախուզությունը:

Բռնապարտը կիրառում էր հակառակորդի հետ քանակական տարբերության վրա հիմնված երկու մարտավարական համակարգեր՝ «կենտրոնական դիրքի մարտավարությունը» և «անուղակի մոտեցման մարտավարությունը»: Քանակական առավելություն ունեցող հակառակորդի հետ նա կիրառում էր այսպես կոչված «կենտրոնական դիրքի մարտավարությունը»: Քանակական առավելության և մանևրելու բավարար դաշտ ունենալու դեպքում Բռնապարտը կիրառում էր «անուղակի մոտեցման մարտավարությունը»:

Ֆրանսիական բանակի համեմատական առավելություններից էին զորքերի մատակարարման համակարգը և բարձրագույն հրամանատարության՝ մարշալների իրողությունը:

7. Սոցիալական կարգավորման քաղաքականությունը

Բռնապարտի քաղաքական-վարչական, իրավական, տնտեսական և այլ վերափոխումների միջնաժամկետ արդյունավետությունն ու ազդեցությունը ուղղակիորեն պայմանավորված էին ֆրանսիական հետհեղափոխական հասարակության սոցիալական կարգավորման քաղաքականությամբ, որի նպատակը հեղափոխությամբ ի հայտ եկած նոր քաղաքացու շուրջ ձևավորված քաղաքական, տնտեսական, իրավական հարաբերություններում հին սոցիալական շերտերի՝ հոգևորականության և ազնվականության ներգրավումն ու ներհասարակական բաժանարար ճեղքերի վերացումը և վարչակարգի սոցիալական բազայի ամրացումն էր:

Ֆրանսիական հասարակությունը հեղափոխական շրջանից ժառանգել էր երկու ապակայունացնող հիմնահարցեր՝ մեկը կաթոլիկ եկեղեցու և «երդում չտրված» հոգևորականության հետ պետության հաշտեցումն էր, մյուսը՝ երկրից փախած կամ արտաքսված հարյուր հազար էմիգրանտների հետ հարաբերությունները: Այս հիմնահարցերին ածանցյալ էր նաև Վանդեայում և դրա հարակից տարածքներում շարունակաբար ընթացող պարտիզանական շարժումը:

Հռոմի Պապի հետ կնքված կոնկորդատի միջոցով Բռնապարտին հաջողվեց վերացնել հոգևորականության տարանջատվածությունը, երդում չտրված հոգևորականությանը հաշտեցնել պետության հետ, երաշխավորել առգրավված եկեղեցական հողերի նոր տերերի սեփականության անձեռնմխելիությունը, պահպանել կաթոլիկ եկեղեցու նկատմամբ պետության վերահսկողությունը: Պետության կողմից որդեգրած նոր կրոնական քաղաքականության համատեքստում կանոնակարգվեցին նաև բողոքականների հետ հարաբերությունները:

Բռնապարտը չեզոքացրեց Վանդեայում ու հարակից տարածքներում գործող ապստամբական շարժումները, իսկ ընդդիմադիր յակոբինյաններին և հանրապետականներին բանտարկեց կամ արտաքսեց: Էմիգրանտներին և միապետականներին հաշտեցրեց նոր սոցիալ-քաղաքական իրողություններին՝ հեղափոխության տարիներին կազմված էմիգրանտների ցուցակներից հանելով հարյուր հազար մարդու անուն սահմանադրությանը հավատարմության երդման դիմաց: Վերադարձածների մի մասը համալրելու էր նաև նոր կայսերական ազնվականության շարքերը: Բռնապարտը երկրի ներսում վերացրեց հակահամակարգային կազմակերպված դիմադրությունը:

Անձնական իշխանությունն ամրապնդելու, կառավարող վերնախավը հաստատութենականացման միջոցով իր անձի շուրջ համախմբելու նպատակով Բռնապարտը ձեռնամուխ եղավ նոր ազնվականության ձևավորմանը: Այդ համատեքստում առաջին քայլը 1802 թվականին «պատվո լեգեոնի» հիմնումն էր, որի միջո-

ցով Բոնապարտը հեղափոխական էգալիտար հասարակության մեջ աստիճանակարգման նոր տարրեր էր ներդնում²⁴:

Վարչակարգի կողմից վերնախավի ձևավորման գործընթացն իր գագաթնակետին հասավ 1808 թվականին նոր կայսերական ազնվականական տիտղոսների ստեղծմամբ, որոնք շնորհվում էին քաղաքացիական և զինվորական ծառայության դիմաց: Կայսերական ազնվականի տիտղոսներ ստացան գեներալները, սենատորները և վարչակարգի հետ կապված այլ պետական պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները, ինչպես նաև «Հին վարչակարգի» ազնվականների մի մասը²⁵:

Ամփոփում

Բոնապարտի իշխանության հաստատմամբ Ֆրանսիայում կատարվեց հեղափոխական գործընթացների արդյունքում ձևավորված սոցիալական, իրավական, տնտեսական նոր իրողությունների և բացարձակ քաղաքական իշխանության համադրում, ինչի արդյունքում Ֆրանսիան Եվրոպայում դարձավ գերակա տերություն: Արդիական պետության գաղափարը, այն է՝ ամբողջ երկրի տարածքում բոլոր քաղաքացիների նկատմամբ միատեսակ օրենսդրություն կիրառող կենտրոնացված վարչակարգ, Բոնապարտի կառավարման ընթացքում ստացավ իրական մարմնավորում:

²⁴ N. Davies, op. cit., p. 711.

²⁵ E. Weber, op. cit., p. 540.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Жидков О. А., Крашенинникова Н. А., *История Государства и Права Зарубежных Стран*, часть 2, Москва: Норма, 2004.

Киндер Г., Хильгеман В., *Всемирная История*, Москва: Рыбари, 2003.

Davies N., *Europe*, London: Pimlico, 1997.

Tilly Ch., *Coercion, Capital, and European States, A.D. 990-1990*, Cambridge: Basil Blackwell Inc., 1992.

Weber E., *A Modern History of Europe*, New York: W.W. Norton & Company Inc., 1971.

ՋՈՒԼԻԵՏԱ ԿՃԱՆՅԱԼ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ԳԼԱԴՍԹՈՆՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

Մուտք

19-րդ դ. երկրորդ կեսը Բրիտանական գաղութային կայսրության պատմության մեջ առավել շրջադարձայինն է՝ նշանավորվելով իբրև անցումային դարաշրջան: Գաղութային քաղաքականության մի շարք խնդիրներով պայմանավորված՝ կայսրությունը կանգնել էր ներքին և արտաքին մարտահրավերների առջև: Դարաշրջանի անցումային բնույթը նոր մոտեցումներ էր պահանջում թե՛ ընթացիկ քաղաքականության փոխակերպումների ծիրում, թե՛ ապագա հեռանկարի ռազմավարական տեսլականում: Կանգնելով ապագայի ընտրության այլընտրանքների առջև՝ Մեծ Բրիտանիան կարիք էր զգում խոշոր անհատների, որոնց գործողություններով և նորարական գաղափարներով հնարավոր կլինեին ատկա մարտահրավերներին մշակել համարժեք պատասխաններ: 19-րդ դ. բրիտանական միջավայրում նման դերակատարում ստանձնում է խոշոր պետական-քաղաքական գործիչ Ուիլյամ Յուարթ Գադսթոնը (1809-1898 թթ.):

Հոդվածը փորձ է՝ ներկայացնելու 19-րդ դարում Բրիտանական երկրորդ կայսրությանը սպառնացող կազմալուծման վտանգով պայմանավորված Միացյալ թագավորության և նրա գաղութների փոխհարաբերությունների հնարավոր զարգացումների վերաբերյալ քաղաքական վերնախափի մոտեցումներն ու տեսլականը՝ գլխավոր շեշտադրումը դնելով Բրիտանական կայսրության կերպափոխման գործընթացում Ու. Գադսթոնի գաղափարների ու գործունեության արժևորման վրա:

1. Դարաշրջանի մարտահրավերը

18-րդ դ. երկրորդ կեսին Բրիտանական առաջին գաղութային կայսրությունը կանգնել էր ամերիկյան տասներեք գաղութների

անկախացումով պայմանավորված ճգնաժամի առջև: Բրիտանական կառավարող վերնախավը, չցանկանալով որևէ զիջումների գնալ ամերիկյան գաղութներին, արագացրեց և նպաստավոր հող նախապատրաստեց Բրիտանական առաջին կայսրության (1583-1783 թթ.) փլուզման համար¹:

18-րդ դ. փոխգիջման գաղափարը դեռևս արմատացած չէր բրիտանական միջավայրում, թեև կային առանձին անհատներ, որոնք գիտակցում և կարևորում էին դրա անհրաժեշտությունը, ինչպես, օրինակ, անգլիացի պետական գործիչ, քաղաքագետ և ճարտասան Էդմունդ Բըրքը²: 1775 թ. մարտի 22-ին Համայնքների պալատում ելույթի ժամանակ Բըրքը մատնանշում էր ամերիկյան գաղութների հետ կապված խնդրի ուժային լուծման անհեռանկարային լինելը՝ կառավարությանն ու խորհրդարանին կոչ անելով համագործակցել և համաձայնության գալ վերջիններիս հետ: «Ապացուցելու համար, որ ամերիկացիները չպետք է ազատ լինեն, մենք պարտավորվում ենք արժեզրկել ազատության արժեքը որպես այդպիսին», - ասում էր նա³: Բըրքի ելույթի մեջ արդեն ուրվագծվում էին ինչպես վերաբնակեցված գաղութներին տեղական ինքնակառավարման իրավունքի տրամադրման գաղափարը, այնպես էլ կանխարգելիչ վերափոխումների անհրաժեշտությունը, որոնք հետագայում հիմնավորվեցին նրա հայտնի «Մտորումներ Ֆրանսիական հեղափոխության մասին» աշխատության մեջ⁴:

Ամերիկայի անկախության պատերազմը (1775-1783 թթ.) կարևոր ահազանգ էր Բրիտանական առաջին կայսրության կառա-

¹ W. K. Hancock, *Survey of British Commonwealth Affairs, Problems of Nationality 1918-1936*, Vol. 1, London, New York, Toronto: Oxford University Press, 1937, p. 11.

² Տե՛ս Հ. Կոնջորյան, Բրիտանական տերությունը և Ազգերի եվրոպական համագործակցությունը Է. Բըրքի ավանդապաշտության մեջ, *Պատմության հարցեր* 2, Երևան: Զանգակ հրատարակչություն, 2013, էջ 123-130:

³ Edmund Burke, *Conciliation with the Colonies*, Boston, New York and Chicago: Houghton, Mifflin & Co., 1896, p. 30.

⁴ Տե՛ս Edmund Burke, *Reflections on the French Revolution*, URL: http://archive.org/stream/reflectionsonthe005907mbp/reflectionsonthe005907mbp_djvu.txt (19.04.2014)

վարման համակարգին: Կորցնելով տասներեք գաղութները՝ նախկին հարուստ ընդարձակ կայսրությունն այժմ վերափոխվեց փոքր, աղքատ և տնտեսապես թույլ գաղութներից կազմված կայսրության⁵: Տասնամյակներ էին հարկավոր, որպեսզի այն կրկին վերականգներ հզորությունը, իսկ այդ ընթացքում մեծ կարևորություն ունեցան գաղափարական և քաղաքական այն տեղաշարժերը, որ կատարվեցին կայսրության կառավարման համակարգում:

Գրեթե կես դար էր անցել առաջին Բրիտանական կայսրության փլուզումից, երբ 19-րդ դարի կեսերին նույն վտանգը սպառնաց նաև Բրիտանական երկրորդ կայսրությանը: Այս անգամ արդեն կայսրությունը կանգնել էր գաղութներից Կանադան կորցնելու վտանգի առջև⁶: Սակայն մետրոպոլիայում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում վերաբերմունքը խնդրին ավելի բազմազան և ճկուն էր դարձել: Կայսրությունը կազմալուծման հետագա վտանգից փրկելու համար անհրաժեշտ էր մշակել և ընտրել զարգացման նոր ուղի: Աստիճանաբար թեժանում էին կայսրության ճակատագրի շուրջ ընթացող քննարկումները: Հարցը քննարկման առարկա էր թե՛ քաղաքական գործիչների, թե՛ մտավորականության շրջանում:

Ժամանակի հրամայականով պայմանավորված, 19-րդ դ. ընթացքում երկրորդ կայսրության կառուցման ճանապարհին դրա ապագա կառուցվածքի, գաղութ-մետրոպոլիա փոխհարաբերությունների վերաբերյալ բրիտանական մտավորական միջավայրում ձևավորվում են հակոտնյա մտեցումներ՝ թորիների՝ պահպանողականների և վիգերի՝ ազատականների կողմից (հետագայում ի հայտ եկան նաև դրանց ծայրահեղական և չափավոր մտեցումները):

Պահպանողականները դեմ էին գաղութներում որևէ փոփոխություններ իրագործելուն, նրանք առաջնորդվում էին «խաղաղ

ժամանակ բարեփոխումներն անօգուտ են, իսկ ճգնաժամի ժամանակ վտանգավոր» սկզբունքով: Թեև գաղութային քաղաքականության նորացման հակառակորդները դեռևս ուժեղ էին նապոլեոնյան պատերազմներից հետո⁷, սակայն արդյունաբերական հեղաշրջման արդյունքում ձևավորվել էին սոցիալական նոր շերտեր, որոնց մոտեցումը կայսրության խնդիրներին արդեն միանգամայն տարբեր էր ավանդականից: Ազնվականության և առևտրաֆինանսական օլիգարխիայի ու արդյունաբերողների հետաքրքրությունները շուտով բախվեցին, քանզի վերջիններս դեմ էին տնտեսական հարաբերությունների կարգավորման հարցում պետության միջամտությանը:

Ազատականները, հանդես գալով սոցիալական այս նոր շերտերի պաշտպանությամբ, առաջ էին քաշում ազատ առևտրի (Free trade) գաղափարը՝ պահանջելով նվազեցնել մաքսային տուրքերն ու հարկերը: Նրանց առավել արմատական թեքը ներկայացնում էին Մանչեսթրյան դպրոցի ներկայացուցիչները՝ Ռիչարդ Կորդենի գլխավորությամբ⁸, որոնք ջախջախիչ քննադատության ենթարկեցին առկա գաղութային համակարգը: Ռ. Կորդենը 1835 թ. իր ելույթում ասում էր. «Մենք գիտակցում ենք, որ ոչ մի երկիր իր կամքով չի հրաժարվել իր ենթակայության ներքո գտնվող տարածքից: Սակայն, եթե Բրիտանիայի առևտրաարդյունաբերական շրջանակներին պարզ ցույց տրվեր, թե նրանց հաշվին որքան միջոցներ են ծախսվում գաղութների պահպանման համար, ապա նրանք կհասկանային, որ այդ տիրույթները ոչ այլ ինչ են, քան ըստ էության, կցորդներ մետրոպոլիայի կեղծ կերպարի արարման համար»⁹: Նրանք առաջ էին քաշում «ծնողների և զավակների» տեսությունը, ըստ որի՝ գաղութները հասունանալով անխուսափե-

⁷ T. R. Reese, *The History of the Royal Commonwealth Society, 1868-1968*, London: Oxford University Press, 1968, p. 8.

⁸ G. Bresiger, Laissez Faire and Little Englanderism: The rise, fall, rise, and fall of the Manchester School, *Journal of Libertarian Studies* 13, No.1, 1997, pp. 45-79.

⁹ K. E. Knorr, *British Colonial Theories 1570-1850*, Toronto: University of Toronto Press, 1944, pp. 350-352.

⁵ A. L. Burt, *The Evolution of the British Empire and Commonwealth: From the American revolution*, Boston: D. C. Heath and Company, 1956, pp. 3-68.

⁶ Ph. Buckner, Introduction: Canada and the British Empire, *Canada and the British Empire: The Oxford History of the British Empire, Companion Series*, Ph. Buckner (ed.), Oxford: Oxford University Press, 2008, pp. 1-21.

լիորեն ինքնուրույն են դառնում նման նրա, ինչպես հասած պտուղն ընկնում է ծառից: Այս տեսակետն առաջին անգամ հիմնավորել էր ֆրանսիացի քաղաքական գործիչ, տնտեսական լիբերալիզմի հիմնադիր Ռ. Ժ. Թյուրգոն (1727-1781 թթ.)՝ Ամերիկյան հեղափոխությունից դեռևս քսան տարի առաջ կանխատեսելով դեպքերի հնարավոր զարգացումը. նա նշում էր, որ գաղութների ինքնուրույնության հասնելուն հաջորդելու է դրանց անխուսափելի անջատումը¹⁰: Մանչեսթերցիների նման դիրքորոշումը սակայն ամենևին չէր նշանակում, որ նրանք ուզում էին անհապաղ լքել գաղութները, թեև հիմնականում այս կետն էին շահարկում նրանց քաղաքական հակառակորդները՝ նրանց մեղադրելով կայսրության հանդեպ կրավորականության և վատատեսության մեջ: Պատասխանելով մեղադրանքներին՝ Կորդենը 1848 թ. իր ելույթներից մեկում ասում էր. «Մեզ ասում են, որ մենք ունենք բազում գաղութներ: Սակայն թույլ տվեք հարցնել՝ նպատակ չունե՞ք արդյոք դրանք պահել բանակի և նավատորմի միջոցով: Իմ կարծիքով նման մոտեցումը չի կարող ապահովել գաղութների նկատմամբ մշտական տիրապետություն: Իմ նպատակն է՝ պահպանել գաղութները նրանց կապվածության միջոցով»¹¹:

Մանչեսթերցիներին աստիճանաբար սկսեցին համարել «Փոքր Անգլիայի» կողմնակիցներ¹²: Նրանք կարծում էին, որ գաղութներին քաղաքական ինքնուրույնության տրամադրումը Մեծ Բրիտանիային չի կարող վնաս հասցնել, հակառակը, վերջինս կազատվի դրանց պահելու ավելորդ ծախսերից՝ տնտեսական և քաղաքական հզորության շնորհիվ ապահովելով գերիշխանությունը:

Մանչեսթերցիների արմատականությունն անհանգստություն առաջացրեց առավել չափավոր շրջանների մոտ: Ձևավորվեց նաև գաղութային ռեֆորմատորների խումբը, որոնցից աչքի էին ընկնում Ու. Մոլսվորտը, Չ. Բուլլերը, Է. Ուելչֆիլդը, Զ. Միլլը և այլք:

¹⁰ C. D. Hall, *British Commonwealth of Nations*, London: Methuen, 1920, p. 22.

¹¹ K. E. Knorr, op. cit., p. 373.

¹² J. S. Galbraith, *Little Englanders*, *Current History* 27, No. 160, December, 1964, pp. 353-354.

Ժխտելով հին գաղութարարության արխաիկ հայացքները՝ նրանք համամիտ չէին նաև մանչեսթերցիների հայացքների հետ: 1849 թ. Ուելչֆիլդը գրում է. «Ես կարծում եմ, որ կայսրության մեծությունն ու հեղինակությունը զգալի եկամուտ է ապահովում նրա բոլոր բնակիչների և հատկապես նրանց համար, ովքեր ապրում են Բրիտանական կղզիներում: Առավելությունը նրանում է, որ նման հսկայական տարածքների տնօրինումն արդեն իսկ Անգլիային դարձնում է տերություններից հզորագույնը: Դուք խոսում եք գաղութները պահելու ծախսատարության մասին, ես իհարկե ընդունում եմ դա, բայց թույլ տվեք հակադարձել, որ այդ ծախսերն ամենաշահավետ ներդրումն են մեզ համար, զի դրանք մեր կայսրության անունը դարձնում են ուժ, որը գերազանցում է բոլոր բանակներն ու նավատորմերը»¹³:

Մանչեսթերցիների և ռեֆորմատորների հիմնական տարբերությունը թերևս գաղութների պահպանման հարցի նկատմամբ վերաբերմունքի մեջ էր: Եթե առաջինները կարծում էին, որ ժամանակի ընթացքում սպիտակ կամ վերաբնակեցված գաղութների անջատումն անխուսափելի է, ապա երկրորդները հնարավոր էին համարում գաղութների և մետրոպոլիայի միջև պաշտոնական կապերի պահպանումը:

Ժամանակները փոխվել էին, գաղութներում տիրող իրադրությունն աստիճանաբար դուրս էր գալիս հսկողությունից, այլևս անհնարին էր գաղութները պահել հպատակության մեջ՝ միաժամանակ փորձելով խուսափել կայսրության կազմալուծման վտանգից: Այն, որ 19-րդ դ. 30-40-ական թթ. գաղութ-մետրոպոլիա փոխհարաբերությունների հարցի շուրջ է. Բըրքի հայացքները կիսում էին արդեն շատերը, և ի հայտ էր եկել տեսաբանների մի ամբողջ խումբ, որոնց գաղափարաբանության հիմքում ընկած էին փոխզիջման և ազատության պատկերացումները, հնարավորություն էր ստեղծում գտնելու «ոսկե միջինի» տարբերակը:

Հարց է առաջանում՝ չկա՞ր արդյոք գաղութ-մետրոպոլիա փոխհարաբերությունների կարգաբերման երրորդ ճանապարհ: Այս ժամանակ է, որ իր գործունեությունն է ծավալում բրիտանական

¹³ K. E. Knorr, op. cit., pp. 350-352.

մտավոր և քաղաքական դաշտի ամենանշանավոր և ազդեցիկ գործիչներից մեկը՝ որն իր հեռատեսությամբ և գործով հող է նախապատրաստում կայսրության հետագա կերպավորման համար՝ ինքնալուծարման ճանապարհով ինքնակարգաբերման: Այդ գործիչը Ուիլյամ Յոնարթ Գլադսթոնն էր՝ Մեծ Բրիտանիայի քառակի վարչապետը:

2. Կամավորության վրա հիմնված կայսերական կապերի գլադսթոնյան հղացքը

Ուիլյամ Յ. Գլադսթոնը 19-րդ դ. 2-րդ կեսի առավել նշանավոր քաղաքական գործիչներից էր: Իր գործունեությունը նա սկսեց որպես պահպանողական՝ 1832 թ. 23 տարեկանում մուտք գործելով խորհրդարան որպես թորիների ներկայացուցիչ: Սկզբնական շրջանի իր ելույթներում Գլադսթոնը հիմնականում պաշտպանում էր Իդլանդիայի հանդեպ հալածանքների կիրարկումը, դեմ արտահայտվում հրեաների խորհրդարան մուտք գործելուն, ստրկության արգելքին, 1832 թ. խորհրդարանական բարեփոխումներին: Նրա քաղաքական կողմնորոշման վրա հավասարաչափ ազդել էին ինչպես ընտանեկան դաստիարակությունը, այնպես էլ Իթոնում և Օքսֆորդում ստացած կրթությունը, որտեղ առավել ամրապնդվեցին նրա պահպանողական հայացքները: Սակայն տարիներ անց Գլադսթոնն Օքսֆորդում ստացած կրթության վերաբերյալ այսպես է արտահայտվել. «Օքսֆորդը չսովորեցրեց ինձ անհրաժեշտ ձևով գնահատել մարդկային ազատության հարատև և անգին սկզբունքները»¹⁴: Ավելի է, որ Գլադսթոնի պահպանողական դիրքորոշումն իր գործունեության սկզբում թերևս պայմանավորված էր արտաքին գործոններով, բայց հընթացս ժամանակի՝ նրա գաղափարներն ու համոզմունքները, փորձառության կուտակմամբ պայմանավորված, զարգացում ապրեցին: Թեև նրա ներքին խոր կրոնականությունն անփոփոխ մնաց ամբողջ կյանքի ընթացքում, բայց բրիտանական ներքին և արտաքին քաղաքականության

հարցերի վերաբերյալ հայացքները զգալի փոփոխություններ կրեցին, ինչն էլ ապահովեց նրա անցումն ազատականների ճամբար:

Հարդյունս՝ իր քաղաքական գործունեության սկզբում պաշտպանած դրույթներից գրեթե բոլորը մոտ երկու տասնամյակ անց ամբողջությամբ քննադատության ենթարկվեցին հենց իր կողմից: Նման փոփոխության վրա մեծ ազդեցություն ունեցան այն պաշտոնները, որ նա զբաղեցրել էր այդ տարիներին: Նախքան վարչապետ դառնալը Գլադսթոնը զբաղեցրել էր առևտրի (President of the Board of Trade), գաղութների (Colonial Secretary), երկու անգամ ֆինանսների (Chancellor of the Exchequer) նախարարի պաշտոնները: Վերջինս երկրորդն էր իր նշանակությամբ վարչապետի պաշտոնից հետո¹⁵: Նա գիտակցում էր սոցիալական և քաղաքական ոլորտներում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, որոնց, սակայն, թորիները դեմ էին: 1850-ականներին Գլադսթոնը վերջնականապես խզում է կապերը պահպանողականների հետ՝ անցնելով ազատականների շարքերը: 1868 թ. դառնում է ազատականների առաջնորդը Համայնքների պալատում: 1868-1894 թթ. գլխավորելով ազատականների կուսակցությունը՝ չորս անգամ ընտրվում է վարչապետի պաշտոնում (1868-1874 թթ., 1880-1885 թթ., 1886 թ., 1892-1894 թթ.):

Իր պաշտոնավարության տարիներին, ծանոթանալով առկա խնդիրներին, Գլադսթոնը զալով իշխանության ձեռնամուխ է լինում բրիտանական տերության ներքին և արտաքին քաղաքական ուղեգծի զարգացման նոր մոտեցումների մշակման ծրագրին, որի շնորհիվ կայսրությունն ի զորու կլինեք համարժեք պատասխաններ մշակելու արտաքին և ներքին մարտահրավերներին: Մի կողմ թողնելով ներքին և արտաքին կյանքի տարբեր խնդիրներին վերաբերող Գլադսթոնի կատարված բարեփոխումները՝ սույն հոդվածում առանձնակի սևեռումի խնդիր ենք դարձրել գաղութային քաղաքականության մետրոպոլիա-գաղութներ փոխհարաբերությունների կարգաբերման գլադսթոնյան տեսլականը, որի իրա-

¹⁴ E. J. Feuchtwanger, *Gladstone*, London: Allen Lane, 1975, p. 12.

¹⁵ M. Partridge, *Gladstone, Routledge Historical Biographies*, London and New York: Routledge, 2003, Kindle Edition, Loc. 109-113.

գործումը բախտորոշ եղավ բրիտանական կայսրության հետագա շարունակականության պահպանման համար:

Մետրոպոլիայի և գաղութների հարաբերությունների փոփոխություններն անհրաժեշտություն էին ստեղծել վերանայել դրանք՝ տեսական նոր մոտեցումներ մշակելով կայսերական քաղաքականության մեջ: Բրիտանական մտավոր միջավայրում առավել ճշգրիտ այդ փոփոխությունների էությունն ըմբռնել էր Գլադսթոնը, որը կանխատեսել էր մետրոպոլիայի և գաղութների միջև հարաբերությունների զարգացման հնարավոր բարդությունները:

1850-ականների կեսին նա զարգացրեց «Կամավորության սկզբունքի վրա հիմնված կայսերական կապերի» հղացքը, որի հիմնական դրույթներն արտահայտվեցին «Մեր գաղութները» ելույթում.

«Փորձն ապացուցել է, որ եթե դուք ուզում եք ամրապնդել կապը գաղութների և այս երկրի միջև, եթե ուզում եք մեծացնել նմանությունը գաղութների և այս երկրի միջև, եթե կամենում եք բրիտանական օրենքը տեսնել հարգանքով պահպանված և բրիտանական հաստատություններն ընդունելի ու սիրելի գաղութներում, երբեք մի ասոցացրեք նրանց հետ մեր կողմից իրականացվող ուժի և հարկադրանքի ատելի անվանումը...»

Կառավարեք նրանց համաձայն ազատության սկզբունքի, թույլ մի տվեք, որ զգան լուծ իրենց պարանոցի վրա, թույլ տվեք նրանց հասկանալ, որ հարաբերությունները ձեր և նրանց միջև կապվածության հարաբերություններ են: Նույնիսկ միության շարունակության պարագային հնարավորություն տվեք գաղութաբնակներին լինելու դատավորներ, զի նրանք կլինեն լավագույն դատավորները կապված նրա հետ՝ պետք է շարունակեն ձեզ հետ լինել կամ ոչ, և ապավինելով դրան դուք կքաղեք հարուստ պարգևատրումն այդ կապվածության...»

Պաշտպանեք նրանց արտաքին վտանգից, առանց կարգավորելու արտաքին հարաբերությունները..., թույլ տվեք նրանց լինել դատավորներ, և ես կանխատեսում եմ, որ եթե դուք թողնեք նրանց դատելու ազատությունը դժվար է ասել, թե երբ կգա այն օրը, երբ նրանք կցանկանան անջատվել Անգլիայի մեծ անունից: Դրանից կախված էլ նրանք կցանկանան այդ

անվան մասը լինել: Նրանց այդ զգացումի մեջ էլ դուք կգտնեք միության գլխավոր երաշխիքը»¹⁶:

Մետրոպոլիա-գաղութներ հարաբերություններում Գլադսթոնը կարևորում էր ոչ թե պարտադրանքի, այլ կամավոր համագործակցության սկզբունքը, որը պետք է հենվեր լեզվի և մշակութային ավանդույթների նմանության, քաղաքական կառույցների ընդհանրության ու տնտեսական նման հետաքրքրությունների վրա՝ կարևորելով նվիրումն անգլիական թագին: Նման համագործակցությունը, որի ապահովման գլխավոր գործիքը պետք է լիներ պատասխանատու կառավարության և հոմըրոսի՝ տեղական ինքնակառավարման իրավունքի տարածումը վերաբնակեցված կամ սպիտակ գաղութներում, գլխավոր հենքն էր դառնալու կայսրության միասնության պահպանման համար: «Հիմա է, որ ժամանակն է հասկանալու, որ գաղութների գործերն առավել լավ իրագործվում և ապահովվում են հենց իրենց գաղութաբնակների կողմից, ինչպես Անգլիայի գործերը լավագույնս տնօրինվում են անգլիացիների կողմից»,- ասում էր նա¹⁷:

Գլադսթոնյան այս հղացքը ազատականների 1860-1870-ականների քաղաքականության հիմնադրույթը դարձավ: Բրիտանական գաղութներից Կանադային 1867 թ. դոմինիոնի կարգավիճակի տրամադրումը այս հղացքի իրագործման առաջին գործնական քայլն էր¹⁸: Հետագայում հոմըրոսի կիրառումը վերաբնակեցված մյուս գաղութներում ժամանակի հարց դարձավ¹⁹:

1870-ական թթ., նոր տարածքների նվաճման համար մեծ տերությունների պայքարով պայմանավորված, միջազգային դրությունը սրվել էր: Մեծ ակտիվություն էր ցուցաբերում 1871 թ. ձևա-

¹⁶ William Ewart Gladstone, *Our Colonies*, An address delivered to the Members of the Mechanics' Institute, Chester, On Monday the 12th November, 1855, London: John W. Parker and Son. West Strand, 1855, pp. 20-21.

¹⁷ Ibid, p. 20.

¹⁸ Ph. Buckner, *The Creation of the Dominion of Canada, Canada and The British Empire*, pp. 66-86.

¹⁹ 19-րդ դ. 50-ական թթ. ինքնակառավարման իրավունքը նախ տարածվեց Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Հարավաֆրիկյան Միությունում, ապա միայն կայսրության «բազմառաս» հատվածում:

վորված Գերմանական կայսրությունը: Անհանգիստ վիճակ էր համակել պահպանողականներին և որոշ ազատականների: Կայսրության միասնության պահպանմամբ անհանգստացածները, համաձայն չլինելով ազատականների որդեգրած գլադսթոնյան քաղաքական ուղեգծին, համախմբվեցին պահպանողականների առաջնորդ Բենջամին Դիզրայելի (1804-1881 թթ.) շուրջ: Դիզրայելին, գնահատելով միջազգային իրավիճակի բարդությունը և առաջիկայում սպասվելիք փոփոխություններն ու մարտահրավերները, հասկանում էր, որ նման նպաստավոր պայմաններում կայսրության միասնության հարցի շահարկումը լավ հնարավորություն է իշխանությունն ազատականներից խլելու համար:

1872 թ. ամռանը Դիզրայելին պայքար սկսեց Գլադսթոնի դեմ՝ մեղադրելով նրան կայսրության ապակենտրոնացման մեջ: Նրա կարծիքով, եթե մյուս ազգերն այդ ժամանակ միավորվում և համախմբվում էին, ամրապնդելով իրենց պետականությունը, Մեծ Բրիտանիան կործանվում էր ազատականների կործանիչ քաղաքականության հետևանքով: Դիզրայելին զգուշանում էր և վտանգ տեսնում հոմրոպի սկզբունքի ընդլայնման մեջ, մինչդեռ Գլադսթոնը հիմնավորում էր փոփոխությունների անխուսափելիությունը, որոնք կատարվում էին կայսրության կառավարման համակարգում: Նրա դիրքորոշումը հիմնվում էր Անգլիայի քաղաքակրթող առաքելության վրա՝ «երկիր, ուր ազատությունը կարգուկանոնի հետ համերաշխ էր ու հաշտեցված»: Ըստ Դիզրայելի՝ Բրիտանիան կանգնել էր ընտրության առջև՝ կա՛մ վերածվել եվրոպական փոքրիկ պետության՝ «Փոքր Անգլիայի», կա՛մ պահպանել գերտերության կարգավիճակը՝ մնալով Մեծ Բրիտանիա:

Գլադսթոնի և Դիզրայելի միջև ծավալված պայքարը ժամանակակիցների կողմից ստացավ «Մեծ մրցակցություն» (Great Rivalry) անվանումը: Մրցակցության ընթացքում էլ Գլադսթոնին հաջողվեց իր գաղափարների հետագա կիրարկման համար գործնական հող նախապատրաստել: Առավել ակնառու է նրա ծավալած պայքարն իռլանդացիներին հոմրոպի իրավունք շնորհելու համար: Մի կողմ թողնելով պայքարի մանրամասները՝ նշենք, որ բարձրացնելով այս հարցը և, անկախ քննադատությունից, պայ-

քարելով դրա իրագործման համար, Գլադսթոնին հաջողվեց զգալիորեն կոտրել գաղութների և դրանց հետ հարաբերությունների վերաբերյալ հասարակության շրջանում տիրող կարծրատիպերը: Նրա շնորհիվ է, որ բրիտանական միջավայրում այս հարցին շատերն այլ կերպ սկսեցին նայել:

Վայելելով բարեփոխչի համբավը, նա որջ կյանքի ընթացքում նախապատվությունը տվեց ուղղակի կառավարման փոխարեն ինքնակառավարմանը, հալածանքների փոխարեն՝ հաշտեցմանը: Կայսրությունը, ըստ նրա, երկրների մի համայնք էր, որը միասին էր պահվում բրիտանական մշակույթի հանդեպ հավատարմությամբ և ազատ առևտրի աշխարհում ընդհանուր տնտեսական հետաքրքրություններով²⁰: Նշանավոր պատմաբաններ Ջոն Մորլին և Փոլ Քնեփլենդը Գլադսթոնին նկարագրում են որպես նախակարապետ, եթե ոչ «հայրը» արդի Համագործակցության (Commonwealth) գաղափարի:

Գլադսթոնը իր այս “Proto-Commonwealth”-ի տեսլականը զարգացրել է էդմունդ Բլրքից: Հաճախ քաղաքական քարոզարշավների ընթացքում, Գլադսթոնն իր հայացքների հեռանկարային լինելն ու իր գործունեության ուղղվածությունը ըմբռնելու համար, հատկապես իռլանդական հարցի պարագային, իր քաղաքական հակառակորդներին բազմիցս մեջբերում էր իր համար մեծ հեղինակություն հանդիսացող Բլրքին՝ որպես խորհուրդ առաջարկելով կարողալ վերջինիս գրքերը²¹: Բլրքի փոխադարձ համաձայնության և ազատության մասին գաղափարները մեծ ազդեցություն էին գործել Գլադսթոնի վրա. նա արդեն պատրաստ էր երկխոսության:

Եթե 18-րդ դ. Բրիտանական տերության բլրքյան պատկերը որոշակի ներգործություն է ունեցել Ազգերի բրիտանական համագործակցության գաղափարական հիմնավորման, նախապատ-

²⁰ E. Biagini, Gladstone and Britain's Imperial Role, *Journal of Liberal Democrat History*, 20, Autumn 1998, p. 34.

²¹ H. de F. Montgomery, *Gladstone and Burke*, Dublin, London: P. S. Kings and Son, 1882, p. 3.

րաստման և ձևավորման վրա²², ապա տերության գաղափարային պատկերն արդեն ուղղակի ազդեցություն է ունենում և գործնական հողը դառնում մի քանի տասնամյակ անց կայսրության խաղաղ կերպափոխման:

Ամփոփում

1840-1860-ականների ազատականների կողմից իրագործված կայսերական վերափոխումները կանխարգելիչ (preventive reforms) բնույթ կրեցին: Մեծոքյա հեռվից ակներև է դառնում նրանց ընտրության ճկունությունը. կազմակերպելով սեփական այլազման գործընթացը՝ ճիշտ ժամանակին կատարված փոփոխություններով նրանք փրկեցին Բրիտանական երկրորդ կայսրությունը կազմալուծման ճակատագրից, ինչը բաժին է հասել գրեթե բոլոր խոշոր գաղութային կայսրություններին: Ճիշտ է, այն դեռևս ուներ բավականաչափ հզորություն և հնարավորություն շարունակելու վերաբնակեցված գաղութների ուղղակի կառավարումը (Direct rule), սակայն ազատականները, Ու. Գլադսթոնի գլխավորությամբ, հրաժարվեցին ավանդական ուժի կիրառումի մարտավարությունից՝ այդ քայլով բրիտանական կայսերական քաղաքականության մեջ կատարելով ամենանշանավոր շրջադարձերից մեկը: Այդ ընտրության հարցում Ու. Գլադսթոնի ներդրումն անուրանալի է: Նրանք մշակեցին հոմրոպի տեսությունը, ինքնակառավարվող գաղութների համակարգը, որոնց միավորումը կայսրության սահմաններում հետագայում վերաճակափոխվեց Ազգերի համագործակցության մինչ այժմ՝ թեև արդեն այլ տեսքով պահպանելով կայսրության ամբողջականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Burke Edmund, *Conciliation with the Colonies*, Boston, New York and Chicago: Houghton, Mifflin & Co., 1896.
- Burke Edmund, *Reflections on the French Revolution*, URL:http://archive.org/stream/reflectionsonthe005907mbp/reflectionsonthe005907mbp_djvu.txt (19.04.2014)
- Gladstone William Ewart, *Our Colonies*, An address delivered to the Members of the Mechanics' Institute, Chester, On Monday the 12th November, 1855, London: John W. Parker and Son. West Strand, 1855.
- Montgomery H. de F., *Burke and Gladstone*, Dublin, London: P.S. Kings and Son, 1882, p. 3
- Կոնցորյան Հ., Բրիտանական տերությունը և Ազգերի եվրոպական համագործակցությունը Է. Բըրքի ավանդապաշտության մեջ, *Պատմության հարցեր* 2, Երևան: Զանգակ հրատարակչություն, 2013, էջ 123-130:
- Biagini E., Gladstone and Britain's Imperial Role, *Journal of Liberal Democrat History*, 20, Autumn 1998, p. 34.
- Bresiger G., Laissez Faire and Little Englanderism: The rise, fall, rise, and fall of the Manchester School, *Journal of Libertarian Studies* 13, No. 1, 1997, pp. 45-79.
- Buckner Ph., Introduction: Canada and the British Empire, *Canada and the British Empire: The Oxford History of the British Empire*, Companion Series, Ph. Buckner (ed.), Oxford: Oxford University Press, 2008, pp. 1-21.
- Burt A. L., *The Evolution of the British Empire and Commonwealth: From the American revolution*, Boston: D. C. Heath and Company, 1956.
- Feuchtwager E. J., Gladstone, London: Allen Lane, 1975.
- Galbraith J. S., Little Englanders, *Current History* 27, No. 160, December, 1964, pp. 353-358.
- Hall C. D., *British Commonwealth of Nations*, London: Methuen, 1920.

²² Հ. Կոնցորյան, նշվ. աշխ., էջ 126:

Hancock W. K., Survey of British Commonwealth Affairs, *Problems of Nationality 1918-1936*, Vol. 1, London, New York, Toronto: Oxford University Press, 1937.

Knorr K. E., *British Colonial Theories 1570-1850*, Toronto: University of Toronto Press, 1944.

Partridge M., *Gladstone*, Routledge Historical Biographies, London and New York: Routledge, 2003, (Kindle Edition).

Reese T. R., *The History of the Royal Commonwealth Society, 1868-1968*, London: Oxford University Press, 1968.

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՓԱԿԼԵՎԱՆՅԱՆ

ՄՈՌԱՑՎԱԾ, ԲԱՅՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎԱԾ ՏԱՐԻՆԵՐ

Մուտք

Համաշխարհային պատմագիտական միտքը Վադիմիր Իլյիչ Լենինին այնքան շատ է անդրադարձել, որ լուսաբանման յուրաքանչյուր նոր փորձ ենթարկվում է ինչ-որ բանում կրկնվելու վտանգի: Սակայն, այդուհանդերձ Լենինի կյանքի և գործունեության ամբողջ ընթացքում եղել է ժամանակահատված, որի վերաբերյալ տեղեկությունները տասնամյակներ շարունակ անհասանելի են եղել շատերիս համար:

Վադիմիր Իլյիչի ծննդյան և մահվան թվականները խորհրդային հասարակության գրեթե բոլոր ներկայացուցիչները գիտեին դեռևս նախադպրոցական տարիներից՝ հարմար առիթների դեպքում հավելելով, որ նրանց և միլիոնավոր մարդկանց ընկալումների բացարձակ հանճարն ու «համաշխարհային պրոլետարիատի» անսխալական առաջնորդը մահացել է չբոլորած իր 54 տարին: Սակայն որևէ մեկը չէր փորձում քննարկման առարկա դարձնել նրա գիտակից կյանքի մի զգալի ժամանակահատված՝ «վտարանդիության» տարիները: Բազմաթիվ հանգամանքներով պայմանավորված՝ այդ ժամանակահատվածի վերաբերյալ չէին խոսում նաև Խորհրդային Միության փլուզումից հետո, ինչի կապակցությամբ էլ Լենինի կյանքի և գործունեության 15 տարիներ հիմնականում մնացել են չլուսաբանված՝ ստվերում:

Այդ տարիներին գտնվելով արտասահմանում՝ Լենինը չէր կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ: Ավելորդ է նշել նաև արտասահմանում նրա ծավալած հեղափոխական գործունեության հնարավորության մասին:

Եվ, ուրեմն, ինչ գործունեությամբ էր զբաղվում Լենինն արտասահմանյան մի շարք երկրներում 1900-1905 և 1908-1917 թթ. և,

գտնվելով արտասահմանում, ինչ ազդեցություն կարող էր ունենալ ռուսական ներքաղաքական իրադարձությունների վրա:

Վտարանդիության տարիներին Լենինն ապրելով Գերմանիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլուր, առավելապես զբաղվել է ստեղծագործ աշխատանքով: Նա ժամանակ առ ժամանակ հանդես է եկել հրապարակումներով, հոդվածներով, զեկուցումներով, գրել է ստեղծագործություններ, զբաղվել ընթերցանությամբ: Լենինն իր վտարանդի հայրենակիցների հետ սրճարաններում, ռեստորաններում կամ քաղաքային ակումբներում քննարկում էր ռուսական ներքաղաքական որոշ հարցեր, հանդիպում գերմանական սոցիալ-դեմոկրատներից ոմանց հետ և զրուցում տեսական հարցերի շուրջ:

Սակայն, իրականում այդ ամենը կազմել է նրա ժամանակի ամենափոքր մասը, քանզի այդ նույն տարիներին Լենինը պարզապես ազնվականին հարիր ժամանակ էր անցկացնում՝ իրեն թույլ տալով բազմաթիվ շոպոտություններ և ճոխություններ: Նա կարող էր իրեն թույլ տալ բազմաթիվ ճանապարհորդություններ, հեշտությանը տեղափոխվել Բեռնից Ցյուրիխ, գնալ Լոնդոն, Բեռլին, Փարիզ, տեսակցել Գորկուն Կապրիում, վարձակալել թանկարժեք շքեղ բնակարաններ և այլն²³:

Ժնևից մորը գրած նամակներից մեկում Ույանովը գրում էր, որ լավ կլիներ, որ քույրը և եղբայրը հոկտեմբերի երկրորդ կեսին գան իր մոտ, որտեղից կգնան Իտալիա և հրաշալի ժամանակ կանցկացնեն...²⁴: Միանգամայն հասկանալի է, որ արտասահմանում ապրելու և «հրաշալի ժամանակ» անցկացնելու համար մոր կողմից մերթընդմեջ ուղարկված 100 ռուբլի գումարը մեղմ ասած բավական չէր: Իսկ շուրջ 15 տարի ապրելով արտասահմանում

²³ *Письма Владимира Ильича к родным*, Москва, 1985, с. 95, 110.

²⁴ Նույն տեղում, էջ 78:

(զգալի հատվածը ոչ միայնակ) ոչ միայն Լենինը, այլև յուրաքանչյուր ոք կարող էր ծախսել մի հսկայական կարողություն:

Լենինը, փաստորեն, կարիքի մեջ չի եղել ո՛չ Ռուսաստանում, ո՛չ էլ արտասահմանում: Նրա համար որպես ֆինանսական աղբյուրներ եղել են ընտանեկան բյուջեն և կուսակցության գանձարկը, որի մասին ինքը չէր էլ թաքցնում²⁵: Եթե ընտանեկան բյուջեի մասին գիտեին և՛ ռուսական, և՛ արտասահմանյան հատուկ ծառայությունները, ապա կուսակցության գանձարկի ֆինանսական կարողությունների մասին և Լենինի կողմից այդ միջոցների տնօրինման շատ հարցեր այսօր ևս անհայտ են:

Անդրադառնալով կուսակցության գանձարկի ֆինանսական կարողությունների հարցին՝ պետք է նշել, որ դա ունեցել է համալրման երկու աղբյուր:

Իր հիշողություններում Նադեժդա Կրուպսկայան նշում էր, որ բոլշևիկները գումարներ էին հայթայթում նաև ավազակային հարձակումների, կողոպուտների միջոցով: Հենց այդ գումարներն էին գնում արտասահմանում գտնվող բոլշևիկյան գանձարկը²⁶: Անշուշտ, խոսքը մեծ գումարների մասին է և որպես օրինակ կարելի է նշել 1907 թ. հունիսի 26-ին, Թիֆլիսում, Երևանյան հրապարակում բոլշևիկների կողմից կազմակերպված ավազակային հարձակումը, որի ժամանակ բանկից առևանգվեց 340.000 ռուբլի²⁷:

Որպես գանձարկի համալրման երկրորդ աղբյուր շրջանառվում է գերմանական կապիտալի կանոնավոր հոսքը: Փաստ է նաև, որ Լենինն է տնօրինել այդ գումարները²⁸:

Եթե բոլշևիկյան գանձարկը գերմանական կապիտալի հոսքը հնարավոր է պատկերացնել և հասկանալ կապված գանձարկի արտասահմանում գտնվելու հանգամանքի հետ, ապա գանձարկ-

²⁵ *Любящий тебя В. Ульянов: Письма В. И. Ленина матери*, Москва, 1967, с. 108.

²⁶ *Новый журнал*, 1973, № 110, с. 270-273.

²⁷ Նույն տեղում, էջ 274-275:

²⁸ *Российский государственный архив социально-политической истории* (РГАСПИ), ф. 2, оп. 2, д. 22, л. 1.

դի համալրման առաջին եղանակի մասին հարկ է նշել առավել հանգամանալից:

Բուլշևիկ Ա. Դ. Նագովսկին իր հիշողություններում գրում է, որ 1905 թ. ամռանը, նա բուլշևիկյան կազանյան կազմակերպության հանձնարարությամբ մեկնել է Ժնև, որ Լենինին հանձնի 20.000 ռուբլի և ստանա համապատասխան հրահանգներ²⁹: Վտարանդիության ընթացքում՝ մինչև 1917 թ., բուլշևիկներից շատերն են (Տեր-Պետրոսյան, Ջուղաշվիլի և այլք) Լենինին այցելել արտասահմանում և գումարներ փոխանցել: Նշվածն առաջացնում է հետաքրքրական ևս մեկ հարցադրում: Ինչ հրահանգներ պետք է տար Լենինն իրեն այցելող բուլշևիկներին, երբ կտրված էր ռուսական իրականությունից: Մեր կարծիքով որևէ հրահանգ Լենինը տալ չէր կարող և ըստ էության դրա խնդիրը չկար էլ: Լենինին այցելել են պարզապես առձեռն գումարներ փոխանցելու համար, քանզի հայտնի պատճառներով այդ գումարները չէին կարող Ռուսաստանից բանկային փոխանցումների միջոցով արտասահմանում հանձնվել Լենինին: Ստացվում է, որ բուլշևիկյան դրամարկը կամ ֆինանսական գործոնը նրանց պատմության ամենահանցավոր և խորհրդավոր էջերից է:

Եթե մերօրյա հետազոտողներն ուշադրություն դարձնեն, ապա կտեսնեն, որ այդ միջոցները պահպանվել են այն նույն երկրների ֆինանսական հաստատություններում, որտեղ ապրել Լենինն իր «վտարանդիության» տարիներին: Այսինքն, եթե Լենինը Գերմանիայում էր ապա, կուսակցության գանձարկըը նույնպես, եթե Շվեյցարիայում՝ ապա գանձարկըը նույնպես:

Ըստ էության, կտրված լինելով ռուսական իրականությունից, Լենինն անվրդով կյանք էր վայելում արտասահմանում, նույնիսկ այնքան կտրված, որ 1917 թ. փետրվարյան հեղափոխության նախօրյակին նա չէր էլ պատկերացնում, որ Ռուսաստանում հեղափոխությունն այդքան մոտ է:

1917 թ. հունվարին, երբ Լենինին հրավիրում են Տյուրիխի «Ազգային Տուն», որպեսզի ուսանողության առջև հանդես գա ու-

²⁹ *Новый журнал*, 1967, № 88, с. 170-171.

սական առաջին հեղափոխության վերաբերյալ զեկույցով, զեկույցի տեքստում նա նշում է, որ գալիք տարիներին Եվրոպայում տեղի է ունենալու ժողովրդական հեղափոխություն³⁰: Լենինը նշում է Եվրոպայի, և ոչ Ռուսաստանի մասին: Ավելին, զեկույցի վերջում նա նշել է նաև, որ հեղափոխությունը կլինի, երբ իր սերնդի ներկայացուցիչներն այլևս չեն լինի³¹: Լենինը չէր տեսնում, որ հեղափոխությանը մնացել է ընդամենը մի քանի շաբաթ, չգիտեր թե որտեղ է այն լինելու և պատկերացում չուներ նրա բնույթի մասին: Նա միայն մարտի 2-ին է իմացել Պետրոգրադում տեղի ունեցած հեղափոխության մասին, ցնցվել է անակնկալից, ապա փորձել է ամեն ինչի գնով հասնել Ռուսաստան:

Իմանալով լուրը նա իր առաջին նամակը գրում է Իննեսա Արմանդին³², որտեղ իր հիացմունքը չթաքցնելով նշում է նաև, որ ակնհայտ էր, որ Ռուսաստանն ապրում էր իր վերջին օրերը և գտնվում էր հեղափոխության նախօրեին³³:

1917 թ. փետրվարյան հեղափոխության լուրը ստանալուն պես Լենինը մտածում էր միայն մեկ բանի մասին: Նա տեսնում էր շուտ հասնել Ռուսաստան՝ վախենալով, որ «պատմական գնացքը», որն արդեն շարժվել էր, կարող էր մեկնել առանց իրեն: Սակայն Ռուսաստան մեկնելը հեշտ գործ չէր և նրա բոլոր փորձերը տապալվում էին մեկը մյուսի հետևից: Նրա տրամադրության տակ գտնվող հսկայական ֆինանսական միջոցները, կուսակցական արկածախնդիրների փաստաթղթային մեքենայությունները ևս անզոր էին: Ռուսաստանի հետ սահմանակից և առավել ևս հակամարտող երկրների բոլոր հատուկ ծառայությունները պատերազմական իրավիճակում զգաստացած էին. Լենինը Ռուսաստան վերադառնալու հույս չուներ: Սակայն այդ ժամանակ Լենինի և

³⁰ В. И. Ленин, *Полное собрание сочинений*, т. 30, Москва, 1973, с. 327.

³¹ Г. М. Катков, *Февральская революция*, Москва, 2006, с. 20.

³² Իննեսա Արմանը՝ նույն էլիզաբեթ Պեշո դը Էրբենվիլը բազմաթիվ պատմաբանների կարծիքով եղել է Լենինի սիրուհին: Նա նույնպես գրադվել է հեղափոխական գործունեությամբ: Ավելի մանրամասն տե՛ս В. В. Соколов, *Любовь вождя: Крупская и Арманд*, Москва, 2004.

³³ В. И. Ленин, *Биографическая хроника*, т. 4, Москва, 1973, с. 1.

գերմանական հատուկ ծառայությունների շահերը համընկել են: Սեփական երկրի պարտության կողմնակից Լենինի գաղափարների մասին գերմանական կառավարությունում և բարձրաստիճան գինվորականության շրջանում գիտեին գրեթե բոլորը: Արդյունքում, հասկանալով Ռուսաստանի ներքաղաքական իրավիճակը, գերմանացիները պետական մակարդակով՝ զմոսված վագոնով կազմակերպեցին Լենինի անվնաս վերադարձը Ռուսաստան:

Գերմանացի հայտնի պետական և ռազմական գործիչ Էրիխ Լյուդենդորֆը³⁴ տարիներ անց իր հիշողություններում գրում է, որ օգնելով Լենինին մեր կառավարությունն իր վրա վերցրեց հատուկ պատասխանատվություն: Ռազմական տեսանկյունից այդ ձեռնարկումը արդարացված էր: Ռուսաստանը պետք էր տապալել³⁵:

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես ռուսական պետականության նավը ուղղություն վերցրեց դեպի մի արյունալի հանգրվան, որը կոչվում էր ռուսական կայսրության փլուզում:

Պատահականությունների, իրադարձությունների անհավանական խաչաձևումների ու ներքաղաքական զարգացումների արդյունքում Լենինը իր կուսակիցների հետ հասավ նույն արյունալի հանգրվանը՝ հայտնվելով իրադրության տիրոջ կարգավիճակում:

Ամփոփում

Գալով իշխանության՝ բոլշևիկները հաստատեցին ըողարկված շահագործում: Ազգային և սոցիալական անհավասարությանը փոխարինեց դասային-վարչարարական անհավասարությունը: Դասակարգային անազատությանը փոխարինեց գաղափարական անազատությունը: ԽՍՀՄ փլուզումը ցույց տվեց, որ լենինյան կուսակցությունը չէր կարող կենսունակ լինել քաղաքացիական հասարակության առկայության պարագայում: Դա իդեալական հենք էր տոտալիտար տերության համար, բայց ոչ նույնիսկ ամենավատ ժողովրդավարության դեպքում:

³⁴ Էրիխ Ֆրիդրիխ Վիլհելմ Լյուդենդորֆն Առաջին աշխարհամարտի ազդարարումից հետո ստանձնել է գերմանական զինված ուժերի շտաբի պետի պաշտոնը:

³⁵ E. Ludendorff, *Meine Kriegserinnerungen. 1914-1918*, Berlin, 1919, p. 47.

Լենինի համոզմունքը, որ միայն «պայքարով և պատերազմով» էին լուծվում «մարդկության մեծագույն հարցերը»³⁶, չբռնեց ժամանակի փորձությունը: Պատմությունը ցույց տվեց, որ հաճախ «մարդկության մեծագույն հարցերը» չի կարելի լուծել «պայքարով և պատերազմով»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ludendorff E., *Meine Kriegserinnerungen, 1914-1918*, Berlin, 1919.
Ленин В. И., *Биографическая хроника*, т. 4, Москва, 1973.
Ленин В. И., *Полное собрание сочинений*, т. 30, Москва, 1973.
Ленин В. И., *Полное собрание сочинений*, т. 37, Москва, 1969.
Любящий тебя В. Ульянов: Письма В. И. Ленина матери, Москва, 1967.
Новый журнал, 1967, № 88.
Новый журнал, 1973, № 110.
Письма Владимира Ильича к родным, Москва, 1985.
Российский государственный архив социально-политической истории, (РГАСПИ), ф. 2, оп. 2. д. 22.
Соколов Б. В., *Любовь вождя: Крупская и Арманд*, Москва, 2004.
Катков Г. М., *Февральская революция*, Москва, 2006.

³⁶ В. И. Ленин, *Полное собрание сочинений*, т. 37, Москва, 1969, с. 58.

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Է. ՎԵՆԻՀԵԼՈՍԻ ՎԵՐԱՓՈԽԻՉ

ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

(Պետական գործչի և առաջնորդի կերպարը)

Մուտք

1910-1930-ական թթ. ընդգրկող շրջափուլը Հունաստանի արդի պատմության մեջ, թերևս, ամենաբարդն ու շրջադարձայինն է: Հունական պետության ու հասարակության համար այն նշանավորվեց իբրև անցումային մի դարաշրջան, որին բնորոշ հասարակական համակարգերի (մասնավորապես՝ ընկերային-տնտեսական, պետաիրավական, քաղաքական) փոխակերպումների ծիրում հույժ կարևորվում է **անհատի՝** առաջնորդի առանցքային դերը: Այս առումով առաջնային են դառնում պատմական խոշոր անհատի կամքն ու գործողությունները՝ ուղղված հանրույթի ինքնայլացմանն ու փոխակերպվող համակարգերի կայունացմանը, ընդ որում՝ համակարգի զարգացման տարբեր, հաճախ նաև իրարամերժ այլընտրանքների առկայության պարագայում: Նշյալ դարաշրջանում այդպիսի դերակատար էր խոշորագույն պետական-քաղաքական գործիչ Էլեֆթերիոս Վենիզելոսը (1864-1936 թթ.):

Հիմնախնդիրը լայնորեն ուսումնասիրված է արդի հունական, ինչպես նաև բրիտանական, ֆրանսիական ու ամերիկյան պատմագիտության կողմից. նկատենք, որ հույն գործչի կերպարի ու գործունեության ուսումնասիրությունը հույժ արդիական է ինչպես պատմագիտական, այնպես էլ քաղաքագիտական ու սոցիոլոգիական հետազոտությունների համաձիրում թե՛ նրա ունեցած դերակատարության, ազդեցության և թողած ժառանգության, թե՛ ժամանակի հասարակական կառույցի և նրա իշխանության բնույթի առումով: Սույն ակնարկային հոդվածը փորձ է ուրվագծելու Վենիզելոսի դերն ու գործունեությունը Հունաստանի արդի պատմության ծիրում և քննության առնելու նրա քաղաքական կերպարն ու իշխանության բնույթը:

1. Ժամանակի ուրվագիծը.

Վենիզելոսի վերափոխիչ գործունեությունը

Նախ մի քանի խոսքով անդրադառնանք քննարկվող դարաշրջանին ու Հունաստանին առնչվող իրողություններին: 19-րդ դարում Հունաստանը, 1822 թ. օսմանյան լծից անկախություն նվաճելուց հետո, այնուամենայնիվ, քաղաքական ու ընկերային թերզարգացած համակարգերով, արտաքին ուժեղ քաղաքականությամբ աչքի չընկնող երկիր էր՝ եվրոպական մեծ տերությունների, հատկապես՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ապա նաև Գերմանիայի քաղաքական ու տնտեսական ազդեցության ներքո: Տնտեսությունն անմրցունակ էր, իսկ բնակչության մեծ մասի կենսամակարդակը՝ զգալիորեն ցածր, փոխարենը չափազանց մեծաթիվ էր պաշտոնեությունը: 1843 թ-ից Հունաստանում հաստատվել էր սահմանադրական միապետական կառավարում, սակայն իր քաղաքական համակարգի էությամբ տիպիկ կլանային-խմբիշխանական (օլիգարխիկ) երկիր էր՝ քաղաքական և ընկերային կառույցներում *կլիենտային* հարաբերությունների գերակայմամբ¹: Հայսմ՝ տասնամյակներ շարունակ հաջորդափոխվում էին առավել կամ պակաս պահպանողական, ինչպես նաև ազգայնական խմբավորումներ ներկայացնող կառավարությունները, որոնք չէին կարողանում կայուն ու արդյունավետ քաղաքականություն մշակել:

1843 թ-ից, որպես հունական պետության իշխող ազգային գաղափարախոսություն և ազգային-պետական գերագույն ծրագիր, արդիական էր «Մեծ գաղափարի» կենսագործման հնարավորությունը, որը ենթադրում էր բոլոր հունարենակ պատմական մարզերի միավորում միասնական Հունաստանի կազմում՝ Կոստանդնու-

¹ R. Clogg, *A Concise History of Greece*, New York: Cambridge University Press, 1992, p. 4; pp. 61-63; J. Hart, *Cracking the Code: Narrative and Political Mobilization in the Greek Resistance*, *Social Science History*, Vol. 16, No. 4 (1992), pp. 645-646. URL: <http://www.jstor.org/stable/1171315> (12.01.2011); M. Mazower, *The Messiah and the Bourgeoisie: Venizelos and Politics in Greece, 1909-1912*, *The Historical Journal*, Vol. 35, No. 4 (1992), p. 890. URL: <http://www.jstor.org/stable/2639443> (10.07.2010).

պոլիս մայրաքաղաքով: Ներքին ու արտաքին ծանր կացության մեջ գտնվող Հունաստանը պատրաստ չէր ազգային հարցի լուծման ուղղությամբ վճռական քաղաքականություն վարելու²:

20-րդ դարի սկզբին երկիրը կանգնած էր մի շարք լուրջագույն ներքին ու արտաքին մարտահրավերների առջև, որոնց համարժեք պատասխանելու՝ հույն ժողովրդի ունակությունից մեծ չափով կախված էր նրա ապագան և Հունաստանի արժանի տեղն ու դերը ժամանակի աշխարհաքաղաքական գործընթացներում: Կարևոր հիմնախնդիր էր պետության ու հանրույթի համակողմանի արդիականացման և նորարարական (ինովացիոն) միջոցներով կերպափոխման ապահովումը: Անհրաժեշտ էր հաղթահարել ընկերային, տնտեսական, քաղաքական ու պետական-իրավական խորացող խնդիրները: Մյուս կողմից՝ ազգային հարցի փակուղային իրավիճակը (սրվել էր 1897 թ. հույն-թուրքական պատերազմում կրած պարտությունից հետո) ուղիղ համեմատական էր երկրի ներքին հիմնախնդիրներին, որոնց լուծումը լուրջ նախապայման կարող էր լինել նաև «Մեծ գաղափարի» կենսագործման համար:

Ակնհայտ էր, որ ո՛չ հունական միապետը՝ իր սահմանափակ լիազորություններով ու քաղաքական շարժառիթի բացակայությամբ, ո՛չ էլ հին, կլանային կուսակցություններն իրենց հեղիեղուկ քաղաքականությամբ պատրաստ չէին և նաև ի վիճակի չէին առաջադրելու համընդգրկուն փոփոխությունների ծրագիր և իրագործելու այն: Իրավիճակից փորձում էին տարերայնորեն ելք փնտրել երկրի ճակատագրով առավել մտահոգ զինվորականները, սակայն՝ ապարդյուն: Ստեղծվում է տիպիկ ճգնաժամային իրավիճակ. խախտվել էր առկա հասարակական համակարգի հավասարակշռությունը: Առաջ եկած անկայունության հաղթահարումը ենթադրում էր հետևյալ հնարավոր ելքերը՝ կա՛մ լուսանցքային ճանապարհով համակարգի կտրուկ հեղաբեկում, օրինակ՝ ռազմական դիկտատուրայի հաստատում, կա՛մ համակարգի կայուն անցումային վերակազմակերպում և այլաճում:

² H. Gardikas-Katsiadakis, Venizelos' Advent in Greek Politics, 1909-12, in *Eleftherios Venizelos. The Trials of Statesmanship* (ed. By P. M. Kitromilides), Edinburgh: Edinburgh University Press, 2006, p. 87.

Առաջինը, ինչպես ցույց տվեց 1909 թ. Գուդիի ռազմական խռովության անհաջող փորձը³, զուրկ էր բավականաչափ իրական նախադրյալներից և, բացի այդ, չէր երաշխավորում հիմնախնդիրների քիչ թե շատ կայուն և երկարաժամկետ լուծում: Երկրորդն առավել հավանական էր և լծորդված էր անցումային դարաշրջանին բնորոշ ուժեղ և կամային, միաժամանակ սեփական ծրագիրն ունեցող անհատի առկայությանը: Տվյալ դեպքում անհրաժեշտ էր նոր սերնդի գործիչ՝ մեկը, որը կապված չէր լինի արքայատան շահերի, ինչպես նաև երկրի հին, վարկաբեկված քաղաքական ուժերի հետ և, հանրային լայն շերտերի աջակցությունը վայելելով, կկարողանար հասունացնել լիզայի քաղաքական պահանջները և իրագործել դրանք առանց էական ցնցումների: Ժամանակը ցույց տվեց, որ այդպիսին հենց Կրետեի ազատագրական շարժման ականավոր գործիչ Վենիզելոսն էր, որին էլ ընտրեց⁴ Ռազմական լիգան: 1909 թ. հոկտեմբերին լիգան նրան համագործակցության և իբրև միջնորդ հանդես գալու առաջարկ է ներկայացնում, իսկ ապա նաև առաջարկում վարչապետի պաշտոնը: Թեև ոչ միանգամից, սակայն կրետացի գործիչն ընդունում է համագործակցության առաջարկը:

1910 թ. օգոստոսի խորհրդարանական ընտրությունների արդյունքում Վենիզելոսն ի վերջո դառնում է Հունաստանի վարչապետ: 1910 թ. սեպտեմբերին բազմահազար քաղաքացիների առջև հանդես գալով ծրագրային ելույթով՝ նա ներկայացնում է իր քա-

³ 1908 թ. Աթենքում մի խումբ սպաներ, երկրի դիվանագիտական, քաղաքական, ընկերային-տնտեսական ու ռազմական վատթար դրությունը հաղթահարելու միտումով ստեղծում են Ռազմական լիգա: Մասամբ որպես 1908 թ. երիտթուրքերի հեղափոխության արձագանք՝ 1909 թ. Օգոստոսի 15-ին լիգան խռովություն կազմակերպեց, որը ստացավ «Գուդիի հեղաշրջում» անվանումը: Կառավարության և արքայի վրա ճնշում գործադրելով՝ Լիգան փորձում է ստիպել նրանց բարեփոխումներ անցկացնել, և չնայած առաջադրված պահանջների մասնակի իրագործմանը, շուտով ակնհայտ է դառնում Լիգայի կոնկրետ քաղաքական ծրագրի բացակայությունը և փակուղային իրավիճակը հաղթահարելու նրա անկարողությունը: Տե՛ս H. Gardikas-Katsiadakis, op. cit., p. 89.

⁴ C. Kerofilas, *Eleftherios Venizelos, His life and work*, London, 1915, p. 58.

ղաքական օրակարգը՝ իրականացնել իրավական, հասարակական ու քաղաքական համակարգերի բարեփոխումներ: Նա հայտարարում է, որ կհամագործակցի նրանց հետ, որոնց «նպատակն է՝ Հունաստանը բարոյապես ու նյութապես բարձրացնել ու հասցնել ժամանակակից պետությունների մակարդակին և դարձնել Արևելքում քաղաքակրթության ու առաջընթացի հզոր գործոն»⁵: 1911-1912 թթ. Վենիզելոսն իր հռչակած «վերակառուցման» (վերափոխման) նշանաբանի ներքո սկսում է կյանքի կոչել արդիականացման համընդգրկուն ծրագիրը՝ բարեփոխումներ անցկացնելով երկրի պետաիրավական, վարչական, տնտեսական, ընկերային, ֆինանսական, կրթական ու ռազմական ոլորտներում: Համառոտակի անդրադառնանք դրանցից կարևորագույններին:

Վենիզելոսի ամենակարևոր քաղաքական ձեռքբերումներից մեկը նրա բարեհաջող փորձերն էին՝ Հունաստանում սկիզբ դնել ժողովրդավարության ու ազատականության սկզբունքներին⁶: Նախ պետք է նշել 1910 թ. նրա կողմից Ազատական (Լիբերալ) կուսակցության ստեղծումը: Կարճ ժամանակում իր շուրջը համախմբելով նոր սերնդի կամ արդեն հայտնի և չվարկաբեկված մի շարք գործիչների՝ Վենիզելոսը կոչ է անում ստեղծելու նոր՝ «վերակառուցման» կուսակցություն, որը հիմնված կլինի երկրում ամենուրեք հաստատված քաղաքական ակումբների ապակենտրոն համակարգի վրա և բարեփոխումների շարժիչ ուժը կհանդիսանա: Նա Աթենքում ստեղծեց առաջին Ազատական ակումբը, որը նրա Ազատական կուսակցության հիմքը դարձավ: Վենիզելոսի այդ քայլը, առկա անձնակենտրոն-կլանային կուսակցական համակարգին ի հակակշիռ, նշանավորում էր կուսակցական ու խորհրդարանական քաղաքական նոր մշակույթի սկզբնավորու-

⁵ Ibid., pp. 62-63.

⁶ Ավելի ուշ՝ 1916-1917 թթ. «ազգային պառակտման» ժամանակ, և հատկապես 1920-1930-ական թթ., Վենիզելոսի գործունեության և նրա գործունեությամբ սկիզբ առած գաղափարաքաղաքական շարժման՝ վենիզելականության, կարևոր սկզբունքներից մեկը հանրապետականությունն էր և հակադրությունը միապետականությանը:

մը⁷: Ըստ էության, նրա սկսած վերափոխման արդյունքում Հունաստանում ձևավորվում է Եվրոպայի ժողովրդավարական փոքր, երկրորդային օջախներից մեկը:

Այնուհետև արդեն կայուն քաղաքական հենարանի աջակցությամբ Վենիզելոսը լայնածավալ բարեփոխումներ է սկսում՝ հստակ պատկերացնելով, որ երկրի ներքին ու արտաքին խնդիրներն ուղղակիորեն փոխկապակցված էին, հետևաբար այդ խնդիրների ու մարտահրավերների պատասխանները ևս պետք է լինեին փոխկապակցված: Այդու՝ բարեփոխումների ծրագիրը ձևակերպելով իբրև երկրի արդիականացմանն ու հզորացմանը ուղղված ամբողջական քաղաքականություն՝ ելույթներից մեկում նշել է. «[...] Հունաստանի բնակչությունն ականապես կլինի արտահանման, ներկրման, ազգային արդյունքի կրկնապատկման, կապահովվի հասարակական բարեկեցությունը, հեղուարար արտադարձը կդադարի, մեր աշխարհուժը կմշակի մեր հողերը. երբ դա տեղի ունենա, զորակոչը կկրկնապատկվի, ուստի Հունաստանի ռազմական հզորությունը նույնպես, և նրա դիրքերն աշխարհում կհամապատասխանեն իր ռազմական ու տնտեսական հզորությանը...»⁸:

Սահմանադրական փոփոխություններով (110 հոդվածից բարեփոխման ենթարկվեց 54-ը) բարելավվեց կառավարման արդյունավետությունը, իսկ ժողովրդին տրվեցին այնպիսի իրավունքներ ու պարտականություններ, ինչպիսիք վաղուց ստացել էին արևմտաեվրոպական շատ հասարակություններ: Մասնավորապես՝ վերափոխված սահմանադրության տարբեր հոդվածներով տրամադրվում էին մարդու իրավունքների հավելյալ երաշխիքներ՝ պարտադիր անվճար տարրական կրթության, հաջորդ ընտրություններում փակ, գաղտնի քվեարկության իրավունքները: Քաղաքացիական ծառայողների համար սահմանվում էր պաշտոնավարման ժամկետ, ինչը նպատակ ուներ թուլացնելու նրանց կախվածությունը քաղաքական ուժերից: Չինվորականներին արգելվում էր

⁷ M. Mazower, op. cit., p. 902.

⁸ Σ. Στεφάνου (επιμ.), *Τα Κείμενα του Ελευθέριου Βενιζέλου, 1909-1935*, Τ. Α' (1909-1914), Αθήνα, 1981, σ. 354.

ընտրվել պատգամավոր: Նշանակալի էին 90-րդ և 57-րդ հոդվածները. առաջինով հաստատվում էր Արդարադատության բարձրագույն խորհուրդը, իսկ երկրորդով վերահաստատվում էր 1864 թ. սահմանադրությամբ վերացված Պետական խորհրդի ինստիտուտը, որը, ի շարս այլ գործառույթների, պետք է քններ պետական որոշումների ու օրենքների օրինականությունը և պաշտոնյաների նկատմամբ կարգապահական վերահսկողությունը⁹:

Հույժ կարևոր բարեփոխման է ենթարկվում հնացած ու անարդյունավետ իրավական համակարգը. ընդունվում են առևտրային, քաղաքացիական ու քրեական նոր օրենսգրքեր: Արգելվում է վաշխառությունը, բարելավվում է քաղաքացիական դատարանների գործունեությունը: Դատավորների քաղաքական անկախությունն ապահովելու նպատակով օրենքի ուժով հաստատվում է նրանց պաշտպանությունը Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Առանձնակի կարևորություն են ստանում նրա տնտեսական-ընկերային բարեփոխումները, որոնք, բացի հասարակական առաջընթացի ապահովումից, միտված էին նաև ընկերային տարբեր շերտերի ու խավերի միջև հավասարակշռության պահպանմանն ու արմատական-ծայրահեղական շարժումների կանխմանը¹⁰: Լիովին արմատախիլ են արվում հողատիրության ավատատիրական մնացուկները Թեսալիայում և Հոնիական կղզիներում: Հույժ անհրաժեշտ բարեփոխման են ենթարկվում քայքայված հարկային ու մաքսային համակարգերը: Աշխատանքային օրվա առավելագույն չափ է հաստատվում 12 ժամը, արգելվում է երեխաների, գիշերային ժամերին կանանց աշխատանքը, մտցվում է ընկերային ապահովագրություն, հաստատվում է նվազագույն աշխատավարձի չափ, կիրականորյա պարտադիր հանգիստ. ճանաչվում է արհմիութենական իրավունքը, ընդունվում է աշխատանքային վեճերը կարգավորող օրենք:

⁹ S. B. Chester, *Life of Venizelos*, London, 1921, pp. 142-143.

¹⁰ J. S. Koliopoulos, T. M. Veremis, *Greece. The Modern Sequel, from 1831 to the Present*, London: Hurst and Company, 2002, pp. 192-193.

Հույժ կարևոր էր Վենիզելոսի նախածեռնած ռազմական բարեփոխումը, որը թելադրված էր ինչպես երկրի անվտանգության ապահովման, այնպես էլ միջազգային իրադրության և Հունաստանի արտաքին քաղաքականության, մասնավորապես՝ հույն-թուրքական հարաբերությունների թելադրած պահանջներով: Ֆրանսիական ու բրիտանական ռազմական առաքելությունների օգնությամբ արդիականացվում է բանակը, մեծացվում է զինված ուժերի թվակազմը: Արդյունքում, 1912 թ. ամռանը Հունաստանը ամբողջովին պատրաստ էր պատերազմ վարելու:

Վենիզելոսի վերափոխիչ քաղաքականությունը թարմություն հաղորդեց հունական հասարակությանը՝ ապահովելով նրան մեծ ժողովրդականությամբ ու վստահությամբ: Լճացման կամ դանդաղ ու թերի զարգացումների երկարատև ժամանակաշրջանից հետո նա շարժունություն ու լավատեսություն ներմուծեց հունական հասարակական կյանքում՝ առաջացնելով ու ամրապնդելով ազգային միասնության ու հզորության նոր զգացում¹¹:

Արդյունքում, «Մեծ գաղափարի» իրագործման ուղղությամբ գրանցվում են առաջին և հույժ տպավորիչ հաջողությունները Բալկանյան երկու պատերազմներում (1912-1913 թթ.). Հունաստանի տարածքը գրեթե կրկնապատկվում է՝ 63.2 հզ կմ²-ից հասնելով 120.3 հզ կմ²-ի, իսկ բնակչության թիվը մոտ 2.6 միլիոնից հասնում է շուրջ 4.7 միլիոնի¹²: Հարկավ, սա նման կարճ ժամանակամիջոցի համար չափազանց նշանակալի արդյունք էր. ամրապնդվում է երկրի թե՛ միջազգային, թե՛ ներքաղաքական, ռազմական ու տնտեսական դրությունը, Հունաստանը դառնում է Բալկանյան ազդեցիկ ու հզոր պետություն և առաջնակարգ ծովային տերություն՝ Արևելյան Միջերկրածովքում:

1914 թ. Հունաստանը հայտնվում է ռազմաքաղաքական նոր իրավիճակի առջև, որը պայմանավորված էր Առաջին աշխարհա-

¹¹ R. Clogg, op. cit., p. 79.

¹² Γ. Κουκουράκης, Π. Σαβοριανάκης, *Ο Ελευθέριος Βενιζέλος στην ελληνική και διεθνή πολιτική σκηνή, 1910-1923*. στο: *Στα χρόνια του Βενιζέλου...*: Εσωτερική και εξωτερική πολιτική, οικονομία, εκπαίδευση, πολιτισμός, (επιμ. Γαρθάκια - Κατσιαδάκη Ε.), Χανιά-Αθήνα, 2010, σ. 45:

մարտի սկսվելով: Արդիական էր «Մեծ գաղափարի» լիարժեք իրագործումը, ուստի Հունաստանին անհրաժեշտ էր առավելագույնս օգտագործել պատերազմի հարուցած նոր իրադրությունը: Մյուս կողմից, առաջ է գալիս հակամարտող խմբավորումների նկատմամբ Հունաստանի դիրքորոշման և դրանք կազմող տերությունների հետ նրա ունեցած հարաբերությունների հստակեցման խնդիրը: Այդ շրջանում արդեն երկրի արտաքին քաղաքականության բնույթը մեծապես պայմանավորված էր ներքաղաքական իրողություններով, որտեղ այդ հարցերի շուրջ ակնհայտ էին անհաշտ հակասություններն ու միասնական դիրքորոշման բացակայությունը: Գերմանամետ ու պահպանողական Կոստանդինոս I արքան և նրա կողմնակիցները թեև հակված էին Եռյակ դաշինքի կողմը, սակայն ձգտում էին մշտական չեզոքության քաղաքականություն որդեգրել: Մինչդեռ Վենիզելոսը և նրան հարող ազատական քաղաքական շրջանակները ձգտում էին Անտանտին դաշնակցելու միջոցով նախևառաջ ապահովել Հունաստանի անվտանգությունը Բալկաններում, ապա նրա աջակցությամբ հասնել բաղձալի «Մեծ գաղափարի» իրագործմանը¹³:

Սուր տարածայնությունների արդյունքում 1915 թ. Վենիզելոսը երկու անգամ ստիպված էր հրաժարական տալ. ի վերջո նրա և թագավորի շուրջ սկսում են ձևավորվել հակադիր քաղաքական բևեռներ: Վենիզելական և միապետական բևեռների միջև երկարատև ու համառ պայքար է սկսվում՝ հանգեցնելով ներքաղաքական ճգնաժամի, իսկ 1916 թ. ամռանը՝ երկու ճամբարների միջև Հունաստանի «ազգային պառակլման»: Օգոստոսի 31-ին Թեսալոնիկում Վենիզելոսի կողմնակիցները կատարում են ռազմական հեղաշրջում, ապա նրա գլխավորությամբ ստեղծվում է «ազգային պաշտպանության կառավարություն». երկիրը տրոհվում է երկու խմբավորումների:

Ներքաղաքական հակամարտությունն առնչվում էր նաև Վենիզելոսի ու Կոստանդինոսի՝ իբրև վարչապետի և սահմանադրական միապետի միջև հարաբերությունների բնույթին: Տեղի է ունենում գաղափարական բախում՝ իր «աստվածային իրավունքները»

¹³ R. Clogg, op. cit., pp. 86-87.

պնդող ավտորիտար-պահպանողական թագավորի և Վենիզելոսի՝ իբրև քարիզմատիկ, միաժամանակ ազատական պետական գործչի միջև: Վենիզելոսը թագավորին մեղադրում էր նրա հակասահմանադրական գործունեության համար, ըստ որի նա, հաշվի չառնելով խորհրդարանական մեծամասնության, այն է՝ ժողովրդի կարծիքը, անօրինական կերպով երկու անգամ (1915 թ. մարտին և հոկտեմբերին) լուծարել էր կառավարությունը: Այդու՝ նախկին վարչապետը հանդես էր գալիս նաև սահմանադրական նվաճումների ու ժողովրդավարության պաշտպանի դերում¹⁴: Հակամարտությունն ուներ նաև որոշակի ընկերային պատճառներ:

Համառոտակի անդրադառնալով Առաջին աշխարհամարտի ժամանակ Հունաստանին առնչվող իրողություններին՝ կարևոր ենք հետևյալը: Նախ Վենիզելոսն իրեն բնորոշ քաղաքական կամքով ու փորձառությամբ կարողանում է (հարկավ, Անտանտի աջակցությամբ) վերամիավորել պառակտված երկիրը: 1917 թ. հունիսին կրկին գալով իշխանության և ապահովելով Հունաստանի պառլամենտականությունը հետագա ռազմաքաղաքական գործընթացներին՝ նա կարողանում է իր երկիրը հաղթողի դիրքերից ներկայացնել հետպատերազմյան կարգավորումների Փարիզի խաղաղության համաժողովում (1919-1920 թթ.): Միաժամանակ շարունակվում են արդիականացմանն ուղղված բարեփոխումները արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, սոցիալական ապահովության բնագավառներում:

Հատկապես նշանակալի է Վենիզելոսի դերակատարությունը Փարիզի համաժողովում: «Փոքր դաշնակից» երկրի ղեկավար լինելով՝ նա կարողանում է իր հեղինակությունը և դիվանագիտական փորձն ու հմտությունները լավագույնս օգտագործել՝ Հունաստանի շահերն արժանիորեն ներկայացնելու և առավելագույն արդյունք ապահովելու համար: Նշենք միայն, որ նրա ջանքերի շնորհիվ Նյույի (1919 թ.) և Սևրի (1920 թ.) պայմանագրերով Հունաստանը լուրջ տարածքային ձեռքբերումներ ունեցավ: Վենիզելոսը հայրենիք է վերադառնում իբրև ազգային հերոս, որը վերականգնել է «երկու աշխարհամասերի և հինգ ծովերի» միասնական հայ-

¹⁴ G. F. Abott, *Greece and the Allies. 1914-1922*, London, 1922, pp. 70-74.

րենիքը¹⁵: Սակայն, ի հեճուկս այդ ամենի, նա անսպասելի պարտություն է կրում 1920 թ. նոյեմբերին կայացած ընտրությունում և միառժամանակ հեռանում ակտիվ քաղաքականությունից:

Վենիզելուսը կրկին ասպարեզ իջավ 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմում կրած աղետալի պարտությունից հետո՝ իր երկրի շահերը ներկայացնելով Լոզանի համաժողովում. թեև նա կարողացավ փոքր-ինչ մեղմել պարտության հետևանքները, սակայն Հունաստանը կորցրեց Սևրի պայմանագրով ամրագրված տարածքային ձեռքբերումները: Դա «Մեծ գաղափարի» դրամատիկ վախճանն էր:

1920-1930-ական թվականները Հունաստանի պատմության մեջ առավելաբար նշանավորվեցին վենիզելականների և հակավենիզելականների երկարատև ու համառ դիմակայությամբ: Ըստ էության, մինչև երկրորդ աշխարհամարտը երկրում այդպես էլ ներքաղաքական խզումը չհաղթահարվեց: Տվյալ պարագային, հենց այդ դիմակայության պատճառով Հունաստանի սահմանադրականության արմատավորվող ավանդույթներն ընդհատվեցին, իսկ 1910-ական թթ. սկզբին Վենիզելուսի նախածեռնած ժողովրդավարության և իրավականության ամրապնդման քաղաքական ուղեգիծը մեծապես շեղվեց ու վերասերվեց¹⁶:

Այդ ժամանակաշրջանում է. Վենիզելուսը շարունակում է մնալ հունական քաղաքական կյանքի գլխավոր դերակատարը: 1924 թ. հունվար-փետրվարին կարճ ժամանակով կառավարությունը գլխավորելուց հետո Վենիզելուսը կրկին իշխանության է գալիս 1928 թ. և ընդհատումներով կառավարում մինչև 1933 թ. մարտ ամիսը: Այդ ժամանակահատվածում նրա ներքին քաղաքականությունը հիմնականում ուղղված էր երկրի տնտեսական կայունության ամրապնդմանը. շարունակվեցին ֆինանսատնտեսական, ընկերային, իրավական, կրթական բարեփոխումները: Սակայն նրա ներքին քաղաքականության արդյունավետությունը զգալիորեն տուժեց 1929 թ. սկսված Համաշխարհային մեծ ճգնաժամի հե-

տևանքով, ինչը բացասաբար ազդեց նաև նրա ներքաղաքական դիրքերի վրա: Փոխարենը Վենիզելուսը որոշ հաջողությունների հասավ արտաքին քաղաքականության մեջ՝ կարգավորելով հարաբերությունները քեմալական Թուրքիայի, Հարավսլավիայի և Իտալիայի հետ: 1930-ական թթ. ներքաղաքական մթնոլորտն առավել շիկացավ: Վենիզելուսը ստիպված եղավ երկու անգամ՝ 1933 թ. և 1935 թ. քաղաքական հեղաշրջման անհաջող փորձեր կատարել և, ի վերջո, 1935 թ. մարտին մեկընդմիջտ հեռացավ Հունաստանից:

2. Վենիզելուսի քաղաքական կերպարը և իշխանական կառույցի իմաստաբանությունը

1910 թ. առաջին անգամ գալով իշխանության՝ Էլեֆթերիուս Վենիզելուսը հաջորդող 23 տարվա ընթացքում (ընդմիջումներով) ևս յոթ անգամ գլխավորեց կառավարությունը (ընդհանուր առմամբ՝ ավելի քան 13 տարի): Հույն գործչի երկարատև պետական-քաղաքական գործունեության գնահատման, ինչպես նաև Հունաստանի պատմության այդ հատվածի ամբողջական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է քննել նրա քաղաքական կերպարը, վեր հանել նրա իշխանության, մասնավորապես՝ քաղաքական վարչաձևի (ոեժիմ) կառուցվածքն ու իմաստաբանությունը:

Դեռևս 1910 թ., իր առաջին կառավարության ծրագրերը և գործունեության սկզբունքները ներկայացնելիս, հունական հասարակության ու քաղաքական շրջանների համար ավելի ամբողջական ուրվագծվում է Վենիզելուսի կերպարը՝ իբրև հավասարակշռված գործչի, որը հանդես է բերում քաղաքական ճկունության և վճռականության տպավորիչ համակցություն, ինչը նրա քաղաքական գործունեության բնորոշ գծերից էր: Փորձելով զերծ մնալ ինչպես ամբոխահաճո քայլերից, այնպես էլ թագավորական դինաստիայի ու պահպանողական հին ուժերի հետ անվերապահ առճակատումից՝ նա իր հեղինակությամբ ստանձնում է «փրկչական» (մեսիա-

¹⁵ R. Clogg, op. cit., p. 95.

¹⁶ I. Tassopoulos, The Experiment of Inclusive Constitutionalism, 1909-1932, in Eleftherios Venizelos. The Trials of Statesmanship, p. 265.

նիկ) դեր¹⁷, հանդես գալիս որպես միջնորդ ու հաշտարար՝ քայլառաջայլ առաջ տանելով իր քաղաքական ուղեգիծը:

Այս ամենին, հարկավ, ավելանում է նրա՝ որպես ազգային հարցի լուծման անխոնջ մարտիկի առանձնահատուկ կերպարը՝ ընդամին իր անվան իմաստի հետ կապված լեգենդի խաղարկումը: Ըստ լեգենդի՝ Հունաստանի ապագա վարչապետին անվանակոչել են «Էլեֆթերիոս» (հունարեն նշանակում է «ազատ»), որպեսզի բազմաշարժար Կրետե կղզին «ազատի օսմանյան բռնապետությունից»¹⁸:

Էլեֆթերիոս Վենիզելոսը, որը ծնվել էր Կրետեում, 1890-ական թթ-ից քաղաքական ու պետական գործունեության բավական մեծ փորձ ուներ և դեռ երիտասարդ տարիքից սկսած ակտիվորեն մասնակցել էր կղզին օսմանյան բռնակալությունից ազատագրելու և մայր հայրենիքին միավորելու պայքարին: Հատկանշական է, որ նա մասնակցել էր պայքարին ինչպես հեղափոխական-քաղաքական, ռազմական ճակատներում, այնպես էլ, և շատ մեծ հաջողությամբ, նպաստել էր այդ պայքարի հաջողությանն իր փայլուն փաստաբանական ու լրագրողական-քարոզչական գործունեությամբ (մասնագիտությամբ իրավաբան էր): Հենց այդ հանգամանքը՝ ազգային-ազատագրական պայքարի ոչ ռազմական գործչի նրա կերպարը, հետագայում նկատելի դեր խաղաց մայր Հունաստանում նրա իշխանության գալու համար: Հունական քաղաքական-հասարակական շրջանակներում նա ներկայանում է իբրև քաղաքական նոր գաղափարների ու մեթոդների կրող, գործնական ու արդյունավետ բանակցող, երիտասարդ առաջնորդ, ով ունակ է արդյունավետ ու նոր լուծումներ տալու հին խնդիրներին¹⁹:

Փորձենք ուրվագծերով ներկայացնել Վենիզելոսի իշխանության կառուցվածքային ու իմաստային բնութագիրը: Հիմնախնդրի ամբողջական լուսաբանման նպատակով հիմք ենք ընդունել Մ. Վեբերի՝ քաղաքական իշխանության իրավահեղինականացման

(լեգիտիմություն) լայնորեն հայտնի տիպաբանությունը²⁰: Ըստ այդմ, նկատելի է, որ Վենիզելոսի թե՛ պետական գործունեությունը, թե՛ քաղաքական վարքը ունեն ինչպես քարիզմատիկ, այնպես էլ՝ իրավական չափում: Հարկավ, ժամանակի տարբեր կշռույթներում նշված որևէ չափում Վենիզելոսի քաղաքական վարքում և գործունեության մեջ կարող էր գերակշռել: Արդ, համեմատաբար տևական ու կայուն, քաղաքական ցնցումներից բավականաչափ զերծ փուլերում Վենիզելոսի իշխանության մեջ առավելապես դրսևորվում էր իրավական սկիզբը: Նրա պետականաշինական գործունեությունը միտված էր օրենքի, իրավական կարգի գերակայությամբ ամրապնդելու ժողովրդավարությունը, իրականացնելու հաստատութենական բարեփոխումներ: Կազմակերպչական մեծ կշիռ էր ստանում արհեստավարժ պաշտոնեությունը: Այս առումով նշանակալի է հատկապես 1911-1912 թթ. նրա նախածոնությամբ պետաիրավական ընդգրկուն, հույժ կարևոր բարեփոխումների իրականացումը՝ ընդամին նոր սահմանադրության մշակումը. դրանք լծորդված էին «Արդարության պեղության» կերտման արժեքանությամբ²¹: 1928-1932 թթ. նրա քառամյա պաշտոնավարման ընթացքում անցկացված օրենսդրական կարգավորիչ ձեռնարկումներն ընդգրկում էին մի շարք առանցքային ոլորտներ՝ ֆինանսներ, հողային սեփականություն, ընկերային համակարգ. ամբողջացավ քաղաքացիական օրենսգիրքը: Այդ ամենը միտված էր մի կողմից իրավական կառուցիկություն հաղորդելու երկրի պետական կարգին, մյուս կողմից՝ հասարակական կառուցում

²⁰ Վեբերը առանձնացնում էր քաղաքական իշխանության և դրա իրավահեղինականացման երեք «մաքուր» ձևեր՝ քարիզմատիկ (ընտանեկան և կրոնական իշխանությանը բնորոշ), ավանդական (բնորոշ էր նահապետական և ավատատիրական հասարակություններին) և իրավական-լեգալ (ժամանակակից պետություն և իրավունք, պաշտոնեություն): Տե՛ս M. Weber, *Economy and Society: An outline of interpretive sociology*, New York: Bedminster Press, 1968, pp. 215-245; W. J. Mommsen, *The Political and Social Theory of Max Weber: Collected essays*, Chicago: University of Chicago Press, 1992, p. 21; pp. 46-47.

²¹ Γ. Κουκουράκης, Π. Σαβοριανάκης, όπ. π., σ. 40.

¹⁷ M. Mazower, op. cit., p. 890.

¹⁸ S. B. Chester, op. cit., p. 3.

¹⁹ M. A. Lilly, Venizelos' Early Life and Political Career in Crete, 1864-1910, in *Eleftherios Venizelos. The Trials of Statesmanship*, pp. 72-75.

ամրապնդելու, մասամբ նաև հիմքից արմատավորելու իրավական հարաբերություններ²²:

Կառավարման առաջին՝ համեմատաբար կայուն փուլում (1910-1915 թթ.), ներիշխանական հարաբերություններում ևս, Վենիզելուսի շեշտադրումներն ուղղված էին իրավական կողմին: Մասնավորապես, մինչև Կոստանդինոս I-ի հետ քաղաքական բախումը, նա վարում էր երկրի ղեկավարման մեջ սահմանադրորեն նախատեսված՝ երկբևեռ համակարգի (ըստ որի՝ և՛ պետության գլուխը, և՛ կառավարության ղեկավարը օժտված էին ոչ համարժեք, բայց էական իշխանությամբ և համատեղ էին իրականացնում ընդհանուր քաղաքականությունը) պահպանման քաղաքականություն: Այդու՝ սկզբնապես հավատարիմ էր վարչապետ-թագավոր սահմանադրական հարաբերություններին:

Վենիզելուսի իշխանությունը և քաղաքական վարքը հույժ քարիզմատիկ բնույթ են ստանում Հունաստանում հասարակական համակարգերի անցումային՝ հետևաբար և անկայուն փոխակերպումների ժամանակ, երբ առկա են ներքին և արտաքին (որպես կանոն՝ փոխկապակցված) իրավիճակային կտրուկ փոփոխություններ ու զանազան լարվածություններ, շահերի բախում: Այլուրեն, մի շարք քաղաքական ճգնաժամերից Վենիզելուսը կարողանում է շահած դուրս գալ՝ ներկայանալով իբրև ուժեղ, քարիզմատիկ առաջնորդ, որին հասարակությունը պատրաստ է ճանաչելու որպես այդպիսին և տալու համապատասխան հասարակական իրավահեղինականացում²³: Քարիզմատիկ առաջնորդի վերբերյան տիպաբանությունը հույժ արժևորում է որոշակի բնատուր անձնական հատկանիշներ, յուրօրինակ արժանիքներ²⁴: Վենիզելուսն անվիճելիորեն ուներ դրանք. հետազոտողների մեծ մասն ընդգծում է նրա քարիզմատիկ կերպարը՝ առանձնացնելով հատկապես

ուրույն քաղաքական հմայքը, կազմակերպչական ու հասարակական հաղորդակցման բարձր ունակությունները, հեռատեսությունը, զգայական ինտելեկտը²⁵: Մեծապես նման հատկանիշների շնորհիվ Վենիզելուսը կարողացավ ճգնաժամային իրավիճակներում մի քանի անգամ լայն հանրային աջակցություն ապահովել և ընտրությունների միջոցով գալ իշխանության: «Ազգային պառակտման» ընթացքում նա կարծես իրավիճակային ընդգծված անցում կատարեց իրավական հարթությունից դեպի քարիզմատիկ-առաջնորդային հարթություն, որը երբեմն նաև դիկտատորական ինչ-ինչ դրսևորումներ էր ստանում (արտակարգ միջոցառումներ, հակավենիզելուսականների հանդեպ բռնություններ):

Այդուհանդերձ, Վենիզելուսի քարիզմատիկ իշխանությունը տարասեռ էր: Մասամբ այն լծորդված էր քարիզմատիկ իշխանության կրողի՝ առաջնորդի հուզական վարքագծի վրա հենված գործունեության և, մյուս կողմից՝ այդ առաջնորդին վերագրվող բացառիկ, «սրբազնային» շնորհն ընդունող, նրա հանդեպ «հերոսական պաշտամունք» և «բացարձակ վստահություն ու հավատ» տածող, այդպիսի իշխանությանը ենթակա «քարիզմատիկ համայնքի»²⁶ որոշակի *հարաբերակցությամբ*: Վերջինս առավելապես տեսանելի էր Վենիզելուսի համախոհ ընտրանու, Ազատական կուսակցության, ինչպես նաև Բալկանյան պատերազմների արդյունքում, հետագայում նաև՝ 1923 թ. հույն և թուրք ժողովուրդների փոխանակության հետևանքով ավելացած «նոր» բնակչության պարագայում: Նման քաղաքական ու հասարակական հենարանի աջակցությունը նրա անվիճելի առավելություններից էր ինչպես «ազգային պառակտման» ընթացքում, այնպես էլ 1920-1930-ական թթ. ներքաղաքական պայքարում:

²² I. Tassopoulos, op. cit., pp. 251-266.

²³ W. H. Friedland, For a Sociological Concept of Charisma, *Social Forces*, Vol. 43, No. 1 (1964), pp. 18-26. URL:<http://www.jstor.org/stable/2575961> (10.05.2014).

²⁴ M. Weber, op. cit., pp. 241-246.

²⁵ P. M. Kitromilides, Perspectives on a Leader, in *Eleftherios Venizelos. The Trials of Statesmanship*, pp. 3-5. Տե՛ս նաև՝ G. Th. Mavrogordatos, *Stillborn Republic: Social coalitions and party strategies in Greece, 1922-1936*, Berkeley: University of California Press, 1983, pp. 55-64; R. Clogg, op. cit., p. 73.

²⁶ M. Weber, op. cit., p. 215; pp. 242-243.

Սակայն հույն գործչի քարիզմատիկ իշխանության ծանրության կենտրոնը *բանական (ոացիոնալ)-արժեքային* իրավահեղինակա-նացումն է. առաջնորդի քարիզման ուղղված է, ի հակադրություն հուզական վարքագծի, դեպի որոշակի արժեքային կողմնորոշ-մամբ բանական վարքագծի: Այդու՝ նման քարիզմատիկ իշխանու-թյունը *բանականորեն* լծորդված է որոշակի բացարձակ *արժեքի*, ուղղված է կոնկրետ ազգային-պետական *նպատակի* իրականաց-մանը: Տվյալ պարագային այդպիսի արժեք էր «Մեծ գաղափարը», իսկ մինչև 1922 թ. «փոքրասիական աղետը»՝ նաև գերագույն նպատակ. 1922 թ. հետո հիմնարար խնդիրներն էին ներգաղթյալ հույներին ներառել, ինտեգրել երկրի հանրային կյանքին և նոր իրողությունների պայմաններում շարունակել Հունաստանի ընդ-հատված արդիականացումը²⁷: Հանուն նման գերագույն արժեք-նպատակների՝ հասարակական համախմբումը զգալի չափ ու կշիռ էր հաղորդում Վենիզելոսի *քարիզմատիկ իրավահեղինականաց-մանը*:

Ինչպես նշվեց, Վենիզելոսի քաղաքական վարքագիծն ընդ-գծված քարիզմատիկ է դառնում անցումային-անկայուն արագ ուժեղացում (քաղաքական ցնցումներ, երկրի համար վճռորոշ պահեր): Համեմատաբար կայուն փուլերում նրա քարիզմատիկ իշ-խանությունը, դարձյալ վերբյան եզրաբանությամբ, սկսում է «սու-վորականության» (routinization) թնույթ ստանալ²⁸, դառնալ հաս-տատուօրենական, մեծանում է պաշտոնետության դերը²⁹, միով բանիվ՝ կրկին ընդգծվում է Վենիզելոսի իշխանության իրավական-բանական կողմը:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարելի է Վենիզելոսի իշխանու-թյան քաղաքական կերպը ընդհանուր առմամբ դիտարկել որպես յուրօրինակ խառը տիպի կարգ՝ քարիզմատիկ և բանական-իրա-վական իրավահեղինականացման (լեգիտիմություն) զուգակցված տարրերով: Այն ներկայանում է իբրև **իրավական-քարիզմատիկ**

իշխանություն՝ հիմնված բանական-արժեքային գործունեության վրա: Այդպիսի իշխանությունն այլ կերպ անվանում են նաև «**առաջնորդական ժողովրդավարություն**»³⁰:

Ամփոփում

Էլեֆթերիոս Վենիզելոսը, շնորհիվ իր հայրենանվեր գործունե-ության, համարվում է ժամանակակից Հունաստանի հիմնադիրը: Ակնառու է նրա շուրջ 30-ամյա քաղաքական ճիգը՝ բարեշրջել ու ընդլայնել իր երկիրը ներքին ու արտաքին չափումներում: Փաս-տենք. չնայած իր քաղաքական ծրագրերի անավարտությանը՝ Վե-նիզելոսի ջանքերն անարդյունք չանցան, և նա իր երկրին թողեց հիմնարար ժառանգություն:

Վենիզելոսի քաղաքական կերպարը ինքնատիպ է և էպպես թույլ է տալիս ըմբռնել նրա իշխանության կերպն ու բնույթը: Նա այն վառ պատմական գործիչներից է, որը կարողացել է պետա-կան կառավարման մեջ և ներքաղաքական հարաբերություննե-րում իրավականության և ժողովրդավարության սկզբունքները համադրել ուժեղ անհատի հեղինակության ու քարիզմատիկ իշ-խանության հետ: Վերջինս բանականորեն ուղղորդված էր որոշա-կի բացարձակ արժեքով: Հիմնականում նման իշխանական հա-մակարգը Վենիզելոսի կառավարման տարիներին ապահովեց նրա հասարակաշինական և ազգային-քաղաքական ծրագրերի հաջող կենսագործումը՝ համաժողովրդական լայն վստահության ու աջակցության առկայությամբ:

²⁷ I. Tassopoulos, op. cit., p. 251.

²⁸ Ibid., pp. 246-249.

²⁹ W. J. Mommsen, op. cit., pp. 115-117.

³⁰ Ibid., pp. 33-36.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Venizelos Eleftherios, *The Trials of Statesmanship*, P. M. Kitromilides (ed.), Edinburgh: Edinburgh University Press, 2006.
- Abott G. F., *Greece and the Allies, 1914-1922*, London, 1922.
- Chester S. B., *Life of Venizelos*, London, 1921.
- Clogg R., *A Concise History of Greece*, New York: Cambridge University Press, 1992.
- Friendland W. H., For a Sociological Concept of Charisma, *Social Forces*, Vol. 43, No. 1 (1964), pp. 18-26.
URL: <http://www.jstor.org/stable/2575961> (10.05.2014)
- Hart J., Cracking the Code: Narrative and political mobilization in the Greek resistance, *Social Science History*, Vol. 16, No. 4, 1992.
URL: <http://www.jstor.org/stable/1171315> (12.01.2011)
- Kerofilas C., *Eleftherios Venizelos: His life and work*, London, 1915.
- Koliopoulos J. S., Veremis T. M., *Greece. The Modern Sequel, from 1831 to the Present*, London: Hurst and Company, 2002.
- Mavrogordatos G. Th., *Stillborn Republic: Social coalitions and party strategies in Greece, 1922-1936*, Berkeley: University of California Press, 1983.
- Mazower M., The Messiah and the Bourgeoisie: Venizelos and politics in Greece, 1909-1912, *The Historical Journal*, Vol. 35, No. 4, 1992, p. 890.
URL: <http://www.jstor.org/stable/2639443> (10.07.2010)
- Mommsen W. J., *The Political and Social Theory of Max Weber: Collected essays*, Chicago: University of Chicago Press, 1992.
- Weber M., *Economy and Society: An outline of interpretive sociology*, New York: Bedminster Press, 1968.
- Κουκουράκης Γ., Σαββαριανάκης Π., *Ο Ελευθέριος Βενιζέλος στην ελληνική και διεθνή πολιτική σκηνή, 1910-1923*. στο: Στα χρόνια του Βενιζέλου...: Εσωτερική και εξωτερική πολιτική, οικονομία, εκπαίδευση, πολιτισμός, (επιμ. Γαρθίκα - Κατσιαδάκη Ε.), Χανιά-Αθήνα, 2010.
- Στεφάνου Σ. (επιμ.), *Τα Κείμενα του Ελευθέριου Βενιζέλου, 1909-1935, Τ.Α' (1909-1914)*, Αθήνα, 1981.

ԳՈՒ ՄԱԴՈՅԱՆ

Բ. ՄՈՒՍՍՈՒԼԻՆԻԻ «ՆՈՐ ՀՌՈՄԻ» ՏԵՍԱԿԱՆԸ
(Առասպել և իրականություն)

Մուտք

Հոդվածը խնդիր ունի անդրադառնալու Բենիտո Մուսոլինիի գլխավորած ֆաշիստական իշխանության վարած ներքին քաղաքականության որոշ կողմերին՝ կապված ֆաշիստական իշխանության «հոռմեականության» քաղաքականության հռչակման և իրագործման, «նոր դարաշրջանի» քարոզչությանը, Օգոստոս-Մուսսոլինի կերպարների զուգահեռներին: Եվ, թերևս, ամենակարևոր հարցը «հոռմեական առասպելի» ֆաշիստական մեկնաբանությունն է, դրա կյանքի կոչման քարոզչական ծրագիրը: Աշխատանքում ձգտելու ենք ցույց տալ առասպելի և իրականության հարաբերության սահմանները, դրանց ներքին կապը, առասպելի կողմից իրականության կառուցման փորձը և դրա մեկնաբանման խնդիրը: Առանձնակի ուշադրություն է դարձված քարոզչական մեխանիզմներին, ոլորտներին և թեմատիկային, որոնց կիրառմամբ Մուսսոլինին վստահորեն, քայլաքայլ իտալական ժողովրդին էր ներարկում «Նոր Հոռմեական կայսրության» և «Նոր դարաշրջանի» գաղափարները. ըստ որում, դրանց հիմնական գրավականը և հեղինակը ինքը՝ Դույսեն և ֆաշիստական ռեժիմն էին:

1. Առասպել և իրականություն

Իտալական հասարակության հանդեպ առասպելական ինքնությունը փորձելով որպես հիմք ընդունել՝ ֆաշիստական ռեժիմն ընդհանրապես և նրա առաջնորդ Բենիտո Մուսսոլինին մասնավորապես, փորձ էին անում այդ առասպելական ինքնության միջոցով կյանքի կոչել իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային ծրագրերը: Եվ, առհասարակ, ինչպես նշում էր Ռ. Բարտը, առասպելը պետք է դարձնեք պատմություն, պատմությունը՝ «բնու-

թյուն»¹, ասել է թե՛ Հռոմեական փառավոր պատմությունը դարձ-ներ նրանց առօրեական կյանքի անքակտելի մասնիկ: Թերևս դրա ապացույցի ամենավաղ օրինակներից էին 1932 թ. հրատարակված «Նոր Իտալական հանրագիտարանը» [Enciclopedia Italiana], 1925 թ. Բոլոնիայում բացված ֆաշիստական մշակույթի համալսարանը և այլն: Ըստ որում, դա առասպել չէր, որն անցյալն է ներկայացնում, այլ առասպել, որ ցույց է տալիս իրականությունը, ասել է թե՛ կառուցում ներկան:

Ակնառու էր, որ քաղաքական առումով ֆաշիստների որդեգրած հռոմեական առասպելն առանձնապես մեծ կախում չունեի պատմական հավաստիությունից, այլ հակառակն էր տեղի ունենում՝ առասպելն էր կառուցում անցյալն այն ձևով, որով որ հարկավոր էր իրեն:

Մուսսոլինին իր ելույթներից մեկում՝ 1922 թ. ապրիլի 21-ին, նշում էր. «Հռոմը, որով մենք հպարտանում ենք, իհարկե հուշարձանների և փլատակների Հռոմը չէ: Հռոմը, որով հպարտանում ենք, որին տենչում ենք և իրագործում, ոչ թե անցյալի կարոտաբաղձ դիտարկումն է, այլ ապագայի նախապատրաստումը»²:

Իշխանության գալով Մուսսոլինին և ֆաշիստական ռեժիմը լծվեցին առասպելի կյանքի կոչմանը: Նոր իշխանությունը տևական ժամանակ, մինչև 1936 թ., որոշակի «սիրախաղի» մեջ էր հանրապետական ավանդույթի հետ, ըստ որում, կարևորում էր հռոմեական քաղաքացու, քաղաքացիական համակարգերի նշանակությունը, սակայն դա միայն առերես էր, և արդեն կառավարություն կազմելուց հետո Մուսսոլինին արագորեն փոխեց շեշտադրումները: Նա հմտորեն համադրում էր արքայական իշխանությունը՝ ի դեմս Սավոյական արքայատոհմի, և մյուս կողմից օրեցօր հզորացող ֆաշիստական իշխանությանը: 1923 թ. սկսած թողարկվող դրամների դիմերեսին պատկերվում էր արքայի պատկերը, իսկ դարձերեսին՝ ֆաշիստական խորհրդանշանները՝ միապե-

¹ P. Барт, *Семiotика. Поэтика. Миф Сегодня*, Москва, 1994, с. 72
URL: <http://www.lib.ru/CULTURE/BART/barthes.txt>. (23.08.2014).

² B. Mussolini, *Opera Omnia* (14 Gennaio 1922 - 30 Ottobre 1922), Vol. XVIII, Firenze 1956, p. 160.

տության և ֆաշիստական ուժերի համագործակցությունը, ինչն էլ հնարավոր էր դարձնում նոր քաղաքական իրականության կենսագործունեությունը: 1926 թ. ֆաշիստական կուսակցության և ընդհանրապես վարչակարգի գլխավոր նշանը՝ *fascies*-ը³, հայտնվեց նաև պետական զինանշանի վրա: Այս նշանը և ֆաշիստական իշխանության մյուս խորհրդանիշները հետևողականորեն պարառում էին ամբողջ պետական կյանքը՝ տեսողաբար ի ցույց դնելով և խորհրդանշելով ֆաշիստական իշխանության ամենահաստատությունը, իտալական հասարակական կյանքի անքակտելի ու կարևորագույն մաս լինելը:

Հատկապես կարևոր էր իշխանության խորհրդանիշների տեսողականացման (վիզուալիզացիայի) հոգեբանական կողմը, քանզի վերջիններիս միջոցով հասարակությանն էր ներարկվում վարչակարգի բերած «Նոր դարաշրջանը», որը ներծծված լինելով «հռոմեականությամբ» և՛ պետք է օրինակարգեր, և՛ հավերժական ընթացք խորհրդանշեր ռեժիմին: Հարկավ, պետք է հաշվի առնել 1921 թ. կնքված ազգայնականների ու ֆաշիստների դաշինքը և դրանից բխող ներքաղաքական հետևանքները:

Մուսսոլինիի և ֆաշիստական ռեժիմի «հռոմեականության» քաղաքականությունն առավելապես հիմնվում էր հռոմեական ան-

³ *Fascies*-ը կամ *Fascies lictoris*-ը Հռոմեական ավանդույթը ճանաչում է որպես մագիստրական ռազմական իշխանության խորհրդանիշ: *Fascies*-ը փայտեղի տրցակ է կապված կարմիր ժապավենով, իսկ դրանց արանքում կացին կամ սրի շեղք: Այս *Fascies*-ները լայն կիրառում ունեին Թագավորական Հռոմում, իսկ ապա՝ նաև Հանրապետական Հռոմում: Այն կրում էին հատուկ պաշտոնյաներ՝ լիկտորներ, որոնք ուղեկցում էին Մագիստրատին և այդպիսով ցույց տալիս նրա՝ բարձրագույն իշխանության կրող լինելը: Մուսսոլինին իր ներքին քաղաքականությունում ակտիվորեն և ամենուրեք կիրառում էր այս նշանը՝ ցուցադրելու իր և իր ստեղծած վարչակարգի կապը հռոմեական պետական, իշխանական ավանդույթի հետ: Տե՛ս A. Berger, *Encyclopedic Dictionary of Roman Law*, Philadelphia, 1991, p. 468.

ցյալի կառուցման, մեկնաբանման և այն պատկերի կառուցման վրա, որը պետք է ստեղծեր «նոր մարդուն»⁴:

1924 թ. ապրիլի 21-ին «Հոռմի օր» տոնակատարության ժամանակ Մուսսոլինին իր ելույթում նշում է, որ Հոռմը որպես երևույթ անըմբռնելի է պատմական քննության համար, որ գիտնականների սառը դատողությունը չի կարող հաղթահարել առասպելը, քանզի Հոռմի հավերժության բանալին «գաղտնիքն» է⁵:

Այստեղ ակնհայտ կերպով երևում է շեշտադրումն առ ֆաշիստական վարչակարգի ծիսականացված բնույթը, որն ուներ շատ կոնկրետ քաղաքական նպատակներ: Ֆաշիզմը ձգտում էր «բացահայտել, քողագերծել» հոռմեական աշխարհը, նոր շունչ տալ հոռմեական լեգենդին, նորովի վերաիմաստավորել հոռմեական առասպելը: Բարտը նշում է, որ մերօրյա առասպելը կարիք չունի թաքնվելու կամ խաբելու այն միայն որոշակիորեն խեղաթյուրում է իրականությունը և ոչ միշտ՝ նույն ձևով: Դա ենթադրում էր անհայտ և միստիկ ուժ, որը պետք է անցյալը կապեր ապագայի հետ և ապահովեր Հոռմի տրիումֆը և նոր վերածնունդը ֆաշիստների առաջնորդությամբ:

1932 թ. ֆաշիստների իշխանության գալու 10-ամյակի կապակցությամբ տեղի ունեցավ «Ֆաշիստական հեղափոխության» ցուցահանդեսը⁶, որը մինչև 1934 թ. շուրջ 4 միլիոն իտալացի և արտասահմանցի այցելուներ գրանցեց: Սա ցույց էր տալիս, որ

⁴ Պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ ամբողջատիրական իշխանությունները հոչակում են «նոր մարդուն» ծնունդը՝ նպատակ ունենալով նրան դարձնելու իրենց ստեղծելիք համակարգի անկյունաքար: Այդպիսին էին իտալական ֆաշիստները, գերմանական նացիստները և կոմունիստները:

⁵ B. Mussolini, op. cit., Vol. XX, p. 234.

⁶ Չմոռանալք, որ ֆաշիստները իշխանության գալով ձևափոխեցին իտալական պետական տոմարը՝ հաշվարկը սկսելով իրենց իշխանության գալու տարուց, այսպիսով դարակազմիկության պատկեր և ընկալում փորձելով ստեղծել Իտալական հասարակության մոտ:

արտաքին աշխարհը նույնպես հետաքրքրված էր Մուսսոլինիով և նրա բերած հոռմեականությամբ⁷:

Կարևոր քարոզչական միջոցառումներ էին Վերգիլիուսի (1930 թ.), Հորացիուսի (1935 թ.), և վերջապես Օկտավիանուս Կեսարի (1937 թ.) ծննդյան 2000-ամյակի տոնակատարությունները, որոնք մեծ շուքով նշվեցին Հոռմում և ամբողջ Իտալիայում:

Օգոստոսի ծննդյան 2000-ամյակը համընկավ նաև Իտալա-եթովպիական պատերազմում Իտալիայի հաղթանակին: Ակներև է, որ Մուսսոլինին իրեն ներկայացնում էր որպես «նոր Օգոստոս», որը վերականգնեց Հոռմեական կայսրությունը, խաղաղություն և բարգավաճում բերեց ժողովրդին: Սակայն Մուսսոլինիի և Օգոստոսի կերպարների միջև ամենաակնառու նմանությունը թերևս այդ երկու պետական գործիչների միաժամանակ և՛ որպես հեղափոխականների, և՛ ավանդույթի վերականգնողի կերպարն էր: Եթե Օգոստոսն իրեն հայտարարել էր Հայրենյաց հայր՝ Pater patriae, ապա Մուսսոլինին, կրկնօրինակելով նրան, 1931 թ. իրեն հայտարարեց հոռմեական ժողովրդի հոգևոր հայր: Նույն ելույթում նա Հոռմը համեմատում էր կաղնու հետ, որի հիմքերը պետք էր ազատել ավելորդ բուսականությունից. «Դուք պետք է ազատեք Օգոստոսի դամբարանի, Մարկելուսի թատրոնի, Կապիտոլիումի, Պանթեոնի շրջակա տարածքները, այն ամենը, ինչն աճել է նրանց շուրջ անկման դարերում պետք է վերանա»⁸: Մուսսոլինիի և Օգոստոսի գործունեության մեջ յուրաքանչյուր կարող էր գտնել քաղաքական գործչի արարող հանճարը, որոնք վերափոխում և վերակազմակերպում էին պետական կյանքի և իշխանական համակարգի բոլոր ոլորտները՝ ոչնչին չզիպչելով:

Օգոստոսի հետ նմանությունը և քարոզչության կարևորությունը Մուսսոլինին գիտակցել էր դեռևս վաղուց՝ մինչև իշխանության

⁷ P. Salvatori, La Seconda Mostra della Rivoluzione Fascista. *Clio*, Vol. XXXIX, 2003, p. 439-459.

⁸ B. Mussolini, op. cit., Vol. XXII, p. 48.

գալը: Այդ պատճառով իշխանության առաջին տարում՝ 1922 թ., հանձնարարեց պեղել Օգոստոսի դամբարանը, դրան հարող տարածքը մաքրել միջնադարյան շինություններից, որոնք, ըստ նրա, Իտալիայի անկումն ու թուլությունն էին խորհրդանշում⁹: Նա հանձնարարեց նորովի կառուցապատել Օգոստոսի դամբարանը¹⁰ և դրան հարող հրապարակը, որը «Նոր Հռոմի» տեսողականացման կարևորագույն կենտրոններից պետք է դառնար: Իրականացվեց հռոմեական Ֆորումի, Մարկելուսի թատրոնի, Պանթեոնի և հռոմեական պատմության նշանավոր այլ շինությունների վերակառուցումը: Կարևոր էր Իսադաղության բազիլիկ՝ Ara Pacis-ի վերակառուցումը 1936 թ., որը գտնվում էր Կոլիզեին հարող հրապարակում և շատ կարևոր էր տեսողականացման և Նոր Հռոմի իմաստատարածական պատկերը կերտելու առումով:

1936 թ. Եթովպիայի նվաճումը ֆաշիստական իշխանությունների ամենամեծ ձեռքբերումն էր, որը համաձայնության միջավայր ստեղծեց հասարակության ու իշխանության միջև, և միաժամանակ մեծ հաջողություն էր հենց հռոմեական առասպելի համար: Դիկտատուրան կարծես թե արդարացվեց պատմության կողմից, և պետության որակական ընկալումը վերջնականապես ձեռք բերեց կայսերական բնույթ:

2. Առասպել և թատերական միջավայր

Եթովպական նվաճմանը նվիրված տոնակատարության ժամանակ Լուիջի Պիրանդելլոն, խոսելով Դուչեի մասին, բնութագրում

⁹ K. Spiro. *The Emperor and the Duce. Art and Architecture in the Service of Politics*. H.A. Millon, Cambridge: MIT Press, 1978, p. 285. Տե՛ս. L. Susan, *Political Propaganda and Archaeology: The Mausoleum of Augustus in the Fascist era*, *International Journal of Humanities and Social Science*, Vol. 3 (16), 2013.

¹⁰ Հռոմեական պետության անկումից հետո, Օգոստոսի դամբարանը օգտագործվել է որպես ամրոց, գինեգործական ագարակ, արձանների պարտեզ, ամֆիթատրոն, և վերջապես՝ համերգասրահ: Տե՛ս. A. Riccomini, *La ruina di si bela cosa: vicende e trasformazioni del Mausoleo di Augusto*. Rome: Electa, 1996.

էր նրան որպես «համապատասխան հերոս, որին աստված որոշում էր կայացրել ճիշտ պահին նվիրել Իտալիային», և որը գործում էր որպես «հեղինակը և առաջատար դերակատարը դարերի թատրոնի»: Այսպես էր պատկերվում Մուսոլինիի կերպարը որպես նկարչի, որը ձևավորում էր մարդկային զանգվածները:

Հռոմեական առասպելը ստեղծել էր մի թատերականացված միջավայր, որտեղ գլխավոր դերում Մուսոլինին էր, իսկ հանդիսատեսն ու մասնակիցը՝ իտալական հասարակությունը: Առանձնապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ֆաշիստական իշխանության տարիներին քարոզչամեթոդային կողմից ստեղծված շուրջ 200 ֆիլմերից երկուսն էին հռոմեական թեմատիկայով՝ «Ներոնը» (1930) և «Սկիպիոն Աֆրիկացին» (1937): Ըստ որում, առաջինը շեշտադրում էր թատերականացված միջավայրի թատերական, իմաստային ընդհանրությունը, իսկ մյուսը՝ Հռոմեական կայսրության հաղթականության, հզորության և ընդհանրապես պետության կամային ուժը:

Իտալիայի մասնակցությունը և ջախջախումը Երկրորդ համաշխարհային պատերազմում ցույց տվեցին, թե որքանով էր արդյունավետ հռոմեական լեգենդը և, որ ամենակարևորն է, թե որքանով էր այն ընկալվել, ընդունվել և վերաիմաստավորվել իտալական հասարակության կողմից: Ֆաշիստական իշխանությունը ոչ արդյունավետ, տեղերում երևակայական իշխանության բնույթ ուներ, որը պարզապես շունչ տվեց, կենդանացրեց առասպելը, այդ իսկ պատճառով պատերազմում անհաջողությունը չպետք է գնահատվի որպես օգտակար մասնիկ առասպելի ընկության ու գնահատականի համար: Այդպես էր թե չէ, բայց պատերազմից հետո, հետպատերազմյան եվրոպական պատմագրության կողմից «հռոմեականությունը» գնահատվեց որպես ֆաշիստական իշխանության գեղատեսիլ և խղճով մի տեսակետ:

Ամփոփում

Հարկ է նշել մի քանի կարևոր հանգամանքներ, որոնց պատճառով այդպես էլ իրապես ուժ ձեռք չբերեց և վերջնական կենսագործունեության մակարդակի չհասավ «հռոմեական առասպելը»:

Նախևառաջ հին և նոր հռոմեացիների հարաբերության հարցը, ինչի գրավական որպես այդպիսին Դուչեն էր, ով ժամանակի ընթացքում դարձավ առասպելի կենսագործման հիմնական խոչընդոտը: Երկրորդ՝ «հռոմեական առասպելը» չէր կարող կատարել այն երկրորդական դերը, որը ստանձնել էր ֆաշիստական Իտալիան նացիստական Գերմանիայի նկատմամբ: Նույնիսկ ուսայական քաղաքականությունը չէր համադրվի այս առասպելի հետ: Երրորդ պայմանը ֆաշիստների իրական նպատակն էր՝ «նոր մարդու» ստեղծումը, որը որոշ բաներ պետք է փոխառեր հռոմեական ավանդույթից, բայց մնացյալ առումով լիովին նոր, յուրատեսակ արտադրատեսակ պետք է հանդիսանար: Դուչեն աշխատում էր, որպեսզի իտալացիներն առասպելի օգնությամբ իրենց ընկալեն որպես հռոմեացիներ, սակայն իրականում իտալացիներն այդ անում էին Դուչեի անձի միջոցով, որի անկումից հետո անկում ապրեց նաև հռոմեականությունը:

Ի տարբերություն Մուսսոլինիի՝ Հիտլերը գերարժեք սկզբունքների խորհրդանիշն էր, մրցավազքի ոգին, և գերմանացիները մնացին գերմանացի նույնիսկ առանց նրա:

Մուսսոլինին խոշոր կատակերգական կերպար էր, իսկ իտալացիները հանդիսատեսներ-դերասաններ՝ հռոմեական առասպելի համաժամանակյա ներկայացման մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Mussolini B.**, *Opera Omnia* (14 Gennaio 1922 - 30 Ottobre 1922), Vol. XVIII, Firenze 1956.
- Mussolini B.**, *Opera Omnia* (23 Aogosto 1923 - 13 Giugno 1924), Vol. XX, Firenze 1956.
- Mussolini B.**, *Opera Omnia* (5 Novembre 1925 - 26 Maggio 1927), Vol. XXII, Firenze 1957.
- Berger A.**, *Encyclopedic Dictionary of Roman Law*, Philadelphia, 1991.
- Kostof S.**, *The Emperor and the Duce. Art and Architecture in the Service of Politics*. H. A. Millon (ed.), Cambridge: MIT Press, 1978.
- Riccomini A.**, *La ruina di si bela cosa: vicende e trasformazioni del Mausoleo di Augusto*, Rome: Electa, 1996.
- Salvatori P.**, *La Seconda Mostra della Rivoluzione Fascista*, *Clio*, ANNO XXXIX, 2003 (3), pp. 439-59.
- Susan L.**, *Political Propaganda and Archaeology: The mausoleum of Augustus in the fascist era*, *International journal of Humanities and Social Science*, Vol. 3 (16), 2013.
- Барт Р.**, *Семіотика. Поэтика. Миф сегодня*, Москва, 1994.
<http://www.lib.ru/CULTURE/BART/barthes.txt>. [23.08.2014].

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԳԼՈՅԱՆ

ՈՒՆՆԱԹՈՆ ՉԵՐՉԻԼԻ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

(«Հետսառը պատերազմյան» արդյունքները և արդի շրջանի քաղաքական արձագանքները)

Մուտք

1945 թ. հունիսի 26-ին Մեծ Բրիտանիայում կայացան խորհրդարանական ընտրություններ, ինչի արդյունքում պահպանողական կուսակցությունն Ուինսթոն Չերչիլի գլխավորությամբ պարտություն կրեց, իսկ լեյբորիստները ծայրերի մեծամասնությամբ հաղթանակ տարան: Ու. Չերչիլը երբեք չներեց Անգլիայի ժողովրդին՝ իրեն և պահպանողական կուսակցությանը իշխանությունից հեռացնելը համարելով նրանց ամենամեծ սխալը¹: Սակայն Ու. Չերչիլը միանգամից չընդունեց սեփական պարտությունը և ոչ էլ պատրաստվում էր հեռանալ քաղաքական ասպարեզից: Նա գիտակցում էր, որ հրաժարվելով քաղաքական առաջնորդի պաշտոնից, մեկընդմիջտ կկորցնի վարչապետ լինելու բոլոր հնարավորությունները, ուստի քաղաքական նոր պայքար սկսեց լեյբորիստական կուսակցության դեմ: Նրա խորհրդարանական ելույթներում քննադատական մոտեցում էր ցուցաբերվում կառավարող կուսակցության վարած թե արտաքին և թե ներքին քաղաքականության հանդեպ: Միաժամանակ, պահպանողական կուսակցության մի շարք երիտասարդ անդամներ ձեռնարկել էին կուսակցության ծրագրի վերակառուցման գործընթացը, որը, սակայն, Չերչիլի կողմից ոչ մի ուշադրության չարժանացավ: Հարց է առաջանում՝ Չերչիլն արդյո՞ք բեռ չէ կուսակցության համար, սակայն հրաժարվել նրանից պահպանողականները չէին կարող, քա-

¹ В. Г. Трухановский, *Уинстон Черчилль*, Москва: изд. Мысль, 1977, с. 215-230.

նի որ նա ձեռք էր բերել մեծ հեղինակություն և պատերազմի առաջամարտիկներից էր:

1945-1951 թթ. նախկին վարչապետը ճանապարհորդում էր Եվրոպայում և ԱՄՆ-ում²: 1945-1946 թթ. ծմուսնը Ու. Չերչիլը մի քանի ամիս անցկացնում է ամերիկյան մայրցամաքում, որտեղ նա հանդիպումներ է ունենում նախագահ Հ. Թրումենի, պետական գերատեսչությունների ներկայացուցիչների և այլ գործիչների հետ և առաջարկում է բարձրաձայնել առկա միջազգային քաղաքական խնդիրները ելույթի տեսքով: 1946 թ. փետրվարի 10-ին նախագահ Հ. Թրումենի հետ նրանք մշակում են ելույթի ընդհանուր կետերը: Մարտի 5-ին Ու. Չերչիլը և նախագահ Հ. Թրումենը ուղևորվում են Միտոլի նահանգի Ֆուլթոն քաղաք. Վեստմինստերյան թղլեցում նախկին վարչապետը ելույթ է ունենում, որով և հիմք է դրվում «Սառը պատերազմի» պատմությանը³:

Հայտնի է, որ այդ ելույթը համաձայնեցված էր Կ. Էտլիի և Է. Բեվիլի (համապատասխանաբար՝ Անգլիայի վարչապետ և արտգործնախարար), ինչպես նաև Հ. Թրումենի և Դ. Բերնսի հետ: Տարբեր փաստեր ապացուցում են, որ Ու. Չերչիլը այդ ելույթով ոչ միայն արտահայտում էր սեփական կարծիքը, այլ նաև բարձրաձայնում ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարող շրջանների հակախորհրդային քաղաքականության ծրագրի մասին: ԱՄՆ-ն, որպես կապիտալիստական աշխարհի առաջնորդ-պետություն, պարտավոր էր առաջնորդել հակախորհրդային պայքարը:

Ում դեմ պետք է ուղղվեր անգլո-ամերիկյան ռազմական դաշինքը. բնականաբար՝ խորհրդային Միության և սոցիալիստական բլոկի: Չերչիլը կիրառեց «երկաթե վարագույր» եզրը, որը հետագայում լայն տարածում գտավ հակախորհրդային քարոզիչների մոտ: Ըստ նրա՝ Եվրոպա մայրցամաքի վրա իջել էր «երկաթե վա-

² В. Г. Трухановский, *ук. соч.*, с. 250-252.

³ В. Г. Трухановский, *ук. соч.*, с. 260-261, 265-268.

րագույր», ուստի առաջարկում էր հնարավորինս շուտ ԽՍՀՄ-ի դեմ կիրառել ռազմական ուժ: Նրան այլևս չէր բավարարում ուժերի հավասարակշռության անգլիական ավանդական քաղաքականությունը, երբ պետություններից մեկն օգտագործվում է մեկ այլ պետության դեմ պայքարում⁴: Այսպիսով, Ու. Չերչիլը նպատակ ուներ հաստատելու անգլո-ամերիկյան համաշխարհային տիրապետություն, ծրագիր, որ մշակել էր դեռևս Երկրորդ աշխարհամարտի տարիներին:

Ու. Չերչիլի ֆոլթոնյան ելույթը հանգում էր նրան, որ ԽՍՀՄ-ը համարվում էր մնացած ժողովուրդների համար ամենագլխավոր վտանգը, այդ պատճառով մարդկությունը պետք է համախմբվեր անգլո-ամերիկյան տիրապետության ներքո և ուժով չեզոքացներ այդ վտանգը: Նախկին վարչապետը փորձում էր ամբողջ աշխարհը դուրս բերել դեմ ԽՍՀՄ-ի⁵ դեմ:

Ու. Չերչիլի ֆոլթոնյան ելույթը անհանգստություն և վրդովմունք առաջացրեց նաև Արևմուտքում: Դա նոր համաշխարհային պատերազմի կոչ էր: Թեև Անգլիական խորհրդարանը որոշել էր քննադատել Ու. Չերչիլի ելույթը, վարչապետ էտլին այն արգելեց՝ նշելով, որ դա մասնավորի մասնավոր ելույթ է և կապ չունի պետական քաղաքական ուղղվածության հետ. իրականում լեյբորիստների արտաքին քաղաքականությունը հետևում էր ֆոլթոնյան քաղաքական գծին:

1947 թ. ամերիկյան կառավարությունն ընդունել էր «Թրումենի դոկտրինան», և դրանով իսկ Ու. Չերչիլի շարադրած արտաքին քաղաքականության ծրագիրը ևս ընդունվեց որպես ամերիկյան պետական քաղաքականության նախագիծ: Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարությունների ջանքերով ձևավորվեցին բազմաթիվ հա-

⁴ A. Axelrod, *The Real History of the Cold War: A new look of the past*, England: Prentice Hall press, 2001, pp. 90-110.

⁵ A. Hammond, *British Fiction and the Cold War*, London and New York: Palgrave Macmillan, 2013, pp. 223-230.

կախորհրդային ռազմաքաղաքական խմբավորումներ, որոնք ֆոլթոնյան ծրագրի գործնական պատկերներն էին⁶:

ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի դիմակայությունը չվերածվեց նրանց միջև անմիջական պատերազմի, սակայն միջուկային զենքի կիրառման սպառնալիքը, տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային առճակատումները մշտական վտանգ էին ներկայացնում միջազգային խաղաղությանը⁷: Ահա թե ինչու 1946 թ-ից մինչև 1980-ական թթ. վերջերը բնութագրվեց որպես Սառը պատերազմի շրջան⁸:

Ուինսթոն Չերչիլի կողմից առաջադրված գաղափարախոսությունն ընկալվեց իր ժամանակակիցների կողմից: Հիմնական նպատակը ԽՍՀՄ-ի փլուզումն էր, ինչը և իրականացավ: Սակայն այդ գաղափարառազմական ծրագիրը շարունակեց կիրառվել նաև հետագայում և արդեն 21-րդ դարում ձեռք բերեց առանձնահատուկ պատկերներ, նոր «թշնամական» կերպարներ: Պայքարը գերակայության հաղթանակի համար շարունակեց ԱՄՆ-ն՝ թողնելով Մեծ Բրիտանիային միայն իր դաշնակցի շարքերում: Բազմաթիվ հակամարտություններ ծավալվեցին Եվրասիայում, Աֆրիկայում և այլուր:

ԽՍՀՄ-ի փլուզումից գրեթե անմիջապես հետո ԱՄՆ-ն դարձավ համաշխարհային գերտերություն⁹, ինչի հետևանքներն են՝

- ԱՄՆ-ն սկսեց նվազեցնել իր ռազմական ծախսերը, քանի որ չունեի իրեն արժանի ռազմական մրցակից և այդ գումարները սկսեց ներդնել պետության տնտեսական ոլորտում,
- ելք ունեցավ դեպի նոր շուկաներ, որոնք ժամանակին գտնվում էին Խորհրդային Միության վերահսկողության ներքո:

⁶ В. Г. Трухановский, *ук. соч.*, с. 280-281.

⁷ Ph. Shabecoff, *Earth Rising; American Environmentalism in the 21st Century*, Island: Island Press, 2001, pp. 99-100.

⁸ В. Г. Трухановский, *ук. соч.*, с. 283-284.

⁹ К. С. Гаджиев, *Геополитика, Международные отношения*, Москва, 1997, с. 144-145.

• Բ. Ելցինի դեկավարման օրոք ԱՄՆ-ն կարողացավ որոշակի առումով, իր դիրքերն ամրապնդել Ռուսաստանի Դաշնությունում,

• Եվրոպայում և գրեթե ամբողջ աշխարհում զգալիորեն աճեց ամերիկյան ներկայությունը և այլն¹⁰:

Ամերիկյան արտաքին քաղաքականության կարևոր գործոններից մեկը եղել և մնում է հիմնական թշնամու կերպարի կերտումը: Գերմանական ծավալապաշտությունը, ճապոնական միլիտարիզմը և խորհրդային համայնավարությունը մնացին անցյալում որպես հակառակորդի ընդհանուր նկարագիր, որը դիմադրում էր ամերիկյան ազատությանը և անհատականությանը: 2001 թ. սեպտեմբերի 11-ի միջադեպից հետո ամերիկյան գլխավոր թշնամին դարձավ մարտնչող իսլամը¹¹:

Նշենք, որ 20-րդ դարի վերջում ԱՄՆ-ն որդեգրել էր դեմոկրատական արժեքների տարածման քաղաքականությունը, որի առաջամարտիկը ինքն էր: Սառը պատերազմի ընթացքում ԱՄՆ-ն Խորհրդային Միության դեմ բացի գաղափարական պայքարից դիմել էր նաև գործնական քայլերի՝ օժանդակելով բռնապետական պետություններին և նրանց հետ միասին պայքարելով սոցիալիստական ծավալապաշտության դեմ: Հետագայում, ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո, սկսեց վերացնել այդ համակարգերը՝ ասես զբաղված լինելով «սեփական տան մաքրությամբ» (Պանամա, Լիբիա, ՄԱԿ-ի ուժերի մուտքն Աֆղանստան, Իրաք և այլն): ԱՄՆ-ն վերացնելով այդ պետությունների բռնատիրական համակարգերը՝ մուտք գործեց և սկսեց վերահսկել վերոնշյալ պետությունների բնական ռեսուրսները: Նման քաղաքականությունը ելնում էր սեփական էներգետիկ անվտանգության շահերից:

Ներկա ժամանակաշրջանում միջազգային հանրությունը պարբերաբար ականատես է լինում քաղաքական ճգնաժամերի (Արաբական գարուն, Լիբիա, Սիրիա և վերջերս ի հայտ եկած Ուկրաինական ճգնաժամ): Տարբեր հարթություններում բախվում են

¹⁰ D. Pipes, *The Enemy Has a Name, Jerusalem Post*, URL: <http://www.danielpipes.org/103/who-is-the-enemy>, (19.06.2008).

¹¹ А. А. Громыко, *Карибский кризис, Вопросы Истории*, N 7-8, 1979.

գերիշխող պետությունների ռազմական, տնտեսական, քաղաքական շահերը: Նման բախման փաստեր եղել են դեռևս «Սառը պատերազմի» տարիներին (օրինակ՝ Կարիբյան ճգնաժամը¹²): Կատարենք հետևյալ վերլուծությունը. Վ. Պուտինի իշխանության գալու՝ ՌԴ-ն (ԽՍՀՄ-ի հիմնական ժառանգորդը) սկսեց համագործակցել Լիբիայի, Սիրիայի և այլ երկրների կառավարությունների հետ: Հարկ է հիշեցնել, որ Սիրիայի Տարտուս նավահանգստում էր գտնվում տարածաշրջանում ռուսական միակ ռազմաբազան: ԱՄՆ-ն և եվրոպական մի քանի պետություններ ձեռնարկեցին համապատասխան քայլեր Ռուսաստանին վերոնշյալ դաշնակիցներից զրկելու համար: Կորցնելով վերահսկողությունը Լիբիայում Ռուսաստանը դիվանագիտական ներուժն օգտագործեց Բաշար Ասադի իշխանության պահպանման վրա¹³: 2013 թվականի նոյեմբերի 21-ին աշխարհը ցնցեց ուկրաինական «Եվրոմայդանը»: Այստեղ բոլոր հնարավոր միջոցներով մասնակցում են տարբեր ուժեր, որոնցից հիմնականը Ռուսաստանը, ԱՄՆ-ն և ԵՄ-ն են¹⁴:

Սառը պատերազմի և հետսառըպատերազմյան շրջաններում կան շատ ընդհանրություններ, հատկապես պայքարի վարման սկզբունքների մեջ: Հաղթանակի հասնելու համար կողմերը դիմում են տարբեր միջոցների: Դրանցից են՝

- գաղափարախոսական պատերազմ
- տեղեկատվական մրցավազ՝ ընդգծված

ապատեղեկատվությամբ

- ռազմական ուժի կիրառում՝ հաճախ քողարկված և գաղտնի
- զենքի վաճառք
- ահաբեկչական ուժերի ֆինանսավորում
- դիվանագիտական պայքար և այլն:

¹³ C. McKinney, *The Illegal War on Libya*, USA: Clarity Press, 2012, pp. 25-31.

¹⁴ А. Коротаев, *Нация и культура*, URL: <http://polit.ru/article/2013/11/10/arabskaya-vesna/>, (10.11.2013).

Ամփոփում

Ու. Չերչիլի կողմից հայտարարված Սառը պատերազմը, որին զոհ գնացին հազարավոր մարդիկ, տասնյակ համակարգեր, բռնակալներ, ի վերջո ավարտվեց 1991 թ. դեկտեմբերի 8-ին «միգլխանի արծվի» (ԱՄՆ) հաղթանակով: Ու. Չերչիլի մշակած ծրագիրը, այն է՝ Մեծ Բրիտանիայի կողմից միջազգային քաղաքականության վերահսկողության կենտրոնացումը իր ձեռքում, չիրականացավ՝ այն զիջելով ավելի հզոր ներուժ ունեցող ԱՄՆ-ին: Սառը պատերազմի ավարտը խոստանում էր նոր ապագա խաղաղ երկնքի տակ: Բայց հետսառըպատերազմյան շրջանում ի հայտ եկած շատ խնդիրներ մինչ օրս լուծում չեն ստացել: Մասնագետներից ոմանք այս շրջանը (1991-2013 թթ.) անվանում են «Չորրորդ աշխարհամարտ»¹⁵: Թերևս եթե դիտարկվեն 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի քաղաքական իրադարձությունները, ապա տվյալ ժամանակահատվածը կարելի է համարել ոչ միայն որպես հետսառըպատերազմյան քաղաքականության հետևանք, այլև անվանել «Սառը պատերազմի նոր փուլ», նույնիսկ «Նոր Սառը պատերազմ»¹⁶:

¹⁵ **Լա Րեալիդադ**, *Четвёртая Мировая война. Изменение в структуре войны*, URL:http://sceptis.net/library/id_576.html, (20.11.1999).

¹⁶ **Դ. Բրաս**, *Терроризм вчера, сегодня и навеки*, Азербайджан: SADA, 2003, с. 20-22.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Axelrod A.**, *The Real History of the Cold War a New Look of the Past*, England: Prentice Hall Press, 2001.
- Daniel P.**, *The Enemy Has a Name*, *Jerusalem Post*, URL:<http://www.danielpipes.org/103/who-is-the-enemy> (19.06.2008).
- Hammond A.**, *British Fiction and the Cold War*, London and New York: Palgrave Macmillan, 2013.
- McKinney C.**, *The Illegal War on Libya*, USA: Clarity Press, 2012.
- Shabecoff Ph.**, *Earth Rising; American environmentalism in the 21st century*, Island: Island Press, 2001.
URL: http://sceptis.net/library/id_576.html, (20.11.1999).
- Арас Дж.**, *Терроризм вчера, сегодня и навеки*, Азербайджан, изд.: SADA, 2003.
- Гаджиев К.**, *Геополитика, Международные отношения*, Москва, 1997.
- Громыко А. А.**, *Карибский кризис, Вопросы Истории*, N 7-8, 1979.
- Коротаяев А.**, *Нация и культура*,
URL:<http://polit.ru/article/2013/11/10/arabskaya-vesna/> (10.11.2013).
- Լա Րեալիդադ**, *Четвёртая Мировая война. Изменение в структуре войны*, URL:http://sceptis.net/library/id_576.html, (20.11.1999).
- Трухановский В. Г.**, *Уинстон Черчилль*, Москва: изд. Мысль, 1977.

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿՈՆՐԱԴ ԱԴԵՆԱՈՒԵՐ ԳՈՐԾՉԻ ՄԱՍԻՆ

«Մենք բոլորս ապրում ենք նույն երկնքի տակ, սակայն ոչ բոլորս ունենք միևնույն հորիզոնը»:

Կոնրադ Ադենաուեր

Մուտք

Կոնրադ Ադենաուերը Գերմանիայի Դաշնային Հանրապետության առաջին դաշնային կանցլերն էր: Պաշտոնավարման տարիներին (1949-1963 թվականներ) Ադենաուերի կողմից ընդունված հիմնական որոշումներն առ այսօր համարվում են ԳԴՀ արտաքին քաղաքականության կողմնորոշիչները և որոշում են երկրի ներքին քաղաքական կարգը:

Կոնրադ Ադենաուերը (1876-1967 թթ.) հանդիսանալով Գերմանիայի Քրիստոնյա-դեմոկրատական միության հիմնադիրը՝ միավորեց քրիստոնյա-սոցիալական, պահպանողական և ազատական ավանդույթները: Նրա անվան հետ են կապվում Գերմանիայի դեմոկրատական վերակառուցումը, արտաքին քաղաքական խարսխումն անդրատլանտյան արժեքային ընդհանրության մեջ, Եվրոպական միավորման տեսլականը և կողմնորոշվածությունը դեպի սոցիալ-շուկայական տնտեսություն: Ադենաուերի թողած հոգևոր ժառանգությունը մեծ դեր խաղաց սերունդների հետագա գործունեության մեջ:

Կոնրադ Ադենաուերը ծնվել է 1876 թ. հունվարի 5-ին Քյոլնում, փաստաբանի ընտանիքում: Նա ընտանիքի հինգ երեխաներից երրորդն էր: Սովորել է Ֆրենդենբուրգի, Բոննի և Մյունխենի համալսարաններում, ստացել իրավաբանի որակավորում¹:

¹ Konrad Adenauer (1876-1967),

Ադենաուերը պատկանում է մարդկանց այն շերտին, որոնց հաճախ անվանում են «Գերելիտա» (կամ համաշխարհային կառավարություն): Նա աղքատ էր, սովորելու հետ մեկտեղ ստիպված էր գիշերն աշխատել: Մեծ դժվարություններով նա երկուսուկես տարում ավարտեց Բոննի համալսարանի հնգամյա ուսուցման կուրսը՝ ստանալով իրավագիտության կրտսեր խորհրդականի կոչում: Պետք է համաձայնվել, որ այս տարիքում հաջողության գրավականն ապագայի համար առաջնային հանդիսացող քայլերի գիտակցումն ու հստակ ծրագրի առկայությունն է:

Պատահականությունների համար տեղ չկար նաև նրա անձնական կյանքում: Ի հեճուկս իր ընտրյալի ծնողների կամքի՝ Ադենաուերն ամուսնանում է արիստոկրատիայի ներկայացուցչի դստեր՝ Էմմայի հետ, որը 36 տարեկան հասակում մահանում է քաղցկեղից: Սառը և անտարբեր թվացող Ադենաուերն իր հուշերում գրում է. «Երիտասարդ տարիներին երազում էի մեծ քաղաքական կարիերայի մասին: Հիմա ես ունեմ այն, սակայն շատ միայնակ եմ»²: Էմմայի մահից կես տարի անց Ադենաուերի մեքենան ավտոլվթարի ենթարկվեց³:

1906 թ. Ադենաուերն ընտրվեց Քյոլնի օբերբուրգոմիստրի օգնական, իսկ 11 տարի անց դարձավ օբերբուրգոմիստր (12 քաղաքային «նախարարներից» մեկը՝ ղեկավարելով հարկահավաքությանը զբաղվող մագիստրատը): Նրա շնորհիվ Քյոլնը ծաղկում էր անգամ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Նա կտրականապես դեմ էր նացիստական գաղափարախոսությանը և միտված չէր փոխզիջումների գնալ: 1933 թ. ռայխսկանցլեր Ադոլֆ

URL:http://www.bbc.co.uk/history/historic_figures/adenauer_konrad.shtml, (22.11.2014).

² H. P. Schwarz, *Konrad Adenauer: From the German Empire to the Federal Republic, 1876-1952*,

URL:<http://books.google.am/books?id=RxY5HN9m48QC&pg=PA450&dq=%22Chancellor+of+the+Allies%22&sig=alse>, (20.09.2014).

³ *Ibid.*

Հիտլերն այցելում է Քյոլն⁴: Ադենաուերը կանցլերին դիմավորելու է ուղարկում իր տեղակալին, արգելում է քաղաքում կախել ֆաշիստական դրոշներ, իսկ կախված երկու դրոշները հրամայում է հանել: Հավատարմությունը սեփական համոզմունքներին ավելի է բարձրացնում Ադենաուերի հեղինակությունը: Նացիստական գաղափարներին հակառակվելու պատճառով նա զրկվում է պաշտոնից և հայտնվում համակենտրոնացման ճամբարում⁵:

57 տարեկանում Ադենաուերն ամբողջովին սնանկանում է: Այս տարիքում զարմանալի կերպով արտահայտվում են նրա հոգու արհուրյունն ու անկոտրում բնավորությունը: Մոտ 60 տարեկանում նա սկսում է զբաղվել այգեգործությամբ և նույնիսկ մի քանի նորարարությունների հեղինակ դառնում հողագործության ասպարեզում: Գուցե սա փորձ էր ինքն իրեն ապացուցելու, որ դեռևս ուժերը բավարար են նոր պետության առաջին կանցլեր դառնալու համար: Չարմանալի է այն փաստը, թե ինչ արագությամբ Ադենաուերը (արդեն 70 տարեկան) կարողանում է մտնել քաղաքական կյանք, գլխավորում «Քրիստոնյա-դեմոկրատական միություն»⁶ կուսակցությունը, որը և հաղթում է ընտրություններում:

1954 թ. պետության կազմավորման գործընթացում ձևավորվող «Քրիստոնյա-դեմոկրատական միությունը», որպես «կանցլերի կուսակցություն» Ադենաուերի ղեկավարության ներքո դարձավ Գերմանիայի պատմության 20-րդ դարի ամենահաջողված կուսակցությունը: Արդյունքը եղավ այն, որ Ադենաուերի կառավարման առաջին 5 տարիներին ՀՆԱ-ն աճեց 48%-ով, իսկ իրական աշխատավարձը՝ 80%-ով: Աշխարհում սկսեցին խոսել գերմանա-

կան «Տնտեսական հրաշքի» մասին (Wirtschaftswunder)⁷: Հետագայում տեմպերը նույնպես չթուլացան՝ հիմք դնելով գերմանական արդի հզոր տնտեսության ստեղծմանը:

Հաջորդ քայլը Գերմանիայի հեղինակության վերականգնումն էր: Նա հարաբերություններ հաստատեց Ռխերիմ թշնամիներ Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի հետ: Գերմանիայի անդամակցությունը արևմտյան ժողովրդավարական համայնքին, եվրոպական ինտեգրացիան և Ֆրանսիայի և Գերմանիայի հաշտությունը երևույթներ էին, որոնք սերտ կապ ունեն Կոնրադ Ադենաուերի հետ: Գերմանիայի կանցլերի պաշտոնում նշանակվելուց հետո Ադենաուերը սկսեց իրականացնել քաղաքականություն, որն արտահայտեց. «որքան հնարավոր է քացնել անարդարությունը հրեաների նկատմամբ այն բանից հետո, երբ անվերադարձ խորտակվել են միլիոնավոր կյանքեր»⁸: Ապա ճանաչեց գերմանացիների կողմից կատարված «Հոլոքոստը» և որպես փոխհատուցում 1,5 միլիարդ ԱՄՆ դոլար վճարեց աշխարհասփյուռ հրեաներին⁹:

4 անգամ վերընտրվելով կանցլերի պաշտոնում՝ Կոնրադ Ադենաուերը հրաժարական տվեց 87 տարեկան հասակում:

Ստրատեգիական կանոններում հաջողության հասնելու պայմանը ձեռք բերածով չբավարարվելու սկզբունքն է, որը, միախառնվելով ապագան պարզ տեսնելու բնատուր տաղանդի, համբերության և կյանքում ձեռք բերած անփոխարինելի փորձին, թույլ

⁴ D. W. Del Testa, *Government Leaders, Military Rulers, and Political Activists*, ORYX Press, 2001.

URL: <http://www.questia.com/read/106890738/government-leaders-military-rulers-and-political>, (22.11.2014).

⁵ R. Hiscocks, *The Adenauer Era*. Philadelphia: J. B. Lippincott, 1967, p. 54.

⁶ D. W. Del Testa, *Government Leaders, Military Rulers, and Political Activists*, URL: <https://www.questia.com/read/106890738/government-leaders-military-rulers-and-political>, (22.11.2014).

⁷ H. P. Schwarz, *Konrad Adenauer: A German politician and statesman in a period of war, revolution and reconstruction*, 2 vols., Oxford: Berghahn, 1995, p. 45.

⁸ H. P. Schwarz, *Konrad Adenauer: From the German Empire to the Federal Republic, 1876-1952*, URL: <http://books.google.am/books?id=RxY5HN9m48QC&pg=PA450&dq=%22Chancellor+of+the+Allies%22&sig=ACfes%22&f=false>, (20.11.2014).

⁹ N. Frei, *Adenauer's Germany and the Nazi Past: The politics of amnesty and integration*,

URL: <http://www.newrepublic.com/article/amnesty-and-amnesia>, (21.11.2014).

տվեց Ադենաուերին լավագույնս իրականացնել իր ծրագիրը: Նրա բնավորության առանձնահատուկ գիծը նաև տարբեր ուղղություններով միաժամանակ մտածելու և գործելու ունակությունն էր: Ադենաուերն առանձնանում էր երկու արհեստավարժ հատկանիշներով՝ նախ՝ սուր քաղաքական ինտրիգների ունակությամբ և, մյուս կողմից՝ քյուրոկրատական ապարատի իսկական վարպետ լինելով՝ «վարչարարական ժամագործ»:

Ադենաուերը մահացել է 1967 թ. ապրիլի 20-ին Ռյոնդորֆում¹⁰:

Ամփոփում

Կոնրադ Ադենաուեր գործչի հնտությունները քաղաքական ասպարեզում գործելու այսպես ասած «անկաշկանդությունը» ավելի վառ են ընդգծում Ադենաուեր-առաջնորդի էությունը: Ադենաուերին կարելի է նմանեցնել ավազի ժամացույցի. երբ նրա մոտ դատարկվում էր մի կողմը, դրան զուգընթաց պարտադիր լցվում էր մյուսը: Մի մարդու մեջ մեկ առաջ էր գալիս բուրժուատական խաղաղությամբ և անսահման համբերատարությամբ օժտված գործիչը, մեկ ամենաձայրահեղ արմատական փոփոխությունների միտված ռեֆորմատորը: Նման գործողությունն էր ամենաանհրաժեշտն ու ամենաարդիականը հզոր ու միացյալ Գերմանիայի ստեղծման համար, որի հեռանկարն ընկած էր Ադենաուերի ամբողջ գործունեության հիմքում:

¹⁰ *Konrad Adenauer (1876-1967)*,

URL: http://www.bbc.co.uk/history/historic_figures/adenauer_konrad.shtml, (22.11.2014).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Del Testa D. W., *Government Leaders, Military Rulers, and Political Activists*, ORYX Press, 2001.

URL:<https://www.questia.com/read/106890738/government-leaders-military-rulers-and-political> /22.11.2014/

Frei N., *Adenauer's Germany and the Nazi Past: The politics of amnesty and integration*,

URL:<http://www.newrepublic.com/article/amnesty-and-amnesia>, (20.09.2014)

Hiscocks R., *The Adenauer Era*, Philadelphia: J. B. Lippincott, 1967. *Konrad Adenauer (1876-1967)*,

URL:http://www.bbc.co.uk/history/historic_figures/adenauer_konrad.shtml, (22.11.2014).

Schwarz H. P., *Konrad Adenauer: A German politician and statesman in a period of war, revolution and reconstruction*, 2 vols., Providence: Berghahn, 1995.

Schwarz H. P., *Konrad Adenauer: From the German Empire to the Federal Republic, 1876-1952*,

URL:<http://books.google.am/books?onepage&q=%22Chancellor%20of%20the%20Allies%22&f=false>, (20.09.2014)

ՎԱՐԴԻԹԵՐ ԹԵԼՈՒՆՑ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԳԾԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Արդի հարավուփոխ դարաշրջանում, երբ տեղեկատվական հեղեղը ողողել է ամբողջ աշխարհը, նոր խնդիրներ են դրվում հասարակության առջև, որոնց լուծումից է կախված մատաղ սերնդի վաղվա օրը: Հաջողությամբ արձագանքելով ժամանակի մարտահրավերներին՝ կրթության ոլորտում կատարված բարեփոխումները նպաստավոր պայմաններ են ստեղծել ուսման որակի բարձրացման, շարունակական կրթության ապահովման, սովորողների արագ սոցիալականացման, նրանց ինքնուրույնության և ակտիվության խորացման համար: Ժամանակակից կրթության առջև ծառայած խնդիրների լուծման գործում մեծ է պատմական կրթության դերն ու նշանակությունը:

Պատմական կրթությունն ապահովում է պատմական անցյալի իմաստավորումը, սովորողների աշխարհայացքի ձևավորումը, ճանաչողական ինքնուրույնության և առողջ դատողության զարգացումը: Այսօր խիստ կարևորվում է պատմական կրթության որակի և արդյունավետության բարձրացումը: Այդ գործում վճռական նշանակություն ունի ուսուցման նորագույն միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը (համակարգիչ, համացանց, էլեկտրոնային դասագիրք, լազերային սկավառակ և այլն): Համակարգիչն տիրապետելն ավելի ոյուրին է դարձնում պատմության ուսուցման գործընթացում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը և համակարգված գիտելիքների ընկալումը նրանց կողմից: Եթե ինքնուրույն աշխատանքի ավանդական մեթոդներն ապահովում էին ավելի շատ տեսական գիտելիքներ, ապա նոր տեխնոլոգիաների շնորհիվ արդի մեթոդները նպատակաուղղված են տեսական գիտելիքները տարբեր իրավիճակներում կիրառելուն: Ուստի, դասապրոցեսն ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է համատեղել ուսուցման արդի և ավանդական մեթոդները: Այս պայմաններում ուսուցիչը

պետք է փորձի համակարգչային տեղեկատվության համակարգման միջոցով նպաստել սովորողների մոտ համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է ՏՀՏ-ի միջոցով ստեղծել նոր ուսումնական նյութեր և ուսումնազնական միջոցներ: Դրանք հնարավորություններ են ստեղծում զննականության ապահովման և սովորողների ինքնուրույն աշխատանքների արդյունավետության բարձրացման համար: Ձննականության սկզբունքը 17-րդ դարում ձևակերպել և հիմնավորել է Յ. Ա. Կոմենսկին: Նրան է պատկանում «դիդակտիկայի ոսկե կանոնը», որը պահանջում է ուսուցման գործընթացում ներգրավել բոլոր զգայարանները¹: Այդ սկզբունքը արդիական է նաև մեր օրերում: Ձննական միջոցներից կարևոր դեր է խաղում պայմանական զննականությունը (աղյուսակներ, սխեմատիկ նկարներ, քարտեզներ, սխեմաներ, գծագրեր, դիագրամներ): Ստորև կխոսվի զննական միջոցներից հիմնականում աղյուսակների մասին, որոնք մեծ դեր են խաղում սովորողների կողմից պատճառ-հետևանքային կապերի, հասկացությունների յուրացման և նրանց տրամաբանական մտածողության զարգացման գործում: Աղյուսակներն արտացոլելով պատմական գործընթացի քանակական և որակական կողմերը, հասարակական երևույթների էական հատկանիշները՝ կազմում են պատմության դասերի անբաժան մասը: Ըստ կառուցվածքի աղյուսակները լինում են պարզ և բարդ: Պարզ են համարվում այն աղյուսակները, որոնք կազմված են երկու սյունակներից և ունեն վերարտադրողական նպատակներ: Բարդ են այն աղյուսակները, որոնք բաղկացած են երկու և ավելի սյունակներից, և դրանց կազմումը հետապնդում է որոնողական, հետազոտական, ստեղծագործական աշխատանքներ: Ըստ տրամաբանական գործողությունների բնույթի՝ աղյուսակները կարող են լինել համեմատական, վերլուծական, դասակարգման, ընդհանրացման, պատճառ-հետևանքային և այլն: Ըստ կողմնորոշման և արժեքային համակարգի դրսևորման՝ կիրառվում են դիրքորոշում, վերաբերմունք, գաղա-

¹ Մանկավարժություն, խմբագրությամբ Յու. Բարանսկու, Երևան, 1986, Մաս 1, էջ 221:

փար, հիմնախնդիր, իրավիճակ արտահայտող աղյուսակներ: Այդպիսի աղյուսակների կազմումն ուժեղացնում է դասի որոնողական կողմը, նպաստում աշակերտների ճանաչողական գործունեության իրականացմանը: Պատմության ժամանակակից դասերին մեծ տեղ է հատկացվում հատկապես T-աձև և m-աձև աղյուսակներին: T-աձև աղյուսակն օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար: m-աձև աղյուսակը արդյունավետ է դասի տարբեր փուլերում խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք արտահայտելու, գրանցելու և դրա հիման վրա քննարկում կազմակերպելու համար: Այն բաղկացած է երեք բաժնից, յուրաքանչյուր բաժնում գրանցվում է միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ իրենց տեսակետները հիմնավորելու համար:

Աղյուսակների և ընդհանրապես գծագրական դասակարգիչների (գրաֆիկական կազմակերպիչներ) հետ աշխատանքը պետք է սկսել պատմության դասընթացի համակարգված ուսուցման հենց սկզբից՝ 6-րդ դասարանից: Այդ նպատակով նախ՝ պետք է սովորողների գիտակցությանը հասցնել այն միտքը, որ «Պատմություն» առարկան ոչ թե փաստերի և իրադարձությունների սոսկ շարադրանք է, այլ դրանց համեմատություն, համադրում, վերլուծություն, իմաստավորում և այլն: Այստեղ տեղին է մեջբերել Գ. Նժդեհի խոսքերը. «Ճշմարիտ պատմագիտության դեմ մեղանշում ենք երկու դեպքում. նախ՝ երբ անգիտանալով անցքերը վերլուծող, կապակցող, համադրող և տեսականորեն ընդհանրացնող մտքի դերը նրան հաղորդում ենք վիպական գունավորում, որով այն՝ պատմությունը, վերածում ենք մի երկարաշունչ պատմավեպի: Կամ էլ, երբ անգիտանալով սրտի դերը, պատմությունը դարձնում ենք պեղումների և հանածոների մի մեռյալ նկարագրություն,

այսինքն՝ ցամաքեցնում ենք ժողովրդի ոգեշնչման աղբյուրը, որպիսին պետք է լինի պատմությունը»²: 6-րդ դասարանում, երբ ուսուցման ընթացքում աշակերտները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դրանք աղյուսակի միջոցով համակարգելու կարողություններ ձևավորելու ուղղությամբ: Քանի որ ամենակարևոր փաստերի շարքին են դասվում իրադարձությունները և տարեթվերը, ուստի համակարգումը կարելի է սկսել ավելի պարզ՝ ժամանակագրական աղյուսակի կիրառումից: Օրինակ՝ «Վանի թագավորությունը» թեման անցնելիս սովորողներին ներկայացվում են Վանի թագավորների գահակալության, մղած պատերազմների, գրաված երկրների, շինարարական գործունեության մասին ասորեստանյան և ուրարտական թագավորների արձանագրություններում թողած հիշատակությունները: Քանի որ այդ թեմային վերաբերող պատմական փաստերը շատ են, դրանք հիշելու և համակարգելու նպատակով աշակերտներին առաջարկվում է տեքստից դուրս գրել տարեթվերը և լրացնել թեմայի ժամանակագրական աղյուսակը: (Ընդ որում՝ հոդվածում բերված բոլոր աղյուսակները կազմվել և փորձարկվել են մեր վարած դասերի ընթացքում, իսկ սյունակների գրառումներն արվել են որպես պատասխանի լրացման նմուշ-օրինակ:)

<i>Տարեթիվ</i>	<i>Իրադարձություն</i>
1. Ք.ա. 859 թ.	Ասորեստանի արքա Սալմանասար 3-րդի կողմից Ուրարտուի հիշատակումը որպես թագավորություն:

Պատմական հասկացություններն անհրաժեշտ են փաստերի բացատրման և դասակարգման, ինչպես նաև այլ հասկացությունների իմաստավորման համար: Քանի որ պետական չափորոշիչով և ծրագրով մեծ տեղ է հատկացվում հասկացությունների հետ տարվող աշխատանքներին, դասի տարբեր փուլերում կարելի է օգտագործել գծագրական դասակարգիչներ, որոնք ավելի տեսանելի են դարձնում հասկացությունները և դրանց միջև գոյություն ունեցող կապերը, օգնում են քննարկումները դարձնել առավել

² Գ. Նժդեհ, *Հայրենիք*, Երևան, 2001, էջ 242:

շրջափելի և արդյունավետ: 6-րդ դասարանում, բացի ժամանակագրական աղյուսակից, անհրաժեշտ է կիրառել նաև հասկացությունների աղյուսակ, որում կբացատրվեն հասկացությունների բնորոշ հատկանիշներն առանց տալու նրանց սահմանումները: Օրինակ՝ «Նախնադար» թեման անցնելիս «տոհմական համայնք» հասկացությունը կարելի է բացատրել հետևյալ աղյուսակի միջոցով.

Հասկացություն	Բնորոշ հատկանիշ
Տոհմական համայնք	1. Միասին ապրող արյունակից ազգականների խումբ: 2. Ուներ քնակության մշտական տարածք:

6-րդ դասարանի վերջում, երբ աշակերտները ձեռք կբերեն որոշակի կարողություններ և հմտություններ, կարելի է կիրառել ընդհանրացնող աղյուսակ: Քանի որ «Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը» թեմային հատկացված 9 ժամի ընթացքում սովորողներն ուսումնասիրում են Արտաշեսյան թագավորների քաղաքական, տնտեսական և մշակութային գործունեությունը, թեման կարելի է ամփոփել՝ կազմելով հետևյալ ընդհանրացնող աղյուսակը.

Թագավորի անունը, տարեթիվը	Գործունեությունը	Նշանակությունը
Արտաշես Ա Ք.ա. 189-160 թթ.	1. Հայկական տարածքների մեծ մասը միավորվեց մեկ ընդհանուր պետության՝ Մեծ Հայքի մեջ:	1. Մեծ Հայքի թագավորությունը վերածվեց Առաջավոր Ասիայում պատկանող ուժ ներկայացնող պետության:

7-րդ դասարանում, բացի վերը նշված աղյուսակներից, կարելի է կիրառել նաև m-աձև համեմատական աղյուսակ, որը կգարգացնի նրանց մտավոր կարողությունները և տրամաբանական մտածողությունը: «Արշակ 2-րդի ջանքերը կենտրոնական իշխանության ուժեղացման ուղղությամբ» դասն անցնելիս «Արշակավանի

հիմնադրումը» կարելի է քննարկել՝ օգտագործելով հետևյալ m-աձև աղյուսակը.

Դրական	Չեզոք	Բացասական
Ամրապնդում էր թագավորական իշխանության հիմքերը		Քաղաքում քնակություն հաստատեցին հանցագործ տարրեր

7-րդ դասարանում սովորողների տրամաբանական կարողությունների զարգացման նպատակով կարելի է հանձնարարել համաժամանակյա աղյուսակ, ասենք՝ «Հայաստանը 6-րդ դարում» թեմայից: Սովորողներին պետք է բացատրել, որ Արշակունիների թագավորության անկումից հետո Մեծ Հայքի Արևմտյան ինքնավար մասը Փոքր Հայքի հետ միասին գտնվում էր Բյուզանդական տիրապետության ներքո, իսկ արևելյան մասը դարձավ Սասանյան Պարսկաստանի կազմում լայն ինքնավարություն ունեցող մարզպանություն: Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես թուլացնելու, ինքնուրույնությունից զրկելու, ինչպես նաև հայկական զինված ուժերը երկրից դուրս բերելու նպատակով Բյուզանդական կայսր Հուստինիանոս 1-ինը և Պարսից Խոսրով 1-ին թագավորը գրեթե նույնանման քաղաքականություն էին վարում: Երկու պետությունների վարած քաղաքականության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը կլուսաբանի հետևյալ աղյուսակը.

Տարեթիվը	Արևմտյան Հայաստան	Տարեթիվը	Արևելյան Հայաստան
539 թ.	Հովհաննես Արշակունու ապստամբությունը Առաջին Հայքում	571 թ.	Վարդան Մամիկոնյանի (Վարդան Կրտսեր) ապստամբության սկիզբը
548 թ.	Արշակ Արշակունու և Արտավանի կազմակերպած դավադրությունը	572 թ.	Դվինի գրավումը ապստամբների կողմից

7-րդ դասարանցու ժամանակագրական կարողությունները զարգացնելու և դրանք աստիճանաբար հմտությունների վերածելու նպատակով առաջարկվում է կազմել ավելի բարդ տրամաբանական աղյուսակ: Որպես օրինակ կարող է ծառայել «Համաշխարհային պատմության» դասընթացի «Հարյուրամյա պատերազմը» թեմայից կազմված աղյուսակը:

Տարեթիվ	Գործիչ	Գործունեություն	Նշանակություն
1415 թ.	Ժաննա դ'Արկ	Օռլեանի ազատագրումը	Ֆրանսիայի անկախության վերականգնումը

8-րդ դասարանում անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել աշակերտների տրամաբանությունը զարգացնելու, պատմական իրադարձությունների, դեպքերի և հետևանքների միջև եղած կապերի բացահայտումը խորացնելու ուղղությամբ: «Ազգային ազատագրական պայքարը 19-րդ դարի 70-80-ական թվականներին» թեմայից տալով նոր գիտելիքներ Թուրքիայի հայահալած քաղաքականության, տնտեսական, ազգային ու կրոնական հալածանքների ու բռնությունների մասին, սովորողներին պետք է հանգեցնել ինքնաբերական պայքարի նոր ձևի՝ ժողովրդական վրիժառության գաղափարին, որն իր արտացոլումը գտավ հայդուկային (ֆիդայական) շարժման մեջ: «Ֆիդայական շարժումը» թեմայից պատճառ-հետևանքային աղյուսակի կազմումն ավելի կամրապնդի այդ գաղափարը և կխորացնի աշակերտների տրամաբանական, հետազոտական, ստեղծագործական կարողությունները:

Նախադրյալները	1. Հայ ժողովրդին թուրքական հալածանքներից ազատագրելու ձգտումը:
Հետևանքները	2. Բարձրացրեց հայ ժողովրդի ազատասիրական ոգին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արդյունաբերական հասարակության 2-րդ շրջափուլում Եվրոպայի և Ամերիկայի երկրներում մշակույթը բարձրացավ որակական նոր մակարդակի, 8-րդ դասարանի վերջում «Համաշխարհային պատմությունից» կարելի

է կազմել ընդհանրացնող ամփոփիչ աղյուսակ՝ ընդգրկելով «Մշակույթը 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին» թեման:

Քննազավառը	Երկիրը	Գործիչը	Աշխատությունը	Նշանակությունը
Ֆիզիկա	Գերմանիա	Ա. Այնշթայն	«Հարաբերականության ընդհանուր տեսություն»	Խթանեց արդիական ֆիզիկայի հետագա զարգացումը

Աղյուսակների կազմումը պետք է հետապնդի որոնողական, հետազոտական և ստեղծագործական նպատակներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 9-րդ դասարանցին ավելի հասուն է և ունի համակարգված գիտելիքներ պատմությունից, ինչպես նաև զարգացնելով նախորդ տարիներին եզրերի հետ աշխատանքի ընթացքում ձեռք բերած հմտություններն ու կարողությունները՝ նա պետք է կարողանա հստակ և ճիշտ ձևակերպել հասկացությունները: Այդ աշխատանքը կարելի է իրականացնել T-աձև աղյուսակի միջոցով: Հետաքրքիր կլինի, օրինակ, «Ռազմական կոմունիզմ» և «ՆԷՊ» հասկացությունների համադրական T-աձև աղյուսակի կազմումը:

Ընդհանուր գծերը	Առանձնահատկությունները
1. Տնտեսական միջոցառումների համակարգ	1. Պարենմանատրում 2. Պարենհարկ

Կարևոր է, որպեսզի 9-րդ դասարանցիները լավ յուրացնեն «Արցախյան շարժումը» թեման, գիտակցեն, որ իր իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու համար ուղքի կանգնած արցախահայության պայքարը Խորհրդային Միությունում վերակառուցման քաղաքականության անմիջական հետևանք էր: Արցախահայությունը չհաշտվելով իր պատմական տարածքները Ադրբեջանին բռնակցելու և Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության հետ՝ պայքար սկսեց Հայաստանին վերամիավորվելու համար: Շարժման փուլերի, ռազմական գործողությունների ընթացքի, պատերազմում տարած հաղթանակների վերաբերյալ գիտելիքներն ամրոջացնելու նպա-

տակով 9-րդ դասարանի վերջում կարելի է կազմել «Արցախյան շարժման փուլերը» աղյուսակը, որը նաև կխորացնի սովորողների վերարտադրողական և ստեղծագործական կարողությունները:

Փուլերը	Իրադարձությունները	Հեղինակները	Նշանակությունը
1-ին	1988 թ. փետրվարի 20-ի որոշումը, որին հաջորդեցին ցույցերն ու հանրահավաքները	Սումգայիթյան ջարդերը և հայերի բռնազաղթը	Շարժումը դարձավ համազգային և ներառեց նորաՆոր խնդիրներ

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի (գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ) և խնդիր է դրվել սովորեցնել սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները³: Աղյուսակների միջոցով կատարվող նմանատիպ աշխատանքը մեծապես նպաստում է VI–IX դասարանի սովորողների կրթադաստիարակչական խնդիրների լուծմանը «Պատմություն» առարկայից և հող նախապատրաստում ավագ դպրոցում դրանց հետագա խորացման, զննական մյուս միջոցների կիրառման և հմտությունների ձեռքբերման գործում: Աղյուսակների օգտագործումը կօգնի նաև դիմորդներին՝ ավելի արդյունավետ նախապատրաստվելու ընդունելության քննություններին:

³ Ա. Ղուկասյան, *Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ*, Երևան, 2013, էջ 21:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Թամանյան Գ.**, *Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը 7-10-րդ դասարաններում*, Մեթոդ. ձեռնարկ, Երևան, 1986:
- Ղուկասյան Ա.**, *Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ*, Երևան, 2013:
- Նժդեհ Գ.**, *Հատընտիր*, Երևան, 2001:
- Սարգսյան Ա.**, *Համաշխարհային պատմություն. 6-7-րդ դասարաններ: Ուսուցչի ձեռնարկ*, Երևան, 2013:
- Համաշխարհային պատմության 7-րդ դասարանի դասագիրք. հեղինակներ՝ Գ. Հարությունյան, Ա. Նազարյան*, Երևան, 2014:
- Համաշխարհային պատմության, 8-րդ դասարանի դասագիրք. հեղինակներ՝ Ա. Ստեփանյան, Ռ. Սաֆրաստյան, Ա. Նազարյան*, Երևան, 2013:
- Հայոց պատմություն, 8-9-րդ դասարանների դասագրքեր, Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ*, Երևան, 2013, 2014:
- Մանկավարժություն, խմբագրությամբ Յու. Բաբանսկու*, Երևան, 1986, Մաս 1:
- Պատմություն, Հասարակագիտություն: Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր*, Երևան-2007:

SUMMARY

Lilit Minasyan

The Role of "Great Individuals" in Overcoming of Social Crisis
(On the example of the Roman history of the 1st c. BC)

The purpose of this paper is to explore the theoretical development and practical trial of the innovative concept of social coexistence, the Republican Monarchy or the Principate, in the context of crisis of Roman traditional republican order in I c. BC. In this connection, the collaboration among M. T. Cicero, the famous Roman orator, philosopher, political theorist, politician, and Pompey the Great, the outstanding statesman, general and one of the "great individuals" of time, is examined. Pompey embodies the pole of action, and Cicero - the pole of intelligence. The author studies the concept of "republican monarchy", which implied "restoration of the Republic" through combining the personal authority of "great individual" and the republican order.

Mariam Babayan

Significance of Princeps in the Principate System

The paper deals with the Principate - the period in ancient Roman history when one person (the princeps) takes the political control. In the principate system the most important thing is the personality of princeps. The period of the Principate runs from Augustus to Diocletian, who has split the Roman Empire into four parts, the tetrarchy. The earlier period, the Republic, is seen as a time of greater freedom than the Principate, but the Principate initially brings peace after civil war.

Nina Hayrapetyan

Gallienus as the Forerunner of the Dominate (?)

The paper deals with the problem of the foundation of the Dominate. The problem seems to be solved, and Diocletian is traditionally considered the founder of it, and it was Constantine who developed its main concepts. But looking back into the 50-60s of the 3rd century another great figure can be distinguished in the Roman history, whose impact on the progress of the Empire is as notable as to be realized even by Ancient authors. This figure is Gallienus (253-260 with Valerian, 260-268 as a sole Emperor). The period preceding his reign coincided with the nadir of the Crisis of the Third Century, and Gallienus' principle aim was to spare the Empire from its near destruction, and his reforms were meant to regain control over the country again. Despite this aim, Gallienus established political institutions that were vastly used in the late Empire under Diocletian and Constantine. That is why we consider Gallienus to be the forerunner of the Dominate and one of the most important figures throughout the Roman history.

Nelly Minasyan

The Issues of Formation of Territorial Nomadic Civilization in Genghis Khan's Perceptions

The purpose of the article is to present Genghis Khan's perceptions of territorial organization of nomadic civilization. Genghis Khan managed to unite the Mongol tribes and established the Mongol state. Genghis Khan carried out several reforms, and the most important one was the military. It became the basic model of the state formation of Mongol empire. Genghis Khan used the principles of nomadic civilizations for territorial formation of the state especially the system of wings. As a result Genghis Khan divided the empire into central, two wings and four uluses. Due to this division his empire continued to develop and to expand even after his death.

Aram Poghosyan
**Genghis Khan and His Role in the Formation
of Mongol State**

The paper look into some important aspects of Nomadic empires, sometimes also called steppe empires, Central or Inner Asian empires, are the empires erected by the bow-wielding, horse-riding, nomadic peoples in the Eurasian steppe, from classical antiquity to the early modern era. Nomadic empires typically operated by establishing a capital city inside a conquered sedentary state, and then by exploiting the existing bureaucrats and commercial resources of that non-nomadic society. As the pattern is repeated, the originally nomadic dynasty becomes culturally assimilated to the culture of the occupied nation before its ultimate overthrow. The Mongol leader Genghis Khan rose from humble beginnings to establish the largest land empire in history. After uniting the nomadic tribes of the Mongolian plateau, he conquered huge chunks of Central Asia and China. Many people were slaughtered in the course of Genghis Khan's invasions, but he also granted religious freedom to his subjects, abolished torture, encouraged trade and created the first international postal system.

Sargis Baldaryan
Badr al Jamali – the Fatimid State Vizier

The paper represents a newly discussion of the activity of the first Armenian vizier of Fatimid Egypt. The massive migration had located different parts of the Armenians/ The massive migration produced/reversed location of the Armenians of different beliefs in various countries, including heterodox ones. In order to overcome the inner uncontrollable situation the Fatimid Khalifa handed the power to the Armenian governor of Aqqa who initiated vizier domination in Egypt and the dynasty of Armenian viziers. His reign was very effective especially in the inner life of the country. The illustration of the topic is highly important because of the absence of Armenian

researches on it. The period of the office of Badr al Jamali had sharply identical Armenian emphasis. Not only did he encourage the resettlement of the Armenians in Egypt but also made efforts to move the seat of the Armenian Catholicos to there. So Badr al Jamali has had a very important role both in strengthening Fatima Egypt and in consolidating scattered Armenians and providing favourable conditions for their social development.

Narine Zohrabyan
**Rouben the First - the Founder of the Armenian Principality
in Cilicia?**

The clarification of problem of the founder of the Armenian principality in Cilicia has principal importance for the research of the Armenian Medieval history. The sources as well as scientific works have granted the honor of establishing it either of the first two representatives of the principality. The final solution of the problem is due to clarification of the sources. Researchers of different generations believing the testimonies of Samuel of Ani and using the published version of the "Chronicles" of the latter have fallen into puzzlement. But the new edition of the the "Chronicles" that clearly demarcates the information reported by Samuel of Ani from the additions of scribes, greatly benefits the solution of the problem. It is found out that like other historians two centuries onwards Samuel of Ani remembers Constantine as the first representative of Armenian principality in Cilicia. Concerning overriding Rouben the foundation of the principality that is the result of the activity beginning in the XIII century and pursuing serious ideological objectives.

Gagik Harutyunyan
Liana Aghabekyan
Frederick the First on the Crossroad of the Clash of Civilizations

One of the most important issues of Medieval Studies is primarily related to the activities of Frederick Barbarossa who, intending to adopt the cultural heritage of the Western Roman Empire tried to reestablish the Roman Empire in the frames of common Christian identity. Actually, the activity of Frederick the First was related to three civilizations (Western Catholic, Eastern Orthodox, and Muslim). Taking into account this, he was trying to unite the first two cultures and to establish balance with the Muslims.

Unfortunately, these issues were not paid appropriate attention to; that is why, it is rather difficult for this issue to be illustrated. However, as a result of current historical trends, especially German and French researchers of Medieval Studies started paying a considerable attention to it.

A sophisticated study of the issue will contribute to the understanding of Frederick's eastern policy, especially the policy concerning to Cilicia Armenia.

Davit Tinoyan
Hovhannes Anthepeci and the Problem of Disunion of the Cilician Clergy Hierarchy at the Beginning of the 17th Century

The paper is dedicated to the governing period of a prominent representative of the Armenian Catholicosate in Cilicia, Hovhannes Anthepeci (1601-1621). He was both a well known spiritual figure and an eminent representative of the educational world of the time. The Cilician hierarchy was threatened to be disunited again under the rule of Hovhannes Anthepeci. Anyhow, it was possible to intercept the process of cracking the Catholicosate down by joint efforts. Also, it is typical that the remnants of the Armenian secular principalities were continuing their existence. Besides, the political situation of Cilicia was

full of difficulties during the rule of Hovhannes Anthepeci: the region repeatedly became a fighting scene for various military-political groups, especially for Turkmen tribes, in the first years of the 17th century.

Tigran Yepremyan
Hugo Grotius in the Discourse of the History of International Relations
(Constructivism)

The paper discusses Hugo Grotius' international political thought in the discourse of the history of international relations from the perspective of modern constructivism. Different constructivist approaches to international politics are taken into consideration in relation to Grotius' thought. Therefore, the paper proceeds with the conceptualisation of the influence of Grotius' political thought on the theory and practice of international relations through the prism of constructivism and speech act theory. Hence, Grotius' idealistic and holistic approach towards nations and society nations is viewed within the framework of Alexander Wendt's theory of structural constructivism. According to these approaches states (nations) are constructed with common beliefs and organizational structures that give them territorial monopoly of legitimate violence. This comprehensive perspective allows us better understand the evolution of holist and structuralist theoris of IR and Hugo Grotius' place in that discourse.

Anna Khachyan
Hugo Grotsios' Political and Legal Theory

During the period of transition from feudalism to capitalism, issues of the political power of a state and society, relationships between an individual and a state, as well as human rights and freedoms, related to political movements, and development of political theory acquired a

new meaning. New ideas on human rights and freedoms were formed in the world view system of the epoch. So, in such transitional periods, when a community is faced with the choice of their future, the role of individuals becomes highly important. One of these individuals was Hugo Grotius (1583-1645), a Dutch lawyer and prominent political thinker, a statesman, and one of the founders of the rationalistic conception of natural and international law of the New Times. Grotius was called the "father of modern international law".

This article has an aim to represent Hugo Grotius' political and legal doctrine, based on his well-known work "The Law of War and Peace" (1625), concerning with the problem of natural law and will, the ideas of state sovereignty, forms of governing, issues of war and peace and the new understanding of international law.

Nzhdeh Hovhannisyan
U.S. Founding Fathers
(Heritage, revolution, statehood)

In comparison with Europe, where The French Revolution had tremendous course, in America the vector of processes was directed to another, completely different path in the end of 18th century. In essence, within our report we will discuss the query of U.S. foundation. In this context we emphasize Founder fathers' role in war against British monarchy. Another point is how they understood Ancient Roman and Hellenic values and ideas. Moreover they established an appropriate political and state systems in the U.S. by creating certain traditions, several of which even are seen today.

"U.S. Founding fathers: heritage, revolution, statehood" is the title of our article. As the reader understands we are discussing a wide range of issues. We are making fundament for the truism of the "state of systems" by underlying the fact, that the system needs intellectual coryphaeus in order to work successfully. The main subject of the article is the Fathers' role, their behavior, relations and attitude towards the future of their native country. The review also mentions Fathers' thoughts concerning their war of independence. In addition,

we emphasize the fact that there was debate between fathers. One of great points is how they overcome the crises and what were the main sources during their struggle for state sovereignty.

Areg Kochinyan
Napoleon Bonoparte and Augustus Octavianus

The comparative analysis of Napoleon Bonoparte and emperor Augustus, at the same time is the comperanes of pivotal periods in world history. Times of tremendous changes in Rome, France Europe and world, many developments were underway when Augustus and Napoleon took charge and a recurring theme is the role that they played in shaping their direction and their vision to the future. Research not only captures the dynamics and richness of the eras of great revolutions and historical characters but also exams important aspects of political and social history by comparing this two great leaders. Essays and researches that are used in this research are written by distinguished specialists from the United States, Europe and Russia.

The research also break new ground and will stimulate further research and discussions.

Ara Gasparyan
Bonaparte Reforms

The article introduces systemic reforms of French internal realities and modernization of state governance by Bonaparte. It particularly states the new governing system of France, administrative hierarchic structure, legal reforms, mechanisms of public consent and coercion, financial and economical institutions, educational system, resolutions of religious and civil conflicts and social settlement of Bonaparte's regime. Napoleon's domestic achievements were successful and served for stabilizing and further development of the French as a modern nation.

Julieta Ktshanyan
Gladston Theory of Transformation of the
British Empire

The aim of the article is to present the 19th century visions of the future of the British Empire and different viewpoints on interrelations between the metropolis and colonies formed in the British intellectual milieu as a result of the Second Empire crisis.

Within the scope of these problems the paper looks into the theory and practical application of a four times Prime Minister William Ewart Gladstone's concept of British colonial policy as a way of escaping collapse of the Empire. It shows that the Gladstonian Liberal policy aimed to develop a partnership of self-governing colonies. It becomes clear that with his ideas Gladstone can be considered the precursor, if not the "father", of the idea of the modern Commonwealth.

Karen Pahlevanyan
Forgotten But Compensated Years

Vladimir Ilyich Ulyanov considered one of the most influential and controversial political figures of the 20th century. In 1900, Lenin went to Western Europe. It was during this time that he adopted the pseudonym Lenin. After the outbreak of the Russian Revolution of 1905, Lenin returned to Russia. Once order was restored in 1907 Lenin was again forced into exile.

On April 16, 1917, Vladimir Lenin, leader of the revolutionary Bolshevik Party, returns to Petrograd after a decade of exile to take the reins of the Russian Revolution. After the outbreak of the February Revolution, German authorities allowed Lenin and his lieutenants to cross Germany en route from Switzerland to Sweden in a sealed railway car. Berlin hoped, correctly, that the return of the anti-war socialists to Russia would undermine the Russian war effort, which was continuing under the provisional government.

Lenin called for the overthrow of the provisional government by the soviets; he was subsequently condemned as a "German agent" by

the government's leaders. In July, he was forced to flee to Finland, but his call for "peace, land, and bread" met with increasing popular support, and the Bolsheviks won a majority in the Petrograd soviet. In October, Lenin secretly returned to Petrograd, and on November 7, the Bolshevik-led Red Guards deposed the Provisional Government and proclaimed soviet rule.

Lenin became the virtual dictator of the world's first Marxist state.

Samson Hovhannisyan
The Transformative Policy of E. Venizelos in Greece.
(Portrait of the statesman and leader)

The paper outlines the role and activities of the famous statesman and charismatic politician Eleftherios Venizelos (1864-1936) in the scope of the modern history of Greece, studies his political portrait and the essence of his authority and political regime. The stage of 1910-1930's, was marked as a transitional period for the Greek state and society: on the background of the transformation of social systems, typical for this stage, the activity and the political will of the historical figure, aimed at the comprehensive modernization of society and the state, are highly valued. As such a leader, Venizelos acted as an initiator and organizer of the comprehensive reforms of modernization, during his governance. He made also crucial efforts to solve the Greek national question. In this context the political nature of Venizelos is particularly emphasized - as that of a politician who has managed to combine the principles of liberalism, democracy and rule of law with the strong figure's charismatic authority. On the basis of Max Weber's typology of authority and legitimacy, the article attempts to consider Venizelos's authority as a kind of mixed order, with combined elements of charismatic and rational-legal legitimacy.

As main sources we have used various researches, articles on the respective period of Greek history and Venizelos's governance, as well as M. Weber's fundamental work, "Economy and Society" (1968).

Gor Madoyan

Mussolini's Ideal of New Rome

(Myth and reality)

This work aims to analyze how the myth of Rome was used by Mussolini and Fascist party. By presenting some aspects of Mussolini's inner policy we are trying to emphasize the role of leader paralleling it with the type of Augustus, the Roman legendary Cesear.

Within our article we mention Mussolini's program. We are eager to present the borders of the reality and the mystery, their inner connections. Another crucial aspect is that how the events were interpreted during this historical era.

We also pay our attention to such subjects as agitating mechanisms, spheres and means. It is certainly shown that Mussolini simultaneously injected "New Roman empire", "New era" and other relevant ideas to Italian society. He was trying to underline the fact that he is the only leader and his regime is the sole guarantee, who ensures the success of this project and keeps it for Italians. When all factors are contemplated it is easier to hold a perspective that Mussolini was a huge comic figure and the Italians were the audience, during the performance of Roman controversial myth.

Valentina Gloyan

Winston Churchill's Ideology of "Cold War"

("Post-war" and the contemporary political responses)

The following topic focuses on the 20th century's most important event the Cold War and its author Winston Churchill. Here an attempt is made to identify the reasons for the emergence of the Cold War, its implementation and results. The British politician knowingly put the world into a new political crisis, the results of which undermine global peace till today.

The purpose of article is urgent, especially on the background of current international reality. It reveals W. Churchill as an individual, who left an indelible mark in the history of the world with his speech.

What would the world be if the speech and the war were not announced. Whether the current political situation would be the same. Unwillingly, W. Churchill wanted and changed the world without carrying a response for his political course.

Lilit Mkrtchyan

Konrad Adenauer

(Politician and innovator)

Konrad Adenauer was the first Federal Chancellor of the Federal Republic of Germany. In the 1949-1963's during the Chancellor's tenure, Adenauer was still considered to take the main decisions by the German foreign policy guidelines and determine the country's internal political order.

Konrad Adenauer (1876-1967 BC) was the founder of the German Christian Democratic Union and united Christian, social, conservative and liberal traditions. His name is connected with the rebuilding of the German Democratic foreign policy transatlantic anchor commonality of the values, vision and determination towards the European Union social market economy. Konrad Adenauer's spiritual legacy played a major role in the further activity of generations.

Varditer Telunc

Enhancement of History Lesson Efficiency Through Tables

The importance of learners' historical education and the process of adoption of respective abilities and skills are mentioned in the article. The role of the observative methods and particularly of charts for raising the efficiency of History lesson is presented. Types of tables by structure, logical sequence of events and value system. Examples of tables used by us are presented, the usage of which will promote the deepening of learners' knowledge of History.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

- Մինասյան Լիլիթ** - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
- Թինոյան Դավիթ** - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
- Գասպարյան Արա** - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
- Կճանյան Ջուլիետա** - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, ասպիրանտ
- Հարությունյան Գագիկ** - ՀՊՄՀ, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
- Մկրտչյան Լիլիթ** - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
- Մինասյան Նելլի** - ՀՊՄՀ, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, պատմ. գիտ. թեկնածու
- Փահլևանյան Կարեն** - ՀՊՄՀ, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
- Թելունց Վարդիթեր** - Պ. Սևակի անվան թիվ 123 դպրոց, պատմության և հասարակագիտության ուսուցչուհի
- Եփրեմյան Տիգրան** - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, ասպիրանտ
- Հովհաննիսյան Սամսոն** - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, ասպիրանտ
- Աղաբեկյան Լիանա** - ԵՊՄՀ, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, ասպիրանտ

Բաբայան Մարիամ - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրոս

Հովսեփյան Նժդեհ - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրանտ

Մադոյան Գոռ - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրանտ

Խաչյան Աննա - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրանտ

Գլոյան Վալենտինա - ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրանտ

Պողոսյան Արամ - ԵՊՀ, Հարակից երկրների պատմության ամբիոն, մագիստրանտ

Քոչինյան Արեգ - ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, Համաշխարհային պատմության ամբիոն, բակալավր

Հայրապետյան Նինա - ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, Համաշխարհային պատմության ամբիոն, բակալավր

Բալդարյան Սարգիս - ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, Հայոց պատմության ամբիոն, բակալավր

Զոհրաբյան Նարինե - ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, Հայոց պատմության ամբիոն, բակալավր

CONTENT

Preface.....	7
--------------	---

History of the Ancient World and Middle Ages

Lilit Minasyan The Role of “Great Individuals” in Overcoming of Social Crisis (On the example of the Roman history of the 1 st c. BC).....	9
Mariam Babayan Significance of Princes in the Principate System.....	24
Nina Hayrapetyan Gallienus as the Forerunner of the Dominate (?)	36
Nelly Minasyan The Issues of Formation of Territorial Nomadic Civilization in Genghis Khan’s Perceptions	44
Aram Poghosyan Genghis Khan and His Role in the Formation of Mongol State....	55
Sargis Baldaryan Badr al Jamali – the Fatimid State Vizier.....	64
Narine Zohrabyan Rouben the First - the Founder of the Armenian Principality in Cilicia?.....	73
Gagik Harutyunyan, Liana Aghabekyan Frederick the First on the Crossroad of the Clash of Civilizations	81

Modern History

Davit Tinoyan Hovhannes Anthepeci and the Problem of Disunion of the Cilician Clergy Hierarchy at the Beginning of the 17 th Century.....	95
Tigran Yepremyan Hugo Grotius in the Discourse of the History of International Relations (Constructivism)	108
Anna Khachyan Hugo Grotius’ Political and Legal Theory.....	127
Nzhdeh Hovhannisyan U.S. Founding Fathers (Heritage, revolution, statehood)	137
Areg Kochinyan Napoleon Bonaparte and Augustus Octavianus	154
Ara Gasparyan Bonaparte Reforms.....	163
Julieta Ktshanyan Gladstone Theory of Transformation of the British Empire	172

Contemporary History

Karen Pahlevanyan Forgotten But Compensated Years	187
Samson Hovhannisyan Transformative Policy of E. Venizelos in Greece. (Portrait of the statesman and leader)	194
Gor Madoyan Mussolini’s Ideal of New Rome (Myth and reality)	213
Valentina Gloyan Winston Churchill’s Ideology of “Cold War”. (“Post-war” and contemporary political responses).....	220

Lilit Mkrtchyan
Konrad Adenauer (Politician and innovator)..... 228

Teaching History

Varditer Telunc
Enhancement of History Lesson Efficiency Through
Tables.....231

ԱՆՀԱՏԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՆՎՈՒՅԹՈՒՄ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

PERSONALITY IN HISTORY

Proceedings of Conference

Սրբագրիչ՝ Մ. Ա. Թելունց

Տպագրության եղանակը՝ թվային
Չափսը՝ 60X84 1/16
Թուղթը՝ օֆսեթ, 70 գ/մ²
Տառատեսակը՝ GHEA Grapalat
Ծավալը՝ 16,75 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 100



Հասցեն՝ Երևան, 0070, Հ. Քաջազնունու փող., 14/10
Հեռ.՝ (+374 10) 55-48-84, (55) 16-51-00
Էլ. փոստ՝ tirpublishinghouse@gmail.com

Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպագրատանը
Հասցեն՝ Տավուշի մարզ, գ. Կողբ, 4-րդ փող., տուն 10
Հեռ.՝ (+374 266) 5-26-39